



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4782



1971



ԴԱՍԱԳԻՒՅ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐՈՒԹԵԱՆ
ՀԱՅՈՑ

ՄԿՍԵԱԼ Ի ՀԱՅԿԱՑ


ՄԻՆՉ Ի ԹՈՒԱԿԱՆՆ ՔՐԻՍՏՈՆԻ

1870

— — — — —

ԱՐԱՏԱՍԻՐԵԱՑ

Մ. 8. ԶՈԼԱԳԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Պ. ՔԻՐԻԵՂԵԱՆ ԵԽ ԸՆԿ.

— 1871 —

ՆՈՒԵՐ

ՍԻՐՈՅ ԵՒ ՄՏԵԲՄՈՒԹԵԱՆ

Ա.Ռ.

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԵՒ ՀԱՐԱԳԱՏ

ԲԱՐԵԿԱՄՆ ԻՄ

Պ. ՄԻՄՈՅ ՊԱՋԱՑԵԼԵԱՆ

ԱԶԳ

Ամեն քաղաքակիրթ ազգաց՝ դաստիարակութեան շաւզին առաջին քայլն է եղած, իրենց նուիրական պատմութիւնը։ Հայր զայս լաւ ճանչնալով քանիցս հոգաց այս սկզբոր եւ մինչեւ իսկ մանկական դաստիարակութեան օդաւաւէտ միջոցներուն ձեռնարկեց։ սակայն համառօտութեան գաղափարը, չտիէն աւելի կրծատման ենթարկելով պատմութիւնը կատարելութենէ զրկուած եւ հետեւաբար խիստ շատ կարեւոր մասունք դուրս ձգուած են։ Այս պակասը լեցնելու նկատմամբ, պարտ ինձ համարեցի, ուրիշ մը դասակարգելոր հայ պատմութեան պարունակութիւնը աւելի դիւրիմաց ընծայելէ զատ, խիստ շատ ազգային կարեւոր անցքեր, նաև մանաւանդ ընդհանուր Հայ պատրիարքաց Վրայ, ուրոյն ուրոյն կատարեալ ծանօթութիւններ պարունակէ, մինչ ՚ի պատրիարքական գահակալութիւն Ս. Խրիմեան Հօր (1870)։


Յուսով եմ թէ Հայ մանկուոյն նուիրած այս աշխատասիրութիւնս կը պսակուի արգոյ Գաստուաց կողմանէ ընդունելութիւն գտնելով։

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

—•••••—

Դ.Ա.Ա.Ա. Գ.Ի. Ռ.Ջ.

Ի ՊԵՏՎ ԴՊՐՈՅՍԱՅ



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆԻՑ

ԳԼՈՒԽ Ա.

ՀԱՅԿԵՆ ՄԻՆՉԵՔ ԱՐԱՄ

- Հ. ՀԱՅՈՅ ԹԵՐՈՒԹԻՒՆԸ Ե՞ՐԲ Կը սկսի :
- Պ. ԶԵՐԻԵՂԵՂԵՆ ՔԻՀ մը վերջը :
- Հ. ԻՆՉՈ՞ւ Համար Հայ կ'ըսուինք :
- Պ. ՄԵՐ ԹԵՐՈՒԹԻՒՆԸ կանգնող Դիւցազնին
անունը Հայկ ըլլալուն համար :
- Հ. Ո՞վ էր Հայկ :
- Պ. Նոյ նահապետին Յարէթ որդիէն սե-
րած կտրիճ մ'էր . Յարեթին տղան Գամէր՝
Գամերին տղան Թորգոմ՝ Թորգոմին տղան
Հայկ՝ որ Բէլին հետ պատերազմեցաւ :
- Հ. Ո՞վ էր Բէլ :
- Պ. Աշտարակը շինողներուն մէջէն հսկայ

մ'եր՝ որ մարդոցմէ իբրեւ Աստուած պաշ-
տուիլ կ'ուզէր :

Հ. Աշտարակը ինչո՞ւ կը շինէին :

Պ. Նոյի որդիքը շատնալով՝ մեծ բազմու-
թիւն մ'ալ Աենարը ըսուած դաշտը եկան,
ու հոն երկրորդ ջրհեղեղէ մը ազատ ըլլա-
լու համար Աստուծոյ դէմ ամբարտաւանու-
թեամբ աշտարակ մը սկսան շինել :

Հ. Կրցա՞ն 'ի զլուխ հանել աշտարակաշի-
նութիւնը :

Պ. Աստուած փոթորիկով մը աշտարակը
կործանեց և շինողներուն լեզուն խառնա-
կեց . այս խառնակութեան առեն Բէլ, ու
զեց ամենուն վրայ բռնանալ, բայց Հայկ
շուղելով անոր հնազանդիլ, առաւ իւր որդի-
քը, թոռունքը և ծառաները, որոնք 300 ի
շտփ էին, իւր հայրենի երկիրը դարձաւ :

Հ. Բէլ երբոր Հայկայ այս ըրածը լսեց,
ի՞նչ ըրաւ :

Պ. Մարդ խաւրեց՝ որ գայ իրեն հնազան-
դի. ապա թէ ոչ զինքը իւր որդիներովը
կը մեռցընեմ ըսաւ :

Հ. Հայկ ի՞նչ պատասխան զրկեց անոր :

Պ. Բելայ զրկած մարդը ետ դարձոց, և
Նոյի ճշմարիտ Աստուծոյն վրայ վստահացած՝
պատերազմի պատրաստուեցաւ վանայ ծո-
վուն եղերքը :

Հ. Ի՞նչ կերպով պատերազմեցան Հայկ ու
Բէլ :

Պ. Բէլ յանդղնութեամբ իւր անթիւ զօր-
քերէն մաս մը առնելով՝ եկաւ Հայկայ վրայ .
և երբ յաղթուելով ետ կը գառնար բանա-
կէն օգնութիւն առնելու , Հայկ մէկէն քա-
շեց իր աղեղն , զարկաւ և սպաննեց այն ամ-
բարտաւան հսկայն .

Հ. Հայկ ի՞նչ ըրաւ Բէլին դիակը :

Պ. Զմռսել տալով տարտւ իւր բնակած
երկիրը , և 'ի յիշատակ իւր յաղթութեան և
'ի տես ամենեցուն՝ բարձր բլրի մը վրայ
թաղեց :

Հ. Հայկ Բէլն սպաննելէն վերջն ի՞նչ ըրաւ :

Պ. Շատ քաղաքներ շինեց , անոնց մէջ բա-
րեկարգութիւններ և կանոններ հաստատեց
և 400 տարիի չափ իւր սերունդը խաղաղու-
թեամբ կառավարելէն վերջը մեռաւ , յանձ-
նելով իշխանութիւնը իւր Արմենակ որդւոյն :

Հ. Այս միջոցին ի՞նչ երեւելի դէպք պա-
տահեցաւ :

Պ. Նոյնակապետ , Բէլ ամբարտաւան հըս-
կային աշխարհիս երեսէն վերնալը տեսնե-
լով՝ գոհութեամբ մեռաւ 950 տարուան և
թաղուեցաւ Նպատ լեռանը վրայ . նոյնպէս
Նոյէմզարա Նոյի կինն ալ Մարանդ գաւառը :

Հ. Արմենակ ի՞նչպէս կառավարեց :

զ. Եր խոռ և Մանաւազ եղբարքը հայրենի երկրին մէջ թուզուց, որոնց ցեղը շատնալով խորխոսունիք և Մանաւազեանք ըսուեցան։ Յնքն արեւելեան կողմերն երթալով հոն տեղուանքը շենցուց և իրեն յաջորդեց Արամացիա։

Հ. Արամացիս ի՞նչ ըրաւ։

Պ. Արամաւիր քաղաքը շինեց Երասխ գետին քով, ասոր Բաղ եղբօրը ցեղը ետքերքը շատնալով եր անուամբը Բաղնունիք կոչուեցան։

Հ. Արամացիսի ովյալ յաջորդեց։

Պ. Եր որդին Ամասիա, որ իւր անուամբը Մասիս անուանեց Արարատ լեռը և իւր եղբայրներէն մին Շարա՝ Հայաստանի բարեբեր մէկ կողմը զրկեց, այն տեղը Շարայի անուամբը Շիրակ կոչուեցաւ։

Հ. Շարայի վրայ ի՞նչ դիտելիք կայ։

Պ. Շարայ խիստ շատակեր ըլլալուն՝ մինչեւ մօտ առեններս առակ եղած էր Երբոր շատակեր մէկը տեսնէին՝ կըսէին. Պարոն, թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարքն չեն։


Հ. Ամասիային ովյալ յաջորդեց։

Պ. Եր որդին Գեղամ, որ Սեւան կղզւոյն քով բնակելով այն տեղուանքը Գեղարքունիք կամ Գեղամայ ծով ըսուեցաւ, որուն

Եղբարքը ֆառոխ և Ցոլակ իրենց անուամբը
ֆառախոտ և Ցոլակերտ քաղաքները հիմնե-
ցին . և Սիսակ Գեղամայ որդին իր քաղցը
նայուածքին համար Ազու կոչուեցաւ և իւր
բնակած տեղին ալ Սիսական կամ Սիւնիք
անունը կուտային :

Հ. Գեղամին ո՞վ յաջորդեց :

Պ. Հարմայ իր որդին . ասոր օրովը՝ Հայոց
մերձակայ ազգերը զօրանալով սկսած էին
Հայաստանի վրայ արշաւել . վասն զի Հայ-
կայ և անոր որդւոցը քաջութիւնները մոռ-
ցուեր էին . ուստի Հայաստան Հայկի նման
քաջի մը կը կարօտէր թշնամինները վանտե-
լու և հայրենիքն ազատելու համար . և ահա
այն կտրիճը այն քաջը՝ Արամեղաւ :



ԳԼՈՒԽ Բ.

ԱՐԱՄԵՆ ՄԻՆՉԵԿ ՊԱՐՈՅՐ

Հ. Ո՞վ էր Արամ :

Պ. Հարմայի որդին որ խիստ քաջ ըլլալուն
Հայաստանն ազատեց թշնամեաց ձեռքէն :

Հ. Ո՞րո՞նք էին Հայաստանի թշնամինները :

Պ. Նիւքար՝ Մարաց իշխանը , Բարշամ

Յարելացւոց իշխանը և Պայտապիս՝ կտակա-
դովկիոյ իշխանը :

Հ. Արամ ինչպէս յաղթեց սյս թշնամի-
ներուն :

Պ. Նախ Նիւքարը բռնեց և աշտարակի մը
ծայրէն գամել տուաւ, Բարշամն ալ սպան-
նեց . իսկ Պայտապիս յաղթուելով վախտ
Միջերկրական ծովուն կղզիներէն մէկը . Ա-
րամ անոր երկիրներուն տիրելով փոքր Հայկ
անուանեց և Մշակ անունով իշխան մը կո-
սուեցաւ որ է Գայսէրի :

Հ. Արամ ուրիշ ինչո՞ր ըրտ :

Պ. Իր քաջութեամբն ու խոհեմութեամբը
բոլոր ազգաց սիրու վախ ձգեց և ամենուն
պատկառելի եղաւ, և Նինոս Ասորեստանի
թագաւորն իմանալով պատմութենէն որ
Հայկ զբէլ իւր նախահայրը սպաններ է,
կ'ուզէր վրէժ առնել . բայց վախնալով Ա-
րամայ քաջութիւններէն՝ բարեկամութիւնը
ստանալու համար մարդարատպարդ պսակ
մը խաւրեց և իրեն երկրորդ անուանեց Ա-
րամը :

Հ. Արամ որչափ տոեն իշխեց :

Պ. Յիսուն և ութ տարի իշխելով ընդար-
ձակեց Հայաստանը և իր համբաւն այնքան

առարկան եղաւ որ առար ազգի երի սկզբն մեր
Ազգը Արքուն կամ Եպիսկոպոսի երակը :

Հ. Արքունի մի յաջորդեց :

Պ. Իսր որդին Արքոյ ։ որո՞ն զեկուցելու
թեամբ Համեմ Շամիրամ Աստվածածին թէ ա-
զա հին ու զեկուց Հետո կարող ու ի ։ բայց Արքոյ
յանձն չառնելուն՝ թէ շնուժացաւ Շամիրամ և
պատերազմի երաւ :

Հ. Պատերազմին պերջն ի՞նչպէս եղաւ :

Պ. Արքոյ քաջութեամբ պատերազմելով
մեռաւ պատերազմի ։ տարցած միջոցին և
Շամիրամ Համեմելով մեր երկրին զիրքին և
օդին մաքրութեամբ՝ քաղաքով շինել տառա-
մասոր բնակելու Համեմ ։ և առաջ Շամի-
րամներա զրաւ ։ որ պերջերը վատ բառե-
ցաւ ։ այս քաղաքը մինչեւ Հիւնոյ կոյ և իր
պարիսպները կանոն կեցած են :

Հ. Արքոյի մի յաջորդեց :

Պ. Արքոյի մահմանեն եռը ։ Շամիրամնց
ձեռօք ։ Արքոյի որդին կարող ո՞ւ Հայոց իշ-
խան զրաւեցաւ ։ որ Շամիրամին Համ Նիւ-
տասոյ զէմ պատերազմած տանենին եր-
կուքն ալ մեռաւ :

Հ. Կարդոսին մի յաջորդեց :

Պ. Անուշան մի իր որդին ։ տաիկոյ թէ աղետ
զերի եր Նիւտասոյ քով ։ բայց իր քաղաք-
քարոյութեամբը պատելով՝ եկաւ տիրեց իր

Հայրենեացը և երկար ատեն Աղգը կառավաշը
ըելէն և շատ բարեկարգութիւն ընելէն վերջը
մեռաւ առանց զաւակ ունենալու, որուն յա-
ջորդեց Պարետ անունով Հոյկազունիշխանը :

Հ. Ո՞վ էր Պարետ :

Պ. Հոյկայ միւս որդւոց ցեղերէն իջած
անուանի ու կորովի անձ մ'էր՝ որ Անուշա-
ւանին տեղը Նահապետ դրուեցաւ, և շատ
քաջութիւններ ընելով մեռաւ իշխանու-
թիւնը Արքակին յանձնելով :

Հ. Ո՞վ յաջորդեց Արքակին :

Պ. Զաւան, Զաւանին՝ ֆառնակ և ֆառ-
նակին՝ Սուր :

Հ. Սուրայ ատեն ի՞նչ երեւելի դեպք պա-
տահեցաւ :

Պ. Սուր՝ թշնամեաց դեմ երեւելի յաղ-
թութիւններուն համար այս անունն ստա-
ցաւ. ասոր օրով Քանանացիք Յեսուէն յաղ-
թուելով՝ ոմանք Հայաստան եկան, որոնցմէ
գնթունեաց նախարարութիւնը ձեւացաւ :

Հ. Սուրայ ո՞վ յաջորդեց :

Պ. Հաւանակ, Հաւանակին՝ Վաշտակ և
Վաշտակին Հոյկակ, որ Ասորւոց Ամիսթէս
թագաւորին յաղթեց, բայց անոր յաջորդէն
յաղթուելով մեռաւ. իրեն յաջորդեց Ամ-
րակ Ա:

Հ. Ամրակին որո՞նք յաջորդեցին :

Պ. Ամբակին յաջորդեցին հետզհետէ Առնակ, Շաւարչ Ա. Նորայր, Վասամ, Կար, Գոռակ, Հրանտ, Ընծակ, Գղակ և Հօրոյ, որոնց վրայ գիտելիք մը չունինք :

Հ. Հօրոյի ովլ յաջորդեց :

Պ. Զարմայր քաջ և հզօր իշխանը՝ որ Տրոյաց օդնութեան գնաց և պատերազմի մէջ շատ քաջութիւններ ընելէն վերջը, զարնուեցաւ մեռաւ և իրեն յաջորդեց Պերճ Ա.

Հ. Ի՞նչ նշանաւոր գործ կը պատմաի Պերճի վրայ :

Պ. Խիստ քաջ և հզօր անձ մ' էր որ բոլոր Հայաստանի տիրեց, շատ զօրք գումարելով նոր գինուորական կարգեր դրաւ և շատ ազգեր նուանելէն ետքը մեռաւ իրեն յաջորդ թողլով Արքուն իշխանը :

Հ. Արքունի վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Պատմութիւնը Արքունի վրայ ըսն մը չաւանդեր և որուն կը յաջորդեն Պերճ Բ. Բաղուկ, Հոյ, Յուսակ, Ամբակ Բ. Կայպակ, Փառնաւազ Ա. Փառնակ Բ. Սկայորդի :

Հ. Սկայորդիին օրովն ի՞նչ պատահած է :

Պ. Ասորեստանի Մինեքերիմ թագաւորին որդիքը Աղբամելչք և Սանասար իրենց հայրն սպաննելով Հայաստան փախսան, ասոնցմէ ձեւացան Արծրունեաց և գնունեաց նախարարութիւնները :

ԳԼՈՒԽ Գ.

ՊԱՐՈՅԵՆ ՄԻՆՉԵԿ ՀԱՅԿԱՁԱՆՑ ԹԱԳԱԽՈ-
ՐՈՒԹԵԱՆՑ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Հ. Սկայորդին ովլ յաջորդեց :

Պ. Պարոյը իր որդին, որ Մարաց Վարբա-
կէս իշխանին հետ միացած Ասորւոց Սար-
դանաբաղ թագաւորին յաղթեց : Վարբա-
կէս Ասորեստանի իշխեց և Պարոյըն ալ թա-
գաւոր պսակեց Հայաստանի :

Հ. Պարոյըին որո՞նք յաջորդեցին :

Պ. Պարոյըին յաջորդեցին ետեւէ ետեւ
Հրաչեայ, Փառնաւազ Բ. Պաճոյճ, Կոռնակ,
Փաւոս :

Հ. Փաւոսին ովլ յաջորդեց :

Պ. Հայկակ Բ. որ Նաբուգոդոնոսոր թա-
գաւորին հետ միացած Երուսաղէմին առին,
և վերադարձին Հայկակ՝ Շամբատ անու-
նով Հրեայ իշխան մը Հայաստան բերաւ,
յորմէ սերեցաւ Բագրատունեաց նախարա-
բութիւնը :

Հ. Հայկակին ովլ յաջորդեց :

Պ. Իւր որդին Երուանդ Ա. որ չորս տարի
միայն թագաւորելէն ետքը մեռաւ իրեն
յաջորդ ձգելով Տիգրան Ա. ը որ Հայկազանց

ամենէն երեւելի և ամենէն զօրաւոր թագաւորն եղաւ :

Հ. Տիգրան ի՞նչ քաջադործութիւններ ունեցաւ :

Պ. Տիգրան Հայաստանի առաջին սահմանները նորոգեց և իր թշնամիները ջնջեց երկրիս երեսէն, որոնց զլիաւորն և ամենէն զօրաւորն էր Աժդահակ :

Հ. Ո՞վ էր Աժդահակ :

Պ. Մարաց թագաւորն և Տիգրանայ բարեկամը • ասիկայ լսելով, որ Տիգրան՝ կիւրոս Պարսից թագաւորին հետ բարեկամութիւն կընէ, հետը թշնամացաւ և որովհետեւ դէմառ դէմպատերազմելու կերկնչէր, ուստի մտածեց խարդախութեամբ Տիգրանը բռնել և սպաննել :

Հ. Աժդահակ կրցա՞ւ իւր խորհուրդն յառաջ տանիլ :

Պ. Տիգրանայ Տիգրանուհի քոյրն իրեն կինառաւ և անոր յայտնեց իւր նպատակը • Տիգրանուհի Աժդահակայ խորհրդին հաւնաձձեւացնելով գաղտուկ ամեն բան իր եղբօրն իմացուց :

Հ. Տիգրան ի՞նչ խոհեմութիւն բանեցուցայս գործին մէջ :

Պ. Տիգրան սյա լուրն առնելուն պէս թէպէտեւ անմիջապէս պատերազմի պատրաս-

տուեցաւ, բայց իւր Տիգրանուհի քոյրն ազատելու համար պատերազմն ուշացուց. ուրով Տիգրանուհի յարմար առեն զանելով փախաւ և կիւրոս ալ Տիգրանին օդնութեան հասաւ.

Հ. Պատերազմն ի՞նչպէս եղաւ :

Պ. Երբ կիւրոս իր զօրքովը հասաւ՝ Տիգրան Աժդահակայ դէմն ելաւ և պատերազմին տաքցած միջոցին՝ Տիգրան Աժդահակին հանդիպելով զարկաւ սպաննեց և պատերազմը լմնցաւ.

Հ. Տիգրան Աժդահակայ ընտանիքն ի՞նչ ըրաւ :

Պ. Ամենքն ալ գերի ընելով առաւ հետը Հայաստան բերաւ. որոնցմէ սերեցան Վիշապազունք կամ Մուրացան ըսուած ցեղը, և Տիգրանուհի քոյրն ալ Տիգրանակերտի մէջ բնակեցուց, ուրկէ սերեցան Ռոտանիկ ըսուած ազատ ցեղը :

Հ. Տիգրան ո՞րշափ առեն թագաւորեց :

Պ. Վառասուն հինգ տարի քաջութեամբ, խոհեմութեամբ, արդարութեամբ և խաղաղութեամբ թագաւորելէն վերջը մեռաւ, թողլով թագաւորութիւնը իր Վահագն որդւոյն :

Հ. Վահագնի վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Խիստ քաջ ըլլալուն համար՝ շատ ա-

ուասպելներ զրուցեցին վրան, և վրացիք ալ
զինքը երկար ատեն պաշտեցին. Վահագնի
ցեղը վահունիք ըսուեցան :

Հ. Վահագնի ո՞վ յաջորդեց :

Պ. Ետեւէ ետեւ յաջորդեցին Առաւան,
Ներսէհ, Զարէհ, Արգոմ, Բայրամ և Վան
որ Շամիրամակերտ քաղաքը նորոգելով Վան
կոչեց իր անուամբը :

Հ. Վանայ յաջորդն ո՞վ եղաւ :

Պ. Վահէ . ասիկայ Գարեհ Պարսից թա-
գաւորին օգնութեան գնաց, որ Աղէքսանդր
Մակեդոնացի թագաւորին դէմ կը պատե-
րազմէր. Վահէ իւր Հայկազուն կտրիճ բա-
նակովը շատ քաջութիւններ ընելէն վերջը
պատերազմին մէջ զարնուեցաւ մեռաւ, և
վերջացաւ Հայկազանց թագաւորութիւնը
1800 տարի դիմանալէն ետքը .

Հ. Վահէին մահուանէն վերջը Հայաստա-
նի վիճակն ի՞նչ եղաւ :

Պ. Վահէի մեռնելէն ետքը հայաստան Մա-
կեդոնացւոց իշխանութեան տակն ինկաւ,
և երբեմն Մակեդոնացի ու երբեմն Հայ իշ-
խաններով կը կառավարուէր.

Հ. Ո՞վ եղաւ առաջին Մակեդոնացի իշ-
խանը :

Պ. Նէոպտղոմէոս չար և հայատեաց իշ-
խանը, որ Հայոց հետ աղէկ չվարուելուն

Համար, Ադուարդ Հայկաղուն քաջ իշխանը
վլնտեց զայն և ինքն սկսաւ կառավարել,
ասիկայ 33 տարի խաղաղութեամբ իշխէն
վերջը մեռաւ :

Հ. Ո՞վ յաջորդեց Ադուարդին :

Պ. Ետեւէ ետեւ իշխեցին Հրանտ, Ար-
տաւազ, Զահրատ և Արտաշիառ՝ որն որ իր
անուամբը Արտաշատ քաղաքը շինեց. ա-
սոնցմէ վերջը քանի մը թագաւորները ալ
նստան՝ որոնց պատմութիւնը շփոթ է մինչեւ
Արշակունեաց թագաւորութեան սկզբը :

Վերջ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

ՄԱՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԵԱԿՈՒՆԻՔԻ ՅՈՒՆԵԼԻ
ԳԼՈՒԽ Ա.

Հ. Ո՞վ էլն Արշակունիք :

Պ. Պարթեւաց ազգին Արշակ անունով
կարիճ մը իր ազգին վրայ թագաւոր եղաւ .
անոր թոռը խիստ քաջ և զօրաւոր ըլլալուն՝
թագաւորութիւնը ընդարձակեց Հայաստանն
ալ նուաճեց և իւր եղբայրը՝ վաղարշակը՝
թագաւոր դրաւ :

Հ. Վաղարշակայ առաջին գործն ի՞նչ ե-
ղաւ :

Պ. Վաղարշակ արդարասէր, խոհեմ և ի-
մաստուն անձ մը ըլլալուն և Հայերը շատ սի-
րելուն, նախ ուղեց իմանալ թէ Հայոց ազգն
ու Հայաստան գտնուող նախարարներն ուս-
կից յառաջ եկած են, և անոնց պատմու-
թիւնն ի՞նչ է :

Հ. Վաղարշակ ուղած պատմութիւնը կրցա՞-
գունաւ :

Պ. Մար-Արա կատինա անունով մէկը
նինուէ խաւրեց որ հոն գրատան մէջն Հա-

յոց պատմութիւնը գոնելով բերաւ Հայաստան :

Հ. Վաղարշակ ուրիշ ի՞նչ ըրաւ :

Պ. Վաղարշակ, Մորքիւթիւնի Հայոց գըլիստոր թշնամին բռնելով սպաննեց և արքունեաց մէջ նորանոր օրէնքներ և բարեկարգութիւններ հաստատելինեաքը 22 տարի թագաւորելով մեռաւ :

Հ. Վաղարշակին ո՞լ յաջորդեց :

Պ. Արշակ Ա. իւր սրդին, որ իւր հօրը նըման քաջութեամբ երեւելի եղաւ, Պօնտացիները նուաճեց և ՚ի նշան յաղթութեան կոթող մը տնկեց ծովունեղերքը և նիզակով զարկաւ ծակեց քարը. Բազ բատունիներուն ալ բաւական նեղութիւններ տուաւ որ Հրեական կրօնքը թողաւն, և 13 տարի թագաւորելով մեռաւ :

Հ. Արշակ Ա. ին ո՞լ յաջորդեց :

Պ. Արտաշէս Ա. որ Յունաստանի և բոլոր փոքր Ասիոյ տիրեց և Պարսից թագաւորն՝ որ ինչուան այն ատեն պատուով առաջին էր, իրեն երկրորդն ըրաւ և իր անուամբը ստակ կոխեց, իւր Արտաշամաաղջիկը Միհրդատին տուաւ որ վրաց բգեշին էր :

Հ. Արտաշիսի զօրացը վրայ ի՞նչ կը պատմուի :

Պ. Երբոր ամենքը միաբան նետ ձգէին

արեւը կը խափանէր, և երբոր մէկ մէկ քար նետէին բլուր մը կը ձեւանար : Արտաշէս երբ կը պատրաստուէր Եւրոպա անցնել անհամար զօրքով, ինքն ալ սպաննուեցաւ իւր զօրքերէն 25 տարի թագաւորելէ ետքը :

Հ. Ո՞վ յաջորդեց Արտաշիսի :

Պ. Իւր որդին Տիգրան՝ որ իւր հօրը ողջութեանը երկու տարի առաջ թագաւորած էր. սա նախ Յոյները նուաճեց որ ապաստմբած էին և իւր Միհրդատ քեռայրը իրեն փոխանորդ դրաւ, յետոյ Ասորւոց երկրին տիրելով Պաղեստինի վրայ ալ գնաց, բայց Հըեւց Աղէքսանդր Դշխայն շատ ընծաններ տալով Տիգրանին սիրտն առաւ և խաղաղութեամբ ետ դարձուց :

Հ. Տիգրանայ վրայ ուրիշ ի՞նչ դիտելիք կայ :

Պ. Շատ մեհեաններ շինել տուաւ և Յունաստանէն բերած կուռքերն անոնց մէջ դնելով քուրմեր հաստատեց, և իւր անզուդական քաջութեամբը նոյն իսկ Հռովմայեցւոց մէջ մեծ համբաւ ստացաւ :

Հ. Ի՞նչ պատճառաւ թշնամացան Հայք Հըովմայեցւոց հետ :

Պ. Միհրդատ՝ Տիգրանայ քեռայրը կապագովիոյ իշխելով իր Արիարաթ որդին անոնց վրայ թագաւոր դրաւ. Հռովմայեցիք

ալ եւազադովիլիացւոց օդնութեան խառըեցին Սիլլա քաջ զօրապետը՝ որ եկաւ Արքաթը վրնտեց և Արքաբուրզան կազադամիլային թագաւոր դրաւ . Միհրդատ Տիգրանէն օդնութիւն առնելով Հռովմայեցիները վրնտեց և նորէն Արքարաթը թագաւոր դրաւ :

Հ. Հռովմայեցիք այս լսելով ի՞նչ ըրիմ :

Պ. Ա. Ա և այլ զօրապետներ խառըեցին, ոյ ըսնց շատ անդամ՝ յաղթեց Միհրդատ և Ակիւզաս զօրապետին բերնէն փոր հազած ուին լցնելով սպաննեց . բայց երր տեսաւ իւր փառնակէս սրդւոյն անսնց կողմն անցնիլը՝ յաւսահատելով ինքինքն սպաննեց :

Հ. Տիգրան Միհրդատայ մահը լսելով ի՞նչ ըրաւ :

Պ. Տեսնելով Հռովմայեցւոց յարձակումները՝ առաջնութիւնը Գարսից Արշէղ թագաւորին տուաւ որ իրեն օդնէ . և որովհետեւ ինքը բաւական ծերացած էր՝ Հայ և Պարսիկ բանակին ընդհանուր սպարապետ կարգեց Բարզափրան քաջ Հայ նախարարը :

Հ. Բարզափրան ի՞նչ քաջաւթիւններ ըրաւ :

Պ. Բոլոր Ասորւոց երկրին տիրեց, վարպետութեամբ Երուսաղէմն ալ առաւ Հռովմայեցւոց ձեռքէն, Տիգրան այս փառաւոր յալ թութիւնները տեսնելով ուրախութեամբ

մեռաւ 83 տարի ապրելէն և 34 տարի թագաւորելէն վերջը :

Հ. Ո՞վ յաջորդեց Տիգրանին :

Պ. Իր Արտաւազդ որդին որ ինքինքը բուըլովին կերտուխումի տուաւ, որով Անտոնինու նոս Հռովմայեցւոց զօրափարը բոլոր Ասորւոց երկրին տիրեց և Արտաւազդն ալ խաբէութեամբ բռնելով Եդիպսոս տարաւ, խոսամանը հակառակ Պարսից թագաւորին օդնելուն համար :

Հ. Արտաւազդին ո՞վ յաջորդեց :

Պ. Հայաստան քիչ մը ատեն Հռովմայեցւոց իշխանութեան տակ մնալէն եաքը Տիգրանին եղրորդին՝ Արշամ թագաւորեց Հայոց . և աւելի խաղաղանէր ըլլալուն Հռովմայեցւոց հարկասու եղաւ և 29 տարի թագաւորելէն վերջը մեռաւ :



ԳԼՈՒԽ Բ.

Ա.ԲԳ.Ա.ԲԻՆ ՄԻՒԶԵԿ Ա.ԲՏԱ.Ի.Ա.ԶԴ.Բ. Բ.

Հ. Արշամայ յաջորդն ո՞վ եղաւ :

Պ. Արգար իր որդին . ասիկայ խազազամէր անձ մը ըլլալուն իր թագաւորութեամբ

երորդ տարին, Հայաստան բոլորովին Հռովել
մայեցւոց հարկատու եղաւ, և Օգոստոս կայ-
սեր պատկերը Հայոց մեհեաններուն մէջ
կախուիլ սկսաւ. թէպէտ Հերովդէս Հրէից
թագաւորն ալ ամբարտաւանութեամբ ու-
զեց որ իր պատկերն ալ Հայոց մեհեաննե-
րուն մէջ կախուի, բայց Արքար յանձն չառ-
նելով պատմերազմի ելաւ և յաղթեց Հերով-
դէսին :

Հ. Արքար ինչո՞ւ ապստամբիլ ուզեց Հը-
ռովմայեցւոցմէ :

Պ. Վասն զի խնդակցութեան համար դա-
ցած Հայ գեսպաններն անտրգուեր էին.
ուստի ամոռուը Եղեսիս փոխադրեց և սկը-
սաւ ամրացնել զայն. բայց նոյն օրերը Ար-
տաշիր Պարուց թագաւորը մեռներվ՝ անոր
որդւոցը մէջ ծագած խռովութիւնը խաղա-
ղեցնելու համար Պարսկաստան գնաց և վե-
րադարձաւ սաստիկ բորոտութենէ մը բըռ-
նուած :

Հ. Արքար ի՞նչպէս բժշկուեցաւ :

Պ. Բժիշկներուն ճարտարութիւնը ոչինչ
օդանց . և որովհետեւ Պարսկաստան երթա-
լուն պատճառն խացնելու Պաղեստին գես-
պան խաւրեր էր, գեսպաններն հոն Քրիս-
տոսի հրաշագործութիւնները տեսնելով ե-
կան պատմեցին Արքարու. Արքար ալ նա-

մակ գրեց Քրիստոսի, աղաշելով որ գայ Հա-
յաստան և զինքը բժշկէ և եթէ ինքն ան-
ձամբ չկրնայ գալ, գոնէ իւր պատկերը
խաւրէ :

Հ. Արքար ի՞նչպէս նամակ գրեց Քրիս-
տոսի :

Պ. “Արքար Արշամին որդին աշխարհի իշ-
խան, Քրիշ ու բարերար Յիսուսին՝ որն որ
Երուսաղէմի մէջ երեւեցար

Ողջոյն .

“Քու անունու և քու առանց դեղի ըրած-
բժշկութիւններդ լսեցի. վասն զի, ինչպէս
որ կ'ըսեն, գուն կոյրերուն աչքը կը բանաս,
կաղերը կը քալեցնես, բորսաները կը սըր-
բես, սատանաները կը հանես և երկայն ա-
տեն հիւանդութիւն ունեցողները կ'առող-
ջացնես, նաեւ մեռեներն ալ կը յարուցա-
նես. Երբոր այս ամեն բան լսեցի, միտքս
դըի որ գուն՝ կամ Աստուած ես երկինքէն
իջած այս բաները կ'ընես, և կամ Աստու-
ծոյ որդի ես. ուստի քեզի գրեցի և աղա-
շեցի որ գաս և իմ հիւանդութիւնս բժըշ-
կես. Լսեցի ալ որ Հրեայները քու վրագ-
տրատունջ կ'ընեն ու կ'ուզեն զերեղ չարչարել
և մեռցնել. Եկու իմ քովը՝ ես պղտիկ ու
գեղեցիկ քաղաք մ'ունիմ, որն որ երկուք-
նուս ալ բաւական է ”:

Հ. Քրիստոս կատարեց Արդարու խնդիրը :
 Պ. Յիսուս Քրիստոս իւր պատկերն և նա մակը Անանէ սուրհանդակին տալով կը դովեց Արդարին հաւատքը և կը խոստանայ իւր աշակերտներէն մին խաւրել, իր համբարձ մանէն վերջը, ինչպէս որ թագէոս առաք եալը եկաւ, բժշկեց զԱրդար, քարոզեց Քրիստոնէութիւնը և հաստատեց սուրբ եկեղեցին. Արդար 38 տարի թագաւորելէն ետքը պրոտօնեամբ մեռաւ Քրիստոսի 34 թուականին :

Հ. Քրիստոսի նամակն ի՞նչպէս էր,

Պ. “Երանի անոր՝ որնոր գեռ չէ տեսած և ինծի կը հաւատայ. վասն զի ինծի համար գլուած է թէ՝ ով որ զիս կը տեսնէ, ինծի չպիտի հաւատայ, և որոնք որ չեն տեսած անոնք պիտի հաւատան ու փրկուին. իսկ այն բանին համար որ գրած ես թէ քեզի գամ, պէտք է որ ես ինչ գործքի համար որ հոս խաւրուած եմ, զայն կատարեմ. և երբ որ կատարեմ, զիս խրկողին քով պիտի համբառնամ. համբառնալէս ետքը քեզի աշակերտներէս մէկը կը խաւրեմ, որ քու ցաւերդ բժշկէ, ու քեզի և քու հպատականերուդ կեանք պարզեւէն :

Հ. Արդարու ո՞վ յաջորդեց :

Պ. Արդարու մեռնելէն ետքը Հայոց թա-

դաւորութիւնը երկու քի բաժնուեցաւ, Անանէ իր որդին՝ Եգեռույց մէջ թագաւորեց, և կռապաշտութիւնը նորէն սկսաւ. Սանատըուկ քեռորդին ալ Հայաստանի մէջ թագաւորեց, բայց Անանէ և ասրի թագաւորութիւնը վերջը՝ նորոգ ել տուած պալատին մէջ վրան սիւն մը իշնալով մեռաւ, ուստի Եղեսացիք ալ Սանատըուկն իրենց թագաւորը ընդունեցին երդմնացունելով որ Քրիստոնէութիւնն ազատ պաշտուի :

Հ. Սանատըուկ երդմանը վրայ հաստատ կեցան .

Պ. Ոչ. հասպա՛ շատ քրիստոնեաններ նաև հատակեց, որոնց մէջն էրն Աղողէ անունով սուրբ Հայրապետը և իւր Ասենութափ աղջիկը, Մծրին քաղաքն ալ նորոգ ել տալով մէջ տեղն իւր արձանը կանգնեց ձեռքը դրամ մը տուած իմայնել ու զելով որ բոլոր ունեցածը ծախեր է այն քաղաքը շինելու համար. Սանատըուկ Յ՛ տարի թագաւորելէն ետքը մեռաւ որսի տուեն դիպուածով նետէ մը զարնուելով :

Հ. Սանատըուկին ո՞վ յաջորդեց :

Պ. Երուանդ, որ թէպէտեւ Արշակունի էր՝ բայց թագաւորական ցեղէ չը ասիկայ. իր քաջութեամբը և քաղցրաբարոյութեամբը բոլոր նախարարաց ոիրոն իրեն գըտելով

թագաւոր եղաւ և թագաւորութիւնը ապահովիցնելու համար Սանատորկոյ բոլոր ցեղը թրէ անցուց, միայն Արտաշէս անուամբ պղտի տղայ մը փախաւ Պարսկաստան Սմբատ Բագրատունիին ձեռոք:

Հ. Երուանդ իւր գահը կրցա՞ւ ապահով ցընել:

Պ. Արտաշիսի Պարսկաստան փախչիլը զինքը անհանգիստ կընէր. ուստի փոքր Հայքը Հոռվմայեցւոց տուաւ ու ինքն Երուանդաշատ քաղաքը շինելով ամոռը հոն փոխադրեց. ասոնցմէ զատ երբ իմացաւ, որ Սմբատ Պարսից Դարեհ թագաւորին օգնութեամբը Արտաշէսը Հայաստան կը բերէ թագաւորեցնելու համար, պատերազմի պատրաստութիւններ ըրաւ:

Հ. Երուանդ ուր պատրաստուեցաւ պատերազմի:

Պ. Ախուլեան գետին քով վարձուոր զօրքերէ ահագին բանակ մը պատրաստեց և երկու կողմն ալ սկսան սաստիկ պատերազմիլ, բայց պատերազմին տաքցած ժամանակ նախարարներէն շատերը Արտաշիսի կողմն անցան, անոնց մէջ դլխուորն էր Արդամքաջ նախարարը. Երտանդ սահմուեցաւ փախչիլ Երուանդաշատ, հոն հասան Հայոց զօրքերը, Երուանդաշատն առին և Երուանդն

ալ սպաննեցին 20 տարի թագաւորելէն ետքը Արտաշէս փառաւոր շիրիմ՝ մը կանգնել տըւաւ երուանդայ գերեզմանին վրայ՝ մօր կողմանէ Արշակունի ըլլալուն համար:

Հ. Արտաշէս Բ. իր բարերարացը հետ ի՞նչ պէս վարուեցաւ:

Պ. Արտաշէս թագաւորելուն պէս իր ազատիչ Սմբատը. Հայոց զօրքերուն ընդհանուր սպարապետ դրաւ, Արդամն ալ իրեն երկրորդ ըրաւ և Գիտակ իշխանին Ներսէս որդին ալ նախարարաց կարգը դասելով Դիմաքսեան անունը դրաւ անոր ցեղին՝ 'ի յիշատակ Գիտակայ վԱրտաշէս ազատելուն համար դէմքին կէսը կորմնցընելով մեռնելուն:

Հ. Արտաշէս ուրիշ որո՞նց հետ պատերազմը ունեցաւ:

Պ. Ալանաց թագաւորին հետ՝ որուն տըղան գերի բռնուեցաւ պատերազմին մէջ, բայց Ալանաց թագաւորին Սաթինիկ անուամբ աղջկանը աղջանացը զիջանելով՝ Արտաշէս ազատեց անոր եղբայրը և Սաթինիկն իրեն կին առաւ:

Հ. Արտաշէս Հոռվմայեցւոց հետ ի՞նչ պէս վարուեցաւ:

Պ. Արտաշէս Հոռվմայեցւոց հարկ տան ալ գագրեցուց և քանի մը անգամ վշնտեց վանոնք Հայաստանէն. բայց վերջը երբ Տը-

բայիանոս կայսեր ամիթիւ բազմութեամբ գաւը լսեց՝ վախնալով շատ ընծաներ առած դիմացն երաւ և պարագերը վճարելով հաշտութիւն ըրաւ :

Հ. Արտաշէս ի՞նչ բարեկարդ ութիւններ ըրաւ Հայաստանի մէջ :

Պ. Թէ ուսմամբ, թէ արուեստիւ և թէ մը շակալութեամբ Հայաստանը ծաղկեցնելու հոգ տարաւ, գետերուն և լճերուն վրայ նաւազնացութիւններ հաստատեց . այնպէս որ օր ըստ օրէ օտար երկիրներէ անհամար գաղթականութիւններ կուգային Հայաստանի մէջ բնակելու համար . Արտաշէս 41 տարի իւր ժողովուրդը խաղաղութեամբ կառավարելէն ետքը մեռաւ Մարանդ գաւառը, և իւր մահուանը վրայ այնպէս սպացին Հայերը՝ որ շատերն ինքզինքնին ողջ ողջ սպաննեցին Արտաշիսի գերեզմանին վրայ :

ԳԼՈՒԽ Գ.

ԱՐՏԱԿԱԶՄ Բ. ԵՆ ՄԻՉՉԵՒ ՄԵԾԻՆ ՏՐԴԱՏԱՅ

ԹԱԳԱՀՈՐԵԼԸ

Հ. Արտաշէս Բ. ի ով յաջորդեց :

Պ. Իւր որդին Արտաւազդ Բ. որ զբօսաւէր և անկարգ կեանք մը ունենալուն օր մը

որսի ելսծ առեն խորունկ փսսի մը մէջ կյալով՝ կարուեցաւ 2 տարի թաղաւորելէն ետքը :

Հ. Արտաւազդայ վրայ ի՞նչ առասպելներ կը պատմնի :

Պ. Արտաւազդայ վրայ առասպելով կը պատմէն թէ, այրի մը մէջ շղթայով կապուած է և երկու որսի շուները միշտ կը կը ծեն այն շղթան, որպէս զի բրթի և Արտաւազդ ենէ աշխարհքը կործանէ . բայց դարբիններուն երկաթ ծեծելու ձայնէն նորէն կը զօրանան շղթաները .

Հ. Արտաւազդայ ով յաջորդեց :

Պ. Իւր եղբայրը Տիգրան, որ եղբօրը նըման անկարգ կեանք մը վարեց և 21 տարի թաղաւորելէ ետքը՝ օր մը ճամբան ծիւնի բռնուելով մեռաւ, և իրեն յաջորդեց եղեղբայրը Տիգրան Գ.

Հ. Տիգրանի վրայ ի՞նչ դիտելիք կայ :

Պ. Տիգրան քաջ և արիասիրա ըլլալով միապանեցաւ զարսից Փերող թաղաւորին հետ, յաղթեց Հռովմայեցաց և իր բանակին գըլուին անյած փոքր Ասիս կազմելին արշաւեց, բայց հնա իշխող թագուհիէ մը խարուելով զերի բռնուեցաւ : Նոյն միջոցին Դուկիս վերու՝ Աւրեղիսս կայսեր դահակիցը Հայոց վրայ գալով, երբ իմացաւ Տիգ-

բանայ գերութիւնը՝ աղասեց զանի և չաշաստան խաւրեց. Տիգրան 42 տարի թագաւորելէն ետքը մեռաւ.

Հ. Տիգրանին ովլ յաջորդեց :

Պ. Խոր որդին վաղարշ . ասիկայ վաղարշապատ քաղաքը չինեց : Ասոր ատենները հիւսիսային ազգերը Հայաստան արշաւեցին, վաղարշ անոնց դէմ քաջութեամբ պատերազմելով մեռաւ 20 տարի թագաւորելէն ետքը . իրեն յաջորդեց որդին Խոսրով Ա. որ Խոսրով մեծ կոչուեցաւ :

Հ. Մեծն Խոսրովու վրայ ի՞նչ կը պատմուի :

Պ. Խոսրովի իր հօրը տեղն անցնելուն պէս Հիւսիսային ազգաց վրայ պատերազմի ելաւ, յաղթեց անոնց, Հռովմայեցիներն ալ դարկաւ փախուց՝ որոնք Հայաստանը բոլորովին նուաճելու համար Հայոց վրայ եկեր էին. Պարսից հետ ալ պատերազմ ունեցաւ, որով հետեւ Արտաշիր անունով իշխան մը Պարսից Արշակունի Արտաւան թագաւորը մերացընելով ինքը թագաւորեր էր, ասոր համար Խոսրով անոր դէմն ելաւ և միշտ յաղթելով մինչեւ Հնդկաստան փախուց :

Հ. Արշաւիր ի՞նչ հնարք մտածեց Խոսրովը յաղթելու :

Պ. Մեծամեծ պարգեւներ խոստացաւ Խոսրովը մեռցնողին. այս բանը յանձն առաւ

Անակ Պահաւունի նախարարը, և ձեւացը նելով որ Արտաշըրի բռնութիւններէն փախերէ, եկաւ Հայաստան . ճամբան գալու ատեն որդի մը ունեցաւ՝ այն իսկ է մերսուրին Գրիգոր Լուսաւորիչ :

Հ. Անակ իր չարութեան խորհուրդը կատարեց :

Պ. Անակ քիչ ժամանակին յաջողեցաւ . օր մը որսի ելած ժամանակին զարկաւ սպաննեց զխոսրով և ինքն ալ փախչելու ատեն գետն ինկաւ ու խեղդուեցաւ :

Հ. Խոսրովու մեռնելէն ետքը Հայոց վիճակն ի՞նչ եղաւ :

Պ. Արտաշիր եկաւ Հայաստան, բոլոր Հայոց տիրեց . Խոսրովու ցեղը ջնջել տուաւ՝ որոնցմէ Տրդատ անունով մանչ մը ու անոր Խոսրովիդուխտ քոյրը աղատեցան Արտաշագդ . Մանդակունիին և Յասա Ամատունիին ձեռօք՝ որ առաջինը Հռովմ և երկրորդը կեսարիա փախուցին :


Հ. Տրդատ Հռովմայեցւոց հետ ի՞նչպէս վարուեցաւ :

Պ. Շատ քաջութիւններ ընելով մեծ համբաւ ստացաւ Հռովմայ մէջ . անդամ մը մէկ ձեռքով երկու վայրենի ցուլերու եղջիւռներէն բռնեց և երկուքն ալ սպաննեց . օրմալ ձիբնթացի մէջ հակառակորդին ճար-

տարութեամբը կառքէն վար ինկաւ . ասոր
վրայ Տրդատ սաստիկ բարկանալով կառքին
ետեւէն այսպէս ուժով բռնեց որ ձիերը չկըր-
ցան յառաջ երթալ . ուրիշ օր մ'ալ գոթաց-
ւոց Հռչէ թաղաւորին հետ մենամարտե-
լով բռնեց զայն և Հռովմայեցիները մեծ նա-
խատինքէ մը աղասեց :

Հ. Հռովմայեցիք ի՞նչպէս վարձատրեցին
զըրդատ :

Պ. Գիտկընեափանոս կայսրը ուրախանալով
ուղեց զըրդատ վարձատրել . և երբ իմայաւ
որ Հայոց թագաւորին որդին է , թագաւու-
րական զգեստներ հագուց , զլուխը թագ-
դրաւ և շատ զօրքով խաւրեց Հայաստան .
այս միջոցին Հայաստանի վրայ իշխողը Ար-
տաշիրի որդին Շապուհն էր . երբ Տրդատ
կեսարիա հասաւ , բոլոր նախարարները դի-
մացն ելան և զինքը թագաւոր դրին ընդհաւ-
նուր Հայաստանի :



ԳԼՈՒԽ Դ.

ՏՐԴԱՏԱՅ ԹԱԳԱՒՈՐԵԼԻՆ ՄԻՆՉԵՒ ԱՐԴԱԿ Բ.

Հ. Ի՞նչպէս վանտեց Տրդատ Շապուհը Հա-
յաստանէն :

Պ. Տրդատ Հայ և Հռովմայեցի զօրքե-

րուն դլուխն անցած Շապուհի դէմն ելաւ
և յազթեց անոր՝ մինչեւ որ բոլորովին վալն-
տեց Հայաստանէն և մօտակայ աղգերուն
սիրազ վախ ձգեց . Եկեղեցաց գաւառէն անց-
նելու ատեն Անահիտ շատուծոյն Հնորհակա-
լութեան զոհ մատոյց և խատիւ հրաման հա-
նեց որ ամեն տեղ կռոյ յարդանք մատու-
ցանեն :

Հ. Եկեղեցաց գաւառէն մէջ ի՞նչ պատա-
հեցաւ :

Պ. Տրդատ իմանալով որ նոյն գաւառէն
մէջ Քրիստոնէուներ կան և իր հրամանին
հակառակ Քրիստոնէութիւնը կը պաշտեն ,
խստիւ հրաման հանեց որ ամեն միջոց ՚ի
գործ դլուի Քրիստոնէութիւնը ջնջելու .
ուստի շատերը նահատակեցան , ասոնց մէջ
էր նաև սուրբն Գրիգոր՝ որ Անակայ որդին
ըլլալն իմանալով՝ շատ մը շարչարելէն ետքը
Արտաշատ քաղքին խոր վիրապին մէջ նե-
տել տուաւ :

Հ. Տրդատայ ի՞նչ դէպք պատահեցաւ :

Պ. Նոյն օրերը Հռովմի մէջ ալ Քրիստոնէ-
ութեան գէմ սաստիկ հալածանք ելնելուն
Հռիփսիմեանց կուսանք փախեր Հայաստան
եկեր էին . Տրդատ Հռիփսիմէին գեղեցիու-
թեանը հաւնելով ուղեց իրեն կին առնուլ .
սուրբ կոյսը մերժեց , ուստի Տրդատ ալ

բարկանալով թրէ անցնել տուաւ զամենքն ալ . բայց ինքն ալ Աստուծմէ պատժուելով օր մը որսի ատեն խոզի կերպարանք մտաւ իր մէկ քանի իշխաններովը .

Հ. Ո՞վ բժշկեց զջրդատ :

Պ. Սուրբն Գրիգոր՝ որ 14 տարի վիրապին մէջ Աստուածային զօրութեամբ ողջ մնացած էր : Տրդատայ Խոսրովիդու խոտ քրոջը երազին մէջ Աստուծոյ հրեշտակն իմացուց , թէ մինչեւ որ Անակայ որդին Գրիգորը վերապէն չելնէ՝ անկարելի է Տրդատայ բժշկութիւնը . այն ալ Օտա նախարարը խաւրեց որ գնաց Գրիգորը վիրապէն գուրս հանեց :

Հ. Մ. Գրիգոր ի՞նչ ըրաւ :

Պ. Սուրբն Գրիգոր բժշկեց զջրդատ և միւս հարուածեաները . Հռիփսիմեանց ոսկերացը վկայարաններ շինեց , հաւատացեաները մը կըրտեց և ինքն ալ կեսարիա գնաց ու հոն Արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ Ղեւոնդ Արքեպիսկոպոսէն :

Հ. Քրիստոնէութիւնը ի՞նչպէս տարածուեցաւ Հայաստան :

Պ. Տրդատ Քրիստոնէայ ըլլալէն վերջը սրբոյն Գրիգորի հետ միացած կուտունները կործանեց , քուրմերն և անոնց պաշտամունքը ջնջեց , որոնց

մէջ ամենէն նշանաւորն ու փառաւորն եղաւ սուրբ Էջմիածին :

Հ. Ա. Գրիգոր ի՞նչպէս լուսաւորիչ ըսուեցաւ :

Պ. Ասկէ վերջը սուրբն Գրիգոր Հայաստանի ամեն կողմերը կը պարտէր Քրիստոնէութիւնը կը քարոզէր , հաւատացեաները կը մկրտէր , և այսպէս անդուլ քարոզութեամբը լուսաւորեց բոլոր Հայաստանը , որուն համար Լուսաւորիչ ըսուեցաւ :

Հ. Տրդատ Քրիստոնէայ ըլլալէն ետքը ու բու հետ պատերազմ ունեցաւ :

Պ. Տրդատ Ներքին բարեկարգութեան ըլլալած միջոցին՝ Հիւսիսոյին ազգերը Շասպուհի հետ միացած մկսան Հայաստան արշաւել , որոնց գէմն ենելով Տրդատ ամենքն ալ հալածեց . այս միջոցին Մամկուն ձենացի իշխանը Հայաստան եկաւ , յորմէ սերեցաւ Մամիկոնեան նախարարութիւնը :

Հ. Ա. միջոցիս ուրիշ ի՞նչ երեւելի դիպուած պատահեցաւ :

Պ. Ա.յս միջոցիս Նեկիոյ սուրբ ժողովքն եղաւ՝ որուն ներկայ էր Հայոց կողմէն սուրբն Արիստակէն՝ սուրբ Լուսաւորչի պատի որդին , որն որ Հանգանակը Հայաստան բերաւ . և Ա. Լուսաւորիչ հոգեւորական կառավարութիւնը յանձնելով որդւոյն՝ ինքն Մանեայ

այրը քաշուեցաւ, որ ճգնութեամբ և ազօթքով անցուց մինչեւ իր վախճանը :

Հ. Ալըշափ ատեն թագաւորեց Տրդատ :

Պ. Տեսնելով նախարարաց անկարգութիւնն ները՝ թողաւց թագաւորութիւնն ու սուրբ Լուսաւորչայ ճգնաբանը քաշուեցաւ. նա խարարները շատ ազացեցին որ գայ թագաւորութիւնը ձեռքք առնէ. բայց երբ Տրդատ յանձն չառաւ՝ թունաւորեցին զինքն և ասանկով այն Քրիստոնեայ և քաջ թագաւորին կեանքը կարծեցին 83 տարեկան հասակին մէջ, 34 տարի թագաւորելին ետքը :

Հ. Տրդատայ մեռնելին ետեւ ի՞նչ եղաւ Հայաստան :

Պ. Տակնուվքայ եղաւ Հայաստան. Բինունեանց, Մանաւազեանց և Որդունեանց ցեղերը իրարու հետ պատերազմելով ջնջուեցան, Աղուանք ապստամբեցան և Սանաւրուկ անունով մէկը թագաւոր դրին իրենց վրայ, նոյնով Բակուր Աղձնեաց իշխանն ապստամբեցաւ :

Հ. Հայոց խելացի նախարարներն այս գէշ շութիւններուն ճար մը չը գտա՞ն :

Պ. Հայոց խելացի նախարարներն ասնց առաջքն առնելու համար սուրբ Վրթանէս կաթուղիկոսն հետ միացած՝ Տրդատայ որդին խոսրով Բայ թագաւոր դրին, Հռովմայ

Կոստանդ կայորն ալ թագ ու ծիրանի խառըեց խոսրովին :

Հ. Խոսրով Բային վրայ ի՞նչ գիտելիք կայ : Պ. Իր հօրը քաջութիւններէն բոլորովին զուրի, մերկ և զբօսասէր կեանք մը անցուց. ասոր օրով ծառպուհ և հիւսիսային ազգերը մեծ պատրաստութեամբ Հայաստան արշաւել լով մինչեւ վաղարշապատ հասեր էին, ասոնց դէմն ելաւ վահան Ամաստոնի քաջ զօրավարը և Հայերը հմա այնպիսի կատաղութեամբ պատերազմեցան, որ թշնամեաց նետնետելու տաեն թող չսալով սաստկապէս հալածեցին զամենքն ալ. Խոսրով 9 տարի թագաւորելին ետքը մեռաւ :

Հ. Խոսրով Բ. ի ով յաջորդեց :

Պ. Իր որդին Տիրան Բ. որ սուրբ Վրթանեսին հետ կոստանդնուպոլիս երթալով թագաւոր պսակուեցաւ կոստանդ կայսրէն. Շապուհ Տիրանին կոստանդնուպոլիս երթալի իմանալով՝ անհամար զօրքով Հայաստան խաւրեց իր Ներսէ եղայրը, բայց Արշաւիր կամարական՝ որտն յանձնուած էր Հայաստանը, միայնելով նախարարները՝ յաղթեց թշնամոյն և վրնուեց զներսէ :

Հ. Տիրան ի՞նչպէս կառավարեց երբոր Հայաստան վերադարձաւ :

Պ. Բոլորովին անկարդ ութեամբ. Շապու

Հին հետ ալ հաշտութիւն խօսելով սկսաւ
տուրք տալ անո՞ր՝ ինչպէս Յունաց կուտար։
բայց քիչ մը վերջը թշնամացան Յուլիանոս
Յունաց կայսեր օդնելուն համար։ Տիրանի
անգթութեան ամենէն մեծն եղաւ Յուսիկ
սուրբ հայրապետը ծեծելով սպաննել տալը,
Յուլիանոս ուրացող կայսեր պատկերը եկե-
զեցւոյ մէջ կախել չտալուն համար, բայց
ինքն ալ պատիժը շուտով առաւ։

Հ. Ի՞նչ պատիժ ընդունեցաւ Տիրան։

Պ. Յուլիանոս Պարսից դէմ ըրած պատե-
րազմին մէջ զարնուելով մեռաւ. և Շապուհ
Տիրանէն վրէժը լուծելու համար բարեկա-
մութիւն կեզծերով՝ իրեն կանչեց զինքը և
աչքերը կուրցնել տուաւ. այսպէս Տիրան
թշուառութեամբ. Ա տարի թագաւորելէն
վերջը իր Արշակ որդիէն սպաննուեցաւ։

~~~~~

## ԳԼՈՒԽ Ե.

ԱՐԵԱԿ Բ. ԷՆ ՄԻՒԶԵՒ ԱՐԵԱԿ Գ.

ԵՒ Ա.Ա.ԱՐԵԱԿ Բ.

Հ. Տիրան Բ. ին ո՞վ յաջորդեց։

Պ. Իր որդին Արշակ որ Արշակունի թա-  
գաւորաց մէջ ամենէն մոլի, անկարգ և վա-

տարարոյն եղաւ և Յունաց և Պարսից ալ խա-  
ղալիկ, վամ զի Յոյնք և Պարսիկք իրենց  
մէջ ունեցած ատելութենէն, Յոյնք ստիպե-  
ցին զինքը՝ որ Պարսից չծառայէ, բայց երբ  
Արշակ մոլիկ ըըրաւ՝ թէովոս Յոյն զօրապե-  
տը ահադին բազմութեամբ սկսաւ Հայաս-  
տան գուլ. ան ատեն լիեծն Ներսէն՝ սուրբ  
Գրիգոր լուսաւորչի թոռան թոռը կ, Պոլիս  
գնաց և Վաղենտիանոս կայսեր բարկութիւ-  
նը իշեցուց։

Հ. Արշակ ուրիշ ի՞նչ անիրաւութիւններ  
ըրաւ։

Պ. Իր Տրդատ եղբօրը Գնել որդւոյն հա-  
ըըստութեանն և ամուսնոյն վրայ նախանձե-  
լով սպաննել տուաւ զանի և անոր Փառան-  
ձեմ կինն ալ իրեն կին առաւ. Փառանձեմ  
ալ Արշակայ Աղիմպիադայ կինը թունաու-  
րեց անարժան քահանայի մը ձեռօք։ Ասկից  
զատ Արշակ Արշակաւան անունով քաղաք  
մալ շինել տուաւ, առանց նախարարաց  
խորհրդին անսալու։

Հ. Արշակ ի՞նչպէս շենցուց Արշակաւանը։

Պ. Հրաման հանեց որ հոն դիմով յան-  
ցաւորներն աղատ են դատաստանէ. այս  
լսելով չարագործ մարդիկ անմիջապէս հոն  
գիմեցին, թէպէտեւ նախարարք այս ան-  
կարգութեան դէմ բողոքեցին. վասն զի

շատերուն ծառաներն իրենց սկրոջ ինչքերը  
յափշտակելով կամ գողնալով Արշակուան  
փախած էին, բայց Արշակ մտիկ չըրաւ-  
ուստի նախարարներն օգնութեան կանչեցին  
զնապուհ, Արշակուաներ կարծ անեցին. Արշակ  
ալ նեղը մնալով Վրաց ապաւինեցաւ օգնու-  
թիւն գտնելու համար :

Հ. Արշակ Վրացոցմէ օգնութիւն գտան :  
Պ. Շատ զօրք առնելով եկաւ Հայաստան-  
և սկսաւ պատերազմիլ նախարարաց դէմ,  
նոյն միջոցին Յունաց Վաղէս կայսրն ալ Ար-  
շակյ դէմ զօրք խաւրեց լսելով՝ որ Ար-  
շակ Պարսից օգներ էր Յունաց դէմ գալու  
ատեն. սոսկալի եղաւ արիւնիեղութիւնը,  
Արշակ նեղը մնալով սուրբ Ներսիսի դիմեց՝  
որ մեծ դժուարութեամբ նախարարները  
հաշոեցաւ և Յոյներն ալ Արշակյ Պապ որ-  
դին պատանդ առնելով՝ դարձան կոստանդ-  
նուպոլիս սուրբ Ներսիսին հետ :

Հ. Սրբոյն Ներսիսի ի՞նչ պատահեցաւ կոս-  
տանդնուպոլույ մէջ :

Պ. Վաղէս կայսրն առանց սրբոյն Ներսիսի-  
երեսը տեսնելու աքսորել հրամացեց, և  
սուրբն Ներսէս նաւով երթալու ատեն նա-  
ւը անմարդաբնակ կզզիի մը քով ցամաքը  
դարնուելով ջախջախեցաւ, սուրբ Ներսէս  
ութն ամիս հնն մնաց, որն որ Աստուծոյ իր

նամքովը ծովուն ալիքներուն ամեն օր  
դուրս նետած ձկներովը կը կերակրէր :  
Հ. Արշակ ի՞նչպէս վարուեցաւ նախարար-  
ներուն հետ :

Պ. Ա. Ներսիսի Հայաստանէն հեռացած  
ատեն, Արշակ իր օխը նախարարներէն սկը-  
սաւ հանել, որոնցմէ շատերն սպաննել ար-  
ւաւ, Ներսէս կամսարականին ցեղն ալ բո-  
լորովին ջնջեց. այս միջոցին Շապուհ՝ Ալանո-  
ղան Փարլմեր իշխանը շատ զօրքով Հայաս-  
տան խաւրեց, նախարարներէն շատերն Ար-  
շակին բարկացած ըլլանուն ամենը մէյմէկ  
կողմ քաշուեցան. Արշակ ալ մինակ մնալուն  
ճարը հատած ելաւ Շապուհին գնաց, որ քիչ  
մը ատեն պատուով պահելէն վերջը շլթա-  
յով կապած Անյուշ բերդը խաւրեց :

Հ. Արշակ ի՞նչո՞ւ ինքինքն սպաննեց :

Պ. Շապուհ Մերուժան Արծրունի և Վա-  
հան Մամիկոնեան ուրացեալ Հայ նախարար-  
ներն իր կողմը շահելով, բազմաթիւ զօրք  
տուաւ ձեռուընին և Հայաստան զրկեց որ  
երթան Հայերը կրակապաշտ ընեն. անոնք  
ալ ամեն չարիք հասուցին թշուառ Հայաս-  
տանին. Արշակ այս ամենը լսելով յուսա-  
հատարար ինքինքն Անյուշ բերդին մէջ  
սպաննեց 20 տարի թագաւորելէն ետքը :

Հ. Արշակյ ո՞վ յաջորդեց :

Պ. Արշակայ մեռնելէն ետքը Հայաստան  
բոլորովին տակն ու փրայ եղաւ . և մեծն ներ-  
սէս որ կոստանդնուպօլիս կը գտնուէր՝ ա-  
զաւեց թէոդոս կայսեր՝ որ Արշակայ որդին  
Պապը՝ Հայոց թագաւոր դնէ . ուստի թէո-  
դոս ցերենտիանոսի հրամայեց որ շատ զօր-  
քով Հայաստան երթայ՝ Պապը թագաւորեց-  
ցնէ . և երբ Զիրաւ ըսուած դաշտը հա-  
սան՝ Պարսիկներէն մեծ ընդդիմութիւն տե-  
սան, և քիչ մնաց որ պիտի յակիմուէին .  
բայց Մ.Ներսէն նպատ լեռնը վրայ բազիա-  
տարած ազօթելով՝ յաջողակ քամի մը եղաւ  
որ Պարսից նետերը ետ կը գարձնէր և ամոյ  
մ'ալ արեւը խսիմանեց . ասանկով Հայերը  
դիւրութեամբ վանտեղին զՊարսիկները, և  
Սմբատ Բագ բատունին՝ Մերուժան ուրաց-  
եալ նախարարը բռնելով հրաշեկ շամուր  
մը գլուխը գրաւ և սպաննեց զայն :

Հ. Պատերազմին վերջն ի՞նչ եղաւ .

Պ. Պապ թագաւորն և նախարարները միշ-  
անալով երգում ըրին սուրբ Ներսիսի առ-  
ջեւ, որ անլիյ վերջը հաւատարմութեամբ  
ծառայեն Աստուծոյ, բայց քիչ մը վերջը  
Պապ գրժեց իւր երդմանը և սրբոյն Ներ-  
սիսի գաղանի թոյն տալով մեռցնել տուաւ,  
վերջն ալ ապստամբեցաւ թէոդոս կայսրէն  
և Տերենտիանոս զօրավարը վրանտելով Շա-

պուհէն օգնութիւն առած Յունաց դէմ  
սպատերազմի եղաւ և յաղթուելով բռնուե-  
ցաւ . թէոդոս կայսրն ալ դլխատել տուաւ  
Յ տարի թագաւորելէն ետքը :

Հ. Պատին տեղ ո՞վ յաջորդեց :

Պ. Վարազդատ Արշակունի կորիճ երիտա-  
սարդը՝ որ իւր քաջութիւններովը իիստ  
երեւելի եղած էր Յունաց քով, կը պատ-  
մեն թէ օր մը Յ կամպարտացիի դէմ ենե-  
լով Յ ալ ետեւէ ետեւ սպաննեց . օր մ'ալ  
բերդի մը վրայ յարձակելով՝ Ա հոգի մէկ  
մէկու ետեւէ զարկաւ սպաննեց առանց  
զնանուելու, և երբ Հայաստան կուղար՝ գոյ-  
զերու հանդիպելով ցատկեց Եփրատ գետին  
վրացէն՝ որուն լայնութիւնը 22 կանգուն էր,  
և գովերը բռնեց :

Հ. Վարազդատ մըշափի թագաւորեց :

Պ. Հազիւ 2 տարի . վասն զի Յոյն զօրա-  
պետաց ամբարտաւանութեանը չկինալով  
հանդուրժել Վարազդատ ուղեց ապստամ-  
բիլ և հարկատու ըլլալ Պարսից . բայց այս  
խորհուրդը թէոդոս կայսրը իմացած ըլլա-  
լով՝ զօլիս կանչեց զինքը. Վարազդատ յու-  
սալով որ եթէ անձամբ երթայ՝ կրնայ ինք-  
զինքն արդարացնել, ելաւ գնաց . բայց  
կայսրն առանց երեսը տեսնել ուզելու՝ թու-  
լիս կղզին աքսորել տուաւ զինքը :

# ԳԼՈՒԽ Զ.

ԱՐԵՎԱԿ Գ. ԵՒ Վ.Ա.Վ.ԱՐԵՎԱԿ Բ. ԷՆ ՄԻՒԶԵՒ  
ԱՐԵՎԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՐՆԱՆՈՒՄԸ

Հ. Վաղազդատին որո՞նք յաջորդեցին։  
Պ. Թէոդոս՝ Պապին Երկու որդիքն՝ Արշակը՝ Դուինի մէջ, և Վաղարշակը՝ Երիշացի մէջ թագաւոր դրաւ, որպէս զի եթէ մին ապստամբի՝ միւսը հաւատարիմ մնայ. բայց Վաղարշակ և ոչ տարի մը թագաւորելով մեռաւ. այս միջոցին՝ թէոդոս Յունաց կայսրը մեռնելով՝ Յոյնք և Պարսիկք որոշեցին որ Հայաստանի Արեւելեան մասը Պարսից իշխանութեան տակ՝ և արեւելեան մասը Յունաց իշխանութեան տակ մնան. այս պատճառաւ Արշակ չուզելով Պարսկաց ծառայել՝ Յունաց մասն անցաւ և աթոռը Երիշակութեց։

Հ. Պարսիկք իրենց մասին թագաւոր դրին։  
Պ. Արշակունեաց ցեղէն խոսրով անունով մէկն իրենց մասին թագաւոր դրին. և ոչ բովհեաւ նախարարներէն շատերը Յունաց մասն անցած էին՝ խոսրով նամակ դրեց անոնց որ գառնան գան, խոստանալով նաեւ իւրաքանչիւրին կալուածներն իրենց դարձնել. ուստի սկսան նախարարներն անոր,

Երթալ, և կողոպտելով նաեւ Արշակայ գանձեն ալ հետեւնին ատարին. Արշակ դեսպան խաւեց խոսրովին որ գանձերն ետ դարձնէ. խոսրով յանձն չառնելով պատերազմ բացուեցաւ մէջերնին, Արշակ յաղթուեցաւ և Երիշակ դառնալով մեռաւ. 7 տարի թագաւորելէն վերջը. և խոսրով՝ Յունաց կայսեր հարկ առ խոստանալով՝ թագաւոր եղաւ բոլոր Հայաստանի։

Հ. Խոսրով Գ. Խաղաղով թեամբ իշխեց։

Պ. Կախարարներէն սմանք հետը թշնամութիւն ունենալով՝ գացին ամբաստանեցին Շապուհի՝ թէ խոսրով կուզէ ապստամբել, Շապուհ ալ իր որդին՝ Արտաշերը շատ զօրքով Հայաստան խաւեց, և խոսրով առանձին ու անօդնական մնալով գնաց Արտաշերի քով, որ անմիջապէս շղթայի զարնելով Անյուշ բերդը խաւեց ծ տարի թագաւորելէն ետքը, և Վուահապուհ խոսրովի եղբայրը Հայոց վրայ թագաւորեցնելով՝ Հայաստան լաւեց։

Հ. Վուահապուհ ինչպէս կառավարեց ըլ Հայաստան։

Պ. Աւսու մնամէր՝ հանդարտաբարոյ և խոհեմ անձ մը ըլլալուն՝ ամենեւին ապստամբութիւն չը խորհելով սիրելի եղաւ Պարսից Վուահամբան թագաւորին, այս խաղաղ մի-

ջոցին Հայաստանի մէջ սուրբն Սահակ Պարթև Հայրապեան և սուրբն Մեսրովակ՝ Վը ուամշապուհի ու սումնապիրական եռանդը տեսնելով ետեւէ եղան Հայերէն գրեր գլուխել՝ դպրոցներ բանալ՝ և Ազգին ուսումնական նոր կենդանութիւն տալու, որոնց հետ միաբանեցան Մովսէս Խորենացի, Եզնիկ, Կորին, Եղիշէ, Աղան Արծրունի, Ղաղար և Մամրէ, ասոնք գիշեր ցորեկ անդուլ աշխատելով, դպրոցներ բանալով և թարգմանութիւններ ընելով՝ ազգին վերակենդանութեանը պատճառ եղան. ահա այս ժամանակն է որ Հայ գրագիտութեան ոսկեագրը կ'ըստի. Պռամշապուհ ՀԱ տարի լուագաւորելին ետքը մեռաւ:

Հ. Վռամշապուհին ո՞վ յաջորդեց.

Պ. Իր որդին Արտաչս դեռ պղտիկ ըլլալուն՝ Խորոցվ իր Եղբայրը՝ որ բանուէն եւ լսած էր, թագաւոր եղաւ: Բայց հազիւ տարի մը իշխանով մեռաւ, և Յաղիկերտ Պարսից թագաւորն իր Շապուհ որդին Հայոց թաշդաւոր գրաւ, որ շուտով կրակաղացատ ընէ Հայերը:

Հ. Հայերը Շապուհին հետ ի՞նչպէս վարուեցան:

Պ. Հայք խմանալով Յաղիկերտի միտքը՝ ըսկըսան արհամարհանօք վարուիլ Շապուհին

հետ, այնպէս որ երբ օր մը որսի ատեն Աստովմ Մովկացի քաջ իշխանին հետ վայրենի էշեր որսալու համար ժայռերէն վեր կ'արշաւելին՝ Շապուհ զՄովկացի Հայերը սատանորդի կոչեց. օր մ'ալ վայրենի կինծ որսալու համար Հայերը եղեգնուտին կրակ տուին Շապուհ գանդաղելով չկրցաւ եղեգնուտին գուրս ենել, ու սկսաւ աղաչել, Ատովմ զայն ազատելին վերջը ծաղրելով Շապուհին ըսաւ, եթէ գու Մովկացիները սատանորդի կը կոչես՝ ես ալ Պարսիկները կնամարդի և վատ կը կոչեմ. Վերջապէս այնչափ բարկացուցին զՇապուհ՝ որ յարմար առիթ մը կը փնտուիր Պարսկաստան փախելու:

Հ. Շապուհ կրցան այդ առիթը ձեռք ձգել:

Պ. Շապուհ իմանալով իր Յաղիկերտ հօրը հիւանդութեանը՝ ճամբաց ելաւ Պարսկաստան երթալու և գաղտնի հրամայեց իր զօրապետին՝ որ Հայ նախարարները բռնէ և Պարսկաստան խաւրէ, բայց հազիւ ինքը խրսկաստան հասած էր՝ իր մարդիկներէն սպաննուեցաւ. նախարարներն իմանալով այս բանս՝ Շապուհին թողուցած զօրացը վրայ յարձակելով լաւ շարդ մը տուին, բայց Պարսկաց վռամշապուհին միտք ըսկըսան ամենն ալ իրենց բերդերը քաշուեցան. յետոյ Վը

ուամիր սովորական հարկը ժողվելու համար  
վրամճապուհի որդին Արտաշէսը Հայոց  
վրայ թագաւոր դրաւ, որ 48 տարեկան էր:

Հ. Արտաշէս ի՞նչպէս կառավարեց Ազգը:  
Պ. Անկարդ, մոլի և վասարարոյ ըլլալով  
ամենուն տոնելի եղաւ . Հայոց նախարար  
ներն Արտաշիսէն ձանձրացած՝ կուղէին թա-  
գաւորութիւնը Պարսից ձգել, թէև սուրբն  
Սահակ Հայրապետը շատ թափանձեց, շատ  
աղաջեց և շատ արտասուեց որ նախարար  
ներն այս չար խորհրդէն հեռացնէ, բայց  
անոնք յամառեալ աւելի լաւ համարեցան  
Պարսիկ իշխանով կառավարուիլ քան Հայ  
թագաւորով մը, և վռամեն խոնդրեցին որ  
Պարսիկ իշխան մը դնէ իրենց վրայ, վռամ  
ալ կանչելով զԱրտաշէս՝ աքսորել տուաւ և  
տարի թագաւորելին ետքը և զսուրբն Սա-  
հակ ալ՝ որ կը պաշտպանէր Արտաշէսը՝ բան-  
տը դնել տուաւ . այսպէս վերջացաւ Արշա-  
կունեաց թագաւորութիւնը Քրիստոսի 428  
թուականին 580 տարի գիմանալէն ետքը:

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՄԱՐԶՊԱՆԱՅ ԺԱՄԱՆԱԿԸ

### ԳԼՈՒԽ Ա.

ՎԵՀՄ ՀՐԵՍԱՊՈՒՏՔՆ ՄԻԵԶԵՒ ՎԱՍՏԱՑ ՄՈՀԸ

Հ. Արշակունեաց թագաւորութեան վեր-  
ջանալէն ետքը ի՞նչպէս կը կառավարուէր  
Հայաստան :

Պ. Պարսից Թագաւորին կուղմէն իշխան մը  
կուգար, և հան նստելով հարկը կը ժողուէր  
և միանդամայն կը հսկէր Հայոց աշխարհին .  
այս իշխանին Մարզպան կ'ըսուէր, և առա-  
ջին Մարզպանն եղաւ Վեհմիհրշապուհ՝ որ  
բնութեամբ խաղաղասէր և աղնիւ մարդ մը  
ըլլալուն՝ 14 տարի կառավարելին ետքը մե-  
ռաւ . ասոր յաջորդեց վասակ Սիւնեաց Հայ  
Մարզպանը որ Հայ ըլլալով՝ վոխանակ աղ-  
գը մվիթարելու՝ չարիք չմնաց հասուց աղ-  
գին .

Հ. Ինչո՞ւ Յաղկերտ Հայ Մարզպան դրաւ .

Պ. Պարսիկները Հայոց թագաւորութիւնը  
ձեռք անցունելէ վերջը՝ ուղեցին անոնց կը-  
շօնքն ալ չնշել . ասոր համար Յաղկերտ  
Պարսից թագաւորը՝ աղգին երեւելի նախա-

ըարները կը պատուէք, ինչպէս վասակ Սիւնեաց իշխանը Մարզպանութեան և Վարդան Մամիկոննեանին ալ ընդհանուր սպարապետութեան սպատիւր տուաւ. և որովհետեւ վասակ Մարզպանը շահած էր՝ կը մնար վարդանը Հայաստանէն հեռացնել. ուստի հրամայեց որ Հայերն իրեն զօրք տան՝ որպէս զի ազգին երեւելիներն ու պատերազմական զօրութիւնը հեռացնէ որ չկարենան իրեն դէմ դնել. և Հայերը Հոնաց դէմեօթը տարի պատերազմաւ յոզնեցնելէն ետքը ըսկըսաւ կրակապաշտութեան ստիպմանքն ընել, որոնց մէջէն յայտնի դէմ դրաւ Գարեգին քաջ նախարարը:

Հ. Հայ նախարարներէն ոմանք Պարսկաստան գտնուած ատեննին Հայաստան ի՞նչ վիճակի մէջ էր :

Պ. Շատ հնարքներ մտածեց Յաղկերտ՝ բայց նախարարները չկրցաւ շահիլ. Ատովմ դնունի և Մանաճինը Ռշտունի իրենց զօրքերովն երբ կը փախէին, իմանալով Յաղկերտ՝ զօրք խաւրեց ետեւնուն և զամէնքն ալ թրէ անցընել տուաւ. յետոյ դենշապուհ անունով քննիչ մը խաւրեց որ Հայերը շատ նեղեց, թուղթ մ'ալ գրելով հրամայեց որ կամ անոր պատասխանը տան և կամ Պարսկան կը լրոնքն ընդունին. Յովսէփի կաթուղի-

կոս՝ ազգին միտրան հաւանութեամբը թըզ թին պատասխանը գրեց :

Հ. Հայոց գրած պատասխանին վրայ ի՞նչ ըրաւ Յաղկերտ :

Պ. Սաստիկ բարկանալով հրամայեց որ ազգին բոլոր մեծամեծները Պարսկաստան դան. ուստի նախարարներն ալ ճարելնին հատած Պարսկաստան գացին, Յաղկերտ զամենքն ալ բանտ դնել տուաւ և ստիպեց որ հաւատքնին տրանան և իրեն հետ երկրպագութիւն ընեն Արեգակին. բայց նախարարները տեմնելով որ եթէ իրենք Յաղկերտին կամքը չկատարեն՝ պիտի նահատակուին և Հայաստան ալ ոտքի տակ պիտի երթայ, ուստի աւելի աղէկ սեպեցին երեսանց հածութիւն տալ Յաղկերտի կամացը՝ որն որ մեծամեծ պարզեւներով, մողերով և զօրքով վերադարձան՝ Հայերն ամբողջ կրակապաշտընելու համար :

Հ. Մոգերն ի՞նչ ընդունելութիւն դտան Հայերէն :

Պ. Սուրբ Ղեւոնդ և ուրիշ աստուածընտիր քահանաներ ժողովրդեան հետ միացած լաւ չարդ մը տալով լեզապատառ փախուցին մոգպեան իր մոգերովը. իսկ ուրացեալ նախարարներն Յովսէփի կաթուղիկոսին ոտքն իյնալով՝ իրենց ակամայ ուրացութեանը վրայ

թողութիւն խնդրեցին . բայց վասակ սրբաւանց ուրացած ըլլալուն ամեն հնարք ՚ի գործ կը դնէր քահանաներն ու ժողովուրդը համոզելու՝ որ Յաղկերտի առջեւ յանցաւոր չի գտնուին , միւս կողմէն ալ դաշնանի և յայտնի կը ջանար կրակապաշտութիւնը մուծանել Հայոց մէջ , վասն զի Յաղկերտ անոր խոստացած էր Հայոց թագաւորութիւնը . և երբ բանուել՝ սուտ երդումներով և սուտ զըղձմամբ կաղատուէր բարեպաշտ Հայոց ձեռքէն .

Հ . Վասակ կրցաւ իր խորհօւրդն առաջ տանիլ :

Պ . Այն միջոցին Յաղկերտ Ազուանից երկիրն ալշատ մողեր խաւրած էր արեւապաշտ ընելու , բայց անոնք չկրնալով դէմ կենալ օգնութիւն ուղեցին Հայերէն . ասոր համար հարկ եղաւ որ զօրքերն երեքի բաժնուին . առաջին մասը Ներշապուհ Արծրանիին առուին Պարսից դէմ պատերազմելու , երկրորդը Վասակայ՝ Հայաստանը պահպանելու , և երրորդը Վարդանայ՝ Ազուանից օգնելու համար , որ երթալու ատեն Պարսկաց հանդիպելով լաւ ջարդ մը առուալ և փախուց զամենքն ալ նշնպէս Ազուանից երկիրն ալ մոդերը ջարդեցին , կրակատուները կործանեցին և Պարսկաց զօրքերն ալ հալածեցին . և մինչդեռ Վարդան Ազուանից երկիրը այսպէս քաջու-

թիւններ կընէր , առդին անզգամվասակ իրեն յանձնուած զօրքովը Պարսից Միհրներսէն հաղարապետին կողմն անցաւ որ նոյն միջոցին Հայաստան եկած էր բաղմաթիւ զօրքով և փիզերով .

Հ . Վասակայ այս ընթացքը ի՞նչ ազդեցութիւն ըրաւ Հայոց :

Պ . Իրենց այն դառն վիճակին մէջ աւելի հոգի առած և զօրանալով ամեն կողմէն սկսան ժողովուիլ Աւարայր գիւղին քով իրը 66000 հոգւոյ չափ՝ օրոնց մէջ քահանաներ , վարդապետներ և եպիսկոպոսներ ալ դտնուեցաւ . և իրենց սպարապետ ընտրեցին քաջն վարդան : Հոն ամենքը միաբերան ուխտեցին որ մինչեւ իրենց արեւան վերջին կաթիլը պաշտպանեն իրենց սուրբ հաւատքը , և Հոգեգալստեան վեցելորդ երեկոյն՝ որուն երկրորդ օրը պատերազմ պիտի ըլլար , բոլոր Վարդանեանք հաղորդուեցան Քրիստոսի սուրբ մարմնոյ և արեւամբը , և ամենքն ալ մահուան պատրաստուեցան . հոն քաջն Վարդան և սուրբն Ղեւոնդ մէկ մէկ ազգու յորդորներ կարդացին զօրաց՝ որով ամենքն ալ քաջալերուելով միաբերան , կեցցէ՛ Քրիստոնէութիւն և Հայրենիք , գոչեցին :

Հ . Վարդանանց պատերազմն ի՞նչպէս եղաւ :

Պ . Առաւօտուն սկսաւ պատերազմն Աւա-

բայրի դաշտին մէջ խիստ կատաղութեամբ՝  
Տղմուտ գետին եղերքը . քաջն վարդան և  
Ընկերներն այնպիսի ուժգին զօրութեամբ  
յարձակեցան Պարսից զօրաց վրայ, որ ա-  
նոնց կարդն ու կարգադրութիւնները բոլո-  
րովին խառնակեցան և մեծ շփոթութիւն  
պատճառեցին. անհնարին էր նկարագրելը,  
կ'ըսէ մեր Եղիշէ ականատես պատմագիրը,  
վարդանանց քաջութիւնները, մանաւանդ  
վարդան՝ կայծակի նման ամեն կողմ կը հաս-  
նէր և Պարսիկները անխնայ կը ջարդէր . բայց  
վերջապէս թշնամեաց նետերէն պաշտուե-  
լով զարնուեցաւ մեռաւ, որուն հետ նահա-  
տակուեցան նոյն օրը և ուրիշ քանի մը մանր  
մունր պատերազմներու մէջ 1036 հոդի. իսկ  
Պարսից կողմէն միայն նոյն օրը 3500 հոդիէն  
ստելի մեռան . օրն իրիկուն էր՝ ուստի Հա-  
յերը ճեղքեցին դարձեալ Պարսից բանակը  
և իրենց բերդերը քաշուեցան :

Հ. Վասակ ուրիշ ի՞նչ չարիք հասուց Հա-  
յոց :

Պ. Խարէութեամբ մարդ կը բռնէր և կ'ըս-  
պաննէր կամհաւատքնին ուրացնել կուտար.  
շատ աեղեր կործանեց, թէպէտեւ շատ աշ-  
խատեցաւ որ Հայոց ճեռքն եղած բերդերն  
առնու՝ բայց չյաջողեցաւ, Ա. Յովսէփ կա-  
թուղիկոսն և Ա. Կեւոնդ քահանայն և ու-

Եիշ շատ մը քահանաներ բռնելով Պարսկաս-  
տան խաւրեց . ուստի Հայ նախարարներն  
ալ Պարսից բերդերուն վրայ յարձակելով  
մեծամեծ վասաներ հասցնել սկսան . Յազ-  
կերտ իմանալով բոլոր այս եղածները՝ Ատ-  
րորմիզդ անունով Պարսիկ մը Մարզպան դը-  
րաւ Հայոց վրայ . ասիկայ առ երեսս հրա-  
ման ըրաւ՝ որ ամեն մարդ աղատ պաշտէ  
Քրիստոնէական կրօնքը, և ինքը մէկ կող-  
մէն նախարարները բռնելով Պարսկաստան-  
խաւրեց Ա. Կեւոնդեանց հետ :

Հ. Յազկերտ իրեն դացող քահանաներն  
ու նախարարներն ի՞նչ ըրաւ .

Պ. Ղեւոնդեանները սոսկակի տանջանքնե-  
րով նահատակել տուաւ, նախարարներուն  
ալ ստիպեց որ հաւատքնին ուրանան . բայց  
անոնք յանձն չառնելով՝ երկար ատեն բան-  
տը մնալէն վերջը Շղամշապուհ անունով իշա-  
խանին պաշանքովը աղատեցան և Պարս-  
կաստան կը բնակէին :

Հ. Անօրէն Վասակ ի՞նչ վախճան ունեցաւ :

Պ. Վասակ՝ որ անձամբ Յազկերտի դացած  
էր իր հաւատարիմ ծառայութեան փոխա-  
րէնն ընդունելու՝ յանցաւոր դատուելով մա-  
հապարտից բանտը նետուեցաւ, ուր որդա-  
նոտելով սատկեցաւ և կորսուեցաւ Քրիստո-  
սի 452 թուականին :

# ԳԼՈՒԽԻ Բ.

ՄԵԾՆ ՎԱՀԱՆՔՆ ՄԻՆՉԵԿ ՄԱՐԶՊԱՆԱՑ

ԽՇԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԱՆԱԼԵ

Հ. Ո՞չչափ ատեն Պարսկաստան կեցան նախարարները :

Պ. Յազիերտ մեռնելով իրեն յաջորդեց Պերող իր որդին, որն որ նախարարներն ուժը տարի իր գործերուն ծառացեցնելէն վերջը՝ երբոր Ատրվշնասպ Մարզպանը Հայաստան կուգար, զանոնք ալ մէկաեղ խաւրեց իրենց հայրենիքը, որոնք եկան և սկսան աշխատիլ Քրիստոնէութիւնը պայծառացնելու և աղջ Քը խաղաղութեամբ կառավարելու. այս միշ Հոցներուն մեծին վարդանայ Հմայեակ եղաքորը մեծ որդին՝ վահան՝ իր քաջութեամբն ու խելացիութեամբը շատ սիրելի եղաւ Պերող թագաւորին և Պարաից մեծամեծներուն. ուստի ուրացեալ նախարարները նախանձելով ամբասանեցին Պերողի զվահան. նա ալ ինքզինքն արդարացնելու և Պերողի աչքէն շիյնալու համար հաւատքն ուրացաւ :

Հ. Վահան նորէն Քրիստոնէութեան դարձալ :

Պ. Կմանակով վրաց վախթանկ թագաւոր ըին Պարսիցմէ ասպատամքիլը՝ յարմար առիթ սեպելով Հայերն ալ յորդ որեց որ իրենք ալ ասպատամքելով՝ Քրիստոնէութեան համար պատերազմին. այս առաջարկութիւնը ու մանք ընդունելով՝ վահանը սպարապետ և Սահակ Բագրատունին ալ Մարզպան գրին, և մէկ քանի նախարարներ փոխանակ օգնելով՝ գայողներուն ալ արգելք եղան. բայց քանի մը նախարարներ ալ աւելի հասարակաց օգուտը մտածելով՝ հաստատուն կեցան վահանայ հետ. և երբ Պերող լսեց վահանայ ապստամբութիւնը, Ատրներսէ հին ձեռքով շատ զօրք խաւրեց, ապսպարելով որ վահանը ողջ բռնեն.

Հ. Ատրներսէ կրցաւ բռնել զվահան :

Պ. Վահան թէպէտեւ շատ ջանաց որ բոլոր նախարարները միաբանէ, բայց չկրցաւ. վասն զի նախարարներէն ոմանք շահու և վառասիրութեան համար Պարսից կողմնանցած էին. ուստի վահան սլքովհան Մատեղակունին հետն առած, թէպէտեւ քիչւոր էր՝ բայց յաղթեց և վախուց թշնամին:

Հ. Պարսիկք ուրիշ զով զրկեցին վահանայ վրայ :

Պ. Պարսիկք Միհրանը խաւրեցին վահանայ վրայ. յետոյ Զարմիհը Հաղպարաւուխ-

տը , յետոյ Շապուհ Միհրանեանը . ասոնց  
ամենուն ալ յաղթեց , միայն անդամ մը  
Միհրանին դէմ պատերազմած ժամանակ  
յաղթուեցաւ վախթանկ Վրաց թագաւու-  
րին խարդախութեամբը , որ Հայոցմէ օգ-  
նութիւն ուզեր էր . Վահան գնաց և հոն  
յանկարծակիի գալով՝ յաղթուեցաւ , և այս  
պատերազմին մէջ Սահակ Բագրատունին և  
Վահանին եղբայրը վասակ՝ նահատակուե-  
ցան .

Հ. Պարսիկք Ե՞նչ կերպով հաշտուեցան  
Վահանայ հետ :

Պ. Վահան անդամ մը 30 հոգւով Շապու-  
հին դէմ յաղթութիւն մ'ալ ըրաւ , վաճա-  
զի միշտ Աստուծոյ ասպաւինած էր . այս միշ-  
տոյին Փերող մեռնելով՝ իր Վաղարշ եղբայ-  
րը թագաւորեց Պարսից վրայ . սա լած ըլ-  
լարով Վահանայ անպարտելի քաջութիւն-  
ներն ու անոր արդար պահանջմունքը՝ Նիւ-  
խոր անուն խազալասէր մարդը խաւրեց որ  
եկաւ Վահանայ դաշինքն ընդունեց . որոնց  
գլխաւորն և առաջինն էր՝ Քրիստոնէու-  
թիւնն ազատ պաշտուի Հայաստանին մէջ .  
Նիխոր յանձն առաւ , ուստի Վահան ալ  
Պարսից դուռը երթալով կրկին երդում ա-  
ռաւ թագաւորէն , և Հայոց ընդհանուր ըս-  
պարապետ դրուելով՝ դարձաւ Հայաստան .

Անդեկան Պարսիկ իշխանն ալ Մարզպան ե-  
կաւ :

Հ. Վահան ի՞նչպէս Մարզպան եղաւ .

Պ. Անդեկան Պարսկաստան երթալով այն  
քան գովեց զվահան , որ Վաղարշ Պարսից  
թագաւորը մարզպանութիւնը վահանին և  
սպարապետութիւնը վահանայ վարդ եղ-  
բօրը տուաւ . մեծ միխթարութիւն գտան  
հայք՝ տեսնելով որ քաջ , քրիստոնեայ , ի-  
մաստուն և իրենց սիրելի Հայ իշխան մը  
Մարզպան դրուեցաւ :

Հ. Վահան կրցաւ Հայաստանը խաղաղու-  
թեամբ կառավարել :

Պ. Ու . ըստ որում Վաղարշ մեռնելով՝ տե-  
ղը նստաւ Կաւատ , սա ուզելով Հայերը կը-  
րակապաշտ ընել , Պարսիկ Մարզպան մը դը-  
րաւ . բայց Վահան վշնտեց զայն և 26 տա-  
րի Հայաստանը կառավարելէ վերջը մեռաւ  
Քրիստոսի 310 թուականին : Ասոր օրովը  
Հայաստանի մէջ Յովհաննէս Մանդակունի  
կաթուղիկոսը կը ծաղկէր , որ հոգւով որը-  
բով լցուած ներհուն անձ մ'էր .

Հ. Վահանին տեղ ով Մարզպան դրուե-  
ցաւ :

Պ. Վարդ իւր Եղբայրը , որ հազիւ 4—5  
տարի մարզպանութիւն ըրաւ . վասն զի մէկ  
քանի հոգի նախանձելով անոր պատուոյն

վրայ, ամբաստանութիւն գրեցին. ուստի  
կաւատ ալ բուրզան անունով Պարսիկ մը  
Մարզպան դրաւ, որ զՀայերն Յ տարի շատ  
նեղեց. այս միջոցին Հօնք Հայտառանի վը-  
րայ վագելով շատ աւերմունք կ'ընէին. ա-  
սոնց դէմն ելաւ Մժէժ Գնունի իր զօր-  
քովն, և աղէկ Զարդ մը տարով վախուց. կա-  
ւատ ալ Մժէժին այս քաջութիւնն իմանաւ-  
լով բուրզանին տեղ Մարզպան դրաւ զին-  
քը որ Յ տարի խաղաղութեամբ ազգը կա-  
ռավարելն ետքը մեռաւ.

Հ. Մժէժին տեղ ով Մարզպան դրուեցաւ :

Պ. Ետեւէ ետեւ չորս Մարզպան դրուե-  
ցան, Դենշապուհ, Վշնասպ-Վահրամ, Վա-  
րազդատ, Սուրէն. ասոնցմէ ոմանք ազգը  
նեղեցին և ոմանք խաղաղութեամբ կառա-  
վարեցին. ասոնց մէջ ամենէն անօրէնը Սու-  
րէնն եղաւ՝ որ շատ չարիք հասուց Հայոց և  
Մանուէլ Մամիկոնեան իշխանն սպաննեց.  
ուստի Մանուէլի եղբայրը՝ Վարդան՝ բար-  
կանալով զօրք ժողվեց, վազեց Դուին քաղ-  
քին վրայ, Սուրէնն սպաննեց և մոգերն ալ  
Զարդեց. Խորով Պարսից թագաւորը Սու-  
րէնի մահը լսելով՝ շատ զօրք խաւրեց Վար-  
դանայ վրայ. Վարդան թէպէտ քիչւոր էր,  
բայց վարպետութեամբ պատերազմելով յաղ-  
թեց թշնամույն:

Հ. Առարէնին տեղ ով Մարզպան դրուեցաւ :

Պ. Խոսրով աւելի մեծ բանակ մ'ալ խու-  
րեց Վարդանայ վրայ, Վարդան առանձին  
մնալով կ. Փօլիս գնաց և երբ Յուստիանոս  
կայսեր օգնութեամբը Հայոստան կուգար,  
Խոսրովինքն անձամբ 140000 զօրքով Վար-  
դանայ վրայ եկաւ, և երկու կողմէն սոսկալի  
Զարդ մ'ըլլալէն ետքը վերջասկէս Պարսկաց  
ձեռքը մնաց Հայաստան. և Խոսրով Հայոց  
սիրոը շահել ուզելով՝ Ճիճր-Վզոն խաղա-  
ղասէր Պարսիկը Մարզպան դրաւ՝ որ 13  
տարի կառավարեց, ասիկայ էն վերջի Պար-  
սիկ Մարզպանն եղաւ. այս միջոցին Մովսէս  
կաթուղիկոս Հայոց տօմարը նորօգելով, նոր  
թուական մ'ալ հաստատեց որ Քրիստոսի  
554 թուականին կ'սկիփ :

Հ. Ճիճր-Վզոնին տեղ ով Մարզպան դըր-  
ուեցաւ :

Պ. Ամբատ բազմայազմ կաշուած Հայը՝ իր  
քաջութիւններուն համար. ասիկայ ութը  
տարի մարզպանութիւն ընելով մեռաւ. ի-  
րեն յաջորդեց Դաւիթ Սահառունի՝ որն որ  
23 տարի մարզպանութիւն ընելէն ետքը՝  
վախնալով Պարսիկներէն՝ թողուց իշխանու-  
թիւնը կ. Փօլիս վախաւ. այս միջոցին Խոս-  
րով պատճառաւ մը թշնամանալով Մուշեղ  
Մամիկոնեանի հետ՝ 10000 զօրքով իր Միհ-

ըան քեռորդին Մուշեղայ գէմ խաւրեց ,  
Մուշեղ ալ իր Վահան ազգականը օգնու-  
թեան կանչեց , որ հնարագիտութեանը հա-  
մար Գայլ վահան կոչուեցաւ . ասիկայ յաղ-  
թեց Պարսից և Միհրանն ալ բռնելով սպան-  
նեց , և անընդհատ Պարսից գէմ պատերազ-  
մելով մեռաւ . իրեն յաջորդեց Սմբատ քաջ  
և հայրենասաէր որդին՝ որ միշտ պատերազ-  
մեցաւ Պարսից հետ , յաղթեց և չորս երե-  
ւելի զօրավարնին ալ սպաննեց :

Հ. Գաւիթ Սահաւունի Մարզպանին մէ  
յաջորդեց :

Պ. Սմբատ բազմայազմին որդին՝ Պարազ-  
տիրոց Մարզպան դրուեցաւ , որ ութը տա-  
րիէն կ. Պօլիս փախաւ իր ընտանիքովը , այս  
միջոցին Պարսից մէջ խռովութիւն իշնալով՝  
Հայք Յունաց ապաւ ինեցան և իշխան մը ու-  
ղեցին , անոնք ալ Գաւիթը խաւրեցին կիւ-  
րապաղատ անսւամիր , որ իշխանութեան ա-  
նուն մ'է Քրիստոսի 631 թուականին , բայց  
երեք չորս տարիէն վանտեցին Հայերը զիաշ-  
ւիթ և իրենք սկսան մէկլմէկու հետ կռուիլ-  
ու Հայաստանը տակնուվրայ ընել . նոյն մի-  
ջոցին Հագարացիք Հայաստան արշաւելով՝  
Հարիք չը մնաց որ Հասցնէին Հայոց .



## ԳԼՈՒԽ Գ.

ՀԱԴԱՐԱՑԻՈՅ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՇԱԿԵԼԵՆ ՄԻՒԶԵՒ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵՍՅ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

Պ. Հագարացւոց արշաւանացը գէմ դնող  
չեղան :

Պ. Թէոդորոս Ռշտունի և վահան կամսա-  
րական քաջ իշխանները թէպէտեւ սկիզբ-  
ները լաւ ջարդ մը տուին , բայց վերջը Սա-  
հուու Անձեւացի և ուրիշներ Հագարացւոց  
կողմն անցնելով՝ սկսան թշնամնոյն հետ Հա-  
յերը ջարդել . այսպէսով ցրուեցան վա-  
հանայ զօրքերը , Հագարացիք մինչեւ Դուին  
առաջ քալեցին , քաղաքը պաշարմամբ ա-  
ռին և շատ մարդ ջարդելէն ետքը 35000  
անձինք ալ գերի տարին . Հագարացւոց եր-  
թակէն ետքը Վարագտիրոց՝ կիւրապաղատ  
դրուեցաւ Յունաց կողմանէ՝ որ տարիէ մը  
մեռնելով իրեն յաջորդեց Սմբատ իւր որ-  
դին .

Հ. Սմբատին կիւրապաղատութեան ատեն-  
Հայք հանգստացան :

Պ. Սմբատին կիւրապաղատութեան եր-  
րորդ տարին Հագարացիք վերստին Հայա-  
ստան գալով՝ մեծամեծ կոտրածներ ըրին .

ուստի նախարարք ալ մարդ խաւըեցին Ա. միրապետին՝ որ իրեն կը հնազանդին. այս լսելով Ցայնք մկան Հայաստան Արշաւել, բայց Ներսէս Գ. կաթողիկոսին խնդրանոք Համազառ Մամիկոնեանը Պատրիկ գրուեցաւ. ասոր օրովն էր որ Թագիկ ճգնաւորին հայց մամբը Վարագայ սուրբ Խաչին դիւտն եղաւ. Հ. Համազասպայ պատրիկութիւնը մրչափ տեւեց և իրեն ո՞լ յաջորդեց :

Պ. Ամիրապետն իմանալով որ Հայերը դարձեալ Յունաց հպատակեր են, իր քովն եղած պատանդներն ամենքն ալ թրէ անցուց. և երբ կը պատրաստուէր վերստին Հայաստան գալու, ինքն ալ իր զօրքերէն սպաննուեցաւ. ասոր յաջորդին նորէն հպատակեցան Հայք և քիչ ատենէն Համազառպ ալ մեռնելով իր եղբայրը Պատրիկ գրուեցաւ, որ 24 տարի խաղաղութեամբ աղգը կառավարելէն ետքը՝ Խաղբաց պատերազմին մէջ զարնուեցաւ մեռաւ. այս միջոցին երեւելի էին Անանիա Շիրակացին և Մովսէս Սիւնեցին. Երկու տարիի չափ Հայաստան տակն ու վրայ ըլլալէն ետքը Ա.շոտ Բագրատունի Բիւրատեան իշխանն ուստաւ Հայաստանի տիրել, և Հագարացւոց ալ հարկ տալ:

Հ. Աշոտ ո՞րչափ ատեն Պատրիկութիւնը ըրաւ :

Պ. Յոյնք՝ իմանալով որ Հայերը Հագարացւոց հարկատու եղեր են, շատ զօրք խաւըելով մեծ ամեծ աւերմունքներ ըրին 'ի Հայաստան. Հագարացիք ալ ընդ հակառակը կարծելով որ Հայք Յունաց հնազանդեր են՝ անոնք ալ շատ վաս հաստցին Հայոց, թէպէտ Ա.շոտ ասոնց գէմ դրաւ քաջութեամբ՝ բայց ինքն ալ զարնուելով մեռաւ Յ տարի Պատրիկութիւն ընելէն ետքը, Քրիստոսի 693 թուականին, և Հայաստան բոլորովին Հագարացւոց ձեռքը մնաց, որոնք Ռոտիկան անունով մէկը կը խաւըին Հայաստանի հսկելու համար :

Հ. Ա՞վ եղաւ առաջին Ռոտիկանը :

Պ. Ա.բգլայ, որ շատ չար ըլլալուն՝ Սահակ կաթողիկոսն ու նախարարները Դամասկոս խաւըեց. բայց Միքատ Բիւրատեան Յունաց օգնութեամբ վանտեց զանի Հայաստանէն. և երբ Մոհմատ զօրավարին անհամար զօրքով Հայաստան գալը լսուեցաւ՝ Սահակ կաթողիկոս, որ Մոհմատի հետ բարեկամութիւն ունէր, իսկոյն Դամասկոսէն ճամբայ ելաւ որ Մոհմատին բարկութիւնը իջեցնէ, բայց ճամբան հիւանդանալով աղջանաց թուղթ մը գրեց ու ինքը վախճանեցաւ. և երբ Մոհմատ Արքոյն մարմանն քովն եկաւ, կաթողիկոսն ողջ մարդու պէս

նամակը Մոհմատին տուաւ և Հայոց հետ  
հաշտեցուց զայն :

Հ. Արդըլլայ ոստիկանին ովլ յաջորդեց :

Պ. Կոշի, որ բոլոր ազգին մեծերը և նախարարները Նախջեւանի եկեղեցւոյն մէջ ժողովելով այրել տուաւ, ասկէ ետքը ետեւէ ետեւ նստեցան Վիլթ և Մուհամմէտ դաժան մարդիկը, և Արդըլլայի՝ որ բարի մարդ մ'էր, ասոր ալ յաջորդեց Մրուան՝ որ երկու տարիէն Աշոտն իշխան դնելով ինքն ամիրապետ եղաւ. բայց երբ Մրուան մեռաւ՝ Եէղիս անունով չարաճընի մարդ մը ոստիկան դըրուեցաւ՝ որ Հայերը շատ նեղեց, ասոր ալ յաջորդեց Սահակ Բագրատունի բարեպաշտ մարդը՝ որուն վեցերորդ տարին Սիւլյաման ոստիկան խրկուեցաւ, և վերջն ալ Պէքիր անողորմ և անգութ մարդը, ասոր ալ յաջորդեց Հասան՝ որ ամենէն աւելի նեղեց ըզ Հայերը:

Հ. Հասանին ովլ յաջորդեց :

Պ. Մուշեղ Մամիկոնեան Հայ իշխանը՝ որ Հասանին զօրքերը լւա մը ջարդեց ու ղինքն ալ փախուց դուինէն. նոյնպէս Աշոտ մսակեր՝ քանի մը անդամ յաղթեց Հագարացւոց, մինչեւ որ Եէղիս Բ. շատ զօրքով նուածեց Հայերը շատ չարիք հասցունելով, բայց վերը խուզիմա, Հող և Բագրատ Բագրա-

տունի ոստիկաններուն բարութեամբը քիչ մը հանդարտեցան. Բագարատին յաջորդեց Ապուսեթ, բայց Հայք ոպաննեցին զայն. ուստի ասոր տեղը Բուղա ոստիկանը Խըլկուեցաւ, որ Հայաստանն արիւնլուայ ըրաւ և Աշոտ Արծրունին տնով տեղով դամակոս գերի խաւրեց, նոյնպէս շատ նախարարներ և իշխաններ բոնած Պաղտատ գերի տարաւ. ասոնց մէջն էր Սմբատ, որ թէպէտ Բուղային առաջնորդեց որ պատւոյ համնի, բայց զայն ալ շլթայեալ բանտարդեց՝ ուր զղջալով իր ըրածին վըայ, Ալբատ խոստովանող ըսուեցաւ :

ՎԵՐԶ ԵՐԻՌՈՒԴ ՄԱՍԻՆ

ուաւ 26 տարի իշխելէն և Յ տարի թագաւորելէն ետքը :

Հ. Աշոտին ո՞վ յաջորդեց :

Պ. Իր Սմբատ որդին՝ բայց Աբաս իր հօրեղբայրը՝ որ Աշոտին սպարապետն էր, շատ զօրք ժողուած պատերազմի ելաւ և կ'ուղէր ինք թագաւորել, և երկու անդամ յաղթուեցաւ. ուստի Սմբատ՝ Աբասին տեղն սպարապետ դրաւ իր Շապուհ եղբայրը և երր Հայաստան քիչ մը խաղաղութեան երես պիտի տեսնէր, Ափշին Պարսից ոստիկանը նախանձելով Սմբատայ մեծնալուն վրայ՝ 30000 զօրքով պատերազմի եկաւ և յաղթուեցաւ. նոյնպէս Ահմատ Միջագէտի ոստիկանը՝ Գագիկ Սրծրունին (Սմբատայ ազգականներէն մին) օդնութեան առած յանկարծ պատերազմի ելաւ Սմբատայ դէմ, բայց Սմբատ քաջութեամբ պատերազմելով յաղթեց Ահմատին և փախուց իր տեղը:

Հ. Սմբատ Ահմատին յաղթելէն ետքը կը ցանկարտիլ:

Պ. Ափշին նորէն պատերազմի ելաւ. Սըմբատ ալ անօդնական մնալով պատանդ տըւաւ իր որդին, բայց Ափշին երբ կ'ուղէր ուրիշ չարիքներ ալ հասցունել սոսկալի մահուամբ սատկեցաւ և իրեն յաջորդեց Յուառուի իր եղբայրը:

## ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

ԲԱԴՐԱՏՈՒՆԵԱՅ ԹԱԴԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

### ԳԼՈՒԽ Ա.

ԱՇՈՏ Ա. ԷՆ ՄԻՒԶԵՒ ԱՇՈՏ Գ.

Հ. Ի՞նչպէս սկսաւ Բագրատունեաց թագաւորութիւնը :

Պ. Սմբատ խոստովանողին որդին Աշոտ՝ հաւատարմութեամբ Հագարացւոց ծառաց յելով՝ Հայոց ժողովրդեան ալ սիրելի եղաւ, և համբաւը մինչեւ Ամիրաբետին ականջը հասաւ՝ որն որ իշխանաց իշխանի պատիւը տուաւ Աշոտին և անոր յանձնեց Հայաստանի հարկը ժողուելը. նախարարներն այս բանիս վրայ ուրախանալով՝ Գէորգ Կաթուղիկոսին հետ միաբանած ինդրեցին Ամիրաբետէն՝ որ Աշոտն իրենց վրայ թագաւոր դնէ, խոստանալով որ հաւատարիմ կը մնան. Ամիրապետը ինդիրքնին կատարեց և Աշոտը թագաւոր դրաւ Հայաստանի, որն որ ամեն կողմ խաղաղեցնելէն ետքը կոստանդնուպոլիս դնաց Լեռն կայսեր՝ ուր մեծամեծ պատիւներ գտաւ, և վերադարձին Շիրակ համնելով հիւանդացաւ և մե-

Հ. Ըմբատ Յուսուփին խարդախութիւնն  
ներէն ազատուելու համար ի՞նչ ճար մտա  
ծեց :

Պ. Աբովյանէտեւ Սմբատ Յուսուփին խար  
դախ ըլլալը քաջ գիտէր, ոստիկանաց նե  
զութիւններէն ազատուելու համար աղաչեց  
Ամիրապետին՝ որ փոխանակ տուրքերը ու  
տիկանաց ձեռքով տալու, ուղղակի իրեն  
խաւրէ . ասոր վրայ Յուսուփ բարկացած  
շատ զօրքով Սմբատայ վրայ եկաւ, բայց ա  
նոր զօրութիւնն իմանալով՝ հաշտութիւն  
խոսեցաւ, միտքք դնելով որ յարմար առիշ  
ժով մը վրէմը լուծէ .

Հ. Ինչո՞ւ ապստամբեցան նախարարները  
Սմբատէն :

Պ. Եզրերացւոց կոստանդին թագաւորը  
Սմբատէն ապստամբեցաւ . Սմբատ ալ Վը-  
րաց Ատրներսէն թագաւորին հետ միանա-  
լով յաղթեց, և կոստանդինն ալ գերի բըռ-  
նելով Անիի մէջ կը պահէր . բայց չորս ամ-  
սէն վերջը գթալով կոստանդինի վրայ՝ ա-  
զատ թողուց . այս բանս Վրաց թագաւորը  
և նախարարք իրենց անպատութիւնն սե-  
պելով, պատերազմի ելան Սմբատայ դէմ,  
բայց յաղթուելով՝ ամենքն ալ գերի բըռ-  
նուեցան և Սմբատ մէկ քանի նախարարաց  
աչքը կուրցուց և Ատրներսէնի վրայ գթա-

լով ազատուեց . այս միջոցին Գագիկ Սլոճրու-  
նի Սմբատայ քեռորդին ապստամբելով գր-  
նաց Յուսուփին քով . Յուսուփ ալ Հայոց զօ-  
րութիւննը տկարացնելու համար միակ մի-  
ջոց անոնց մէջ երկպառակութիւն ձգելն  
էր . Գագիկին շատ պատիւններ ընելով թա-  
գաւոր գրաւ զայն, յետոյ Գագիկ և Յու-  
սուփ միացած՝ պատերազմի ելան Սմբատայ  
դէմ, նա ալ անօգնական մնալով, Գուգա-  
լացւոց երկիրը փախաւ :

Հ. Սմբատ Գուգարացւոց երկիրն ի՞նչ ըրտաւ :

Պ. Երբ իմացաւ որ իր Աշոտ և Մուշեղ որ-  
դիքը յաղթուելու են Սեւորդիներուն մատ-  
նութեամբը՝ ինքն ալ յուսահատելով կապոյտ  
բերդը քաշուեցաւ . Յուսուփ Հայաստանի  
շատ աեղերն աւերակ ընելէն վերջը եկաւ  
կապոյտ բերդը պաշարեց . Խորամանկ ոստի-  
կանը միշտ Հայերը կը քշէր բերդին դէմ  
պատերազմելու համար . Սմբատ տեսնելով  
որ իրեն համար երկու կողմանէ ալ Հայերը  
կը ջարդուին, երգումն առնելով Յուսուփին  
անձին միաս մը չը հասցնելու՝ անձնատուր  
եղաւ . Յուսուփ թէեւ Սմբատը պատուելով  
աղատ թուղուց, բայց յետոյ շատ տանջանք-  
ներով նահատակեց . Քրիստոսի 944 թուա-  
կանին . իսկ Գագիկ վատավորականի մէջ  
ոկատ թագաւորիել :

Հ. Սմբատի ովլ յաջորդեց :

Պ. Յուսուփի Հայաստանի ամեն կողմն արշինը լուսուայ ընելէն ետքը՝ պահապաններ թողլով Պարսկաստան դարձաւ, Բայց Սմբատայ որդին՝ Աշոտ Բ. որ Աշոտ Երկաթ ըսուեցաւ, հօրը մահուան լուրն առնելուն՝ անմիջապէս 600 հոգւոյ չափ մարդ ժողվեց և վազեց Յուսուփին թողուցած պահապաններուն վըրայ ևսաստիկ ջարդ մը տալով փախուց նաև խարարք Աշոտի քաջութիւնները տեսնելով միաբանեցան և զինքը թագաւոր դրին, բայց ումանք վերջերը նախանձելով ապստամբեցան ու նորէն խոռվեցին աշխարհքը :

Հ. Այս նեղ միջոցին Աշոտ ուսկից օգնութիւն գտաւ :

Պ. Կոստանդին Պերփեռուժէն Յունաց կայսրն իմանալով այս խեղճութիւններն՝ Ա. Յուսուր կ. Գոլիս կանչեց, և շատ պատուելէն վերջը Յունաց զօրքով դարձուց իր թագաւորութիւնը. Յուսուփի կայսեր օգնութենէն վախնալով Աշոտին հօրեղբօրդին՝ Աշոտ սպարապետը թագաւորեցուց, որ Աշոտը ըստ նաւոր ըսուեցաւ, այս պատճառաւ շատ արշինահեղ պատերազմներ ըլլալէն վերջը երկու Ա. Յոստները հաշտուեցան Յովհաննէս կաթողիկոսի միջոցաւ:

Հ. Աշոտ Երկաթ ուրիշ թշնամի ունեցաւ :

Պ. Անկրթութիւնն այն աստիճան տիրածէր Հայոց մէջ՝ որ ամենքն ինքնիշխան թագաւորել կուզեին, ինչպէս նաև Արած Աշոտի եղբայրն՝ ապստամբելով սկսաւ պատերազմիլ. Աշոտ Երկաթ թեպէտև յաղթեց, բայց իր քովի տգէտ, փառամոլ և անձնասէր պաշտօնականերէն յուսահատած՝ հարիւր հոգւով Սեւան կղղին քաշուեցաւ :

Հ. Սեւան կղղին մէջ Ա. Յուսութիւն ի՞նչ դէպք պատահեցաւ :

Պ. Յուսուփի իմանալով՝ Նըսրը անունով անպիտան ոստիկանը Հայաստան խաւրեց որ շատ չարիք հասուց. Նըսրէն ետքը իշշը՝ որ Սեւան կղղին պաշարեց Ա. Յոստը բռնելու համար, բայց Ա. Յուսութիւնը իր հարիւր կըտրիներովն այն աստիճան քաջութեամբ պատերազմեցաւ որ շատ մարդ սպաննեց. Թըշնամիք սկսան փախչիլ, ինքն ալ ետեւնուն իյնալով հալածեց զամենքը և Հայաստան գալով թագաւորութիւնը ձեռք առաւ. Ա. Յուսութիւնը հետ ալ հաշտուեցաւ և 24 տարի թշուառութեամբ թագաւորելէն ետքը մեռաւ. Ա. Յուսութիւն ալ ըսուեցաւ, որ թագաւորներու թագաւոր ըսել է:

Հ. Ա. Յուսութիւն ովլ յաջորդեց :

Պ. Իր Արաս եղբայրը՝ որ բոլոր թշնամիներուն յաղթելով աթոռն ալ կարս վորխադ-

բեց, ուստի Հայաստան քիչ մը խաղաղութեան երես տեսնելով սկսաւ ծաղկիլ, նոյն միջոցին Բեր անուն վրաց և Ավետիքաց թագաւորը պատերազմի ելաւ Արասայ դէմ և ծաղրելով պատգամ խաւըեց որ Կարսի Մայր Եկեղեցին ինք պիտի օծէ վրաց ծիսով. Աշխատ դէմն ելաւ յաղթեց և Բեր թագաւորը բռնիւթ կարս բերաւ, ցուցուց այն Եկեղեցին որ Կուղեր ինքն օրհնել, յետոյ աջքերը կուրցուց. Արաս 24 տարի թագաւորելէն ետքը մեռաւ: Ասոր օրով վասպուրականի մէջ Արծրունեաց թագաւորութեանը կ'իշ խէր Աշոտ Դերենիկ՝ որ այլազգեաց ձեռքը մասնուեցաւ իր Ապլիսարիալ զօրավարին ձեռքով, բայց վերջը Ապլիսարիալ իր քաշութեամբը ազատեց գարձեալ Աշոտ Գերենիկը:

### ԳԼՈՒԽ Բ.

ԱՇՈՏ Գ. ԷՆ ՄԵՆՉԵԿ ԳԵՐԻԿ Բ. Ա. Յ. Ա. Ա.

Հ. Արամին ով յաջորդեց:

Պ. իր որդին Աշոտ Գ. որն որ հօրը մեռնելէն ետքը սկսաւ Հայաստան ասպատակուները վանտել և ինը տարի հայրենիքը պաշտ

պանելէն վերջը՝ նախարարները զինքը Անիի Մայր Եկեղեցւոյն մէջ թագաւոր օծեցին. Աշոտի եղբայրը Մոշեղ ալ կարսի մէջ թագաւորեց. Աշոտ խռովութիւն չհանելու համար ձայն չհանեց և թագաւորական այն ճիշդը «Թագաւորութիւն կարուց» ըսուեցաւ, որ քիչ մը վերջը Յունաց անցաւ. այս միջոցին Համառւն Հաղարայւոց զօրապետը Ամիրապետէն ապստամբելով՝ Հայաստանի վըշայ վաղեց. Աշոտ դէմն ելաւ սպաննեց զայն, որով Ամիրապետէն թագաւորական թագընդունեցաւ. Աշոտի օրով ծաղկեցան մեծն խոսրակ Անձեւացին, Ա. Գրիգոր Նարեկացին և Ղեւմոնդ Վիլիսոփան. Աշոտ 26 տարի խաղաղութեամբ կառավարելէն ետքը մեռաւ և իր աղքատասիրութեանը համար «ողորմած» ըսուեցաւ:

Հ. Աշոտին ով յաջորդեց:

Պ. Սմբատ Ռ. իր անդրանիկ որդին՝ որ իր հօրը պէս քաջաւթեամբ և խմասութեամբ ակսաւ աղջը կառավարել, շինութիւններու ետեւէ եղաւ, ջրուատ ճարտարապետին ձեռքով Անիի մայր Եկեղեցին շինել սուաւ և Անիի շրջապատը ամուր պարիսպ մը քաշել տուաւ՝ որուն համար կ'ըսեն թէ ութը տարի հաղարաւոր հօդի աշխատեցան. իսկ քաղքին բոլոր Եկեղեցեաց թիւը հաղար և

մէկի կը հանեն, և ռամկաց մէջ սովորութիւն էր որ Անիի հազար և մէկ եկեղեցեաց վրայ երդում կ'ընէին . Սմբատ թ. 43 տարի թագաւորելէն ետքը մեռաւ՝ Քրիստոսի 990 թուականին . Սմբատ թէպէտեւ խաղաղութեամբ և խոհեմութեամբ թագաւորեց, բայց վերջերն եկեղեցական արարողութեանց դէմ մեղանչելով՝ իր անունը արատաւորեց Հ. Սմբատայ ո՛լ յաջորդեց :

Պ. Իր եղբայրը Գագիկ Ա. որ բարեպաշտութեամբ և քաղաքաշինութեամբ երեւելի՝ և բագրատունեաց թագաւորութեանը պարծանք եղաւ . 30 տարի խաղաղութեամբ թագաւորելէն վերջը մեռաւ . ասոր յաջրդեց Յովհաննէս Սմբատ, որ թէպէտ խելացի էր՝ բայց գործունեայ և աշխայժ չըլլալուն՝ շատ չարիքներ պատահեցան Հայաստանի մէջ . իր Աշոտ եղբայրն ապսամբեցաւ որ քաջ և տաքդլուխ երիտասարդմ՝ ըլլալուն վասպուրականի Սենեքերիմ թադաւորէն օդնութիւն առած եկաւ Անին պաշարեց . բայց Փետրոս կաթուղիկոս և Վրաց թագաւորը միջնորդելով հաշոեցուցին . Աշոտ հաշոութեանը վրայ զղջալով մտարերեց որ Յովհաննէս Սմբատն սպաննէ, ուստի հիւանդ ձեւանալով՝ Յովհաննէսը հըրաւիրեց . հոն Յովհաննէս՝ Աշոտին լարած

որոգայթը կյնալով՝ աղաւեց որ կենացը Խը նայէ . Սպիրատ անունով իշխաննը՝ որ Յովհաննէսը մեռցնել խոստացած էր՝ փոխանակ մեռցնելու, Անի տարաւ և հոն թագաւորեցնելով՝ ինքն ալ փախաւ :

Հ. Յովհաննէս Սմբատ որչափ ատեն թագաւորեց :

Պ. Ասոր օրով Սկիւթացիք սկսան Հայաստան արշաւել . վասպուրականի Սենեքերիմ թագաւորը ձեռուընուն աղատելու համար վասպուրականը Յունաց թողուց և ինքը Սեբաստիան առաւ . Սկիւթացիք հետզետէ յառաջանալով՝ սկսան մեծամեծ աւերմունքներ ընել; Թէեւ Վասպակ Պահլաւունի քիչ մ'ատեն դէմ դրաւ, բայց ինքն ալ սպաննուեցաւ առանձին աղօթած միջոցին :

Հ. Յովհաննէս Սկիւթացւոց ձեռքէն ազատելու համար ի՞նչ ճար մտածեց :

Պ. Յովհաննէս չկընալով Սկիւթացւոց դէմ դնել՝ վասիլ կայսեր օդնութեան դիմեց խոստանալով որ ինքը մեռնելէն վերջը՝ Անին Յունաց անցի . Վասիլին յաջորդ կոստանդին եղբայրը՝ մեռնելու ատեն Կիրակոս անուն վատ չքահանայի մը կը յանձնէ. Անիին համար եղած դաշանց թուղթը. չքահանան պահելով զայն, երբ 1034 ին Միքա-

յէլ կայսր Կըլլայ՝ անոր կը յանձնէ և փոխացէն բազում՝ որիի կ'ընդունի. այս սոսկալի մատնութեան հետեւութիւնը եղաւ Բագրատունեաց թագաւորութեան կործանումը. իսկ Յովհաննէս 20 տարի թագաւորելին ետքն անորդի մեռաւ:

Հ. Յովհաննէս Սմբատին մեռնելին ետքն ի՞նչ վիճակ ունեցաւ Հայաստան.

Պ. Երկու տարիի շափ անոտէր մնաց. Խըստ ըիկ անունով Պարսիկը, որ Եւրիփիին քաջ զաքագեան էր, Հայերուն դէմ ոխ պահած ըլլալուն՝ Ամիրայից օգնութեամբը շատ տեղ զեր նուածեց և մարդաշափ փու մը փորել տալով՝ ձեռքն ինչած Հայը մորթել տուաւ և անոնց արիւնով լեցուց փոսը, ինքն ալ արիւնարբու գաղանի պէս մէջը լուացուեցաւ. այս միջոցին վեստ Սարդիս Սիւնեաց իշխանը զօրանալով՝ կուզէր ամենուն վրայ թագաւորել.

Հ. Յոյներն Անին առնելու համար ի՞նչ ըդին:

Պ. Միքայէլ կայսրը վեստ Սարդսի թեագութեամբ երեք անգամ զօրք խաւրեց որ Անին առնեն. այս զօրքերը շատ աւերջ մունքներ ըրին, բայց իրենցմէ ալ բաղրամ մարդ կարսնցուցին. ուստի չորրորդ անգամ 1000ս0 զօրքով եկան և Անին պաշարեցին

Սարդսի օգնութեամբ. Վահրամ Պահլաւունին Անիին մէջ գանուած 30000 զօրքով յանկարծ գուրս յարձակեցաւ և սսակալի ջարդ մը տուաւ, մնացածներն ալ ցիրուցան ըրաւ. այս յագթութենէն ետքը Վահրամ և նախարարները միաբանելով՝ Դագիկ Բ. ը թագաւոր գրին իրենց վրայ:

## ԳԼՈՒԽ Գ.

ԳԱԴԻԿ Բ. ԷՆ ՄԻՆՉԵԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԵՍՑ

ԹԱԳԱԽԱՌՈՒԹԵԱՆ ԿԱՐԾԱՇՈՒՄԸ

Հ. Ո՞վ էր Գագիկ Բ.

Պ. Յովհաննէս Սմբատին Աշոտ եղբօրը որդին էր, իմաստուն և նաշխարհիկ կատարելութիւններով զարդարեալ. Գագիկ թագաւորելուն պէս՝ վեստ Սարդիսը բռնեց կապած Անի բերաւ, բայց մէկ քանի նախարարաց աղաշանօքն ազատեց. այս միջոցին Ակիւթացիք վերստին Հայաստանի վրայ յարձակեցան. Գագիկ 16000 զօրքով անոնց գէմն երաւ, յաղթեց և հալածեց զանոնք:

Հ. Վեստ Սարդիս ուրիշ ի՞նչ չարիք հասուց:

Պ. Վեստ Սարդիս շարունակ Յոյները կը

գրգռէր որ Անին ուզեն . ուստի երբ Միքայէլ կայսրը մեռաւ՝ Մոնոմախոս իւր յաշորդը սկսաւ Անին ուզել . և երբ Գագիկ յանձն չառաւ՝ Մոնոմախոս երկու անգամ պատերազմի եւաւ և յաղթուեցաւ . այս մի Հոցին Հայաստանի մէջ կը ծաղկէր Գրիգոր Մագիստրոս մականուանեալն՝ որ ոչ միայն Հայոց մէջ՝ այեւ Յունաց մէջ երեւելի համբաւ ստացաւ :

Հ. Երբոր Վեստ Սարդսի խորհուրդը յառաջ զնաց ի՞նչ ըրաւ :

Պ. Իրեն պէս քանի մը ազգ ատեաց նախարարներու հետ միանալով խորհուրդ տուաւ Մոնոմախոս կայսեր՝ որ բարեկամութիւն ձեւացնելով կ. Պօլիս կանչէ զգագիկ, ու վերջէն իրենք Անին կը յանձնեն, Գագիկի իմանալով այս չար խորհուրդը՝ կայսեր հրաւերը մերժեց, բայց նախարարները սուտ երդում ընելով՝ թէ իրենք Անին կը պաշտպանեն, յորդորեցին զինքն որ երթայ, Գագիկ եւ լաւ գնաց ահեղ երդումն առնելով նախարարներէն ու Կաթուղիկոսէն, բայց աւելի ճարը հատնելով քան թէ համոզեալ :

Հ. Գագիկ՝ կայսեր քով ի՞նչպէս ընդունուեցաւ :

Պ. Մոնոմախոս թէւ ոկիզրէն պատիւ և սէր ցըցուց, բայց վերջն սկսաւ Անին ուզել,

Գագիկ յանձն չառաւ, բայց երբ Սարդիս և իր համախոհները Անիին բանալիները կայսեր խաւըցին, այն ատեն Գագիկ յուսահատութենէն թագաւորութիւնը ձգեց Յարի իշխելէն ետքը . կայսրը ուրախացած Գագիկին քանի մը քաղաքներ տուաւ ու ինքը Հայաստանի տիրեց Քրիստոսի 1045 թւ և ականին :

Հ. Գագիկ թագաւորութիւնը ձգելէն ետքը ի՞նչ վիճակ ունեցաւ Հայաստան :

Պ. Ամեն աեսակ թշնամիք Հայաստանի վրայ վաղելով մոքէ շանցած շարիք հասուցին Հայոց, որոնց մէջ նշանաւոր եղան Տուղըւել, Ալփապան և Մելիք Շահ՝ որոնք շատ բերդեր կործանեցին, շատ մարդ Հարդեցին : Լաստիվերտցի ականատես պատմագիրը կը պատմէ Սմբատայ բերդ բսուած ամուր բերդին մէջ պատահածները և այսպէս կը նկարագրէ. « Վիրաւորածներէն ոմանք գեռկէս մը կենզանի, ոմանց վիզը կէս մը կը բած, ձեռուընին ոտուընին գետինը կը զարնէին, ոմանց ալ փոքրիկ տղաքներն գրկերնուն յափշտակուած գետինը զարնուած էին և ողջ մասցածներուն լալու ձայնը լեռները կը թնտացնէին » :

Հ. Այս ատեններս Հայոց մէջ երեւելի ովկար :

Պ. Այս պատերազմներուն մէջ թաթթուլ երեւելի և քաջ իշխանը՝ քանի մը նախարարաց հետ միանալով թշնամեաց դէմն եւ լաւ բայց յաղթուեցաւ, կուոյն մէջ թաթթուլ ծուղրիլի իշխաններէն մէկուն տղան վիրաւորելով ինքն ալ գերի բռնուեցաւ, և երբ ծուղրիլին դէմն ելաւ, ծուղրիլ ըստ որ եթէ տղան ապրի՝ քեզ ալ կ'աղասեմ. թաթթուլ պատասխան առաւաւ, թէ որ ես զարկի՝ չ'ապրիր. մեռաւ տղան և զինքն ալ ըստաննեցին. ծուղրիլին յաջորդեց Ալփասլան:

Հ. Ալփասլան ի՞նչ չարիք հասուց Հայոց ։ Երկար ատեն Անին պաշարելէն ետքն առաւ, սոսկալի ջարդեր ընելով քաղաքն ալ դրեթէ կործանեց. յետոյ՝ Գագիկ կարսի թագաւորին հրաման խաւրեց որ գայ իրեն հընաղանդի, Գագիկ ալ սուդի հագուստ հագած Ալփասլանին դէմն ելաւ, ըսելով որ ծուղրիլի մահուանը համար սուդի մտեր եմ. Ալփասլան վրան խղճալով սիրով պագտուեցաւ և խաղաղութեամբ ետ դարձուց. բայց Գագիկ այնուհետեւ կարս մնալն ապահով չսեպելով՝ իշխաններն հետն առած Յունաց երկրը գնաց, ուր կայսրը Ծամոդաւ բերդ տուաւ՝ որով կարսի թագաւորութիւնն ալ վերջացաւ՝ Մուշեղ, Արաս և Գագիկ երեք թագաւոր ունենալէն վերջը.

Հ. Գագիկ Յունաց երկրին մէջ ի՞նչ կընէր ։ Յունաց երկրին մէջ ամենուն պատկառելի էր Գագիկ և Հայ թագաւորի անուամբ կը շրջէր, բայց Յոյները չարաշար կը նախատէին զչայելը, ինչպէս կեսարիոյ Մետրապոլիսը՝ որ իր շանը անունը Արմէն դրեր էր. իմացաւ զայն Գագիկ և օր մը ելաւ Սետրապոլիսին այցելութեան գնաց, կերակուրի ատեն խնդրեց Գագիկ որ շունը կանչէ, ան ատեն Մետրապոլիտը նեղը մոտած՝ Արմէն Արմէն ըսելով շունը կանչեց. Գագիկ աչք ըրաւ ծառաներուն որ շունն ու Մետրապոլիտը պարկի մը մէջ դրին ու այնքան ծեծեցին, որ շունն զՄետրապոլիտը խածնելով երկուքն ալ մեռան.

Հ. Յոյնք այս վրէժն ի՞նչպէս լուծեցին :

Պ. Գագիկ օր մը կիդիստուա բերդն երթալով՝ պարտէզին մէջ մինակ կը պտըտէր, բերդին պահապաններն՝ որ Յոյն էին՝ դարան մանելով բռնեցին զինքը և չարաշար տանջանքներով սպաննելէն ետքը՝ մարմինն ալ բերդէն վար կամիցին, թէեւ Հայերը բազմութեամբ եկան բերդը պաշարեցին, բայց բան մը չկարենալով ընել ետ դարձան, յետոյ թշուառ Գագկայ ոսկորները Բանիկ անուամբ Հայ մը գիշերանց գերեզմանէն հանելով՝ Գիզու քաղաքը Գագիկին շիւ-

նել տուած վանքին մէջ թաղեց, Քրիստոսի  
1070 թուականին:

Հ. Այս միջոցին Հայաստանի ով կը տիրէր.  
Պ. Այս միջոցին Արփասլանին որդին Մեծ  
իթք Շահ, Պարսից թագաւոր ըլլալով՝ Հայ-  
աստան արշաւեց և Թօնիսրը բոլորովին վը-  
ուընտելով՝ ինքը տիրեց Հայաստանի. այս-  
պէս վերջացան կարսու և Արծրունեաց թա-  
գաւորութիւններն ալ թագրատունեաց թա-  
գաւորութեան վերնալովը, որով թշնամիք  
արձակ համարձակ անտէր տան մը վրան ու-  
զածնուն պէս յարձակելով՝ մտքէ չանցած  
զարութիւններ գործեցին.

### ՎԵՐՃ ԶՈՐՅՈՒԹ ՄԱՅԻՆ

## ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԽԵԹԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ

### ԳԼՈՒԽ Ա.

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԽԵԹԱՆՈՒԹԵԱՆ ՍԿՍԵԼՔՆ  
ՄԻՆՉԵԿ ԼԵՒՈՆ ԵՐԿՐՈՐԴԻ ԹԱԳԱԱԽՈՐԵԼԸ

Հ. Ռուբինեանց իշխանութիւնը որո՞ւ ձեռ-  
քով սկսաւ:

Պ. Բազ բատունեաց թագաւորութեան կոր-  
ծանումէն 34 տարի ետքը՝ Քրիստոսի 1080  
թուականին Ռուբէն անւենով իշխան մը որ  
թագրատունեաց վերջի թշուառ թագաւոր  
գագիկին ազգականն և կիղիսառայի առ-  
ջեւ գագիկին բռնուած ժամանակը անոք  
հետ գտնուողներէն մէկն էր. այս Ռուբէն  
իշխանը կիղիկիոյ կողմերն երթալով՝ հան-  
բնակող քաջարի Հայոց սիրտը վաստիեցաւ,  
մէկքանի հարիւր կտրիճ զրուխը ժողվեց,  
և իրեն օգնական գտաւ նաեւ զող վասիկ  
կոշուած քաջ և հայրենասէր իշխանը:

Հ. Ռուբէն ինչպէս հաստատեց իր իշխա-  
նութիւնը, և իրեն ով յաջորդեց.

Պ. Ռուբէն մէկ քանի քաղաքներու տի-  
րեց, Յունաց գէմալ քանի մը քաջութիւն

ներ ընելէն ետքը մեռաւ . 16 տարի իշխելով . իրեն յաջորդեց իր որդին կոստանդին Ա . որ իր քաջութիւններովն ընդարձակեց տէրութիւնը , և երբ որ Երոպայի ազգերը Ա . Երուսաղէմն Եգիպտացւոց ձեռքէն ազատելու կերթային , օգնեց և անոնց մէջ Հայոց իշխան կոչուեցաւ . կոստանդին Ա . հինգ տարի իշխելէն վերջը մեռաւ .

Հ . Ո՞վ յաջորդեց կոստանդինին .

Պ . Թորոս Ա . ասիկայ նախ Յոյներէն Ա . Նարզաբա քաղաքն առաւ , Սկիթայիք և Պարսիկք՝ որ Հայաստանի վրայ կուգային , Պարկաւ փախուց , Կիզիստուա բերդին ալ տիրեց և Մանտավեյ երեք իշխաններն՝ որ Գագիկը մեռցնողներն էին , բռնեց սպաննեց . և ինքը 23 տարի իշխելէն ետքը մեռաւ . իրեն յաջորդեց իր եղբայրը , Լեւոն Ա . որ քանի մը անառիկ բերդեր առնելուն համար ամենուն՝ ինչուան նաեւ Յունաց սիրտը վախ ձգեց . բայց Անտիոքի Պէտէվի իշխանէն բռնուելով բանտարկուեցաւ , և քանի մը քաղաքներ և մէկ որդին պատանդ տալով ազատելէն վերջը՝ Կիլիկիա եկաւ , մէկէն զօրք ժողվեց , և տուած քաղաքներն ետ առնելէն զատ , այնշափ նեղը խօժեց Պէտէվին՝ որ ինքն լեւոնին պատանդներ տալով հաղիւ ազատեցաւ :

Հ . Յունաց կայսրն ինչո՞ւ համար Լեւոնի գէմ պատերազմի ելաւ :

Պ . Լեւոնի այս աստիճան զօրանալը՝ Յունաց Պէրթութէն կայսեր ականջը հասնելով մեծ պատրաստութեամբ Լեւոնի վրայ պատերազմի ելաւ , Լեւոն վախնալով կայսեր բազում զօրացը գէմն ենելու՝ փսխաւ ընտանիքովը , ուստի կայսրն ալ զիշիկեան անտէր գտնելով՝ շատ քաղաքներու տիրեց , Անարզաբան առաւ , Լեւոնն ալ Կ . Պօլիս գերի տարաւ . թէպէտ ինքն ալ իր զօրաց մեծ մասը կորանցուց .

Հ . Կայսրը Լեւոնին հետինչպէս վարուեցաւ .

Պ . Կայսրը՝ զանիկայ տարի մը բանտը պահելէն վերջը , վրան գթալով բանտէն հանեց և իր պալատը կը պահէր , բայց քանի մը տարիէն վերաստին բանտը դնել տուաւ , անոր Թորոս որդւոյն հետ . հոն որտին ցաւէն մեռաւ Լեւոն 14 տարի իշխելէն և 4 տարի բանտը կենալէն վերջը . և երբ կիո Մանուէլ կայսր եղաւ , Թորոս բանտէն ելածէր , փախաւ և կիլիկիա գալով՝ յայտնեց իր ովհը ըլլալը , իշխաններն ալ միարանելով՝ իշխան դրին իրենց՝ որ մէկէն սկսաւ քաջութիւններ ընել :

Հ . Յունաց կայսրը երբ Թորոսին փախէլը լսեց ի՞նչ ըրաւ :

Պ. Անդրսնիկոս զօրավարը խաւրեց շատ  
զօրքով՝ որ երթոյ Թորոսը շվմայի զարկած  
Պոլիս բերէ, բայց Թորոս Բ. միշտ արթուն  
գննուելով՝ այնպիսի քաջութեամբ պատեւ  
բազմեցաւ՝ որ Յունաց զօրքերուն մեծ ջարդ  
տալէն վերջը շատ իշխաններ ալ գերի բըռ-  
նեց, զօրմնք կայարը գնել ուղելով՝ ի պա-  
տիս իշխանաց շատ ստակ տուաւ, և Թորոս  
բոլոր առած ոսկին գեսպաններուն առ ջեւ  
իր զօրացը բաժնեց, և երբ անոնք զարմա-  
ցան, բաւու թորոս. կամու ըրի՝ որպէս զի  
նորէն բռնեն ձեր իշխանները, դարձեալ  
եկաւ Անդրսնիկոս՝ որ արիւնահեղ պատեւ  
բազմով չարաչար յազմուեցաւ, կայարը կոս-  
տանդին կալամարոս զօրապետը խաւրեց,  
ան ալ յազմուեցաւ, և Թորոս բօլորովին  
վանեց Յոյները Կիլիկիայէն:

Հ. Աւրիշ որու հետ պատերազմ բրաւ  
Թորոս:

Պ. Իկոնիոյ Գլուշ Ալլագն Սուլթանը կայսրէն  
գրդուած՝ պատերազմի ելաւ, անոր ալ  
յազմեց Թորոս, բայց երբ Մանուէլ կայսրը  
վերատին մեծ պատրաստութեամբ կիլիկիոյ  
վրայ կուգար՝ հաշոտութիւն խօսեցաւ Թորոս  
և քանի մը տարի ալ ապրելով, մեռաւ 24  
տարի իշխելէն եւաքը:

Հ. Թորոս Բ. ին ով յաջորդեց:

Պ. Թորոսի որդին անշավահաս ըլլալուն  
Թովմաս Պայլ անուամբ Լատինացին՝ որ Թու-  
րոսին աներն էր՝ խնամնակալ գրուեցաւ. բայց  
Մլեհ Թորոսին եղբայրը հերիոյ Ամիրայէն  
օգնութիւն առած, և կաւ և շատ խուզու-  
թիւն հանելէն վերջն ինքն սկսաւ իշխել,  
Մլեհ սահմանակից թշնամի ազգաց հետ պա-  
տերազմելով յակթեց, Յունաց դէմ ալ քա-  
նի մը անգամ յազմութիւններ ըրաւ, բայց  
իր ժողովրդեան հետ անդ թաբար վարուե-  
լուն՝ ինքն ալ սպաննուեցաւ իր զօրքերէն Յ  
տարի իշխելէն եւոքը:

Հ. Մլեհի մեռնելէն եւտքը Հայոց ով իշ-  
խան եղաւ:

Պ. Մլեհի յաջորդեց Թուբէն Բ. իր եղ-  
բօրդորդին՝ որ Կիլիկիոյ վրայ մեծ խնամք և  
մէր ունեցաւ, բայց Լամբրոսնի Հեթում իշ-  
խանին հետ թշնամնալուն՝ Անտիոքի Պէ-  
տունա կոմսէն նենգութեամբ բռնուեցաւ,  
սակայն իր Լեռն եղբօրը կտրիճութեամբը  
ազատելով՝ վերսափն դարձաւ Կիլիկիա իր  
ախտուը. Ասոր օրով անուանի եր Ներսէս  
Լամբրոսնացի, Տարսոնի արք Եպիսկոպոսը:  
Թուբէն և տարի իշխելէն վերջը կառավա-  
րութիւնը Լեռն եղբօրը յանձնելով՝ վանք մը  
քաշուեցաւ:

# ԳԼՈՒԽ Բ.

ԼԵԿՈՆ Բ. ԷՆ ՄԻՒՉԵՔ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ

ԹԱԴԱԿԱՊՐՈՎԻԹԵԱԱՆ ԿՈՐԾԱՆԻԼԸ

Հ. ԼԵԿՈՆ Բ. Ի՞նչպէս կառավարեց իր ազգը .

Հ. Իւր իմաստութեամբը և այլազդի իշխանաց դէմ տարած յաղթութիւններովը տէրութիւնը ամենայն մասամբ ժաղկեցուց ու ընդարձակեց, էրուտաղէմի վրայ դաշող խաչակիր զօրաց օգնելով՝ անունը բոլոր Եւ ըոսա տարածեցաւ և վերջապէս գերմանաց կայորէն՝ թագաւորական թագ և Պապէն ալ Դիրօշ մը ընդունելով՝ Սոյ մէջ թագաւոր օծուեցաւ Գրիգոր Տղոյ ըսուած կաթողիկոսէն. Քրիստոսի 1498 թուականին թագաւոր ըլլովէն վերջն ալ քանի մը մեծ յաղթութիւններ բառ իկոնիոյ և Բներիո Ամիրաներուն դէմ, և 34 տարի թագաւորելով ետքը մեռաւ .

Հ. ԼԵԿՈՆԻ ով յաջորդեց :

Պ. ԼԵԿՈՆԻ յաջորդեց իր Զատել անուամբ աղջիկը՝ որ Փիլիպպոս անուն Լատինացիի մը հետ կարգեցին. ոյս Փիլիպպոսը՝ միայն մօր կողմանէ Հայ էք. երկու տարիէն՝ երբ Սոյ հարստութիւններն սկսաւ Անտիոք կը ըել, Հայ իշխանը բարկանալով բանտ դրին

զինքը՝ ուր մեռաւ 2 տարի իշխելէն ետքը. այս միջոցին կը ծաղկէին կիլիկիոյ մէջ Միսիթար Գօշ առակախօսութեան և Տարսոնի խաչատուր երաժիշտը :

Հ. Փիլիպպոսին ով յաջորդեց :

Պ. Հեթում Ա. որ Զատելի հետ կարգուելով թագաւոր եղաւ, զարդարեց Հայաստանը և տեսնելով որ Թաթմարք շատ չարիք կը հասցնեն՝ Թաթմարատան դնաց Մանգոյ խանին, սիրով ընդունուեցաւ և բարեկամութեան դաշինք դնելով՝ կիլիկիա դարձաւ, բայց իկոնիոյ Սուլթանը վրան նախանձելով՝ պատերազմի ելաւ Հեթումի դէմ և յաղթուեցաւ, նոյնպէս կոստանդին Համբրոնի իշխանը միանալով իկոնիոյ Սուլթանին՝ պատերազմի եղան և յաղթուեցան. նոյն միջոյին Եգիպտոսի Փընտուխար Սուլթանը զօրանալով՝ պահանջնեց որ Հեթում Եղիսաբեցոց մէ առած քաղաքները ետ դարձնէ :

Հ. Հեթում Եղիսաբեցոց քաղաքները ետ տուած :

Պ. Հեթում յանձն չառաւ, ու իր երկու որդիքը Հայոց բանակին հրամանատար կարգելով՝ պատերազմի խարեց. բայց յաղթուեցան, որոնցմէ Թորոս սպաննուեցաւ և Լեռն գերի բռնուեցաւ. Հեթում շատ ըստակով դնեց զիւնին, և թագաւորութիւնը

անոր յանձնելով ինքը Դրավարկ ըսուած վանքը քաշուեցաւ, ուր մեռաւ բարի մահուամբ, 48 տարի թաղաւորելէն ետքը:

Հ. Լեւոն Գ. ինչպէս կառավարեց ազգը:

Պ. թարեպաշտ և միանգ սանցն ուսումնասէր ըլլալուն՝ մէկէն սկսաւ դպրոցներ բանալ ու զիտութիւնը ծագկեցնել, բայց քիչ ժամանակէն՝ ներքին երկարաւակութիւնը այս բարիքներուն ամենն ալ ջնջեց, վասն զի իշխաններէն ոմանք, հետը թշնամանալով՝ Փնտու խտարը լեւոնին դէմք բդուեցին, ան ալ անթիւ զօրքով կիլիկիա եկաւ. Լեւոն անօդնական մնալով՝ վախաւ պահութեցաւ, և թշնամիք ամեն չարիք հասուցին. Լեւոն՝ կիլիկիոյ այս արտիճան աւերմանքը տեսնելով չկրցաւ հանգուրժել, քիչ մը զօրք ժողվեց և իր ծերունի Սմբատ սպարապետին հետ միացած՝ յաղթեց Եպիպոտացւոց և գունեց զանոնք՝ ինչպէս նաեւ իկոնից Սուլթանը. ինքն ալ 19 տարի թագաւորելէն ետքը վախճանեցաւ՝ յաջորդ թողլով իրեն զնեթում Բ:

Հ. Հեթում Բ. ինչպէս կառավարեց ազգը:

Պ. կրօնասէր ըլլալուն վանք մը քաշուեցաւ, և իւր աեղը թորոս Գ. թագաւորեցուց. թորոս ալ 3 տարիէն վանք մը քաշուելով՝ ստիպեց որ դարձեաւ Հեթում իր:

Եղբայրը թագաւորէ, բայց Սմբատիրմիւս եղբայրը, յափշտակեց թագաւորութիւնը՝ մինչդեռ թորոս և Հեթում Պոլիս Մարիամկայսրուհիէն հրաւիրուած էին, որ իրենց քոյրն էր. որոնք երբ մերագարձան՝ Սմբատ ըլլալով զանոնք՝ թորոսն սպաննեց և Հեթումին աշքերը կուրցուց. սակայն կոստանդին միւս եղբայրնին սաստիկ բարկանալով Սմբատաց անդթութեանը վրայ՝ պատերազմի ելաւ և յաղթելով Սմբատին՝ բռնեց բանտդրաւ և ինքն անոր տեղ թագաւորեց. Հեթումն ալ բանտէն հանելով քովը կը պահէր. բայց երբ հրաշքով Հեթումը աշքերը բացուեցան՝ ժողովուրդն ուզեց որ նորէն Հեթում թագաւորէ. կոստանդին ասոր վրայ խոռովութիւն հանել կուզէր, ուստի Հեթում զինքն ու Սմբատը կ. Պոլիս խաւրեց.

Հ. Հեթում Բ. որչափ ատեն թագաւորեց և իրեն ովլ յաջարդեց:

Պ. Քանի մը անգամ Եղիսաբեյոց ու Լեկայրնացւոց յաղթելէն վերջը՝ թագաւորութիւնը թորոս եղբօրը՝ Լեւոն որդւոյն յանձնելով՝ վանք մը քաշուեցաւ. բայց Լեւոն Գ. երկու տարի թագաւորելէն վերջը քանի մը իշխանաց վախտ թեամբ թագաւորաց Պիլդար զօրավարէն նենգութեամբ բռնուեցաւ.

և իր իշխաններովը հանդերձ սպաննուեցաւ :

Հ. Լեւոն Դ.ին ո՞վ յաջորդեց .

Պ. Լեւոն Դ.ին յաջորդեց իր եղբայրն Օշին որ մէկն զօրք գումարելով՝ յաղթեց Պիլ զարին և Եղիպտոսի Ամիրային՝ որ բաղմութեամբ կիլիկիոյ վրայ եկած էր . Օշին 12 տարի խիստ մեծ քաջութեամբ և խելքով ազգը կառավարելէն ետքը մեռաւ , իրեն յաջորդ թողով իր որդին լեւոն է :

Հ. Լեւոն Ե.ի ատենը կիլիկիա ի՞նչ վիճակի մէջ էր :

Պ. Լեւոն Ե.ի ատենը Եգիպտացիք , Թիւրք մէնք , և Թաթարք առ հասարակ կիլիկիոյ վրայ սկսան յարձակիլ , որուն պատճառը՝ Լեւոնին՝ Լատին իշխաններու հետըրած թըլ թակցութիւնն էր՝ որ Հայոց թագ աւորութեանը կործանման պատճառ եղաւ . Լեւոն Ե. 24 տարի խեղճութեամբ թագաւորելէն ետքը մեռաւ և իրեն յաջորդեց Յովհաննէս Պայլ Լատին իշխանը՝ որ հայտեցութեանը համար մէկ տարիէն սպաննու եցաւ .

Հ. Յովհաննէսին ո՞վ յաջորդեց :

Պ. Գուրիտոն իր եղբայրը՝ զոր 2 տարիէն սպաննեցին զինքը՝ Հայոց Ազգային եկեղեցւոյն մէջ Լատին ծես խօթել ուղելուն համար , և իրեն յաջորդեց կոստանդին Դ. որ

Ինչպէտ ազգաւ լատին էր , բայց խելքով 18 տարի ազգը կառավարեց և Եղիպտոսցւոց դէմալ փառաւոր յաղթութիւն մը ընելով մեռաւ . Քիչ մ'ատեն կիլիկիա անտէր մնալէն վերջը՝ իշխանք միաբանեցան և Լեւոն Զ. Լուսիննեան՝ որուն մայրը Հայ էր՝ կիլիկիոյ թագաւոր գլուխ . այս մարդը իւր իմաստութեամբը լաւ պիտի կառավարէր ազգը , բայց աւազ որ ժամանակը չ'ոգնեց , թշնամի ազգերը հետզհետէ զօրացած էին և Լեւոն օրինաւոր օգնութիւն չկրցաւ գըտնել Եւրոպայէն . թէև մեծամեծ խոստումներ շատ կընէին միշտ կաթոլիկաց Պապը և Եւրոպայի թագաւորները :

Հ. Կիլիկիոյ թագաւորութիւնն ի՞նչպէտ վերջացաւ :

Պ. Եղիպտոսի Սուլթանը քանի մը անդամ կիլիկիոյ վրայ եկաւ , յաղթեց լեւոնին , և շատ աւերմունքներ ընելէն ետքը՝ ետ դարձաւ . Երկու տարիէն դարձեալ անհամար զօրքով եկաւ և բոլոր կիլիկիան անապատ գարձուց ու լեւոնն ալ բռնեց , գերի տարաւ Եղիպտոս , և տարի թագաւորութիւն ընելէն ետքը : Այսպէս վերջացաւ կիլիկիոյ թագաւորութիւնը Քրիստոսի 1375 թուականին . Առեբիննեանց իշխանութիւնը թէ և ընդարձակութեամբ և զօրութեամբ խիստ

պղտիկ էր, բայց քաջութեան և խոհեմուշ  
թեան մասին շատ մեծ՝ մանաւանդ այնպի-  
սի դարերու մէջ որ ամեն կողմէն թշնամիք  
զօրացած ու Հայոց արտաքին ուժը տկա-  
րացուցած էին.

Հ. Լեւոն Զ. ի՞նչ եղաւ Եղիպտոս,

Պ. Լեւոն Դ տարի բանալը կենալէն ետքը՝  
ազատուեցաւ և հրաման առաւ նաև որ՝  
ուր որ ուզէ երթայ, ուստի Լեւոն նախ Ե-  
րուսաղէմ դնաց և իր ընտանիքը հոն թող-  
լով՝ անցաւ և բռնպա՞ ուր ամեն կողմ թա-  
գաւորական պատուով ընդունուելով՝ Փա-  
րիզ եկաւ և հոն մեռաւ Քրիստոսի 1393  
թուականին նոյեմբեր 49, 60 տարուան, և  
թաղուեցաւ կեղեստինեանց վանքին մէջ՝  
որուն դամբանը միակտուր սեւ մարմարիո-  
նէ է և վրան տարածեալ կը կենաց Լեւոնի  
արձանը, գլուխը թագ դրած, աջ ձեռքը  
թագաւորական գաւազան, ձախ ձեռքը  
թաթարան, իսկ ոտքին տակ երկու առիւծ  
իրարու կոթնած կը կենան:

Վերջ Հինգերորդ ՄԱՍԻՆ

## ՄԱՍԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՊԱՏՐԻԱՐԿ. ՈՒԹԻՒՆ Կ. ՊՈԼՍՈՑ

### ԳԼՈՒԽ Ա.

ՅՈՎԱԿԻՄ ՊԱՏՐԻԱՐԿԵՍ ՄԻՒԶԵՒ ԱՄԵՏԻՔ  
ՊԱՏՐԻԱՐԿ

Հ. Ռուբինեանց թագաւորութիւնը կոր-  
ծանելէն վերջը Հայոց վիճակն ի՞նչ եղաւ :

Պ. Ռուբինեանց իւղաւորութիւնը կոր-  
ծանելէն ետքը, գրեթէ բոլոր Հայաստան  
պատերազմի դաշտ մը դարձած էր. վասն  
զի մէկ կողմէն էշրէֆ Շապան՝ Եղիպտոսի  
Սուլթանը զլիլիկիա կ'այրէր, կ'աւրէր, կ'ա-  
պականէր, և մրւս կողմէն լէնկթմուր կամ  
Թիմուրլէնի Էօզպէք թաթարաց թագաւո-  
րը՝ որ Արմերզանատ կը նստէր, անհամար զոր-  
քով շատ տեղեր նուաճելէն ետքը Հայստ-  
ան եկեր, և հասած տեղերը սովորի ան-  
դիմութիւններ կ'ընէր. ասիկայ կարս քա-  
զաքն առաւ շատ մարդ ջորդելով, անցաւ  
փոքր Ասիա, Սերաստիա քաղաքն առաւ, և  
որովհետեւ երգում ըրած էր. որ սրով մարդ  
շապաննէ, նախ քաղաքին զօրքերը ողջ ողջ

թաղել տուաւ , յետոյ տղայքն և ծերելը  
ձեռ ու ընին ստուընին կապած դաշախ մը  
մէջ ձգեց ու կատղած ձիերու կոխկըստել  
տուաւ . իսկ քաղքին մէջի բորստներն ու  
տկար մարդիկը խեղդել տուաւ , ըսելով  
ես ողջերուն չխնայեցի , գուք ի՞նչ բանի  
հարկաւոր էք , ասոնք ընելքն վերջը անժիւ  
բազմութիւն մ'ալ խորասան գերի տարաւ ,  
և Հայաստանը երկու իշխանի յանձնեց , ո-  
րոնք զօրանալով իր թագաւորութիւնը կոր-  
ծանեցին .

Հ. Այս միջոցին ի՞նչ գլխաւոր գիտելիք  
կայ Հայոց վրայ :

Պ. Աէնկթիմուրին Հայաստան արշաւած ա-  
տեն՝ Սիւնեաց կողմերը կը զօրանար Պէլգի-  
նէ անուամբ կտրիճ Հայ իշխան մը , որ վաթ-  
սուն հազարի չափ Հայ ընտանիք կը խնա-  
մէր և օր աւուր իր քաջութեամբն ու ազ-  
դասիրութեամբը մեծ համբաւ կը տարա-  
ծէր Հայաստանի մէջ . բայց Վրաց թագա-  
ւորը Ամիսանձելով՝ Ամիսադին անուամբ վատ  
Հայու մը ձեռ քով թունաւորել և սպաննել  
տուաւ զանի , որ Հայերը մեծ սուգի մէջ  
ձգեց . թէպէտեւ Ամիսադին ալ իր արժա-  
նաւոր պատիմն առաւ Հայերէն՝ որ զինքը  
չարաչար սպաննեցին . այս միջոցին Սուլթան  
Մէհմէտ Բ. Ֆաթիհ կոչեցեալ Օսմանցւոց

թագաւորը՝ Կ. Փօլիսը Յունաց ձեռքէն ա-  
ռաւ և վաճառականութիւնն ու արհեստը  
ծաղկեցնելու համար շատ երեւելի Հայ ար-  
հեստագէտներ բերել տուաւ ու Պօլոյ զա-  
նազան կողմերը բնակեցուց , և իրենց գլուխ  
կարգեց Պատրիարք մը Քրիստոսի 1461 թը-  
ւականին , իշխանութիւն տալով իշխել Փոքր  
Հայոց և Յունաստանի մէջ գտնուած Հայե-  
րուն :

Հ. Ո՞վ եղաւ Ա. Պատրիարք Կ. Պօլոյ :

Պ. Երբ Սուլթան Մէհմէտ Պրուսա էր ,  
Հայոց վրայ մեծ սէր ու համարում ունէր ,  
մանաւանդ Յովակիմ եպիսկոպոսի վրայ , որ  
առաջնորդն էր Պրուսայու . և երբ Կ. Պօլիսն  
առաւ . Սուլթան Մէհմէտ , Յովակիմ ե-  
պիսկոպոսը կանչեց Փօլիս երեւելի Հայ ըն-  
տանիքներով , որ հետզհետէ Հայաստանէն և  
Փոքր Ասիայէն կուգային . Յովակիմն ալ Պատ-  
րիարք կարգեց անոնց . այս միջոցին իշմի-  
ածնայ կաթուղիկոսն էր Գրիգոր Ժ. Մակ-  
ուեցի . ասոր օրով Սարգիս անուն վարդա-  
պետ մը գողնալով Ա. Լուսաւորչայ աջը՝  
Դավիթ տարաւ , և շատ ալ ընծաներ ա-  
ռած՝ ձիհան Շահին գնաց կաթուղիկոսու-  
թիւնը առնելու համար . բայց Աղթամարայ  
Զաքարիա կաթուղիկոսը՝ ձիհան Շահ իշ-  
խանին մօրն աղաչելով՝ Էջմիածնայ կաթու-

զիկոսութեւնն ինքն առաւ : Յովակիմ Պատշ  
ըեարք 17 տարի ազգը խաղաղութեամբ կա-  
ռավարելէն ետքը մեռաւ :

Հ. Յովակիմ Պատրիարքին որո՞նք յաջոր-  
դեցին :

Պ. Ետեւէ ետեւ նատեցան Նիկողայոս Ա.  
11 տարի : Կարապետ Ա. 20 տարի : Մար-  
տիրոս Ա. 20 տարի : Գրիգոր Ա. 11 տարի :  
Սաստածատուր Ա. 13 տարի . ասոր օրովն  
Էջմիածնայ Ստեփանոս կաթուղիկոսն ի-  
րեն յաջորդ կարգեց Սեբաստացի Միքայէլ  
եպիսկոպոսը և ինքը Կ. Պոլիս եկաւ , շատ  
ընծաներով Սուլթան Սիւլթյանին՝ որ Քա-  
նունի կը կոչուէր , աղաջելու համար որ՝ Էջ-  
միածնայ վրայ եղած բռնութիւններն և  
ծանր տուրքը թեթեւցնէ . նոյնպէս Պարսից  
Շահ-Թահմազ թագաւորին շատ ընծաներ  
խաւրեց՝ աղաջելով որ իննայէ Հայոց , և ար-  
դիլէ ասպատակները նեղութիւն առաջ վա-  
նօրէից և եկեղեցեաց . թէ Սուլթանը և թէ  
Պարսից Շահը զիջանելով անոր աղաջանացը՝  
սկսան հոգ տանիլ Քրիստոնէից վրայ . Ստե-  
փանոս կաթուղիկոս քիչ մ'ատեն Կ. Պոլիս  
կենալով , անցաւ Գերմանիա կարուս Ե. Թա-  
գաւորին հետ աեմնուեցաւ , անցաւ Լե-  
հաստան՝ ուր Հայերէն մեծ ընդունելութիւն  
գտաւ և շատ ստիպեցին որ հոն մնայ . բայց

քիչ մ'ատեն ալ հոն մնալէն վերջը Ո.ուսաս-  
տան գնաց և բոլոր գաղթեալ Հայերը մը-  
խիթարելէն ետքը եկաւ յէջմիածն :

Հ. Աստուածատուր Պատրիարքին ո՞վ յա-  
ջորդեց :

Պ. Ստեփան Ա. 11 տարի . ասոր ալ յա-  
ջորդեց Տիրատուր՝ զոր 2 տարիէն գա-  
հէն վար առին՝ ժողովուրդը կեղեքելուն  
համար , ասիկայ գնաց առանձինն Սայ կա-  
թողիկոս ձեռնագրուեցաւ , մինչդեռ օրի-  
նաւոր կաթուղիկոս ունէր աթոռը . ասոր  
պատճառու երկպառակութիւն մտնելով  
Հայոց մէջ՝ զիրար նախատել սկսան . Տիրա-  
տուրէն վերջը Պատրիարք եղաւ Յակոբ Ա.  
ասոր օրով գրեթէ գեռ նոր կաթուղիկոսին  
աղաջանքով Շահ-Թահմազ Հայաստանի խա-  
ղաղութիւն շնորհեր էր , ասպատակները  
գաղթեցնելով . ծառաները զինքը խեղդե-  
ցին , որուն յաջորդեց Շահ-Խսմայիլ իր որ-  
դին . սա այնչափ անգութ էր՝ որ չէ թէ  
Հայոց այլ Պարսկաց մեծամեծներն ամենքն  
ալ թրէ անցուց . նոյն միջոցին Սուլթան  
Մուրատ Պարսկաստանի շփոթութիւնն իմա-  
նալով՝ ահագին բանակ մը խաւրեց Հայաս-  
տան . Լալա բաշայի հրամանաստարութեամբը ,  
որ երեւանայ վրայ գալով՝ Նախիջեւան ,  
Զալտըր , Դավրէժ քաղաքներն առաւ , և

60000 ի չափ Հայ գերի առնելով Յունաստան տարաւ, Յակոբ Պատրիարք ԱՆ տարի աղջը կառավարելէն ետքը մեռաւ:

Հ. Յակոբ Պատրիարքին որո՞նք յաջորդեցին:

Պ. Յովհաննէս Ա. 8 տարի: Թուվման Ա. 40 տարի:

Սարգիս Ա. 3 տարի: Յովհաննէս Բ.

1 տարի և Աղարիս Ա. որ կաթուղիկոս տանն

Սայ էր, 1 տարի: ասոր ալ յաջորդեց Սար-

դիս Ա. որ 3 տարի պատրիարքութիւն ը-

նելէն վերջը՝ ինքնընտիր Սայ Տիրատուր

կաթուղիկոսը Պոլիս գալով՝ կաշառօք պատ-

րիարքական դահը ելաւ դարձեալ. ասոր

օրով Եղմիածին պարտական իյնալով՝ Մել-

քիսեղ Ա. Եղմիածնայ կաթուղիկոսը Կ. Պօ-

լիս եկաւ հանգանակութեան համար: Պօլ-

սեցիք շատ սիրով ընդունեցին զինքը և

կուղէին Պատրիարք գնել. կաթուղիկոսը

շատ դէմ կենալէն վերջը՝ զիջանելով ժողո-

վըրդեան թախանձանաց՝ Տիրատուրը վար

առնելով, որ 3 տարիէ ՚ի վեր պատրիար-

քութիւն կ'ընէր, ինքը Պատրիարք եղաւ:

այս միջոցին սոսկալի սով մը տիրեց Հայաս-

տանի մէջ և յետոյ սարսափելի մահտարա-

ժամ մ'ալ համելով՝ շատ գիւղեր և քա-

զաքներ անմարդաբնակ եղան:

Հ. Մելքիսեղ կաթուղիկոս ո՞չ չափ ատեն

պատրիարքութիւն ըրաւ:

Պ. Հաղիւ տարիի մը կարող եղաւ շարու-  
նակել իւր պաշտօնը և հրաժարեցաւ, իրեն  
յաջորդեց Յովհաննէս Գ. խուլ. մէկ տա-  
րիէն Գրիգոր Բ. կեսարացի եպիսկոպոսը  
պատրիարքութիւնը առնելով սկսաւ ինքը  
կառավարել աղջը, սա բարի և աղջասէր  
անձ մ'ըլալուն ժողովրդեան մեծ հոդ կը<sup>1</sup>  
տանէր. ասոր օրով Շահ-Արաս Հայաստանը  
Օսմանցւոց ձեռքէն առ աւ և ինքը տիրեց  
բոլորովին. Եղմիածնայ կաթուղիկոսն ալ կան-  
չելով մեծ գումար մը պահանջեց անկէ,  
բայց նա չկընալով վճարել բանտ դրուեցաւ  
և երկար ատեն հոն մնալէն վերջը Պարս-  
կաստանի Հայք իրենց մէջ հանգանակու-  
թիւն ընելով պարտքը տուին և կաթուղի-  
կոսը ազատեցին:

Հ. Շահ-Արաս ուրիշ ի՞նչ անդժութիւն-  
ներ ըրաւ:

Պ. Հայաստանի մէջ Օսմանեան պահապան  
զօրաց Շահ-Արասէն յազդուելուն լուրը Կ.  
Պոլիս համենելուն պէս՝ Առութան Ահմէտ՝ ձը-  
ղալէզատէ Ոինան փաշան անհամար զօրքով  
Պարսից դէմ խաւրեց. Շահ-Արաս տեսնե-  
լով որ չպիտի կարենայ յաղթել Օսմանցւոց,  
հրաման ըրաւ որ բոլոր Հայ ընտանիքները  
ժողովին Արարատայ դաշտին մէջ, և ա-  
նոնց քաղաքները, աւաններն ու գիւղերն

այրեն, և Հայերը արտորնօք Պարսկաստան ասանին որպէս զի երբ Օսմանցիք գան՝ պաշտը և բնակութիւն չի գտնան։

Հ. Հայերը Երասմի գետէն ի՞նչպէս անցան։

Պ. Այս բռնի գաղթականութեան մէջ թըշտառ և անտէր Հայերուն կրած տառապանք ներն աննկարագրելի են, վամնզի Պարսիկներն անդադար յառաջ կը մղէին զիրենք առանց համփիստ տալու, տկարներն ու ծերերը չարաչար կը ծեծէին, մէկ քանին ցիցը և մէկ քանին ալ կախաղան հանեցին՝ որպէս զի մէկաները վախնան և շուտով յառաջ երթաները Երասմի գետին քով հասան՝ ըստ որում կ'աճապարէին որ Օսմանցիք չհասնին, բաւական նաւակ ու լաստ չ'ըլլալով՝ սկսան ժողովուրդը գետը ձգել, որ կրցովը լողալով անցնի, ասով անհամար մարդիկ խեղդուեցան, գետէն և սուրէն աղատողներուն թիւն էր 12000 ընտանիք, ասոնք Նոր-Զուղայ ըստած քաղաքը շինեցին. Շահ-Արամ Հայոց սիրտը վաստիելու համար տուրքերն ին թեթեւցուց և հետերնին գթութեամբ վարուիլ սկսան։

Հ. Այս միջային Հայաստանի մէջ յիշատակուելու արժանի ի՞նչ գէպք պատահեցաւ։

Պ. Մինչդեռ Հայաստան այսչափ անտանելի նեղութեամբ կը տառապէր, եկեղեւ

ցիները կը քանդուէին, վանքերը կը կողոպատուէին և կրօնի պաշտօնեայք՝ ոմանք իրենց ժողովրդոցը հետ կ'երթային, և ոմանք իրենց ուխտեալ վանքերուն մէջ՝ գտնըւած սրբոց մասունքները և նուիրական անօթները անարատ պահելու համար անդուլ կը հսկէին, և ահա այս միջոցին Լատին կը ըօնաւորք յարմար առիթ սեպելով Հայաստանի ամայութիւնը՝ սկսան խումբ խումբ հոն վազել, որոնց երկուքը Մելքիսեդէկաթուղիկոսին հանդիպելով ընծաներ մատուցին և նա մարդասիրութեամբ ընդունեց զանոնք յէջմիածին. Լատինք շուտով բարեկամացան միաբաններուն հետ և համարձակ կը պարտէին մերձակայ վանքերը, ամեն օր Հուիփախմեանց Գայիխանեանց վանքերը կ'երթային՝ որոնց երկուքն ալ քանդուած էին. և որովհետեւ Լատինք գիտէին սրբոց մասանց՝ վանքին որ կողմն ըլլալը, սկսան այն կողմը քակել։

Հ. Լատինք կրցան՝ գողնալ սրբոց մասունքները։

Պ. Վանքին մէջ մատուռին երկաթէ գուոը չկրնալով կոտրել, աւագ խորանին տակէն պատը ծակելով մատուռն իջան, և սկըսան փորել. Հուիփախմեանց ոսկերց արկը գտնելով դուրս հանեցին, բայցին արկը և

երբ մասունքները կտաւով քսակներու մէջ դնել սկսան, իջմիածնէն երկու եպիսկոպոս այն կողմերը եկած ըլլալով վանքին մօտեցան, Հատինք շատ ջանացին որ եպիսկոպոսները անկէ հեռացնեն, բայց անմք խորագիտութեամբ մտան տաճարը և տեսնելով Հոփիսիմեանց ոսկերց արկղը՝ զարհորհցան և շուտ մը լատին կրօնաւորները ծեծելով վանքէն դուրս վանաեցին, արկղն ալ իջմիածին բերին նոյն գիշերը և հետեւեալ օրը հանդիսիւ ամբողջ միաբանք դարձեալ իւր աեղը տարին կաթուղիկոսին հրամանաւ. այս լատինները թէպէտ շատ տեղերէ գոզութիւններ ըրին՝ բայց ամենքն ալ ձեռութենուն առնուեցան ջուզայեցի Նազար մեծ իշխանին չնորհիւ որ նոյն ատենը Պարսից Շահին սիրելին ու խորհրդակիցն էր.

Հ. Նոյն օրերը ուրիշ ի՞նչ երեւելի դործ պատահեցաւ :

Պ. Շահ-Աբաս Պարսից թագաւորը ուզելով Հոյերը բոլորովին պաշեցնել Հայաստանէն, միտքը դրաւ իջմիածինը կործ անել և անոր քարերովը նոր իջմիածին մը շինել Սպահանայ Պարսից երկրին մէջ և հոն բերել տալ Ա. Լուսաւորչայ Աջը. այս խորհուրդը յայտնեց իր խորհրդակից Խօճա Նազարին. Նազար որ ճարտարախօսութեամբ

երեւելի եղած էր արքունեաց մէջ ըստ, « Տէր արքայ, եթէ դուք կամք կը հոս իջմիածին մը շինել, ինչո՞ւ Այրարատայ իջմիածին քարերը հոս փոխադրենք, դուք կարող էք ոչ թէ քարէ՝ այլ ոսկիէ շինել. բայց երբոր քարէ շինել կը հաճիք, հոս ձեր իշխանութեան տակ շատ աղնիւ քարեր կը դունուին, անոնցմով աւելի փառաւոր կ'ըւլայ և մենք ազօթող կ'ըլլանք քու կենացդ»: Այս խօսքով թէեւ զիշաւ Շահ-Աբաս առ երեսս, բայց հետեւեալ օրը հրաման ըրաւ Ամիրդունայ Թահմազզուլի նախարարին՝ որ կաթուղիկոսն ու Ա. Լուսաւորչայ Աջը իրեն խաւրէ, Թահմազզուլի իսկցն գնաց իջմիածին, Ա. Լուսաւորչայ Աջը՝ ոսկիապատ աւետարան մը և արծաթ խաչ մը Մելքիսեդ կաթուղիկոսին հետ Ապահան խաւրեց.

Հ. Գրիգոր Բ. կեսարացի ո՞չչափ նստաւ պատրիարք :

Պ. Յովհաննէս Գ. խուլ մականուանեալ, հակառակելով Գրիգորի՝ Յ տարիէն վերջը մերստին Պատրիարք եղաւ, բայց Ա տարիէն ժողովրդէն հալածուելով՝ դարձեալ Գրիգոր Գ. Պատրիարք դրուեցաւ որ 40 տարի խաղաղութեամբ կառավարեց ազդը. և որովհետեւ մաս մը անձինք Յովհաննէսը կուղէին՝ շատ ստակ վատնելով դարձեալ

զանիկայ պատրիարքական գահը հանեցին՝  
որ 2 տարի իշխանութիւն վարելով դարձ-  
եալ Գրիգոր Գ. Պատրիարք եղաւ և 3 տա-  
րիէն հրաժարելով Զաքարիա Ա. Վանցի  
Պատրիարք նստաւ. ասոր օրով երեւելի էր  
Մովէս կաթուղիկոս՝ որ Էջմիածինը և բո-  
լոր անոր շրջակայ վանքերը նորոգեց, հաս-  
տատեց նաև գպուտներ և գիշեր ցերեկ ան-  
դուլ աշխատելով աշակերտներ կը հասցը-  
նէր, Հայաստանի ամեն կողմնուիրակ խըրք  
կերպվ վանքերու և եկեղեցիներու շինու-  
թեան պէտքերը կը հոգար. ասոր օրով Գա-  
զատացի Յովհաննէս անուն վարդապետ մը՝  
Հայոց տառեր ձուլելով Ժամագիրդ, Սաղ-  
մոս եւայլն ապել տուաւ.

Հ. Զաքարիա ո՞րչափ ատեն պատրիար-  
քութիւն ըրաւ :

Հ. Հինգ տարի. և հետզետէ նստան Յովհ-  
հաննէս Ա. խուլ, չորրորդ անգամ 3 տարի,  
Զաքարիա դարձեալ 3 տարի. ասոր օրով  
Լեհաստան դադթող Հայոց մէջ մեծ գըժ-  
տութիւն ելաւ իրենց Նիկոլ անուն անար-  
ժան եպիսկոպոսին՝ Հայեկեղեցւոյն մէջ Լա-  
տին ծէս մոյնել ուղելուն համար, Մովէս  
կաթուղիկոս շատ յորդորեց զանի և Գրիգոր  
կեսարացի հրաժարեալ Պատրիարքը խաւ-  
րեց՝ որ համոզէ զնիկոլ, բայց անօդուտ եւ-

զաւ. նորէն կաթուղիկոսն իր աշակերտնե-  
րէն կեսարացի խաչատուր վարդապետը  
խաւրեց՝ որ ճարտարակոս և խելացի անձ  
մէկը, շատ աշխատեցաւ խաչատուր՝ որ հա-  
մոզէ զնիկոլ և ժողովրդեան հետ հաշտեցը-  
նէ, բայց անկարելի եղաւ :

Հ. Նիկոլ ի՞նչ հնարք մուածեց կաթուղի-  
կոսին ձեռքէն ազատելու համար :

Պ. Այն ատենները Լատին կրօնաւորներն  
զօրացած էին հոն. Նիկոլ անոնց գիմեց,  
ըսելով որ ես և իմ ժողովուրդս Հայոց կաշ-  
թուղիկոսին իրաւասութեանը տակ շնչք  
ուղեր կենալ. այս որ լսեցին Լատինք՝ սկսան  
ամեն ճիգ ժափել. Նիկոլ անոնց հետ միա-  
ցած՝ նախ կաթուղիկոսին խրկած. Խաչա-  
տուր վարդապետն աքսորել տուաւ իբր խը-  
ռովարար, և յետոյ չարիք չմնաց որ չհաս-  
ցուց Հայ ժողովուրդին գլխուն, թէեւ ժո-  
ղովուրդը շարունակ կը մարտնչէր Լատին կը-  
րօնաւորաց դէմ իր մայրենի և ուղղափառ-  
եկեղեցիէն շղատուելու համար, և ամեն զո-  
հողութիւն շինայեց թէ՛ նիւթապէս և թէ՛  
բարոյապէս. բայց ձիգվիթք և Նիկոլ՝ որ-  
առանց ժողովրդին հաւանութեամբը եպիս-  
կոպոս եղած էր, վերջապէս յաղթող գըտ-  
նուեցան և 40000 Հոյ ընտանիք պապա-  
կանութեան մէջ իյնալով, իրենց սիրելի-

ազգութիւնը բոլորովին մոռցան :

Հ. Լեհաստանի Հայերն ուսկի՞ց դաղթած էին :

Պ. Բագրատունեաց կործանելէն ետքը Անեցիք բարբարոս ազգաց բռնութիւններէն ազատելու համար, իրենց ինչքերը ժողուելով խըրքմանցան, և անկէ մաս մը Մոլոտուիա և մեծ մաս մ'ալ Լեհաստան գաղթեցին, հոն հետղետէ շատնալով 40000 տուն եղան . Լեհաց թագաւորն Հայոց ազգայնութեան իրաւունքները ճանշնալով՝ վոյթ անունով Հայ կառավարիչ մը գրին որ ազգային դատաստանները տեսնէ, և 1516 ին Սիկումունութագաւորին հրամանաւը լէմպէրկի մէջ Հայոց դատաստարանը շինուեցաւ, այս քաղքին մէջ Հայք այնչափ զօրացան և հարստացան՝ որ գրեթէ Լեհաց տէրութեան քորո երեւելի քաղաքներուն մէջ իրենց վաճառականութիւնն ու արհեստը տարածեցին, զինուորութեան մէջ ալ շատ յառաջադիմութիւններ ըրին և իրենց համբաւը ուրիշ երկիրներու մէջ գտնուող Հայերուքաջալերութիւն և խրախոյս կուտար, բայց այն նիկոլ անուն վատ եպիսկոպոսին ձեռքով՝ ի պապականութիւն առաջնորդեցան ՚ի մեծ սուրբ ընդհանուր Հայութեան :

Հ. Զաքարիա Պատրիարքին ո՞վ յաջորդեց :

Պ. Դաւիթ Ա. Արեւելցի, որ էջմիածնէն նուիրակ եկած էր, բայց 2 տարիէն ալթուուէն վար առնուելով՝ Երեւանցի կիրակոս վարդապետը Պատրիարք դրուեցաւ . սաբարի և ազգասէր մարդ մ'ըլլալուն՝ թեմերն այցելութեան ելաւ, երբ Պրուսա հասաւ, Հայք խիստ մեծ պատուով ընդունեցին դինքը . և որովհետեւ դատաւորը Հայերը շատ կ'ատէր, տեսնելով Պատրիարքին այնչափ փառաւորուիլը բարկացաւ սաստիկ և հրամացեց որ կործանեն Հայոց եկեղեցին. այսլուրը կ. Պօլիս նատող Եպարքոս Գարա Մուսթափա փաշան առնելուն պէս՝ դատաւորը և եկեղեցին քանդողները խստիւ պատժել տուաւ . ըսելով թէ, Հայոց եկեղեցին կործանելո՞մի՞դ՝ կ'ստիպէք ժողովուրդը որ ուրիշ երկիրներ երթան իրենց պաշտամունքը կատարելու, և հրաման ըրաւ նաև որ եկեղեցին շինեն. կիրակոս Պատրիարք դարձաւ կ. Պօլիս և 1 տարի Յ ամիս պատրիարքութիւն ընելէն վերջը ժանտամահէն վախճանեցաւ :

Հ. Կիրակոսի ո՞վ յաջորդեց :

Պ. Խաչատուր Սեբաստացի կամ Գաղատացի և տարի և 6 ամիս, յետոյ Դաւիթ Ա. որ Տաճիկ մեծամեծներն և մէկ քանի Հայեր իրեն կողմ շահելով Պատրիարք եղաւ, ասոր օրով

Հատինք կ. Պօլսոյ մէջ բաւական մարդ որ սացած էին՝ որոնց գլուխն էր կղեմէս անուն կրօնաւոր մը. Դաւիթ քանի մը անդամ զգուշացուց զկվեմէսն և անոր երթեւեկութիւն ընտները, բայց անոնք անհոգութեամբ Պատրիարքին ազդարարութեան ոչ միայն չ'անսացին՝ այլև սկսան իրենց մէջ ստակ հաւաքել որ Պատրիարքը աժոռուէն իշեցնեն և տեղը թումաս բերիացին դնեն. այս բանը մեծ կապարզոս իմանալով՝ ուղեց բունել զկվեմէսն ու անոր համախոհ Լատինները. Լատինք այս լուրն առնելուն պէս՝ փախան խկէնտէր Զէլէպիին տունը, միայն կղեմէս բռնուեցաւ՝ բայց Գաղղիոյ գեսպանին մարդիկները ճամբան վրայ համնելով՝ շատ ստակ տուին բռնողներուն և փախուցին իրենց գեսպանատունը. գեսպանը տեսնելով որ չպիտի կրնայ պաշտպանել կղեմէսը՝ վասն զի Եպարդոսը բարկացած շարունակ վնտուել կուտար, զանիկայ իր ընկերներովը Հռովմ փախուց :

Հ. Ա՞րչափ Պատրիարքութիւն ըրաւ Դաւիթ :

Պ. Դաւիթ հաղիւ Յ ամիս պատրիարքութիւն ըրած էր, թումաս անուն վարդապետ մը շատ տուրք խոստանալով վճարել արքունի գանձուն՝ ինքը Պատրիարք եղաւ, բայց

Հկրնալով վճարել խոստացած տուրքը՝ Հը ու ովմ փախաւ. իրեն յաջորդեց դարձեալ Դաւիթ՝ երրորդ անդամ, ասոր պատրիարքութեան երրորդ տարին սոսկալի հրդեհ մը պատահեցաւ կ. Պօլիս, այրեցան 2000 տունէն աւելի և ֆումդափուի Ս. Աստուածածնայ մայր եկեղեցին. բայց երկու ամսէն Սուլթան խարահիմի հրամանաւը և Տիվրիկցի Պօլս վարդապետին յորդորանոքը վերստին շինուեցաւ աւելի փառաւոր կերպով :

Հ. Դաւիթի Պատրիարքութեան օրով ի՞նչ երեւելի դէպք պատահեցաւ Հայաստանի մէջ :

Պ. 1648 Ո.պրիլ ամսոյն 2 ին աւագ շաբթու ահագին գետնաշարժութիւն մ'եղաւ, որ ութ օր տեւեց, և կործանեցան շատ վանքեր՝ եկեղեցիներ՝ մզկիթներ և անհամար տուն՝ որոնց տակը 50000 էն աւելի մարդիք մեռան. այս միջոցին կ. Պօլսոյ Հայերը մեծ խռովութեան մէջ էին, վասն զի ոմանք կ'ուզէին որ Դաւիթը Պատրիարք մնայ և ոմանք թովմասը. բայց թովմայեանք յաղթող գտնուելով՝ Դաւիթը վար առին հինգ տարի Պատրիարքութիւն ընկելին վերջը, բայց 11 ամիս աշխարհական տեղապահով աղդը կառավարուելէն ետքը՝ դարձեալ

դաւիթ Պատրիարք եղաւ և Յ ամիսէն դարձ եղալ վար առնուելըլ, աշխարհականք սկըսան կառավարել, մինչեւ որ Եղիազար Յ. Ն. թապցի, որ վերջերը Երուսաղէմի Պատրիարք և Էջմիածնի կաթուղիկոս ընտրուեցաւ, հաճեցունելով տեղապահներն՝ ինքը Պատրիարք եղաւ, բայց խոռվութիւնը չլերցաւ Հայոց մէջէն:

Հ. Փիլիպպոս կաթուղիկոս ինչո՞ւ համար կ. Պօլիս եկաւ.

Պ. Պօլսոյ Հայոց մէջ պատրիարքական երկապառակութիւնը տիրելով օր ըստ օրէ թըշնամութիւնը կ'աւելնար. ասոր համար շատ անդամ նամակներ գրեցին խաղաղասէր ու մանք կաթուղիկոսին և ումանք անձամք գացին Էջմիածին, որ դարման մը զ մնեն և այս երկապառակութիւնը վերցընեն Հայոց մէջէն. թեպէտեւ կաթուղիկոսը շատ անդամ կոնդակներով կը յորդ-որէր և իր կողմէն խաղաղասէր անձինք կը խաւըէր, բայց չեք օգտեր. ուստի անձարցեալ ճամբայ ելաւ անձամք Պօլիս դալու. Հայք կաթուղիկոսին Պօլիս գալը Եպարքոսին իմացընելով՝ բազմաթիւ անձինք՝ Բ. Դրան պաշտօնակալ ներով կաթուղիկոսը դիմաւորել գացին մինչ ի կարին. կաթուղիկոսը նախ Երուսաղէմ հանդիպելով՝ հոն գտաւ Սոսյ Ներսէս Աւ-

բաստացի կաթուղիկոսը՝ և շատ սիրով տեսնուեցաւ հետը. այս երկու կաթուղիկոսներն իրենց եկեղեցականաց մէջի անկարգութիւնները վերցունելու համար մօտակայթեմերուն եպիսկոպոսներն և վարդապետները Երուսաղէմ հրաւ իրելով ժողով մը կազմեցին:

Հ. Կրկու կաթուղիկոսաց այս ժողովը ի՞նչ կանոններ հաստատեց.

Պ. Սահմանադրութիւն մը շինեցին, որուն առաջին և գլխաւորն է Էջմիածնայ և Սոյ կաթուղիկոսները մէկզմէկու հետ սիրով կապուին և ամեն մէկն իրեն վիճակեալ թեմերուն եպիսկոպոսները ձեռնադրէ, մանաւանդ որ առանց ժողովրդին վկայութեան եպիսկոպոս չձեռնադրեն կաթուղիկոսք. մէկ վիճակ մը մէկ առաջնորդ ունենայ, եպիսկոպոսք իրենց թեմէն գուրս ուրիշ վիճակի մը քահանայ կամ վարդապետ չձեռնադրեն, վարդապետութեան կամ քահանայութեան պաշտօն չորսէի մէկու մը՝ մինչեւ որ անիկայ ուաման և գէթ առաքինութեան մէջ կատարեալ չըլլայ, և իրենց վիճակին եպիսկոպոսէն պիտի ձեռնադրուին ժողովրդին հաւանութեամբը. եպիսկոպոսք չզրկեն զքահանաները իրենց իրաւոնքէն՝ զոր ժողովուրդը կուտայ, և քահանայք մէկզմէկու

ծուխ չյափշտակեն, քահանայք նշանտուռութիւնը եկեղեցւոյ մէջ իմացունեն որ եթէ արգելք մը կայ՝ յայնուի. երեցկինը վախճանած քահանայ մը եթէ ծեր և քանի մը զաւակ ունի և առաքինի ըլլալը վկայուածէ, կրնայ եկեղեցւոյ մէջ պաշտօն վարել, ապա թէ ոչ պէտք է անպատճառ վանք երթայ. այս կանոնները ամեն տեղ հրատարակեցին. Փիլիպպոս կաթողիկոս Ա. Յակոբայ աւագդ խորանին բեմը շինել տալով ու զեւորեցաւ ՚իՊօլիս:

Պ. Փիլիպպոս կաթողիկոսին Պօլիս գալն ի՞նչ ազգեցութիւն ըրաւ:

Պ. Դէմքով պատկառելի և ճարտարակոս ըլլալուն՝ եկեղեցեաց մէջ սէր ու միաբանութիւն քարոզելով՝ ժողովուրդը խաղաղեցուց. Եղիազար Պատրիարքն ալ վար առնելով՝ Յովհաննէս Պ. Մուզնեցի վարդապետը Պատրիարք դրաւ. Ժողովուրդը սկսաւ մէկզմէկ համբուրելով՝ եղբայր Եմք մեք գոյնը շել շատ սիրեցին կաթուղիկոսը և էջմիածնայ համար մէծադումար ստակ հաւաքեցին իւրենց մէջ, նաեւ բնիկ Պրուտացի Անտոն Զէտիպին էջմիածնայ մեծ զանդակատունը շինելու համար խոստացաւ ամբողջ ծախքը մնարել. նոյն օրերը Լեհաստանէն կ. Պօլիս եկաւ. Նիկոլ անուն անարժան եպիսկոպոսը

և քանի մը երեւելի Հայեր՝ զոր երկար համոզելով հաշտեցուց. Նիկոլ խոստացաւ որ անկէ ետքը ժողովրդեան կամացը համեմատ վարուի. ժողովուրդին ալ կոնդակաւ պատուիրեց որ հաշտ աջօք նային իրենց առաջնորդին և ճամբու դրաւ. բայց նիկոլ դարձեալ իր ընթացքը շարունակեց. իսկ կաթուղիկոսը քիչ մ'ատեն ալ Պօլիս կենալով՝ օրինեց ժողովուրդը և գնաց էջմիածին:

Հ. Ուրիշ ի՞նչ յիշատակի արժանի գործունի փիլիպպոս կաթուղիկոս:

Պ. Էջմիածնայ վանքը կատարելապէս նորոգելէն ետքը Ասպահան գնաց, ուր մեծ ընդունելութիւն գտաւ Հայերէն. սա կը փափաքէր Լուսաւորչայ Ա. Աջը էջմիածին փոխադրել Վերսատին, բայց Ջուղայեցիք դէմ կը կենային պատճառելով թէ Ջուղայեցի Հայերը ինքզինքնին միփթարելու համար միայն այս Ա. Աջը ունին, և թէ Շահ-Արաս արքայն Ջուղայեցուց տուածէ զայն պահելու, եթէ ուղելու ըլլայ ի՞նչ ընենք. ուստի փիլիպպոս կաթուղիկոս Երեւանցւոց օգնութեամբը շատ ընծաներ տալով Պարսից Երեւելիները հաճեցուց. յետոյ ընծաներով թագաւորին ալ աղերսագիր տուաւ և հրամանն ընդունելով, Ջուղայեցի պարոն Սափարին տունէն Ա. Աջը եկեղեցին փոխադ-

բեց ժողովուրդը օրհնելու համար . և երբ  
տեսաւ որ ջուզայեցիք դարձեալ կ'ընդդիւ-  
մանան և չեն ուզեր տալ , Մարդար անուն  
վաճառականի մը հետ դավրէժ փախուց ու  
ինքն ալ ճամբայ ենելով հասաւ դավրէժ և  
Ա. Լուսաւորչայ Ա.ջը 40 տարի Պարսկաստան  
մասն վերջը վերադարձուց Եջմիածին :

Հ. Յովհաննէս Մուզեցի՝ աղդը կրցաւ կա-  
ռավարել :

Պ. Փիլիպպոս կաթուղիկոս Եջմիածնայ մէջ  
ուրիշ շատ կարգադրութիւն ընելէն ետքը  
վախճանեցաւ . իրեն յաջորդեց Յակոբ ջու-  
զայեցի առաքին՝ վեհանձն և խորախոր-  
հուրդ եպիսկոպոսը . այս միջոցին Եղիազար  
Անթապցի քանի մը երեւելի Հայեր իրեն  
կողմ որապով 4 տարիէն Յովհաննէսը պատ-  
րիարքութենէ ձգեց , առկայն իշխանները  
փոխանակ Եղիազարը Պատրիարք ընելու՝ ի-  
րենք սկսան տեղապահութիւն ընել . այս  
տեղապահները կ. Պոլսոյ 6 եկեղեցեաց կող-  
մէն ընտրուած էին , որ է Սամաթիա Ա. Գէ-  
որդ՝ որ Պատրիարքարան էր , Գումզավու-  
Ա. Աստուածածին , Լանկա Ա. Սարդիս , Ա-  
լածա մէջիտ Ա. Նիկոլոս , Պալատ Ա. Հըեշ-  
տակապետ և Ղալաթիա Ա.մենափրկիչ : Ա.յս  
վերջինը Պոլսոյ մէջ Հայոց համար շինուած  
առաջին եկեղեցին է :

Հ. Տեղապահներն ո՞չափ ատեն կառա-  
վարեցին Ազգը :

Պ. Հազիւ 2 տարի . վասն զի Հռովմ փա-  
խած թովմաս Բ. Պոլիս գալով՝ դեսպանաց-  
թարդ մաններուն միջոցաւ վերատին պատրի-  
արքական գահն ելաւ : Ասոր օրով Երուսա-  
լէմի Աստուածատուր պատրիարքը Կ. Պոլիս  
եկաւ Յունաց հետ դատ վարելու համար ,  
վասն զի Ծռապատկի մը առժիւ Յունաց և  
Հայոց մէջ վէճ բացուելով՝ Գրիգոր Մոկացի  
Երուսալէմի նախկին Պատրիարքը տեղոյն  
բդէշիին միջնորդութեամբ կրցաւ կատա-  
րել Ա. Յարութեան տաճարին մէջ իւր պաշ-  
տօնը , այս բանիս համար Յոյներն ոխ պա-  
հած էին . երբ Գրիգոր Պատրիարք մեռաւ  
Յոյնք մեծամեծ ընծաներ առած տէրու-  
թեան բարձրաստիճան անձանց դիմելով՝  
Հայոց Ա. Յակոբայ վանքն իրենց սեպհակա-  
նել ուզեցին , ուստի Աստուածատուր Պատ-  
րիարքին ճարը հատնելով շատ ստակ առաւ  
և կ. Պոլիս եկաւ , և Եղիազարին յաջողակու-  
թիւնն ու ճարտարութիւնը տեսնելով՝ իրեն  
փոխանորդ կարգեց և խոստացաւ նաև իրեն  
յաջորդ ընտրել եթէ սոյն իրաւացի դատը  
շահելու ըլլայ . Եղիազար այս խնդիրը յանձն  
առնելով՝ թէե շատ սարսափելի և անտա-  
նելի շարչարանքներ քաշեց թէ Հայոց և թէ

Յունաց վրէժինդրութենէն՝ բայց և այնպէս  
դատը շահեցաւ :

Հ. Թովմասի Պատրիարքութիւնը ո՞րչափ  
տեւեց :

Պ. Հազիւ և տարի և 6 ամիս, վասն զի Հայ  
ժողովուրդն որ Էջմիածնաց աթոռին և հոն  
բազմող կաթուղիկոսին վրայ մեծ սէր ու  
նէր, կուզէր դարձեալ Յովհաննէսը Պատրիա  
րք գնել. բայց թովմաս գեսապանաց զօ  
րութեամբը կը բռնանար Հայոց պատրիար  
քական գահուն վրայ, աակայն վերջապէս  
ժողովուրդը յաջողեցաւ վանել աթոռին և  
տեղը կափացի Մարտիրոս վարդապետը  
դրաւ՝ որ Երուսաղէմայ միաբանութենէն էր.  
սա պատրիարքական աթոռը Գումզաքու փո  
խագրեց Սամաթիայէն. ասոր օրովը Կ. Պոլիս  
սուկալի հրդեհ մը պատահերով՝ 3000էն  
աւելի տուն և 5000ի չափ անձինք այրե  
ցան՝ որոնց մէջ էր Հայոց Լանկայի Ա. Սար  
գիս Եկեղեցին, և հազիւ ազատեցաւ Գումզ  
գաբուի Ա. Աստուածածնայ Եկեղեցին։ Այս  
ատենները Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանց՝  
Երեւելի եղած էր իր տաղանդովը. այս մեծ  
մարդը բաւական աշխատութիւններ ունի  
գրական ասպարէզին մէջ։ Մարտիրոս Պատ  
րիարք, և տարի և 5 ամիս պատրիարքու  
թիւն ընելէն վերջը վար առնուեցաւ և իրեն

յաջորդեց Տիվրիկցի Ղազար եպիսկոպոս՝  
Բ. Դրան դիւանագպիր Տիվրիկցի Խպրահիւ  
մին ձեռօք :

Հ. Ո՞րչափ պատրիարքութիւն ըրաւ Ղազար:

Պ. 2 տարի և 4 ամիս պատրիարքութիւն  
ընելէն ետքը՝ Էջմիածնայ միաբաններէն Յովհ  
հաննէս վարդապետ՝ որ Էջմիածնայ ան  
ուամբ նուէր կը հաւաքէր, տեմնելով Պօլսոյ  
պատրիարքական լիազօր իշխանութիւնը,  
Էջմիածնայ համար Ժողված ստակովը՝ Պատ  
րիարք եղաւ և Յովհաննէս Ե. կոչուեցաւ,  
բայց հազիւ և տարի և 1 ամիս անցած էր՝  
Ժողովրդեան մէջ գժտութիւն մտաւ՝ վատ  
նած ստակները շուտով հաւաքելու համար  
հարստահարութիւններ ընելուն համար. ա  
սոր օրով Երուսաղէմին նուիրակ եկած էր  
Սարգիս վարդապետ Ռոտոսթօյի, սա յար  
մար առիթ սեղելով գնաց Անդրիանուպօ  
լիս, Երուսաղէմի համար Ժողված ստակները  
վատներով և շատ ալ պարզեւ տալ խոստա  
նալով՝ Պատրիարք եղաւ Սարգիս Գ. անու  
նով՝ և եկաւ Կ. Պոլիս, հալածեց Յովհան  
նէսն ու ինքն սկսաւ կառավարել ՊԱՊՐ  
9 ամիս, մինչեւ որ Յովհաննէս Ե. վերստին  
Պատրիարք եղաւ. ասոր օրով Եղիազար Ան  
թապցի որ Երուսաղէմի պատրիարքական  
փոխանորդն էր, Երուսաղէմի մէջ բազմա

թիւ շինութիւններ ընելէն ետքը , ջանք ըրաւ Տաճկաստանի կաթուղիկոս ըլլալ և աթոռը Երուսաղէմի մէջ հաստատել , և այս բանին համար Երուսաղէմի մէջ Էջմիածին անուամբ Եկեղեցի մ'ալ շինեց :

Հ. Եղիազար կրցա՞ւ յառաջ տանիլ իւր այս խորհուրդը :

Պ. Սայ Խաչատուր կաթուղիկոսն Երուսաղէմ հրատիրելով համոզեց զայն և հաճեցուց ըսելով՝ թէ ո Դու քու վիճակիդ Հայոց , Էջմիածին՝ Պարսկաստանի և Արեւելքի մէջ գանուող Հայոց , խսկ ես՝ Կ. Պօլաց և շըրջակայից եւն . գանուող Հայոց վրայ կաթուղիկոս պիտի ըլլամ՞ո , ուստի շատ ստակ և ոսկի առած Եպարքոսին երթալով կաթուղիկոսութեան և միանդամայն Երուսաղէմի պատրիարքութեան հրովարտակն առաւ , ասկէ Երկպառակութեան դուռ մ'ալ աւելի բացուեցաւ Աղջին մէջ . բայց Էջմիածնայ Յակոբ կաթուղիկոսն՝ որ խոհուն և հեռատես անձ մ'էր , իմանալով՝ Եղիազարու այս ընթացքը անմիջապէս Կ. Պօլիս եկաւ , խաղաղեցուց ժողովուրդը և անտի Սուլթանին գնաց յԱնդրիանուազօլիս , և հոն վերստին վաւերացուց իր ընդհանրական կաթուղիկոսութիւնը . և որովհետեւ Յովհաննէս Պատրիարքի վրայ ալ արտունջներ կային , վե-

ըրստին Սարգիս Գ. Ո. Օսոսպօցիկն հրովարտակն առաւ և Յովհաննէսը հրաժարեցուց Զ տարի և Զ ամիս պատրիարքութիւն ընելէն վերջը . այս տաեններն էր՝ որ Ոսկան վարդապետ Մանչէսթէրի մէջ տպարան բանալով Աստուածաշունչ եւն , գրքեր տպագրել սկսաւ :

Հ. Սարգիս Գ. ո՞չափ պատրիարքութիւնը բաւ :

Պ. Սարգիս Յ տարի պատրիարքութիւնը նելէն ետքը մեռաւ և իրեն յաջորդեց Էջմիածնայ միաբանութենէն Ստեփանոս վարդապետ Մեղրոյի՝ որ խելացի և ուսումնական անձ մ'ըլլալուն՝ սկսաւ խաղաղութեամբ կառավարել Ազգը , բայց Կ տարիէն վախճանելով՝ Յովհաննէս Զ. Սամաթիացի Խօֆու մականուանեալը յաջորդեց , որուն օրովը Հայերը շատ ստակ ծախք ընելով Ս. Սարգիս Եկեղեցւոց շինութեան հրամանն առին . բայց հազիւ լմնած էր , կործ անեցին ՚ի հիմանց և մինչեւ այսօր աւելրակ կը մնայ , և Յովհաննէս Զ. Կ տարի պատրիարքութիւնը ընելէն վերջը՝ գահէն վար առնուելով Անդրէսաս անունով երէց մի գրուեցաւ . Կ տարիէն կարապետ կեսարացի կրպայ մականուանեալը յաջորդեց . սա Յ տարի ազգը կառավարելէն ետքը՝ արքունի բանակին մէջ հա-

ցագործ Սարդիս անուն անձ մը երիցութեան աստիճան առնելով Պատրիարք եղաւ, բայց և տարիէն վերստին կարապետ կեսարացի երկրորդ անդամ Պատրիարք եղաւ. այս միջոցներուն ժողովուրդն ալ շուարեալ որուն հասազնդելը չէր գիտեր. Յակոր կաթուղիկոս այս բաներն իմանալով՝ վերստին կ. Պօլիս եկաւ ժողովուրդը խաղաղեցնելու ։ Հ. Յակոր կաթուղիկոս ի՞նչ ըրաւ կուտանդնուպօլիս։

Պ. Հաղիս Պօլիս հասած էր, մահը հասնելով վախճանեցաւ. Հայերը մեծ փառօք թերայի գերեզմանատան մէջ թաղեցին զինքը օգոստոս 2 Քրիստոսի 1680 թուականին. բոլոր ազգայինք սգացին այնպիսի ազգասէր և սուրբ հովիւէ մը զրկուելնուն համար Յակոր կաթուղիկոսի մահուընէն վերջը էջմիածնայ միաբանք Եղիազար Անթաղյին ընդհանուր կաթուղիկոս ընտրեցին, ասով Ազգին մէջ այդ մասին խաղաղութիւնը հաստատեցաւ. իսկ պատրիարքութեան գալով կարապետ և ատրի և Յ ամիս իշխելէն վերջը՝ թորոս Ա. Երէց յաջորդեց որուն պատրիարքութիւնը 40 օր տեւեց. ասոր յաջորդեց երրորդ անդամ գարձեալ կարապետ Ե. կեսարացի, 2 տարի և 8 ամիս. ասոր ալ յաջորդեցին ետեւէ ետեւ Եփրեմ վարդա-

պետ Էջմիածնայ միաբանութենէն՝ որ նուի ըակ Եկած էր, 1 տարի 8 ամիս կարապետ Ե. կեսարացի չորրորդ անդամ՝ 1 տարի թորոս Ա. որ 40 օր պատրիարքութիւն ըրած էր՝ երկրորդ անդամ 1 տարի. Խաչատուր Երէց ձեցի 7 ամիս կարապետ Ե. կեսարացի հինգերորդ անդամ՝ որ 5 ամիս պատրիարքութիւն ընելէն վերջը՝ ժողովուրդը զինքը բռնի գահէն վար առաւ և աքսորել տուաւ։

Հ. Կարապետ Բ. ի ովլյաջորդեց։

Պ. Երկու աշխարհական տեղակալներ նըստան, որոնք երկու տարի խաղաղութեամբ ժողովուրդը կառավարեցին, ասոնց անուններն են, Սագա օղլու և Շահին, որոց յաջորդեց Մատթէոս Սարի մականուանեալը՝ որ 2 տարիէն Սոյց կամողիկոսութիւնը յափշտակեց. իրենց յաջորդեց Եփրեմ Ղափանցի. ասոր օրով շատ մը ձիղվիթ և Լատին կրօնաւորներ կ. Պօլիս և Սնատաօլուի քաղաքները լեցուեր էին, մինչեւ անդամ Հայաստան և Պարսկաստան, որոնք յայտնական չայց Եկեղեցին կը նախատէին և քանի մը թեթեւամիտ, անպիտան և ծոյլ Հայեր իրենց կողմ որսալով՝ որ չէր ըլլար որ խաղաղութեամբ անցնէր, թէև արքունի խաղաղութիւններէն շատեւ.

ըլ կը բռնէին խաղաղութեան համար՝ բայց  
գաղղիոյ դեսպանին միջոցաւ անմիջապէս  
կ'աղատուէին բանտէն :

Հ. Եփրեմ Ղափանցի կրցան կառավարել  
ազգը :

Պ. Ճիղվիթաց այս ընթացքը վարանման  
մէջ ձգեցին զեփրեմ Պատրիարքը, վասն զի  
ամեն տեղ կրօնական ատելութիւն մ'է ովը-  
սու, և Եփրեմ Յ տարի և 6 ամիս պատրի-  
արքութիւն ընելէն վերջը հրաժարեցաւ.  
Երեն յաջորդեց Մելքիսեդ Սատանի մական-  
ուանեալն . ասոր օրով Միսիթար Արքայ Սե-  
րաստացի կ. Պոլիս գալով՝ Ղալաթիոյ Ս.  
Լուսաւորիչ եկեղեցին քարոզիչ եղաւ . Մել-  
քիսեդ 1 տարի և 3 ամիս պատրիարքու-  
թիւն ընելէն վերջը, Միսիթար վարդապետ  
Քիւրտիսանցի Մելքիսեդը աքսորել տա-  
լով՝ ինքը Պատրիարք եղաւ . բայց մէկ  
տարի և 2 ամիս եռքը Մելքիսեդ աքսորէն  
դառնալով՝ վերստին Պատրիարք եղաւ . 9  
ամիս անցնելով Եփրեմ Ա. Երրորդ անդամ  
յափշտակեց պատրիարքութիւնը . ասիկայ  
ամոռը Անդրիանուազօլիս հաստատեց և կ.  
Պոլիսը փոխանորդով կը կառավարէր :

Հ. Եփրեմ Ա. ին պատրիարքութիւնը ո՞-  
չափ տեւեց :

Պ. Այս ատենները ճիղվիթ կրօնաւորներն

այնքան շատցած էին ՚ի կ. Պոլիս՝ որ գրե-  
թէ իւրաքանչիւր Հայ քահանայի տուն մէկ  
երկու հատ ճիղվիթ կը գտնուէին . թէեւ  
շատ անդամիկ վունտուէին բարեպաշտ և ի-  
րենց մայրենի ու անդրանիկ եկեղեցւոյն կա-  
նոններն ու ծէսերը սուրբ և անարատ պա-  
հել ու զող առաքինի Հայ երեցներէ, բայց  
ճիղվիթք իրենց բնական եղած աներեսու-  
թեամբն ու անամօթութեամբը՝ մինչեւ ան-  
գամ կեղծ բարեպաշտութեամբ կը յանդբգ-  
նէին Հայ եկեղեցիներուն սրբազն բեմին  
վրայէն պապութիւն քարոզել . ուստի եւ  
ժողովրդեան տգէտ մասը խարուելով անոնց  
կեղծ ու պատիր խօսքերէն՝ կ'սկսէին անոնց  
կողմը բռնել ոմանք ստակով և ոմանք ալ  
տեսակ տեսակ մնութի խոստմունքներով, թէ-  
պէտ շատերը լաւ համոզուած կ'զգուշանա-  
յին այդ ճիղվիթ կրօնաւորներէն՝ ինչպէս  
թունատու իմէ մը . այս ճիղվիթներէն մաս  
մ'ալ Հայ քահանայներու զգեստով Անդրի-  
անուպօլիս գացին Պատրիարքը որսալու հա-  
մար, բայց Եփրեմ Պատրիարք ճանչնալով՝  
ոչ եկեղեցին ընդունեց և ոչ ալ անոնց կը-  
րօնքի վերաբերեալ խօսք մ'ըրաւ, ճիղվիթք  
իրենց հանապազօրեայ խորամանկութեամբ  
մէկ քանի միամիտ քահանայներ որսալով՝  
սկսան հոն ալ երկպառակութիւն ձգել, և

Եփրեմը հրաժարեցուցին պատրիարքութեա  
նէ 10 ամիս իշխանութիւն վարելէն ետքը :

~~~

ԳԼՈՒԽ Բ .

ԱԻԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՄԻՆՉԵԿ ՊՈՂՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆԳԻՒԱՆՈՒՊՈԼԱՆՑԻ

Հ. Ո՞վ յաջորդեց Եփրեմի :

Պ. Եփրեմ Պատրիարքին օրով կ. Պօլիս եւ
կած էր Երզնկացի Աւետիք անունով վար-
դապետ մը և Սամամթիա Ա. Գէորգ եկեղե-
ցոյ մէջ քարոզչութեան պաշտօն կը վարէր.
սա իր բարի՝ խոհեմ և ազդու քարոզու-
թեամբը բազոր ժողովուրդն իրեն դրաւեց,
և հեռաւոր թաղերէ քարոզ մտիկ ընել կու-
դային, վասն զի իր քարոզութիւնները սի-
րոյ և միութեան վրայ էին, ամենուն հետ
ալ սիրով կը վարուէր. Աւետիքի համբաւը
ամեն տեղ տարածուելով, մինչեւ անդամ
Շէյխ-Խւլ-Խոլամի ականջը հասաւ, որն որ
իր պալատը հրաւիրեց և երկար ատեն տե-
սութիւն ընելէն վերջը, զարմանալով Աւե-
տիքի իմաստութեանը վրայ՝ սիրով կապ-
ուեցաւ հետը և միշտ կուզէր որ քովը կե-

նայ . և մինչդեռ Աւետիք Անդրիանուպօլիս
էր, Հայերը բազմաթիւ ստորագրութեամբ
աղերսագիր մը մատուցանելով Խպարգոսին,
խնդրեցին որ Աւետիքն իրենց Պատրիարք
գնէ, և որովհետեւ Եպարգոսն ալ ձանձրա-
ցած էր Պատրիարքաց փոփոխութեանը
պատճառաւ Հայոց մէջ ծաղած երկպառա-
կութենէն, ուզեց նախ տեղեկութիւն առ-
նել Աւետիքի վրայ, և իմանալով անոր բա-
րի վարքը՝ նա մանաւանդ Շէյխ-Խւլ-Խոլամ
էֆէնստիէն Աւետիքի լաւութիւնը իմանալով,
կանչեց Բ. Դուռը և պատրիարքական կոն-
դակը տուաւ : Այս բանը ժողովրդեան մեծ
ուրախութիւն պատճառեց :

Հ. Աւետիքի վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Աւետիքի պատրիարքութիւնը ընդհա-
նուը Հայոց ուրախութեան պատճառ եղաւ,
այնպէս որ Հայք ամենը մէկ սիրտ և մէկ
հողի եղած՝ սկսան մէկզմէկ սիրով համբու-
րել, նոյն օրերն Երուսաղէմի միաբաննե-
րէն չորս վարդապետ իրենց անկարգութեանը
համար Երուսաղէմի վանքէն արտաքսուե-
լով, Անդրիանուպօլիս եկան, և սկսան նա-
լով, Անդրիանուպօլիսի Մինաս Պատ-
րիարքին վրայ . ասոնք բազմաթիւ կողմնա-
կիցներ դտնելով Եպարգոսին դիմեցին,
Երուսաղէմի Պատրիարքը պաշտօնէն ձը-

դելու համար, և որովհետեւ Եպարքուն
Աւետիքի խաղաղասիրութեան և խոհեմուշ
թեան համբաւն առած և իրօք ալ տեսած
էր, ուստի Երուսաղէմի պատրիարքութիւնն
ալ անորյանձնեց. Աւետիք քիչ մը յամա
նակ ևս Անդրիանուպոլիս կենալով՝ Կ. Պօ
լիս Եկաւ, որ ժողովուրդը բազմութեամբ
դիմաւորեց զինքը և այնպիսի մեծ ու շքեղ
պատուով ընդունեց զինքն՝ որուն նմանը Եր
քէք չէր եղած մինչեւ այն ատեն գահակա
լող Հայ Պատրիարքներուն։ Յատար դեսպան
ներն ալ չնորհաւորի Եկան մանաւանդ Ֆէ
րիօլ Գաղղիոյ դեսպանը և Ղալաթիոյ Ղա
փուշնաց վանքին վանահայրը Հայր Յակին
թու, ասոնք շատ սիրով տեսնուեցան Պատ
րիարքին հետ և աղքային Երկպառակու
թեան վերջ մը տալու համար խոստացան սի
րով մնալ շարունակ մէկզմէկու հետ։

Հ. Աւետիք Պատրիարքի օրով ի՞նչ Երե
ւելի դէպք պատրահեցաւ։

Պ. Գաղղիոյ դեսպանը շատ ջանաց որ Ա
ւետիքը իրեն կողմ դարձնէ՝ բայց չյաջողե
ցաւ, վասն զի Աւետիք իր Եկեղեցւոյն ծի
սին և արարողութեանը ջերմ նախանձա
խնդիր էր, նա մանաւանդ իր համոզիչ և
աղդու քարոզութիւններովը ամբողջ Հայոց
սիրուն իրեն գրաւեց, և այն Հայերն՝ որ ա-

ռաջ Հայ Եկեղեցւոյն առջեւէն անցնելն ան
գամ մեղք կը սեպէին, սկսան Հայոց Եկեղեց
ցին գալ և պատարագ տեսնել. Սեբաստացի
Մխիթար վարդապետին ալ քանի մ'անդամ
նամակ դրեց՝ որ իրեն տեսութեան գայ,
բայց Մխիթար՝ ճիզվիթաց թելադրութեամ
բը չողեց Երթալ, կասկածելով որ Աւետիք
Պատրիարք իրեն վասս մը կը հասցնէ. վասն
զի ճիզվիթներն իրենց կողմը Եկողները Հա
յոց Եկեղեցիէն բոլորովին պաղեցնելու և
հեռացնելու համար ամենուն սիրուր տա
րապարտ կասկածներ կը զարթուցանէին, ո
րով պատճառ Եղան այն ամեն աղետալի խը
ռովով թիւններուն՝ որոնք զՀայոց աղգը Երկ
պառակեցին և մաս մաս բաժնեցին. ուստի
Մխիթար վարդապետ վաճառականի մը նա
ւով Մոռա փախաւ, հոն վանք մը շինեց և
անոր մէջ դպրոց բանալով՝ Հայաստանէն ա
շակերտներ ժողվեց, բայց քիչ մը վերջը վե
նետիկցւոց պատերազմին ատենը վանքն ու
դպրոցը կործանելով՝ Մխիթար դնաց վե
նետիկ և հոն հաստատեց իր բնակութիւնը
Պապին իշխանութեանը տակ։

Հ. Աւետիք որչափ ատեն պատրիարքու
թիւն ըրաւ։

Պ. Աւետիք Պատրիարք խոհեմութեամբ
իր հօտին ցրուեալ ոչխարները օր աւուր Հայ

յաստանեայց Ա. եկեղեցւոյն փարախը կը
ժողվէր, ճիզվիթները տեսնելով որ իրենց
այնչափ ատենի մէջ որսացած ժողովութել
ձեռքերնուն կ'ելլայ, զայրանալով դարձեալ
սկսան հակառակութիւն ընել և չայ եկեղեց-
ցին նախատել, և յարմար առթի մը կ'սպա-
սէին Աւետիք Պատրիարքը ձգելու . Նոյն օ-
րերը 200000 ի շափ Եւենիցիրիներ ոտք եւ-
նելով Սուլթան Մուստաֆան գահէն վար
առին և անոր տեղը Սուլթան Ահմէար թա-
գաւոր դրին. ուստի Աւետիքն ալ Եւտիգու-
լէն բանութ դրին՝ որ հազիւ և տարի և 8 ա-
միս եղած էր պատրիարքութիւնը . ասով
Ճիզվիթներն և լատինացեալ չայ քահանաց-
ներն ուղեցին Պատրիարքութիւնը իրենց
ձգել, բայց չըյաջողեցան :

Հ. Աւետիքի ովկյալորդեց :

Պ. Երբոր Սուլթան Ահմէտ կ. Պօլիս կու-
գար՝ Հայոց մեծամեծներն և մէկ քանի ե-
պիսկոպոս իմացուցին Բ. Դրան իրենց թէ Ե-
րուսաղէմի և թէ կ. Պօլսոյ Պատրիարք չունե-
նալը . ուստի հրաման երաւ Մինաս նախ-
կին Պատրիարք՝ Երուսաղէմին և կայծակ Գա-
լուստ վարդապետ կ. Պօլսոյ Պատրիարք ե-
ղան, ճիզվիթք Գալուստ Պատրիարքին ան-
հոգութիւնն օդ ուտ քաղերով՝ սկսան իրենց
հակառակորդ եղողներէն շատերը մատնել

Բ. Դրան՝ չարախոսելով թէ Փրանկացեալ է
և անոնց կողմէն լրտես է, թէ և իրենցմէ ալ
շատերը կը բանտարկուէին, բայց Գաղղիոյ
դեսպանին միջոցաւ անմիջապէս կ'ազատ-
ուէին. ուստի ճշմարիս Հայերը չկրնալով հան-
գուրթել Գալուստ Պատրիարքի անվոյթ կե-
նացը վրայ՝ միաբանեցան և բողոքեցին Բ.
Դրան, որով անմիջապէս վար առնուեցաւ
40 ամիս պատրիարքութիւն ընելին ետքը,
և անոր տեղը Ներսէս վարդապետ կ. Պօլ-
սոցի Պատրիարք նստաւ շատ հարուստ ըլ-
լալուն, սակայն Հայերը դարձեալ Աւետիքը
կուղէին :

Հ. Ներսէս ո՞րչափ ատեն պատրիարքու-
թիւն ըրաւ :

Պ. Հայ ժողովուրդը՝ որ Աւետիքի վրայ
մեծ սէր ունէր և կը ճանչնար անոր առա-
քինի յատկութիւնները, կը ճանչնար նաև
այս բարի Եկեղեցականին իր Ա. Եկեղեցւոյն
գէմ անվանելի ախոյեան մ'ըլլալը, որ ոչ
շահ կը վնտուէր և ոչ փառք, այլ գիշեր ցե-
րեկ իր ժողովրդեան անդորրութիւնը կը մը-
տածէր . վասն զի հարուստը կը համոզէր,
աղքատը կը խնամէր և հարատահարեալը կը
միխթարէր, և Հայերը այսպիսի անձէ մը
զրկուենուն մեծ ցաւով կը կենային . ուստի
որոշեցին որ ստակ հաւաքեն և անով Բ.

Դրան պաշտօնեայները հաճեցնեն և անկէ ետքը Եպարդոսին դիմեն ու խնդրեն Աւետիք. Պատրիարքը. Ճիզվիթներն այս բանը իմանալով՝ Հայոց գլխաւորներէն Յ հոգի բանտարկել տուին, բայց Հայք փոխանակ վհատելու՝ առաւել զայրացած երդում ըրին թէ ինչ որ ալ պատահի, բանտ, աքսոր, մահ, չպիտի ետ կենան բողոքելէ. և քանի մը օրէն դարձեալ հազարաւոր ստորագրութեամբ աղերսադիր մը մատուցին մեծ Եւ պարգոսին, յայտնելով թէ Աւետիք Պատրիարքի անկումը քանի մը հակառակորդ և պապադաւան անձանց միջոցաւն է. Եւ պարգոսը լաւ մը տեղեկանալով՝ Ներսէսը վար առնել տուաւ, որ Պատրիարք ըլլալը և ամիս եղած էր, և անոր տեղ Աւետիքը Պատրիարք դրաւ, անոր յանձնելով նաև Եւ բուսազմի պատրիարքութիւնը:

Հ. Աւետիք ի՞նչպէս վարուեցաւ Պապականներուն հետ :

Պ. Միշտ ներողամոռութեամբ, այնպէս որ թշնամիք անգամ կը զարմանային այս մարդուն անյիշաւարութեանը վրայ. իր ամենէն անագորոյն և անյազթելի թշնամին Ֆէրիօլ որ Պաղպիոյ գեսապանն էր՝ այցելութեան եկաւ, Աւետիք ամենայն քաղաքավարութեամբ և սիրով ընդունեց զանի, նոյնպէս

Գափուչինաց վանահայրը Հայր Յակինթոս այցելութեան եկաւ և յարգանօք ընդունուեցաւ Աւետիքէն, և վերջապէս ամենուն հետ մարդասիրութեամբ վարուելով, բոլոր թշնամիներն սկսան ակնածութեամբ վարուիլ. բայց Ֆէրիօլ Պաղպիոյ գեսապանը՝ Լուի ԺԴ. Պաղպիոյ թագաւորին և Ս. Պապին գըրդումներով գարձեալ սկսաւ թշնամանալ և ժողովուրդը Աւետիքի գէմ գրգռել. բայց առջինին չափ աղդեցութիւն չունեցաւ, վասն զի ժողովրդեան մեծ մասը լաւ ճանչցած էր Աւետիքին արժանիքը:

Հ. Աւետիք ո՞րչափ ատեն պատրիարքութիւն ըրաւ :

Պ. Ֆէրիօլ պապականացեալ Հայոց ձեռօք գործ չկրնալ տեսնելուն սկսաւ Դրան պաշտօնեայներն և վէզիր Քեահեասին Հայոց Աւետիք Պատրիարքի գէմ գրգռել. վասն զի երանելի Պատրիարքը մեծ արդելք եղած էր Ճիզվիթներուն, գեսապանն իր խորհուրդը առաջ տանելէ ամենեւին ետ չկեցաւ, երբ տեսաւ որ Դրան պաշտօնակալներն ալ յանցանք մը չէին կրնար գտնել Աւետիքի վրայ, օր մը իր թարգմանին միջոցաւ սպառնալեօք ըսել տուաւ որ Գրօփականատայի Հայ Պապական վարդապետները Հայ Եկեղեցւոյն մէջ պէտք է քարող խօսին և պատարագ մատուցանեն.

բայց Աւետիք պամենայն հանդարառութեամբ
պատասխանեց՝ թէ Հայ Եկեղեցւոյն ոչ Պա-
պը, ոչ Գաղղիոյ թագաւորը և ոչ Գաղղիոյ
դեսպանը կրնան խառնուիլ, այլ միայն Հա-
յոց կրօնական Ս. Ժողովը. այս խօսքին վը-
լայ Ֆէրիոլ սաստիկ բարկացած Եպարքուին
դիմեց ըսելով, թէ Հայոց Պատրիարքը զիս
անպատուեց, վկայ կոչերով իր թարգմանը,
մէկ քանի բաղդախնդիր Հայ Եկեղեցականք
և մէկ քանի պապականացեալ Հայեր՝ որոնք
յառաջուց պատրաստուած էին Եպարքու
ասոնց համոզուելով Աւետիքը ձգեց պատրի-
արքութենէ և աքսորեց, Երկրորդ անդամ
մէկ տարի պատրիարքութիւն ընելէն վերջը.
Հ. Աւետիք Պատրիարք ուր աքսորեցաւ:
Պ. Թէպէտև Պօհճա արտաք ըսուած կղղին,
բայց Խաղողիւր Գաղղիոյ դեսպանէն կաշառ-
ուելով, ճամբան Գաղղիացի նաւապետի մը
հրամանատարութեան ներքեւ եղող վաճա-
ռականի մը նաւով Մարտիւիա տարին և հոդ
Երեսը Երկալթէ դիմակ մը անցունելով Գաղ-
ղիոյ ներսերը Նօրմանտիոյ և Պրիթանիայի
սահմանագլխին մօտ Պենեդիկաեան կրօնա-
ւորաց վանքը դրին, ուր խեղճ Պատրիարքը
Յ տարի բանտարկուելէն վերջը Փարփակ եկաւ
և 10 ամիսէն մեռաւ 1711 յուլիս 24: Պօլսոյ
Հայերը իրենց Պատրիարքը շատ վնտուեցին,

շատ ստակ վատնեցին, քանի անգամ մարդ-
խաւրեցին Գաղղիոյ, Խոալիոյ և Սպանիոյ
Երկիրները բայց չտան, և քանի մ'անգամ
ալ աղերսագիր մատուցին մեծ Եպարքուին,
և որովհետեւ Եպարդուը գիտէր Գաղղիոյ
դեսպանին Աւետիքի թշնամի ըլլալը՝ նամակ
գրեց Ֆէրիոլի և մինչեւ անդամ սպառնա-
ցաւ որ Աւետիքը գտնուի, բայց Ֆէրիոլ
միշտ ուրացաւ. Հայք այնքան սգացին իրենց
սիրելի Պատրիարքին կորսաեանը վրայ՝ որ
ուամկաց մէջ մինչեւ մեր օրերը առած ե-
ղած է որ երբ մեծ բան մը անյայտ ըլլայ,
“Աւետիյին օյունունա տէօնտիւ” կըսեն.
Աւետիքէն ետքը Գաղղիոյ դեսպանին խընդ-
րանօք կեսարացի Մատթէոս Սարի մական-
ուանեալը Հայոց Պատրիարք դրուեցաւ:

Հ. Մատթէոսի պատրիարքութիւնը ո՞չափ
տեւեց:

Պ. Հազիւ 2 ամիս եղած էր նստելը
Հայերը զանի վար առնելով՝ Աւետիքի փո-
խանորդ Մարտիրոս վարդապետը պատրի-
արք դրին, այս ալ Աւետիքին փոխանորդն
ըլլալուն՝ դեսպանը վար առնել տուալ՝ 4
ամիս պատրիարքութիւն ընելէն ետքը, տե-
ղը յաջորդեցին Միքայէլ անունով երեց մը
8 ամիս և Ապուչեացի Սահակ վարպատետը-
ասոր օրով կ. Պոլիս Եկաւ Զմիւռնացի Յով-

Հաննէս վարդապետը՝ որ երբեմն Աւետիքի փոխանորդն էր, և որ Եւրոպա ճանապարհորդած էր Աւետիքի վրայ լուր մ'առնելու համար. այս որ տեսան Հայք՝ խնդրեցին Եպարդուէն որ Յովհաննէսը իրենց վրայ Պատրիարք դնէ. Եպարդուը լսելով Հայոց աղաչանաց՝ Սահակը վար առնելով՝ որ 8 ամիս պատրիարքութիւն ըրած էր՝ Յովհաննէս կ. ը Հայոց վրայ Պատրիարք գրաւ. և որ Յովհաննէտեւ Եպարդուն իմացած էր Յովհաննէսի ճանապարհորդութիւնը, հարցուց թէ լուր մ'առաջ է Աւետիքի վրայօք. նա՝ ոչ պատասխանեց.

Հ. Աւրիշ ի՞նչ հարցումներ ըրաւ Եպարդու Յովհաննէս Պատրիարքին:

Պ. Աւետիքի և Գաղղիոյ դեսպանին մէջ եղած խօսակցութիւնները մի առ մի քննելն վերջը լատինացեալ Հայ քահանայից, Փրօփականատայէն եկող Հայ քարոզիներուն և պապականացեալ Հայոց հոգեւոր արարողութիւնները մատակարարող անձանց վրայօք տեղեկութիւններ ուզեց. Յովհաննէս Պատրիարք խոհեմութեամբ երեք օր պայմանաժամ խնդրելով գաղանի իմացուց լատինացեալ քահանայից և պապականացեալ Հայ ժողովրդոց, բայց անոնք պատասխան անդամ չտուին. ուստի երեք օրէն վերջը Յովհան-

հաննէս յայտնեց Եպարդուին և Եպարդուն ալ ամենը մէկ ժողվելով բանս դնել տըւաւ, որոնցմէ հինգ հոգի Մահմէտականութիւնն ընդունելով աղատեցան, ոմանք պաշտօնեայները կաշառելով աղատեցան և շտերը մնացին բանտը, մինչեւ որ Գաղղիոյ դեսպանը կասկածելով՝ որ զինքը կը մատնեն իւնիւտէ ատեն, շատ ստակ վասնելով Վէզիր Քէհեափին իրեն կողմը որսաց, բանտարկեալներն աղատեց և Յովհաննէսը ձգեց Պատրիարքութենէն մէկ տարիէն վերջը:

Հ. Յովհաննէսին ովկ յաջորդեց :

Պ. Սահակ Ապուչելսիցի վերսատին, որ Խաղաղութեամբ աղջը կառավարեց Յ տարի և Յ ամիս, բայց Թէքիրտաղի առաջնորդը հետը թշնամանալով եկաւ կ. Պոլիս, Հայ մեծամեծներն և Գրան բարձրաստիճան պաշտօնակալներն իրեն կողմ որսալով՝ Սահակը պատրիարքութէնէ ձգեց. Եպարդուը հրամայեց Հայոց որ Պատրիարք մ'ընտրեն. Հայք որ Պատրիարք ընտրելէ և հրաժարեցնելէ ձանձրացած էին, տարակուսի էին թէ զովը ընտրեն. նոյն օրերը Յովհաննէս անուն Գանձակեցի աբեղայ մը կը գտնուէր որ փուան մը մէջ կը բնակէր կ. Պոլիս, շատերը Եպիսկոպոս կը կարծէին զինքը. հացագործներն ալ զայն ներկայացուցին Պատրիարք ընելու

Համար, թէպէտ Հայերէն շատերը չէին ըն-
դունէր զայն, բայց Յովհաննէս արելաց ճար-
տարախօս ըլլալուն ժողովրդեան մեծ մասը
իրեն գրաւեց և Պատրիարք եղաւ Յովհան-
նէս Ը. անուամբ. ասիկայ Պատրիարք ըլլա-
լուն պէս նախ լատինացեալ Հայոց նամակ
գրեց՝ յորդորելով որ Հայոց եկեղեցին դան,
բայց անոնք ամենեւին մափկ չըրին. յետոյ
Լատինաց եպիսկոպոսին նամակ գրեց՝ աղա-
չելով որ Հայերը չ'արգիլէ իրենց եկեղեցին
երթալէ. ասկէ ետքը կամաց կամաց սկսան
դալ Հայոց եկեղեցին:

Հ. Ասկից ետքը ի՞նչ ընթացք բռնեցին
Ժիդիթք Հայոց դէմ:

Պ. Ճիզվիթք առաւել եւս բարկանալով՝
սկսան Հայոց եկեղեցին նախատել, ըսելով
թէ Հերետիկոս Հայ եկեղեցիներուն առջե-
ւէն անցնիլն անդամ մեծ մեղք է, և սկսան
ստակ հաւաքել որ Եպարքուը հաճեցունեն
որ իրենց զատ եկեղեցի և զատ Պատրիարք
մը դնէ. Եպարքուն իմանալով Պապականաց
այս խորհուրդը՝ Պապականաց Յ գլխաւոր
Եպիսկոպոսները բանտարկել տուաւ. ուստի
Լատինք բոլոր Պապական ժողովուրդը՝ ի
ժողով հրաւիրելով՝ խորհուրդ ըրին որ Պատ-
րիարքն ամբաստանեն, և հետեւեալ օրը Ե-
պարքուին աղերսադիր մը մատուցանելով

Պատրիարքն ամբաստանեցին, ըսելով թէ
Պատրիարքը մեր Յ եպիսկոպոսները բան-
տարկել տուած է չեմք դիտեր ինչ պատ-
ճառաւ. Եպարքուն այս բանիս վրայ բար-
կանալով՝ հրամայեց որ զիրենք թելադրող
և առաջնորդ եղող անձինքը իրեն իմացու-
նեն, և երբ անոնք չուղեցին իմացնել՝ Պա-
պական ժողովուրդին մէջն մէկ քանին բան-
տարկել տուաւ և միւներէն ալ երաշխա-
ւոր առնելով աղատ թողուց որ երթան ի-
րենց առաջնորդ եղող անձինքը իրեն բերեն.
Հ. Պապականք կրցա՞ն բերել Եպարքուին
իրենց առաջնորդները:

Պ. Փրօփականտայի քարոզիչք, Լատինք և
պապականացեալ Հայ կղերականք այս բանը
կանխաւ իմանալով, ոմանք Լատինաց վան-
քին մէջ և ուսներ Գաղլիոյ դեսպանատունք
պահութեցան, ժողովուրդը չկարենալով
գտնել զանոնք, յուսահատեալ Լատին Եպիս-
կոպոսին և Գաղլիոյ դեսպանին գային և սկը-
սան սպառնալ ըսելով՝ թէ մեզ առաջնորդ ե-
ղաք, թէ դուք մեզ ոտք հանեցիք, թէ դուք
մեր Եղբարցը մէջ ասելութիւն ձգեցիք և
հիմայ բոլորովին ետ կը կենաք. Ժողովրդին
այսպիսի յուսահատեալ խօսքերէն վախնալով
իրենց քով պահութած պապական Եպիսկո-
պոսները և քահանայները յորդորեցին որ

երթան, խոստանալովոր ամեն միջոց՝ ՚ի գործ կը դնեն զիրենք աղատելու համար, և ամենքն ալ բանտարկուեցան։ Պատգականաց եալ ժողովուրդը իմանալով ասոնց խարդախ և քսու բնաւորութիւնը՝ սկսան ատելու թեամբ վարուիլ ճիզվիթներուն հետ, և իրենց մայրենի եկեղեցւոյն գիրկը դարձան, ասով խաղաղութիւնը վերստին հաստատւեցաւ Հայոց մէջ։

Հ. Յովհաննէս Ը. ի պատրիարքութիւնը ո՞ր չափ տեւեց։

Պ. Հազիւ 1 տարի և 8 ամիս վասն զինոյն օրերը երուսաղէմի վանքը մեծ վտանգի մէջ էր իւր մեծագումար պարառուցը պատճառաւ, և գրեթէ ամեն Հայ մտատան ջութեան մէջ էր. նոյն ատեն Պօլիս կը գրանուէր նաև Ս. կարապետի միաբաններէն Յովհաննէս վարդապետ Բաղիշեցի, որ իւր սքանչելի քարոզութեամբը բոլոր ժողովը դեան և Պատրիարքին սիրելի եղած էր, սա ուզելով երուսաղէմի վանքին դարման մը ընել, Գումգափուի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն մէջ Հայոց երեւելիներէն ժողովը գումարելով՝ սկսաւ ողբալ երուսաղէմի վանուց թշուառութիւնը. ժողովուրդը Յովհաննէս վարդապետի ազդու խօսքերէն ըդգածուելով՝ ամեն կերպ ձեռնտուութիւն

ընել խոստացաւ, այն պայմանաւ որ Յովհաննէս յանձն առնու կ. Պօլսոյ և Երուսաղէմի պատրիարքութիւնները. սկիզբէն Յովհաննէս շատ դէմ կեցաւ՝ բայց երբ տեսաւ ժողովուրդին ստիպումը և Յովհաննէս Պատրիարքին յօժարութեամբ հրաժարկը՝ յանձն առաւ. միայն Պօլսոյ պատրիարքութիւնը և եղաւ Յովհաննէս թ. Պատրիարք, ասիկայ կողու ըսուեցաւ. իսկ Ս. կարապետի առաջնորդ Գրիգոր վարդապետը Երուսաղէմի Պատրիարք եղաւ ժողովուրդեան և Էջմիածնայ Աստուածատուր Կաթողիկոսի թախանձանոքը։

Հ. Այս երկու պատրիարքներն իրենց պաշտօնն ինչպէս վարեցին։

Պ. Կարծես նախախնամութենէն յատուկ ընտրուած էին այս երկու անձինքը. վասն զի Գրիգոր որ Երուսաղէմի Պատրիարք եղաւ՝ 8 տարի շարունակ շղթայ կրելով Երուսաղէմի ամբողջ պարտքը վճարեց, որուն համար Շղթայակիր Գրիգոր Պատրիարք կոչուեցաւ, և Յովհաննէս՝ որ կ. Պօլսոյ Պատրիարք եղաւ, անհնարին տառապանքներ կրելով և ամենէն խորամանկ ճիզվիթներուն դարաններէն և մեքենաներէն իր ժողովուրդը զդուշացնելով՝ եկեղեցիներ շինեց, դըպուց մը բացաւ իւսկիւտարու մէջ և բազմա-

թիւ աշակերտներ հասուց Առոր օրով Աղ-
ուանք Նոր Զուղայի վրայ յարձակեցան և
բազմաթիւ Հայ Զարդելէն և շատ նեղու-
թիւններ ու տառապանքներ տալէն վերջը
40 Հայ օրիորդ և 21000 թուման առնելով
փախան 1722 թուականին ։

Հ. Աւրիշ ի՞նչ դէպք պատահեցաւ Հայա-
տանի մէջ Յովիաննէս Թ. ի օրով ։

Պ. Եղին միջոցներուն Սիւնեաց աշխարհին
Հայերը խիստ նեղութեան մէջ էին այլազգի
իշխանաց յարձակումներէն ։ ուստի Դաւիթ
Սիւնի քաջ իշխանը քանի մը հոգի ժողվեց
թշնամեաց դէմն ելաւ և փախուց զամենքն
ալ ։ Դաւիթի այս յաղթութիւնն իմանալով
Հայ իշխանները եկան հետը միացան, որով
Դաւիթի զօրքերը 400 ի չափ ըլլալով՝ սկսան
շրջակայ թշնամի այլազգեաց վրայ յարձա-
կել և յաղթելով ամենուն սիրտը վախ ձը-
գեցին ։ Տաճիկ իշխաններն ամենը մէկ միա-
ցած Հայոց վրայ եկան ։ Դաւիթ իր անպար-
տելի օգնական Միխթար իշխանը Հայոց
վրայ զօրավար կարդելով Տաճիկաց դէմ պա-
տերազմի ելաւ, բայց Հայերը տեսնելով
թշնամեաց անհամար բազմութիւնը ցիրու-
ցան եղան և Դաւիթ 17 հոգւով մնաց ։

Հ. Դաւիթ ի՞նչպէս պատերազմեցաւ Տաճ-
իկաց դէմ ։

Պ. Հալիձորոյ Մէլիք Փարսատան և Տէր
Դւետիք կորիծ պատերազմողները քանի մը
հոգւով եկան միացան Դաւիթի հետ, որոնց
մոլ գարձեալ 430 հոգւոյ չափ եղաւ Հայոց
բանակը, և ամենքն ալ հալորդուելով պատ-
րաստուեցան պատերազմի ։ թշնամեաց թիւ-
ով 70000 էն աւելի էր ։ Եկան պաշարեցին
Հալիձոր բերդն ու սկսան սաստիկ պատե-
րազմիլ վեց օր շարունակ, թշնամեաց կող-
մէն օրը 300 էն աւելի մարդ կը Զարդուեր,
և Հայոց Կաղմէն հազիւ և մարդ ։ Տաճիկները
տեսնելով որ պաշարմամբ բան մը չկրցին ը-
նել՝ յուսահատած սկսան մեքենաններով բեր-
դէն վեր ենել, բայց բերդականք զարմանա-
լի արագութեամբ պատերազմելով և ոչ մէ-
կու մը թողուցին որ բերդէն վեր ենէ ։ պա-
տերազմին տաքցած ատենը 8էր Աւետիք և
Միխթար 200 հոգւով բերդին դաղտնի
դունէն դուրս ելան և սկսան թշնամեաց ե-
տեւէն պատերազմիլ ։ այսպէս Տաճիկներէն
13000 մարդ շարդելով՝ 448 գրօշակ և շատ
ալ աւար առին և ցիրուցան ըրին թշնամին.
ասանկով մօտակայ թշնամեաց սիրտը վախ
ձգեց Դաւիթ և 6 տարի իշխանէն ետքը մե-
ռաւ 54 տարեկան ։

Հ. Դաւիթ Սիւնի քաջ իշխանին ո՞լ յա-
ջորդեց ։

Պ. Հայերը միաբան հաւանութեամբ Մխիթարյան իրենց առաջնորդ և իշխան ընտրեցին. բայց վերջերը մէջերնին խոսովութիւնն իյնալով՝ ոմանք Տէր Աւետիքի կողմն անցան և ոմանք Մխիթարյա, ասանկով իրենց միութեան կապը քակուելով զօրութիւննին պակասեցաւ. իմացան Տաճիկները Հայոց բերդականաց անմիաբանութիւնը, եկան բերդը պաշարեցին. բերդականք չկրնալով գէմդնել Մխիթարէն ծածուկ որոշեցին որ բերդը մատնեն և իրենք ազատին. ուստի Տէր Աւետիքը պատգամաւոր խաւըրեցին. Տաճիկները երդմամբ խոստացան բան մը չընել, բայց բերդին տիրելէն վերջը բոլոր պատերազմողները թրէ անցուցին, բաց ՚ի Մխիթարէն, որ իմանալով անոնց խորհուրդը գիշերանց փախեր էր. Մխիթար քանի մը օր պահուըտելէն վերջը՝ նորէն մարդժողվելով եկաւ քանի մը քաղաքներու տիրեց, և երբ Խնձորէնք բերդը պաշարեր էր, օր մը քնացած ատեն իր մարդիկները եկան գլուխը կտրելով Դաւրէժ նստող բգեշխին տարին՝ որ ցաւեցաւ այն քաջ մարդուն ըստանանքը ու ողջ չբռնուելուն վրայ և զանի մեռցնողները սպաննել ատւաւ, ըսելով որ «Դուք այս քաջ, առաքինի և իրաւանց պաշտպան մարդը աշխարհէ զրկեցիք, ու

բեմն դուք որ վատ և ափրանենք մարդիկներ էք, առաւել ևս արժանի էք զրկուելու աշխարհէ»:

Հ. Յովհաննէս կողմտ Պատրիարքի օրովորիշ ի՞նչ դէպք պատահեցաւ.

Պ. Ողուանք Պարսկաստան յարձակած միջոցին, Օսմանեանք ալ Հայաստան արշաւեցին և Յամիս անդադար պատերազմելէ վմբելը, Երեւան, Դավրէժ, Գանձակ և ուրիշ շատ մը քաղաքներ առին և անոնց Հայ քնակիչներն ըստ մասին ջարդեցին, և մեծ մասմալ գերի բռնելով Կ.Պոլիս և ուրիշ քաղաքներ տարին և սկսան ծախել. Յովհաննէս Պատրիարք այս բանս իմանալով, Եպարդուին գնաց և աղաչեց որ արդիլէ գերեվաճաւութիւնը և մանաւանդ զանոնք՝ որ Սուլթանին հարկ կուտան. Եպարդուը խելացի մարդ մը ըլլալուն՝ իրաւունք առաջ Պատրիարքին խօսքերուն, խստիւ արդիլեց գերեվաճաւութիւնը ամեն տեղ, այս ատեններս Եջմիածնայ Աստուածատուր կաթուղիկոսը վախճանելով՝ իրեն յաջորդեց Ունեցի կարապետ Եպիսկոպոս՝ որ Գաղատիոյ առաջնորդ էր. ասոր օրով Եջմիածին Օսմանցւոց ձեռքն անցնելուն, կաթուղիկոսը Պօլիս Ա. Աստուածածնայ Եկեղեցւոյն մէջ օծուելէն ետքը, Եպիսկոպոսական ժողով

գումարեց աղբային գործերու և Երուսաղէն
մի վանուց պատրիարքութեանը վրայօք
կարգադրութիւններ ընելու համար :

Հ. Ի՞նչ որոշեցին Երուսաղէմի պատրիարքութեան համար :

Պ. Երկար ատեն խորհելէն վերջը՝ որոշեցին և վճռեցին որ այսուհետեւ Երուսաղէմի միաբան չեղող և իցէ անձ մը Երուսաղէմի Պատրիարք չըլլաց, և ժողովուրդին ալ սիրով և խաղաղութեամբ ապրելու համար յորդորներ տալով՝ պատրաստուեցաւ երթալ էջմիածին. նոյն օրը Լատին եպիսկոպոսը և Գաղղիոյ դեսպանատան թարգմանը շնորհաւորութեան եկան կաթողիկոսին, որ սիրով ընդունեց զիրենք և յորդորեց որ սիրով և խաղաղութեամբ վարուին Հայոց հետ և հետեւեալ օրն ալ Արքազան կաթողիկոսը՝ ինչան փոխադարձ սիրոյ իր կողմէն Մանուկ եպիսկոպոսը խաւրեց Լատին եպիսկոպոսին և Գաղղիոյ դեսպանին՝ որ շատ սիրով ընդունուեցաւ. բայց քանի մ'օրէն վերջը երբ կաթողիկոսը ճամբայ ելաւ դէպ 'ի էջմիածին, Լատինք իրենց խոստմանցը դըրժելով՝ դարձեալ սկսան Երկպառակել ըզ Հայս : Յովիաննէս պատրիարք իր աղղասիրութեամբը ամեն գործի կը հասնէր՝ թէ 'ի գաւառու և թէ 'ի Պոլիս, ամենուն հետ սի-

ըով կը վարուէր, լատինացեալ Հայերը մի առ մի կը կանչէր, կը յորդորէր կը համոզէր ու կ'աղաչէր . Լատին եպիսկոպոսին ալ նամակներ գրեց և մէկ քանի անդամ ինքն անձամբ գնաց, աղաշեց որ Հայ ժողովուրդը չարգիկէ Հայոց եկեղեցի յաճախիւլէն . Նոյն պէս մէկ քանի անդամ ալ Գաղղիոյ դեսպանին գնաց . դեսպանը Պատրիարքին աղաչանաց զիջանելով՝ խոստացաւ որ կը համոզէ Լատին եպիսկոպոսը :

Հ. Դեսպանն իր խոստմունքը կատարեց :

Պ. Թէեւ դեսպանը շատ ջանաց համոզել զծիզուիթներն՝ որ Հայոց հետ սիրով վարուին, բայց անկարելի եղաւ . վասն զի ճիշտիթք սկսան գիշեր ցերեկ պապականաց եալ Հայ տուներուն մէջ քարոզութիւններ ընել . այս պատճառաւ շատ Հայեր բանտերու մէջ մեռան, մէկ քանին գլուխնին կորսընցուցին և շատերն ալ աղքատացյան . ասկէ ետքը Հայք սկսան բոլորովին հեռու շընիլ ճիզուիթներէն . բայց ճիզուիթք նոր մեքենայ մը հնարեցին Հայերը վերստին որսալու, ըսելով որ՝ մենք խորհեցանք ձեզի համար ուրիշ եկեղեցւոյ հրաման առնել Գաղղիոյ դեսպանին միջոցաւ, բայց գոնէ առ այժմ 50000 դահեկան պէտք է, այս գումարը հաւաքեցէք . թէեւ ժողովրդեան

մեծ մասը գիտէին այդ հրամանին անկարեւ լիութիւնը, բայց միամիտներ իրենց մէջ դրամ ժողվելով գազզիոյ դեսպանին տուին. վասն զի քանի քանի անդամ ճիզուիթք զանազան պատճառներով խարելով՝ ստակնին առած և իրենց պիտոյիցը գործածած էին. ասոր համար Հայերը փոխանակ ստակնին ճիզուիթք քահանայից տալու՝ դեսպանին տըւին:

Հ. Ճիզուիթք կատարեցին իրենց խոստ մունքը:

Պ. Երբ դեսպանը Հայ պապականաց համար մասնաւոր եկեղեցւոյ մը հրամանն առնելու կ'աշխատէր, ճիզուիթք ամենը մէկ ոտք ելնելով գային դեսպանին իմացուցին որչ եթէ Հայ պապականք մասնաւոր եկեղեցի ունենան, իրենց եկեղեցեաց եկամուտը կը կտրի, և ան ատեն ի՞նչպէս պիտի ապրին, եւայլն. այսպէս խօսքերով համոզեցին զդեսպանը. իսկ ասդին՝ ստակ տուող խեղճերը կ'սպասէին որ զատ եկեղեցի պիտի ունենան. և երբ տեսան որ այս ստակնին ալ գնաց, ամենքը դեսպանին գացին և սկսան ստակնին ետ պահանջել. դեսպանին ճարը հատնելով վանտեց զամենքն ալ, ըսելով որ՝ ես ձենէ այն ստակը ոչ թէ մասնաւոր եկեղեցի շինել տալու համար առի,

այլ Լատինաց եկեղեցին արձակ համարձակ դալու համար :

Հ. Պապականացեալ Հայերն ի՞նչ ըրին երբ դեսպանէն բացասական պատասխան մ' ընդունեցին :

Պ. Ամենը մէկէն Եպարքոսին աղերսագիր տուին, ըսելով որ՝ Գազզիոյ դեսպանը և Լատին եպիփոպոսը մեր ստակներն առին, մեզի մասնաւոր եկեղեցւոյ հրաման առնելու խոստումով, բայց ոչ հրամանն առին և ոչ ստակնիս կուտան։ Եպարքոսն աղերսագիրը կարդալով՝ ամենքն ալ վլուտեց. ուստի պապականք հասկնալով ճիզուիթներուն ընթացքը՝ սկսան հետզհետէ Յովհաննէս պատրիարքին գիմելով մեղայ գոյել. այնպէս որ Լատին եկեղեցեաց մէջ հազիւ քանի մը Գաղատացի Հայեր կը տեսնուէին. այնուհետեւ շատ տուներէ վլուտուիլ սկըսան Լատին քահանայք, որով բոլորովին վարկերնին կոտրեցաւ թէ ՚ի Պոլիս և թէ դաւառներուն մէջ.

Հ. Ուրիշ ի՞նչ հնարք մտածեցին ճիզուիթք Հայերն որսալու համար :

Պ. Տեսնելով որ ալ անկարելի է Հայոց սիրաը շահիլ, սկսան Պատրիարքարան յաճախել, և Հայոց եկեղեցւոյն հետ միութեան վրայօք խօսիլ. և օր մը Գաղղիոյ դեսպանն

իր ընտանիքովը և երեւելի պաշտօնակալ ներովը Ղալաթիոյ Ս. Լուսաւորչաց եկեղեցին եկան քանի մը Լատին եկեղեցականներով . նոյնպէս աւագ ուրբաթ օրը թափօրի համար Ղալաթիա իջան Գաղղիացւոց և լեռ հայոց գեսապաններն իրենց ընտանիքովը , և Քէմէր ալթը ըսուած փողոցը նստան և ստիպեցին որ նախ Հայերը թափօրի ենեն , յետոյ Լատինք , և ՚ի վերջոյ Յոյները՝ մինչդեռ առաջները նախ Յոյնք և յետոյ Հայերը կը կատարէին . սակայն որչափ որ Լատինք կը մօտենային Հայոց , Հայք ընդհակառակն առաւել եւս կը զղուէին ասոնցմէ . նոյն օրերը վախճաննեցաւ Յովհաննէս թո . կոլուտ Պատրիարք 25 տարի և 5 ամիս պատրիարքութիւն ընելէն վերջը . իրեն յաջորդեց Յահոր Նալեան՝ զոր ինքն ընտրած էր իրեն օգնական և միանգամայն յաջորդ :

Հ. Յակոբ Նալեան ի՞նչպէս կառավարեց ազգը .

Պ. Խոչէմ և առաքինի անձ մ՛ըլալուն խաղաղութեամբ կառավարեց ազգը . ասոր օրով ճիզուիթք նոր վարպետութիւն մը խորհեցան պապականացեալ Հայերէն ստակ քաշելու համար . Եւրոպայէն մայրապետներ բերել տուին , և անոնց ձեռքով սկսան պապականներուն տուներէն ստակ հաւաքել :

ըսելով որ՝ կառավարութիւնը Հայոց ձեռքէն Ղալաթիոյ Ս. Լուսաւորչաց և Սամաթիոյ Ս. Գէորգայ եկեղեցիներն առնելով ձեզի պիտի տայ . ասանկով շատ ստակ ժողուելով պահուըտեցան . Հայք ճիզուիթներուն ձեռքէն քաշած նեղութիւններնուն համար բողոքեցին Եպարքոսին . Եպարքոսն ալ ամենը մեկէն բանտարգել տուաւ , ըսելով որ՝ ուսկից առիք այդ իշխանութիւնը որ ուրիշի ըստացուածքը գրաւելու կ'ելնէք . որով մեծամեծ տուգանք տալով՝ հազիւ աղասեցան բանտէն . այս օրերը Գաղատայի պապականացեալ Հայք Սօֆճի խանին մէջ ձայնաւոր պատարգագ ըսել տալ սկսան , բայց Եպարքոսն իմանալով՝ Գաղատացւոց մեծերէն շատերը բանտարգել տուաւ , որոնք մեծամեծ տուգանքներով հազիւ կարող եղան աղատիլ :

Հ. Յակոբ Նալեանի օրով ի՞նչ պատահեցաւ Հայոց :

Պ. Որչափ որ Յակոբ Պատրիարք կը փափէր ժողովուրդը խաղաղութեամբ պահել , ընդհակառակն ճիզուիթք շարունակ գժտութեան և երկառակութեան որութ պակաս չեն ըներ Հայոց մէջէն . ինչպէս որ այս անդամ Սիլիխոտրեցի Պրոխորոն անուամբ վառասէր վարդապետ մը Պոլիս գալով , մէկ

քանի պապականացեալ Հայեր մօտեցան և
խոսուացան Պատրիարք կարգել տալ զինքը,
եթէ իրենց կողմն անցնի . Պրովորոն անսա-
լով անոնց խորհրդոյ՝ մեծ ամեծ ընծաներով
եպարգոսին դիմեցին և առանց ժողովուրդին
իմացլնելու Պատրիարք ըրին զՊրովորոն, և
Ս. Զատկին առջի օրն արքունի խաւազնե-
րով Պրովորոն Պատրիարքը Ս. Յստուածած-
նայ եկեղեցին բերելով կուղէին ներս մըտ-
ցընել. Երբ ժողովուրդը տեսաւ զայն՝ սկը-
սաւ աղաղակել թէ՝ մենք զքեզ չենք ճանչ-
նար, մենք Յակոր Պատրիարքը կը ճանչ-
նամք և զայն կ'ընդունիմք. բայց խաւազնե-
րը բունութեամբ ներս խօթելով տարին Պատ-
րիարքական աթոռը բազմեցուցին. և մինչ-
դեռ կը պատրաստուէր քարողի՝ դարձեալ
սկսան աղաղակել. մեծամեծք տեսնելով որ
Պրովորոն բունութեամբ կ'ուղէ պատրիար-
քական գահը բարձրանալ, Սուլթանին ի-
մացուցին. Սուլթանը զբարգ ոոը կանչե-
լով՝ յանդիմանեց, առանց ազգին հաւանու-
թիւնը առնելու Պատրիարք կարգելուն հա-
մար : Պրովորոն եօթն օր պատրիարքու-
թիւն ընելէն ետքը, Սամսունի բերդն աք-
սորուեցաւ և Հոյոց ալ հրաման ելաւ որ ի-
րենց Պատրիարք մ'ընարեն :

Հ. Յակոր Նալեանի պատրիարքութիւնը

որչափ տեւեց և Մինասի ով յաջորդեց :
Պ. Պրովորոնի բռնութեամբ գահը ելած-
ատեն Նալեան Յակոր Պատրիարք Ճ տարի
և Զ ամիս պատրիարքութիւն ընելէն ետքը
հրաժարեցաւ . նոյն ատենը մեռաւ նաեւ
երուաղէմի Գրիգոր Շղթայակիր Պատրի-
արքը, և որովհետեւ միաբանութիւնը դեռ
չէր որոշած միաբաններէն մէկը, առ ժամա-
նակեայ Յակոր Նալեանն ընտրեցին երուա-
ղէմի Պատրիարք, և Ս. Կարապետ վանքին
առաջնորդ . Մինաս վարդապետը Կ. Պոլսոյ
Պատրիարք ընտրուեցաւ . ասոր օրով Էջմի-
ածնոյ Ղազար կաթուղիկոսը վախճաննելով՝
իրեն յաջորդեց Մինաս վարդապետ՝ որ դեռ
Զ տարի էր Պոլսոյ Պատրիարք Ըլլալը . ուս-
տի Մինասին տեղ Կ. Պոլսոյ Պատրիարք
ընտրուեցաւ Ղափանցի Գէորգ վարդապե-
տը, որ բարի և մարդասէր անձ մ'ըլլա-
լուն ժողովուրդն սկսաւ հայրաբար կառավա-
րել. բայց անձնական տկարութեանը պատճա-
ռաւ և տարիէն հրաժարեցաւ . Ասոր օրովը
խիստ երեւելի էր Հայոց մէջ Ոկնցի Եաղուակ
ամիրան, որ ներքինապետին Հայ որդեգիրն
իրեն կնութեան առած էր, բայց Հայու մը
թշնամութեամբ սպաննուեցաւ . Եաղուակ
ամիրայի մահուանը վրայ Հայք, Յոյնք,
Հրեայք և Տաճիկք առ հասարակ սղացին :

Պօլսեցիք Յակոբ Նալեանը խնդրեցին՝ որ
գայ դարձեալ կ. Պօլսոյ Պատրիարք ԸՆ-
Լայ. Յակոբ Պատրիարք Յ տարի և 1 ամիս
Երուսաղէմի պատրիարքութիւնը վարելէն
Ետքը վերստին կ. Պօլսոյ Պատրիարք Եղաւ
և 12 տարի ազգը Խաղաղութեամբ կառա-
վարելէն Ետքը՝ յօժարութեամբ իրեն յա-
ջորդ բնարեց զԴրիգոր վարդապետ Պատ-
մաճեան կ. Պօլսեցի և հրաժարականը գրեց
Եպարքոսին իմացնելով նաեւ իր յաջորդին
անունը. Նալեանի օրով յոյժ Երեւելի էր
Հայոց մէջ Ղաղար Ամիրայ որ Բաղրուպ բա-
շա Եպարքոսին սեղանաւորն էր :

Հ. Ղաղար ամիրայի վրայ ի՞նչ գիտելիք
կայ :

Պ. Խոհեմ և առաքինի անձ մ'ըլլալուն,
Բաղրուպ բաշա ոչ միայն իրեն սեղանաւոր
ընտրեց, այլ բոլոր սեղանաւորաց ալ զլուխ
կարգեց, և հրաման տուաւ որ կարմիր թա-
ւիշէ փակեղ դնէ և ձիով սպասաւորով շըր-
ջի ամեն տեղ. այս մենաշնորհութիւն մ'էր
իրեն. Ղաղար ամիրայ իւր մարդասիրու-
թեամբն ու առատածեռնութեամբը բոլոր
հպատակ ազգաց սիրուն իրեն դրաւեց, բայց
Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքն Յունացմէ
պահաջուելուն պատճառաւ, փողերանոցի
տեսուչ Ստավրաք օղլու Յոյնին հետ թնա-

մացաւ. և երբ Բաղրուպ բաշա Էպարքուը
մեռաւ, իրեն յաջորդեց Համիտ Համզա բա-
շա, որուն սեղանաւորը Ստավրաք օղլուն
ըլլալուն՝ Ղաղարը մասնեց տէրութեան, ը-
սեղով թէ՛ Բաղրուպ բաշայի բոլոր ստացուած
քը Ղաղարի քովն է. իսկոյն բանտարկուեց-
աւ Ղաղար և 40 օրի չափ տանջուելէն Ետ-
քը՝ յանուն արդարութեան ՊՍՈՒԹԵԱՆ Մուս-
տաֆան դատի հրաւիրեց. Երբ սյս լուրն ա-
ռաւ Սուլթան՝ գահէն վար իջաւ և երեք
քայլ յառաջանալով հրամայեց որ գլխատուի
իւր ոսոխը Զուխամի խանին դրանն առ-
ջեւ, և բոլոր ստացուածքը յարքունիս գը-
րաւեցաւ բաց 'ի Երկու մնտուկէ՝ որ Ղա-
ղար ամիրայի կինը Տիրուհի մին Զօպան ա-
ղա անուն Հայու մը, և Երկրորդը Շնորհք
անուն անձի մը տուած էր պահելու հա-
մար. որ վերջը թէեւ Զօպան մականուան-
եալ Հայը մնտուկը ոսկեով լի ետ դարձոց
բայց Շնորհք ադամանդով լի մնտուկն առ-
նելն ուրացաւ :

Հ. Էպարքուը Յակոբ Նալեանի հրաժարա-
կանն ընդունեց :

Պ. Սկիզբէն Եպարքուը չընդունեց հրա-
ժարականը, բայց Յակոբ Պատրիարք Երկ-
րորդեց. Եպարքուը Սուլթանին ներկայա-
ցուց զայն և Սուլթանը՝ որ ամեն գործ ար-

գարութեամբ և իմաստութեամբ կը տես-
նէր, կասկածելով թէ դուցէ ակամայ և
կամ քանի մ'անձանց ստիպմամբն եղած ըւ-
լայ, իր հաւատարիմ մարդոցմէն մին Յա-
կոր զարդիարքի խաւեց և իմանալով իր
կամքովը հրաժարիլը, հրամայեց Եպարքո-
սին և Եպարքոսը զԳրիգոր Պասմանեանը
Հայոց Պատրիարք կարգեց : Յակոր Նալեան
իր օրերը գրաւոր երկասիրութեամբ ան-
ցուց և բաւական գրքեր տպել տուաւ, որք
են՝ Զաքեռը, Վեհ Հայոց, Մեհումիւն Նո-
րքի, Գայաբան Ծանուցանց . և քիչ մը վերջը
մեռաւ 1764 յուլիս 18 ին և թաղուեցաւ
Քերայի գերեզմանատան մէջ :

Հ. Գրիգոր Գ. ի պատրիարքութիւնը ՞՞-
շափ տեւեց :

Պ. Խելացի, հեռատես և Նալեանի օրով
փորձառու ըլլալուն՝ 9 տարի և 6 ամիս աղ-
ջը խաղաղութեամբ կառավարելէն և ճիզ-
ուիթայ ամեն մեքենայները հեռատեսու-
թեամբ խորտակելով ժողովուրդն զգուշա-
ցընելէն ետքը հրաժարեցաւ . իրեն յաջոր-
դեց Զաքարիա կազզուանցի վարդապետը,
որ էջմիածնէն նուիրակ եկած էր : Զաքա-
րիա Պատրիարք՝ իր ազգասիրութեամբն
սկսաւ ժողովուրդը հայրաբար խնամել, ա-
մեն կողմ խաղաղութիւնը կը տիրէր . թէ-

պէտեւ մերթ ընդ մերթ ճիզուիթութիւնը
դլրւի կը վերցընէր, բայց Պատրիարքին և
անոր խորհրդականացը մէկ ակնարկովը գե-
տինը կ'կյնար . սակայն Լատինք չուզելով
Հայոց խաղաղութեան երես տեսնելը, վե-
րըստին խռովութիւն հանեցին և Զաքա-
րիա 9 տարի պատրիարքութիւն ընելէն ետ-
քը Պրուսա աքսորել տուին, և անոր տեղը
Յովհաննէս Ամատանցի վարդապետը Պատրի-
արք եղաւ, զոր 44 ամիսէն Հայերը վար առ-
նելով Զաքարիան վերստին Պատրիարք դը-
րին . այս միջոցին Սայ Եփրեմ Կաթուղիկո-
սը վախճանեցաւ տեղուցին այլազգի իշխան-
ներէն թունաւորուելով, և իրեն յաջորդեց
Թորոս Եպիսկոպոս Սաեցի :

Հ. Զաքարիայի պատրիարքութեան միջո-
ցին Հայոց մէջ ի՞նչ երեւելի գէպք պատա-
հեցաւ :

Պ. Զաքարիա Պատրիարքին օրովը վերըս-
տին սկսաւ խռովութիւնը Հայոց մէջ, ա-
նանկ որ սկսան մէկզմէկ մատնել Բ. Դրան՝
որով շատ անմեղ անձինք բանստարկուեցան
և մեծամեծ տուգանքներով հազիւ կ'ազա-
տէին : Զաքարիայի օրով երեւելի էր Տատ-
եան Առաքել ամիրայն, որ արքունի վառօ-
դանոցը շինեց յԱզատլար և ինքը վերատե-
սուչ եղաւ արքունի հրամանաւ՝ որ մինչեւ

այսօր Տատեան գերդաստանին յանձնուած է այդ պաշտօնը : Այս միջոցին կատարինէ թու Ռուսաց կայսրուհին Խըրըմի Հայերը հըրաւիրեց՝ ի Ռուսաստան, որոնցմէ մեծ մաս մը եկան և ծօն գետին եզերքը Նոր Նախի Հեւան քաղաքը շինեցին, ուր 1816 ին 4600 տուն Հայ բնակիչ կար, կ'ըսեն, ազգային քաղաքապետի մը իշխանութեան տակ . Զաքարիա երկրորդ անգամ 17 տարի պատրիարքութիւն ընելէն վերջը մեռաւ :

Հ. Զաքարիայի ո՞վ յաջորդեց :


Պ. Դանիէլ Եպիսկոպոս՝ որ Էջմիածինէն նուիրակ եկած էր . սա խոհեմ և առաքինի անձ մ'ըլլալուն սիրելի եղաւ Հայ իշխանաց, որոնք Զաքարիայի օր աւուր տկարանալը աեմնելով, սահմանական զիանիէլ որ Պօլսոյ Պատրիարք ըլլայ . Դանիէլ սիրով ընդունեցաւ . հազիւ 11 ամիս եղած էր պատրիարքական գահը ենելը՝ Էջմիածնայ Դուկաս կաթուղիկոսը վախճանելով՝ տեղը Դանիէլն ընտրեցին . բայց Դանիէլ Եպիսկոպոս յափրշտակեց կաթուղիկոսութիւնը Վրաց Դանիէլ խանին միջոցաւ և Դանիէլ եկաւ մնաց ՚ի կարին, և կ. Պօլսոյ Պատրիարք եղաւ Յովհաննէս Եպիսկոպոս, որ իւր խստաբարցութեամբը ժողովրդին հետ աղէկ չվարուելուն և տարիէն Եւդոկիա աքսորեցաւ . ա-

սոր յաջորդեց Գրիգոր Եպիսկոպոս Խամսեցի որ 11 ամիս պատրիարքութիւն ընելէն Ետքը աքսորեցաւ ՚ի Քաղկեդոն :

Հ. Գրիգոր Պատրիարքի ո՞վ յաջորդեց :

Պ. Պօլսոյ Հայերը Երկու կողմէ բաժնուած ումանք Պաւիթը կ'ուզէին և ոմանք ուրիշ անձեր . հուսկ յետոյ միաբանեցան և Ցովհաննէս Եպիսկոպոսը՝ որ Եւդոկիա աքսորուած էր, բերելով վերստին Պատրիարք դըրին. Յովհաննէս Պատրիարք Նարը գափույի գուրաը Հայոց հիւանդանոցը և Սամաթիոյ Ա. Գէորգայ Եկեղեցին շինել տուաւ Սուլթան Սէլիմին հրամանաւ . նոյն միջոցին Պարսից և Ռուսաց մէջ պատերազմբացուելով Պարսիկք յաղթուեցան . Պաւիթ անվաւեր կաթուղիկոսը որ Պարսից զօրութեամբը կը բռնանար Էջմիածնայ գահուն վրայ, Ռուսաց միջոցաւ վար առնուելով՝ Դանիէլ օրինաւոր կաթուղիկոսը գրուեցաւ . Յովհաննէսի օրով Յոյնք գարձեալ սկսան պահանջել Երուսաղէմի Ա. Յակոբայ վանքը, բայց Յովհաննէս Պատրիարք ազգին բոլոր իշխանները հրաւիրեց ՚ի ժողով՝ որոնց մէջ էին Հովհաննէմի ալև յայուսեց անոնց Երուսաղէմի վանքին Յունացմէ պահանջուիլը . ուստի ամենը մէկ սիրտ և մէկ հոգի աշխատելով ազատացին վանքը Յունաց ձեռքէն . այս միջոցին Տա-

թեւացւոյն և Որոտնեցւոյն Ա. պատարագի
ատեն յիշատակութիւնները դադրեցան։
Յովհաննէս Պատրիարք երկրորդ անդամ
10 տարի ազգը խաղաղութեամբ կառավա-
րելէն ետքը հրաժարեցաւ և իւր բնակու-
թիւնը իւսկիւտար հաստատեց։



ԳԼՈՒԽ Գ.

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ ՊՈՂՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

ՄԻՇԱԿ ՍԱՐԳԻՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ

Հ. Յովհաննէսի ո՞վ յաջորդեց։

Պ. Արքահամ եպիսկոպոս՝ նուիրակ իշմի-
ածնայ. այս մարդը՝ ՚ինպաստ վանքին հա-
ւաքած ստակովը իշխաններէն մէկ քանին
իրեն կողմ որսալով և միանգամայն Յովհան-
նէս Պատրիարքի հետ սիրով վարուելով,
պատրիարքութիւնը ձեռք ձգեց. սա սկիզ-
բէն թէեւ շատ հեղութեամբ կը վարուելը
ազգին հետ, բայց վերջերն սկսաւ խստու-
թիւն քանեցնել թէ եկեղեցականաց և թէ
աշխարհականաց, և երուսաղէմի վանքին
միաբաններն արգիլեց պատարագելք. Յովհ-
աննէս նախկին Պատրիարք, Պէղնեան Յա-

լութիւն անունով անձ մը խստ բեց, խընդա-
րկով որ Երուսաղէմայ միաբաններուն հիա-
ման տայ պատարագելու. բայց Արքահամ
Պատրիարք մերժեց Պէղնեան և հրամայեց
որ դուրս ենէ սենեակին ունական հերձուածուաց
գոչելով։ Այս խօսքը Պէղնեանի ծանր դա-
լով՝ յարմար միջոց կը փնտրուեը վրէժը լու-
ծելու. ասոր օրով Գատը գիւղի Ա. Թա-
գաւոր եկեղեցին շինուեցաւ 1814 յուլիս
4 ին. օծման հանդէսը խիստ շքեղ և փա-
ռաւոր կերպիւ կատարուեցաւ. նոյն օրերը
նաեւ թերացիք իրենց եկեղեցւոյն շինու-
թեանը հրամանն առնելու համար Պատրի-
արքին գիմեցին, բայց Պատրիարքը թա-
ղեցւոցմէ բազում ստակ պահանջելուն,
ամբողջ ոտք ելան և Պէղնեանի թելագ-
րաւթեամբ աղերսագիր տուին Սուլթանին
ըսելով թէ՝ Պատրիարքը անկարող է աղ-
զ գը կառավարելու և զժողովուրդը կը կե-
ղեք. ուստի կը լսդրեմք որ ուրիշ Պատ-
րիարք մը գրուելու շնորհք ընէք. Սուլթա-
նը աղերսագիրը կարգալով հրաման ըստ
որ նոր Պատրիարք մը ընտրեն. ուստի իշ-
խանք ժողովելով, որոնց մէջ էին նաև Ֆիւլ-
եանք, Պօլսու եպիսկոպոս Անդրիանուալօլսե-
ցին Պատրիարք ընտրեցին, և Արքահամ 2
տարի և 4 ամիս Պատրիարքութիւն ընելէն

ետքը աքսորեցաւ 'ի Մարզուան :

Հ. Պօղոս Պատրիարքի օրով ի՞նչ երեւելի
դէպք պատահեցաւ 'ի Պօլիս :

Պ. Այս մարդը իր խոհեմն ազգասէր բնու-
թեամբը ազգն սկսաւ խաղաղութեամբ կա-
ռավարել և ուղելով որ կրօնական բաժա-
նումները վերցնէ , Հայ իշխաններուն խոր-
հրդովը Հռովմէական Հայոց երեւելիներն
հրաւիրեց , որոնք էին՝ Տիւղեան Գրիգոր ,
Արքիկեան Պօղոս , Աստուածատուրեան Մատ-
թէոս կարմնեցի , Ցավութեան Անտօն , Թըն-
կըրեան Յովոնէփ և Գլըճեան Անտօն , և հար-
ցուց թէ ի՞նչ է պատճառը որ Հայոց եկե-
ղեցին հեռացեր են և կը նախատեն իրենց
կրօնաւորները . Հայոց եկեղեցին կազմուե-
լին 'ի վեր ի՞նչ աւելցուցած կամ պակսե-
ցուցած ունի՝ թող ցոյց տան : Հռովմէա-
կանք երեք ամիս միջոց խնդրեցին պատաս-
խաննելու համար , և խորհակալութիւն յայտ-
նելով Պատրիարքին այսպիսի տուաջարկու-
թեանը՝ երան գացին . Պօղոս Պատրիարք ե-
րեք ամիսէն աւելի սպասեց բայց պատաս-
խան տուող մը չեղաւ , այս առաջարկու-
թիւնը Գոլէճեան վարդապետաց գործին չե-
կաւ , ըստ որում պիտի յայտնուէր խարդա-
խութիւննին . Պօղոս Պատրիարք վերստին
հրաւիրեց Հայ և Հռովմէական իշխանները

Գուրու չէշմէի պատրիարքարանը և երկար
ատենաբանութիւն մ' ընելով յորդորեց զա-
նոնք , բայց Հռովմէականք իրենց կղերին
վրայօք գանդատանօք սկսան խօսիլ թէ
չեն ուղեր գալ երես առ երես , ահաւասիկ
մենք պատրաստ եմք ինչ որ կ'ուղեք ըրէք
ըսելով գացին , ուստի Պօղոս Պատրիարք ըս-
տիպուեցաւ կարգաւորները հրաւիրել :

Հ. Հռովմէական Հայոց կարգաւորները ե-
կան Պօղոս Պատրիարքին հրաւէրին :

Պ. Ոչ թէ գալ՝ այլեւ պատասխան տալու
անգամ հարկ չսեպեցին . ուստի վերջին ան-
գամ մ'ալ ժողովի հրաւիրեց Պօղոս Պատ-
րիարք Հռովմէական Հայ արհեստաւորնե-
րը և պատմեց անսոնց մի առ մի միութեան
համար ըրած ժողովները , իրեն առաջար-
կութիւնները և Հռովմէականաց Գոլէճեան
կղերին անոպատասխանի մնալը , որոնք իմա-
նալով իրաւունք տուին Պատրիարքին և
Պատրիարքը օրհնելով զանոնք արձակեց .
Նոյն դիշերը 300 էն աւելի Հռովմէականք
թերայի Լատինացւոց Ս. Երբորդութեան ե-
կեղեցւոյն մէջ ժողովուելով կանչեցին իրենց
կրօնաւորները և հարցուցին անսոնց թէ ին-
չո՞ւ Պատրիարքին հարցումներուն պատաս-
խան չեն տար , բայց անոնք չկրնալով ինք-
զինքին արդարացնել , Լատին կրօնաւու

բայ ձեռքով ժողովուրդը եկեղեցին գուրս
վլնտեցին, ըսելով թէ այս ձեր ժողովա-
տեղին չէ այլ լատինաց եկեղեցի է. ուստի
ժողովուրդն սկսաւ աղաղակել թէ՝ երբ
մեր ստահները կ'առնեք եկեղեցին ձերն է
կ'ըսէք և երբ ժողով մը ընելու եկանք՝ մեզ
գուրս կը վանէք, եկեղեցին լատինաց է ը-
սելով։ Նոյն գիշերը սաստիկ անձեւ գա-
լուն ջիւղեանց գրադիր Պ. Աթանասին տու-
նը հաւաքուելով՝ կանչեցին դարձեալ ի-
րենց քահանաները և սկսան հարցունել թէ
գուրք Հայոց եկեղեցին կը նախատէք հերետի-
կու է հերձուածու է ըսելով. ահա Պատրիար-
քը ձեզ ժողովի կը հրաւիրէ, ինչո՞ւ չէք եր-
թար և յայտ յանդիման խօսիլ. մենք ըն-
տանեաց տէր և զբաղեալ մարդիկներ՝ ձեր
պատճառաւը չենք կրնար փորձութեան մէջ
կյանալով շարունակ տուգանք վճարել։

Հ. Գոլէճեանք ի՞նչ ընթացք բունեցին։

Պ. Նոյն գիշերը ժողովրդեան ցոյցքն
վախնալով՝ խստացան երթալ և ժողովուր-
դը համոզեցին որ իրենք առաւել եւս պատ-
րաստ են սոյն միութեան գործը գլուխ հա-
նել. ժողովուրդը դոհ սրտով նոյն գիշերը
մեկնեցաւ, ուստի գոլէճեանք այս բանիս
վրէմն առնել ուղելով՝ լատին կրօնաւոր-
ներն իրենց զօրավիդ առած գալիտան փա-

չայի փոխանորդին իմացուցին թէ խումբ մը
Հայեր ժողովուելով լատին եկեղեցին կոխե-
ցին և այս գիշեր ալ դեսպանատունը պիտի
կոխեն. փոխանորդն ալ հաւատալով նոյն
գիշերը բազմաթիւ զօրքով կուգայ և յան-
կարծ բերայի Հայոց Ս. Երրորդութեան ե-
կեղեցին կը մտնէ, որպէս թէ հսն ժողով-
ուած ըլլան Հայք. բայց մարդ չդանելով
հարցուփործ կ'ընէ, կը քննէ և բոլորովինն
զրսպարտութիւն ըլլալը հասկրնալով անհը-
նարին զայրացմանը ետ կը գառնայ. հետեւ
եալ առտուն երբ Պատրիարքն իմացաւ ծիոզ-
ուփթաց այս վատութիւնը՝ բոլոր Հայ իշ-
խանաց լուր զրկեց, ու զելով որ Բ. Դրան ի-
մացնէ և պէտք եղած պատիմը տնօրինել
տայ. բայց իշխանք աղաղեցին որ հիմակու-
հիմայ ամենեւին ձայն չհանէ և ուրիշ յար-
մար ժամանակի մը թողու, վասն զի նոյն օ-
րերը Տիւղեանց տանը կործանմանը պատ-
ճառաւ բոլոր Հայոց ազգը ահ ու դողի մէջ
էք. ուստի ծիզուիթք ու Գոլէճեանք յար-
մար առիթ գտնելով ու զածնին կ'ընէին և
որ ամենէն ցաւալին է՝ միաբանութեան մեծ
գործը չյաջողեցաւ, որու ամեն մարդ անձ-
կանօք կը փափաքէր մանաւանդ Պէջեան։

Հ. Վեղճեանի վրայ ի՞նչ գիտելիք կայ։

Պ. Պէջեան՝ Տիւղեանց Զէլէպիներուն

քով գործակալութեան պաշտօն կը վարէր և
այնքան սիրելի եղաւ իւր աշալը զութեամբը՝
որ արքունի փողերանոցին գործերը Պէզ-
ճեանի խորհրդակցութեամբ կը կատարուէ-
ին . քիչ ատենէն փողերանոցին վերատես-
չութիւնը իրեն յանձնել ուզեցին , բայց Պէզ-
ճեան իր հեռատեսութեամբը մերժեց , վասն
զի Տաճիկք գոհ աչօք շը պիտի նայէին ,
մանաւանդ որ փողերանոցին գործակալնե-
րուն չափազանց շուայլութիւնը Դրան պաշ-
տօնէից կասկածի տեղի տուած էր , և ա-
սոնց մէջ ամենէն անագորոյնը Հալէթ էֆէն-
տի ըսուած անձն էր , որ չէ թէ միայն Տիւզ-
եանց այլ բոլոր քրիստոնէից հակառակ էր .
մանաւանդ Սուլթանին ալ շատ սիրելի ըլ-
լարվ իր կամքը կատարելու շատ դիւրու-
թիւններ ունէր . և երբ Խայրուլլահ էֆէն-
տի ընդհանուր վերատեսուչ եղաւ փողերա-
նոցին , Հալէթի դրդմամբը Տիւզեանները
բանտարքեց պատճառելով թէ հաշիւները
պիտի նայի . այս միջոցին մէկ քանի անձե-
րէ բունի ստորագրութիւն առաւ , ըսելով
թէ Տիւզեանք դանձուն պարտական են .
յետոյ Պօստանճի պաշիի ձեռօք Տիւզեանց
և անոնց ազգականաց և փողերանոցի բոլոր
գործակալաց տուները կնքելով այրերն ՚ի
բանտ և կիներն ՚ի Պատրիարքարան խաւրեց :

Հ. Տիւզեանց վիճակն ի՞նչ եղաւ :

Պ. Սարսափի և արհաւիրք բոլոր ազգ այնոց
վրայ տիրած էր՝ ոչ ոք կը համարձակէր
այս դէպքին վրայ բան մը հարցնելու . բայց
Պէզճեան գիշեր ցերեկ կը մտածէր որ իր
բարերարներուն ազատութեան միջոց զըտ-
նէ . նոյն օրերը արքունի ճարտարապետ Գը-
րիգոր ամմիրան՝ փողերանոցի ներքին տես-
չութիւնը գարձեալ Հայու մը յանձնուելու
լուրն առնելով Պէրպէր պաշիէն անմիջա-
պէս կը ներկայացնէ Պէրպէր պաշիին զՊէզ-
ճեան . այսպէս՝ Սուլթանին հրամանաւ Պէզ-
ճեան փողերանոցի ներքին տեսուչ կ'ըլլայ
և խայրուլլահ էֆէնտիէն ալ մեծ ընդունե-
լութիւն գննելով՝ կըսկի գործի , պէտք ե-
ղած կարգ ադրութիւնները կ'ընէ և իւր բա-
րերարացը ազատութեան միջոցները կ'սկսի
հնարելու խորհիլ . այս միջոցին կնքուած
տուները բացուելով ամեն բան աճուրդի կը
գորուէին ամեն հինգշարթի . իսկ բանտար-
կելոց մէկ քանիները բանտին մէջ մեռան
ժանտախտէն և Տիւզեանք գլխատեցան ու
մեծ սուդի մէջ ձգեցին ընդհանուր ազգը .
ամեն Հայ լացաւ բաց ՚ի թընկըրեան և Գըլ-
ճեան ընտանիքէն , որ գողէճեան քահանա-
յից հետ քանտիլի Տավութեան Անտօնի
տունը ցնծութեան սօն կը կատարէին ՚ի

նախատինս մարդկութեան, այս դործին վը-
րայ չափազանց բարկացան Հայք, բայց լը-
ռութիւնը առ այժմ խոհեմութիւն սեպե-
լով, Տիւղեանց մարմինները թաղելու հրա-
մանն առնելով թ. Դռնէն՝ թաղեցին 'ի գու-
րու չէշմէ իրենց նախնեաց գերեզմանատու-
նը. քանի մը ամիսէն Պէղճեան պատեհ ա-
ռիթ գանելով՝ Պէրպէր պաշիէն բանտար-
կեց ազատութիւնը խնդրեց. Պէրպէր պա-
շին ալ Սուլթանին հրամանաւը բոլոր բան-
տարկեալները Պատրիարքարան խաւրեց որ-
պէս զի Պատրիարքը որոշեալ տեղեր աք-
սորէ.

Հ. Աղջին մէջ կրօնական բաժանումները
վերցընելու համար ի՞նչ ջանքեր եղան :

Պ. Պօղոս Պատրիարք թ. Դրան հրամանաւ
Տիւղեանց ընտանիքին մէջ գտնուած երեւե-
լիները զատ զատ տեղեր աքսորեց և մնա-
ցածներն արք և կանոյք արքատ թաղուեցան.
Տիւղեանց և ուրիշ աքսորեալներուն տունե-
րը աճուրդի ելած ատեն՝ եկեղեցական զար-
գեր տեսնուելով՝ յայտնուեցաւ որ՝ ամեն
Հոռվիշական Հայոց տան մէջ եկեղեցիներ
կան. այս բանս թ. Դռուոք իմանալով՝ հար-
ցուց և տեղեկացաւ թէ Հայոց ազգէն մաս
մը ժողովուրդ Հայոց եկեղեցիէն զատուած
և Հայոց Պատրիարքին իրաւասութիւնը չեն

Շանշնար. ուստի խիստ հրաման մ'եկու թ.
Դռնէն, որ շուտով այս բաժանումը վեր-
ցուի և Հայոց Պատրիարքն ամբողջ իր ազ-
դին երաշխաւոր ըլլայ. Պատրիարքն այս
լուրն առնելուն՝ անմիջապէս Հայ իշխանաց
և ուրիշ երեւելի արհեստաւորաց հետ ժո-
ղով մ'ըրաւ և անոնց հաւանութեամբը Հը-
ռովմէական Հայ իշխաններն և երեւելի ար-
հեստաւորներն հրաւիրեց և արքունի հրա-
մանն հաղորդեց անոնց, և որովհետեւ Հը-
ռովմէականներէն շատերը ձանձրացած ու
զգուած էին այսպէս բաժնուած և օտարա-
ցած մնալին, որոշեցին որ երկու կողմանէ
գիտնական անձինք նատելով՝ քննեն այն
խնդիրներն որոնց համար վէճ և բաժանում
եղած է. ուստի անոնց կողմէն գողէնեան քա-
հանայից և լատին եպիսկոպոսին Մօնախնեօր
Վէնիէնտիոս Քուէսի հրամանաւը Հ. Մես-
րովզ Աղաչըրաքեան, Հ. Թագէոս Ասկէր-
եան, Հ. Գրիգոր Գապարաճեան, Հ. Ռերո-
բէ Աղնաւուրեան, Հ. Պօղոս Բժիշկ, Հ. Ստե-
փանոս Եպիսկոպոս Աւգէրեան ընտրուեցան.
Խոկ մեր կողմանէ Ց. Մեսրովզ քահանայ Մայր
եկեղեցւոյ, Ց. Բարթուղիմէոս քահանայ Ա.
Խաչ եկեղեցւոյ և Թագւոր վարժապետ. և
Արքացւոց կողմանէ Հ. Մեսրովզ, Հ. Թու-
մա, Հ. Սերովբէ. Այս ժողովին կը նախա-

գահէր Ստեփանոս Եպիսկոպոս Աւգերեան։
Հ. Ժողովը ի՞նչպէս համաձայնեցաւ։
Պ. Երեք ամիսի չափ մերթ Պէզճեանի և
մերթ ճարտարապետ ամիբայից տուները
ժողովուելով, համաձայնեցան վիճաբանելու
խնդրոց կետերուն վրայ և ստորագրելով
հետեւեալ օրը Պատրիարքին ներկայացուցին։
Պատրիարքն անմիջապէս ընդհանուր ժողով գումարեց, ուր ներկայ էր նաեւ Սայ կիրակոս Կամուղիկոսը. ժողովը այս որոշումը
մի առ մի քննելով հաւանեցաւ։ Պօղոս Պատրիարք սիրոց և միութեան վրայ գեղեցիկ ատենաբանութիւն մը ընելով յաւ մը համոզեց
ժողովականներն՝ որն ք իրենց ստորագրութեամբը վաւերացնելով, խնդրեցին որ նոյնը տպուի Հրատեր ուրա անուամբ. Պօղոս Պատրիարք ընդունելով՝ օրէնեց ժողովուրդը և
ժողովականք զիրար համբուրելով բաժնը վեցան մեծաւ ուրախութեամբ. նաեւ աշխարհամատրան կիրակէ օրը 18 ապրիլ 1820 Մայր Եկեղեցին ժողոված էին ամեն աստիճանի երեւելի անձինք, և թէ աշխարհական թէ Եկեղեցական խուռն բազմութիւն մը վերագարծող Հայոց քահանաներով և ժողովրդով, Արքայեան և Գոշճեան վարդապետներէն մէկ քանին՝ գաւաղան ՚ի ձեռին վեղար և փիլոն առած՝ դասին մէջ կայնած

էին. Պատարագի ատեն Աւետարանը Հ. Մեարովալ կարդաց, Տաթեւացւոյն և Որոտնեցւոյն անունները չի յիշատակուեցան, նոյնպէս Պօղոս Պատրիարք իր երկու սարկաւագները վարդապետ ձեռնադդեց առանց լեւոնի և Քաղկեդոնի ժողովները նըզովելու. Պատարագէն վերջը բոլոր երեւելի ամիբայց պատրիարքարան ելան և իրենց շնորհակալութիւնը յայտնեցին Պատրիարքին. ալ ասկէ ետքը ժողովուրդը մէկոմէկ սիրով գրկեց և համբուրեց. իսկ երեւելեաց կողմանէ մէկ մէկու տրուած խնջոյքներն անմթիւ էին։

Հ. Գոշճեանք Ե՞նչ միջոց խորհեցան Հայոց խաղաղութիւնը վրդովելու համար։

Պ. Թէեւ Պօղոս Պատրիարք այս գործին իր ձեռնհասութենէն վեր ըլլալը լսաւ գիտէր, բայց մէկ կողմէն ազգին սէրը և միւս կողմէն Դրան ստիպումը պարտաւորեցին ժամ՝ յառաջ գլուխ հանել. և գեռ կամողիկոսէն և գաւառական առաջնորդներէն բողոքագիրներ չեկած, ճիզուիթք և Գոշճեանք սկսան գրգռել զժողովուրդն, ըսելով որ պէտք է Մ. Պապը յիշէք որ կատարեալ ուղղափառ ըլլաք. և երբ 12 յուլիս 1820 Պատրիարքը վերջին օծման իւղն օրէնելով Եկեղեցիները խաւրեց օծուիլ ուղող հի-

ւանդներն օծելու, այս ատեն՝ ճիզուիթք
իրենց բոլոր յայսերուն ոչնչանալը տեսնելով՝
վերջին փորձ մ'ալ ըրին և յաջողեցան. 1820
օգոստոս 7 ին Քուցիանդի Լատին եպիսկոպոսին խորհրդով գոլէճեան վարդապետ մը
Հայ վարդապետի հագուստով՝ Հռաւեր սրբ
տեարը ձեռքքը, (որուն սկիզբը դանուած-
թ. Լուսաւորչայ պատկերին վրոյ Պատին
պատկերը փակուած էր) շուկան կեսարացի
կօշկակարաց խանութները շրջելով զրգուել
սկսաւ, ըսելով թէ ի՞նչ անհոգ նասեր էք,
Պատրիարքը Էջմիածին ուրանալով Պատին
հնագանդեցաւ, Ա. Մեռոնը վերցաւ. ալ
ասկէ ետքը ձեթով պիտի օծուիք աղցանի
նման, ալլաւ ժամանակ չէ, մենք վազը
պատրիարքարան պիտի իջնենք՝ դուք ալ
իջէք և իմացնենք Պատրիարքին թէ մենք
Լուսաւորչայ որդիք եմք, ոչ թէ Հռովմայ
Պատին.

Հ. Քոլէճեանց այս ըրբածն ի՞նչ աղէտներ
քերաւ աղդին դլխուն :

Պ. Պօղոս Պատրիարք այս լուրն առնելուն
անմիջապէս առաջն առնել ուղեց, բայց
գիշերուան երբորդ ժամուն ըլլալուն բան մը
չկրցաւ ընել. հետեւեալ առտուն խուռն
բազմութիւն Մայր Եկեղեցի իջնելով սկսան
աղաղակել թէ մենք Հայ եմք, մենք Ա. Լու-

սաւորչայ որդիք եմք, մենք Փռանկ չենք
ըլլար. Պօղոս Պատրիարք Մարկոս և Յակոբ
եպիսկոպոսները խաւրեց որ համոզն զժո՞
զոգուրդը, բայց ժողովուրդն ամենեւին մը
տիկ չընելով պատրիարքարանի դուռը խոր-
տակեցին, մտան ներս և Պատրիարքը կը
վնատընէին. բայց նա մերձակայ պատուհա-
նէն Ցածիփ մը տուն փախած էր. քիչ մը
ետքը ԵԷնիչը աղասին իր զօրքովը հասաւ
ժողովրդէն մէկ քանի անձինք բունեց և
միւներն ալ ցիրուցան ընելով՝ քիչ մը զօրք
թուղուց Պատրիարքարանի դրան առջեւ և
ինքը մեկնեցաւ. Բ. Դուռը սյս գրգռու-
թեան հեղինակները գտնելու համար բան-
տարկեալները տանջել սկսաւ, որոնց մէկը
Տէլի Պալտասարը մատնեց, ուրիշ մ'ալ կա-
րապետ անուն սարկաւագ մը և գրգռիչ գո-
ւէճեան վարդապետը մատնեց, բայց վար-
դապետը չդանուեցաւ. յետոյ սարկաւագը
մատնեց Սախայեան Գրիգոր ամիրան և ա-
նոր աղքական Աղարիա անուն երիտասար-
դը, Արքիարեան Մկրտիչ, Գարաքէհեա
Աքրահամ, Կէլկէլեան Պօղոս ամիրաները և
ուրիշ շատեր :

Հ. Բանտարկեալներն ի՞նչ եղան :

Պ. Մնոնք որ խոստովանեցան՝ զլխատուե-
ցան, ինչպէս որ Սախայեան Գրիգոր ամի-

բայն Մայր Եկեղեցւոյ դրանն առջեւ, կա-
քապետ կեսարացի Տիքիլի թաշի առջեւ,
և Տէլի Պալտասար՝ Սամաթիա իր սրճարա-
նին առջեւ գլխատուեցան և Ազարիա երի-
տասարդը Սուլթան Պայազիտ բարձագ գա-
փու կոչուած տեղը կախուեցաւ. իսկ մատ-
նիչ սարկաւագը բանտին մէջ Մահմէտակա-
նութիւնն ընդունելով ազատեցաւ, և միւս
բանտարկեալներն աքսորուեցան. աքսոր-
ուեցան նաեւ Ազնաւորեան կարապետ,
Պէզնեան Յարութիւն և փողերանոցի տե-
սուչ կարգուեցաւ Պիէզիկնեան Պօղոս Հը-
ռովմէական Հայը. իսկ Աբբայեան հարք՝ որ
միսեր էին Հայոց Եկեղեցին յաճախել, այս
տեսնելով փութացին դնալ Լատին Եկեղե-
ցին. ասոնց հետեւեցան նաեւ Աբբայի ժո-
ղովուրդք. միայն Դապարաճեան Հ. Գրիգոր
հրաժարելով Աբբայեան միաբանութենէն,
փախաւ ՚ի Փարիզ Այս միջոցին Հալէթ է փէն-
տի և անոր Խորհրդակից իսխէլ Հրեայն աք-
սորանայ մէջ խեղդամահ սատկեցան: Պէզ-
նեան՝ որ աքսորէն գարձած և փողերանոցին
տեսչութիւնը վերստին իրեն յանձնուած էր,
յարմար առիթ սեպելով՝ Սուլթանէն Տիւղ-
եանց Զէլպիններուն աքսորէն վերադառ-
նալու հրամանն առաւ 15 ապրիլ 1823 և
վերադարձան Տիւղեանք. նոյն օրերը Սայ

Կիրակոս Կաթողիկոսը վախճանեցաւ տեղ-
ւոյն այլազգի իշխանաց թոյն տալովն՝ որուն
յաջորդեց Եփրեմ իր եղբօրորդին, որ գեռ
18 տարեկան էր: Պօղոս Պատրիարք 8 տա-
րի ազգը կառավարելէն ետքը՝ ծերութեա-
նը պատճառաւ հրաժարեցաւ պատրիար-
քութենէն:

Հ. Ո՞վ յաջորդեց Պօղոս Պատրիարքի:

Պ. կարապետ վարդապետ կ. Պօլսեցի. սա
իր խելացի և խոհեմ բնաւորութեամբը Պէզ-
նեանի հետ խորհրդակցութեամբ որոշեցին
Հռովմէական վոխանորդ մը նստեցունել ՚ի
Հալաթիա կամ ՚ի Բերա, որպէս զի պատրի-
արքարան Եկած արքունի հրամաններն ան-
միջապէս հաղորդուին Հռովմէական Հայոց.
ասոր համար Պէզնեան՝ Պիէզիկնեան Պօղոսի
տունն երթալով հրաւիրեց Հռովմէական Հա-
յոց գլխաւորները և ծանոյց Պատրիարքին
կամքն ու հաճութիւնը. որոնք ուրախու-
թեամբ ընդունելով, իրենց և Պէզնեանի
հաւանութեամբը Նուրիճան Անտօն վարդա-
պետն ընտրեցին, բայց հետեւեալ օրը Հռով-
մէականք իրենք իրենց գաղանի ժողով ը-
նելով՝ Մարուշ Պօղոս վարդապետն ընտրե-
ցին վոխանակ Նուրիճան Անտօնի. ասոր ալ
գոհ չըլլալով՝ սկըսան մտածել որ հերետիկոս
Պատրիարքի մը իրաւասութենէն Ենելով.

զատ Պատրիարք և Պատրիարքարան ունեցնան . Նոյն օրերը մեռաւ Զամշեան Հ. Միջքայել վարդապետ : Կարապետ Պատրիարքի օրով Օթմագիւղի Ս. Աստուածածնայ եկեղեցին նորոգուեցաւ :

Հ. Ի՞նչպէս եղաւ որ Ռուսք Հայոց Արարատ նահանդին տիրեցին :

Պ. Այս միջոցին (1823) Պարսիկք յանկարձ Ռուսաստան յարձակելով բաւական տեղ դրաւեցին , Ռուսաց զօրքը նուազ ըլլալուն համար : Հայերը տեսնելով Պարսից ահազին յարձակումը , մանաւանդ Երկար ժամանակէ ՚ի վեր Պարսիցմէ կրած տառապանքին ալ չկրնալ համբերելով , Ներսէս և պիսկոպոս Ոշտարակեցւոյն յորդորանօքը 20-25000 հոգիէ բաղկացեալ բանակ մը կազմելով Պարսկաց դէմելան և այնքան նեղը ձգեցին զՊարտիկները՝ որ սահմուեցան ետքաշտիլ . Հայոց զօրապետներն էին Մատաթեան , Բեհրուդեան , Երկայնաբազուկն Արզութեանց , Մովսէս կնէաղ և Գանմադեսցի Աղասին՝ որ սոսկական սպայ մէքը . Ռուսք զայս տեսնելով իրենք ալ ահազին բաղմութեամբ յարձակեցան Պարսկաստան և սկսան անխնայ Հարդել , մինչեւ Պարսիկք յուսահատեալ սկսան փախչիլ և Ռուսք անոնց երկրին մէջ յառաջնալով այրեցին աւերե-

ցին քանդեցին , այնպէս որ Պարսից Շահը շատ աղաշանօք և դեսպաններու միջնորդութեամբ հաշտեցաւ Ռուսիոյ ամեն պայմաններն ընդունելով . նոյն ատենը Այրարատ գաւառով իր շրջակայ քաղաքներովն ու դիզերովլ հանդերձ Ռուսաց իշխանութեան տակ անցաւ . Նաեւ պայման ալ դըրուեցաւ որ , Պարսկաստանէն Ռուսաստան անցնիլ ուզող քրիստոնեայները չարգիլուին , այս ալ Հայազգի Աղա Մինաս Լազարեանցի միջոցաւ :

Հ. Ի՞նչ հնարք մոտածեցին Պապականք զատ Պատրիարք և Պատրիարքարան ունեցան համար :

Պ. Թընկըրեանք՝ որ Սպարապետ Մէհմէտ բաշային սեղանաւորներն էին՝ անոր միջոցաւ աղերսազ իր մը տուին Սուլթանին , որուն մէջ հետեւեալը գրուած էր . “Պարսից հպատակ Հայերը ապստամբելով Ռուսաց օգնութեամբը գրաւեցին Այրարատ նահանգը՝ որուն մէջ կը գտնուի իրենց ընդհանուր կաթուղիկոսին նստած Էջմիածնայ վանքը . ուստի Հայք Զեր տէրութեան հետ թշնամութիւն ունենալով , հիմայ մտադիր են Օմանեան երկիրներն արշաւել և քաղաքներն ու գիւղերը գրաւելով , իրենց թագարութիւնը վերականգնել Ռուսաց տէրու-

թեան հովանաւորութեանը տակ . և մենք՝
որ թէպէտ ազգաւ չայ եմք՝ բայց կրօն՝
քով Պատրիարքան ըլլալնուս և անոնց Պատրիա-
րքէն կառավարուելովմիս , մենք ալ ապրս-
տամբ Հայոց իրր համամիտ պիտի սեպուինք
Զեր վեհափառութեան առջեւ , ուստի կը
խնդրեմք որ մեզի զատ Պատրիարք և պատ-
րիարքարան մը չնորհէք : Այս աղերսագի-
րը երբ Սուլթան Մահմետ կը կարգոյ , ան-
միջապէս կանչել կուտայ զՊէզեան՝ զըր-
ուածներուն վրայ բացատրութիւն կ'ուզէ .
Պէզեան առանց փարանելու մի առ մի Սուլ-
թանին կը ներկայացնէ Գաղատացի Պատրի-
անաց անհաշտ ատելութիւնն ու թշնամու-
թիւնը Հայոց գէմ , և թէ Պատրիարք՝ ըստ
որում պատասխանատու է աղդին համար ,
կրնայ երաշխաւորել աղդին . ուստի Սուլթա-
նին հրամանաւ կանչուեցան թէ կարապետ
Պատրիարքը և թէ հրաժարեալ Պօղոս Պատ-
րիարքը՝ հարցուելու համար որ կրնա՞ն ե-
րաշխաւոր ըլլալ Օսմանեան տէրութեան մէջ
գտնուած Հայոց :

2. Պատրիարքներն ի՞նչ պատասխան տը-
վին :

Պ. Պօղոս Պատրիարք աներկիւղ և վստահ
կ'ապացուցանէ Հայոց աղդին հաւատարիմ ,
հլու և տիրասէր ընթացքը , և թէ Օսման-

եան տէրութեան չնորհիւ անդորր և խաղաղ
կեանք վարելով ամեն օր աղօթող է թէ ա-
ռատաղութ Սուլթանին և թէ անոր ար-
դարասէր նախարարաց համար . և թէ ինք
և թէ կարապետ Պատրիարք ըստ ամենայ-
նի կ'երաշխաւորեն բոլոր աղդին համար ,
ապահովցընելով որ ապստամբութեան վատ
խորհուրդ մը բնաւ մոքէ անցած չէ . կըր-
կին կը հարցուի թէ ուսկից կրնաք գիտնալ
հեռաւոր քաղաքներ բնակող աղդայնոց
խորհուրդները , և ի՞նչպէս կրնաք ապահով-
ցընել զմեղ ապստամբութիւն չծագելու մա-
սին . միթէ ինչ որ կըլլայ ձեր խորհրդո՞վը
կ'ըլլայ . Պօղոս Պատրիարք կը պատասխա-
նէ թէ՝ քրիստոնէական կրօնին մէջ խոր-
հուրդ մը կայ , որ ամեն մարդ իր սրտին
գաղտնիքը պարտական է խոստովանիլ քա-
հանային , որպէս զի մեղացը թողութիւն
գտնէ . ուստի եթէ քահանայք այդպիսի
խորհուրդ մը նշմարելու ըլլան՝ անմիջապէս
մեզ կը ծանուցանեն որ առաջքն առնենք .
և ահա այս պատճառաւ է որ բոլոր աղդին
կ'երաշխաւորենք . միայն կաթոլիկ ըսուած-
մաս մը Հայերու չենք կրնար երաշխաւորել
վասն զի անոնք ոչ մեր եկեղեցին կուգան
և ոչ մեր քահանայից կը խոստովանին : Ե-
պարգուսը համոզու ելով՝ Սուլթանին կիմա-

զընէ ինչ որ Պատրիարքէն կը լսէ . ուստի
Սութանը սաստիկ բարկացած այսպիսի ան-
լուր զրպարտութեան վրայ , կը հրամայէ որ
աքսորուին թընկրեանք : Թընկրեան Յակոբ
՚ի կեսարիա և եղբայրը Յովսէփ ՚ի Սեբա-
տիա կ'աքսորուին իրենց ընտանիքներովը ,
3 հոկտ . 1827 ին .

Հ . 1828 ին մեծ աքսորն ի՞նչ է , և ի՞նչ
պէս տեղի ունեցաւ :

Պ . Յունաստանի ապստամբութեան ժա-
մանակ , Սութան Մահմետ Եւրոպական
գեսպանները ճամբելով պատերազմ՝ հրա-
տարակեց ընդդէմ Ռուսաց . և որովհետեւ
Բ . Դուռը զիտէր որ Հռովմէական Հայերը
Հայոց հետ շմիաբանեցան , և Եւրոպացւոց
հետ յարաբերութիւն ունին , շուտով հրո-
վարտակ խաւրեց Հայոց Պատրիարքարանը ,
որուն մէջ հետեւեալ պատուեները կ'ը-
նէր . Ա . Բոլոր գաղատացիք իրենց Հայ-
քենիքը . Բ . Հռովմէական կարգաւորներն
յԵւրոպա . Գ . Պօլսեցի Հռովմէականք՝ որոնք
որ չեն հնազանդիր Հայոց Պատրիարքին յԱ-
նատոլու . Դ . Մայրապետները , աքսորուին .
Ե . Հռովմէականք նստին ՚ի Յերա և ՚ի Ղա-
լաթիա և Եւրոպացի գտնուող տեղեր . այլ-
որիշ Հայաբնակ թաղերը բնակին . և որով-
հետեւ նոյն ատեն պատրիարքարանն այրած

էր , Պամաթիա Ս . Դէորգ եկեղեցին հրա-
ւիրուելով բոլոր Լուսաւորչական և Հը-
ռովմէական Հայոց երեւելիներն ու արհես-
տաւորները՝ ՚ի ներկայութեան անոնց հրո-
վարտակը կարդացուեցաւ և 11 օրէն՝ 27
գեկտոեմբեր 1827 ին սկսաւ աքսորը . նախ
Գաղատացիք աքսորեցան իրենց ընտանիք-
ներովը սարսափելի խեղճութեամբ , որոնց
մէջ Լուսաւորչական Հայեր ալ կային , հրո-
վարտակին մէջ լաւ որոշուած չըլլալուն հա-
մար . 27 յունուար 1828 ին Պօլսոյ մէջ տե-
ղափոխութիւններեղան . Յ փետրուար կար-
գաւորութիւններն աքսորուեցան յԵւրոպա . 23
փետրուար մայրապետներն աքսորուեցան ,
30 ը ՚ի Պանտրըմա 11 ը ՚ի Մահայլը . Իսկ
Տիւղեանք , Ալլահվերտեան , Զամշեանք և
ուրիշ երեւելի ընտանիքներ Հայոց Պատրի-
արքին իրաւասութիւնն ընդունելով մնացին
Կ . Պօլսոյ մէջ . նոյն մէջոցին Ո այլ եկեղեցին
Գումագափուի մեծ ու ընդարձակ ձեւով շին-
ուեցաւ . նաեւ Կ . Պօլսոյ մէջ մեծ սով մը կը
տիրէր Օսմաննեանց հետ Ռուսաց ունեցած
պատերազմին պատճառաւ :

Հ . Թրքօ-Ռուսական պատերազմին վախ-
ճանն ի՞նչ եղաւ :

Պ . Ռուսաց բանակը Վրաստանէն անցնե-
լով եկաւ պաշարեց Ախրլցիսա քաղաքը և

սկսան պատերազմիլ. և որովհետեւ քաղաքը դրսէն օգնութիւն չունեցաւ, 30 օր դիմանալէն վերջը բնակիչք յանձնեցին զանի. այս պատերազմին մէջ 25000 մարդ միայն քրիստոնեայներէն ջարդուեցան, քանի մը օրէն ետքը Պայազիտ, կարս, Մուշ և կարին յառաջացան Ռուսք և եկան Բարերդ քաղաքը պաշարեցին. բայց ժողովուրդը դէմ դնելով քաջութեամբ պատերազմեցան, և եօթն անգամ՝ յաղթեցին Ռուսաց, բայց վերջապէս յաղթուեցան. վասն զի Ռուսք քաղաքին ջուրը կարելով հեռացան և երբ Բարերդիք քաղաքէն դուրս յարձակեցան՝ Ռուսք դառնալով սկսան թնդանօթներ արձակել, որով շատ մարդ ջարդուեցաւ. այս պատերազմը 2 տարիի շափ տեւելէն ետքը 7 հոկտեմբեր 1829 ին հաշտութիւն եղաւ. Անգղիոյ և Գաղղիոյ դեսպանները վերադան և երբ Պէջիւք տէրէ դաշտավայրին մէջ Սուլթանի խնջոյք մը կուտային, խնդրեցին Սուլթանէն՝ որ Հռովմէական Հայք աքսորէ աղատուին և զատ Պատրիարքով կառավարուին. Սուլթանն ընդունելով (6 յունուար 1830) վերադան և լատինացւոց եկեղեցին չյաճախելու համար ալ զատ եկեղեցի շինելու հրաման առին իրենց. նոյն տարին նաեւ Նուրիճանեան Անտոն վարդա-

պետ գերապայծառը Պատրիարք Պրկուեցաւ Հռովմէն, բայց Սուլթանը չընդունեց, վասն զի Աւատրիոյ հպատակ էր. ուստի Մանուէլեան Յակոբ վարդապետ Պատրիարք եղաւ, և այսպէս Հռովմէականք սկսան երկու Պատրիարքով կառավարուիլ, մին քաղաքական, և միւսը կրօնական. այս միջոցին 5000 իշտի Հայ տղաքներ Անատոլուի քաղաքներէն կ. Պօլիս բերուեցան, որոնք Թէրսանէին և Իվլիքհանէին մէջ կ'աշխատէին՝ միայն հաց և հանդերձ ընդունելով. կարապետ Պատրիարք 8 տարի ազդը կառավարելէն ետքը հրաժարեցաւ և իրեն յաջորդեց Սուլթանու Աղասինի Պատրիարք։

Հ. Հռովմէական Պատրիարքներն ի՞նչպէս կառավարեցին իրենց ժողովուրդը։

Պ. Նուրիճանն Անտոն՝ որ հոգեւոր Պատրիարք էր, ուղեց Ճիշտ Հայոց եկեղեցւոյ ծիսից և արարովութեանցը համեմատ կառավարել առանց բան մը աւելցնել կամ պակսեցնելու. բայց Ճիշտիթք և Գոլէճեանք հակառակեցան և լատին ծեսերով կ'ուղէին կառավարել զեկեղեցին. ասոր համար մեծ դժութիւն մը ծագեցաւ մէջերնին, և երկուքի բաժնուեցան Արքայեանք և Գոլէճեանք անուններով. Արքայեանք իւնացան ինչ անելանելի լարիւրինդոսի մէջ

իյնալինին, և Նուրիճանին ճարը հատած՝ բդ-
րեց ՚ի Հռովմ Ա. Պապէն կոնդակ բերել
տուաւ, որ Հայոց նախնի արարողաթիւն-
ներն ու ծեսերը անխախտ պահուին և ամե-
նայն կերպով հնազանդին Նուրիճան Պատ-
րիարքի հրամանացը, և անոնք որ Նուրիճա-
նի հակառակ վարուին՝ նզովեալ ըլլան . սա-
կայն Գոյէճնանք գարձեալ իրենց չար նպա-
տակը առաջ տանելու համար՝ ամեն ճիգ
թափեցին և յաջողեցան փոփոխութիւններ
ընել հին տօնացոյցէն, որ Ա. Սահակ, Ա.
Մեսրովկ և ուրիշ Ա. Հայրապետներ նզովե-
լով կը նզովեն Տօնացոյցէն փոփոխութիւն մը
ընողը . որք են Ա. Ծննդեան տօնը առաջ
ընելով սրբոց տօներն ալ փոխուեցան, և Ա.
հաջորդու Եեան գինիին հետ ջուր խառնե-
ցին, Լուսաւորչայ դրութեանը հակառակ,
Ա. Աստուածը առանց խոչեցարի սկսան եր-
գել, Պատարագի մէջ Պապը յիշել, եւայլն.
որով զատ եկեղեցի և զատ ազգ մ'ըլլալով՝
սկսան տաճկերէն խօսիլ, այնպէս որ շատ
մոլեռանդ և զատ տգէտներ Հայերէն խօ-
սելն անգամ մեղք կը համարէին. Հռովմէա-
կան Պատրիարքները ուղեցին որ Բերիացի-
ներն իրենց իշխանութեան տակն առնել.
բայց կառավարութիւնը անսնց ազգայնու-
թեան իրաւունքը ճանչնալով՝ զատ Պատ-

րիարք դրաւ . Յակոբ Մանուէլեան Զ տա-
րի և 8 ամիս պատրիարքութիւն ընելով մե-
ռաւ . իրեն յաջորդ եց Յակոբ վարդ ապետ՝
որ 43 ամիս պատրիարքութիւն ընելով մե-
ռաւ և իրեն յաջորդ եց Վիէննայի միաբա-
նութենէն Սերովբէ վարդապետ :

Հ. Վէղեանի համառօտ վարքն ի՞նչ է :

Պ. Վէղեան Յարութիւն ամիրան բաղմա-
թիւ եկեղեցիներ շինեց, Մայր եկեղեցոյ
ուսումնարանին եկամուտներ պատրաստեց,
Ա. Փրկի վանքը ամեն կարասիներով հաս-
տատեց, Երուսաղէմաց Ա. Գերեզմանին վրայ
Հայոց պատարագ մատուցանելու հրամանն
առաւ և իւր ծախիւքը Պարսկերէն և Հայե-
րէն բառարան մը տպագրել պուաւ . նոյն-
պէս վենեատիկ տպուած մեծ Հայկազեան
բառարանին համար պէտք եղած դրամա-
կան օգնութիւնն ըրաւ և բոլոր օտար աղ-
գաց բրած մեծ բարիքներուն ու տէրու-
թեան հաւատարիմ ծառայելուն մանաւանդ-
թուսաց պատերազմէն վերջը Օսմանեան տէ-
րութեան 11,000,000 վենետիկեան ոսկի
պարտքը վճարելու հնարքը գտաւ, որով
թուալէ Հեմայուա բարձր պատու անշանին ար-
ժանացաւ և անկէ ետքը զրեթէ միշտ Սուլ-
թանին հետ կը տեսնու էր ու հետը շրջելու
բարձր արտօնութիւնը համարձակ կը վայե-
բարձր

էլը . իր հիւանդութեան ատեն Սուլթանին քարձր այցելութիւնը ժամու մը չափ ընդուՆելու պատիւն ունենալէ ետեւ՝ մեռաւ 3 յունուար 1834 ին . արքունի պալատին յատկացած նաւամատցցէն նաւ գրուելով էնիդափու տարուեցաւ և այն տեղ մեծահանդէս յուղարկաւորութեամբ Մայր եկեղեցոյ գաւիթը թաղուեցաւ Սուլթանին հրամանաւ . վասն զի Պօլսոյ բերդաքաղաքին մէջ Սուլթաններէ և խիստ երեւելի փաշաններէ ու անոնց պարագայներէն 'ի զատ մարդ չէր թաղուեր :

Հ. Պէզճեան մեռնելէն ետքը Ստեփանոս Պատրիարք ի՞նչպէս կառավարեց ազգը .

Պ. Ստեփանոսի օրով բազմաթիւ եկեղեցիներ շինուեցան , ինչպէս ճարտարապետ Յովհաննէս ամիրայն 'ի յիշատակ Գրիգոր ամիրայի . Ս. Գրիգոր Լուսաւորիչ անուամբ եկեղեցի մը շինել տուաւ 'ի Գուղկունճու ք . նաեւ թէ յԱնատօլու և թէ կ. Պօլիս շատ թաղերու մէջ վարժարաններ բացուեցան . Անատենի անուանի վարժապետներն էին Փէշտրմալճեան Գրիգոր , Գէորգ պատուելի Տ. Յովհաննէսեան , Պաղտասար պատուելի , Խաչատուր պատուելի , Յարութիւն պատուելի , Թագւոր պատուելի , Գիղիգոյ Պօղոս վարժապետ և Տ. Մեսրոպ քահանայ :

Ճարտարապետ կարապետ և անոր քեռայրը Յովհաննէս ամիրաները մեծ խնամքով գիշեր ցերեկ գպրոցներուն յառաջադրիմութեան համար հոգ կը տանէին , ինչպէս Մայր եկեղեցոյ գպրոցը , Խասդիւղի Ներսիսեան և Օրթագիւղի Վ. Թարգմանչաց վարժարանները . բայց ասոնցմով գոհ չըլլալով գիշերօմիկ վարժարանի մը պէտքն անհրաժեշտ կը զգային . ուստի Պատրիարքին հետ խորհուրդ ընելով Երուսաղէմայ Գարբիէլ Պատրիարքին խնդրեցին որ Խւսկիւտարի մէջ եղած Երուսաղէմատունը Պղգին շնորհէ , և ընդունելով՝ Սէրվէրեան ամիրային ծախիւքը եռայարկ գպրոց մը շինեցին Ճեմարանանուամբ և ամեն թաղի գպրոցներուն յառաջադրէմ աշակերտաց լնտիրներէն 50 էշափ առնելով գործելու սկսան . և որովհետեւ ճեմարանը մեծ ծախիւքի կը կարօտէր , որոշեցին որ տարուէ տարի 120,000 զուրուշ աղքատ տղոց համար Երուսաղէմայ վանքը տայ և հարուստ տղոցմէ տարին 3000 ական զուրուշ առնուի :

Հ. Ստեփանոս Պատրիարքի ատեն ի՞նչ երեւելի գէպք պատահեցաւ :

Պ. Ստեփանոսի օրով Ամերիկայի Միսիոնարք Պօլիս գալով Հայոց հետ խիստ սիրով տեսնուիլ սկսան , միամիտ Հայերը այնքան

մեծ պատիւ և ընդունելու Թիւն կ'ընէին այս
նոր աշխարհին ճիզրիթներուն՝ որ իրենք
անգամ կը զարմանացին Հայոց այս աստիճան
մարդասէր և հիւրասէր ըլլալուն . ասոնք
մամաւոր փարժարան մ'ալ բացած էին,
որպէս զի Հայք անոր նման դպրոց տեսած
չըլլալովին՝ աւելի համարում ունենան ի-
րենց վրայ և Հայ տղաքները իրենց գպրոցը
խաւրեն . ասկայն Հայերը շուտով իմացան
ասոնց նպատակը՝ բաց ՚ի քանի մը ծոյլ և
անգործ անձինքներէ, որոնք առատ ոռօճիկ
առնելուն՝ սկսան անոնց կողմը բռնել . ա-
միրայք Սաեփանոսի թոյլ բարուցը համար
զինքը Պատրիարքութենէ վար առին 8 տարի
ազգը կառավարելէն ետքը և Մ'արզուանու և
Ամասիոյ առաջնորդ Յակոբոս եպիսկոպոսը
Պատրիարք դրին . ասիկայ բաւական ատենէ
՚ի վեր Սաեփանոս Պատրիարքի խորհրդա-
կանն էր, Յակոբոս Պատրիարք ուղելով ազգը
նորազանդ ից տեսութենէն հեռացնել՝ քանի
մը կասկածոտ անձինք՝ որք են թովվաս վար-
դապետ, ֆիզիգայ Պօղոս վարժապետ, Տ. Գէ-
որդ և տիրացու Յովհաննէս աքսորել տուաւ .
Նոյն օրերը մեռաւ Սուլթան Մահմուտ և յա-
ջորդեց իր որդին Սուլթան Մէծիս 18 տարե-
կան, 19 յունիս 1839 . որուն չնորհիւ թան-
գիմաթը հաստատուեցաւ 9 նոյեմբեր 1839 .

Հ. Յակոբոս Պատրիարք ի՞նչպէս կառա-
վարեց ազգը :

Պ. Յակոբոս՝ ժողովրդասէր ըլլալուն, ամի-
րայից բռնութիւնները տեսնելով չէր կրնաք
համբերել, կը փափաքէր որ ժողովուրդն ու
ամիրանները հաւասարեցնէ . բայց ամիրայք
իրենց ամբարտաւանութեամբը շարունակ
ժողովրդեան հետ խստութեամբ կը վար-
ուէին . հետեւաբար ազգիս մէջ երկպառա-
կութիւնը պակաս չէր . ուստի ժողովուրդն
ամիրայից ճանկէն ազատելու և իր իրաւան-
ցը տէր ընելու ճիշտ ատենն էր, չնորհիւ
թանզիմաթի . արդէն սկսեր էին ժողովը-
դէն մէջէն ամիրայից դէմ ատամունք կրճը-
տողներ . վասն զի ծեմարանին բացուած ա-
տեն Յակոբ Պատրիարք ազէկ հոգ կը տա-
նէր և իր ծախիւքը Մարզուանէն և Ամասի-
այէն երկու տղայ բերած էր . նոյնպէս իւ-
րաքանչիւր ամիրայք խոստացած էին տա-
րին 3000 ական զուրուշ՝ մէկ մէկ տղու թո-
շակ վճարել . սակայն զանազան տարածայ-
նութիւններ հանելով և ճարտարապետ ա-
միրայից հետ հակառակելով՝ սկսան չվճա-
րել . ուստի Յակոբոս Պատրիարք այն ստակ-
ներուն տեղը լեցընելու համար, դուրս գա-
ցող Հայերէն Յ ական զուրուշի տուրք մը
սահմանեց ՚ի նպաստ ծեմարանին, և ամիրա-

ներուն ալ որ աւուր վատթարանալը տես-
նելով՝ բոլորն ալ պատրիարքարան հրաւի-
րեց, և առաջարկեց որ պաշտօնական կեր-
պիւ ժողովրդէն յատուկ տուրք մը ժողովի
և այդ ստակին մատակարարութեան համար
ժողովրդին կողմէն 24 հոգաբարձու ընտ-
րուին. ամիրայք հաճութիւն ցրցուցին, հե-
տեւանքը չընալով տեսնել. ուսաի 24 ան-
ձինքն ընտրուեցան, որոնց 2 ը իրենցմէ էր.
Մէրեէմգուլեան Հեթում առենագպիր և
երկու ալ գանձապետներ ընտրուեցան.

Հ. Յակոբոս Պատրիարք ուրիշ ի՞նչ բարե-
կարգութիւններ ըրաւ :

Պ. Ազգային պատրիարքարանի մէջ դա-
տաստանական ժողով մը հաստատեց եկե-
ղեցական և աշխարհական անձինքներէ բաղ-
կացեալ, ընդ նախագահութեամբ պատ-
րիարքական փոխանորդի. նոյնպէս թաղե-
րու մէջ ժողովքներ հաստատել տուաւ, ո-
րոնք պատրիարքարանի հետ յարաբերու-
թիւններ ունէին. առաջին անգամ՝ ժողո-
վրդեան կողմանէ ընտրեալ այս 24 անձին-
քը՝ ազգային ելեւմոից վրայ հսկելու իշ-
խանութիւնն ստացան և ուղեցին որ ամի-
րայից կողմէն 6 հոգի տեսուչ կամ միթէ-
վելի դրուին, որպէս զի ժողովքին ըրած-
ներուն տեղեկանան. ամիրայք այս առա-

ջարկութիւնը չընդունեցին, ըսելով թէ՝ ըզ-
մեզ ձեզի հաւասարեցնել կ'ուզէք. այս խօս-
քին վրայ թէեւ ժողովը ցրուեցաւ, բայց
ամիրայից յօխորտանքն ալ վերջինն եղաւ.
այս միջոցին աղդին գործերն երեսի վրայ
մնացած էին, թաղական դպրոցները ժողո-
վրդեան վրայ մնացած, ամիրայք ձե-
մարանը գոցելու հնարքներ կը մտածէին,
ճարտարապետ ամիրայից հետ թշնամութիւն
ունենալուն համար. վասն զի անոնց առա-
ջարկութեամբը բացուած և աւելի անոնց
խնամօքը առաջ կ'երթար. վերջապէս ամի-
րայք ձեմարանը գոցելու հնարը գտան.
նախ համոզեցին երուսաղէմայ փոխանորդը՝
որ 120000 զրշ տարեկան տուրքը դադիրեցնէ
քիչ մ'ատեն, յետոյ իրենց ծանօթ բարե-
կամներուն թոշակաւոր տղաքները հանել
տուին. ձեմարանը ուրիշ տեղէ եկամուտ մը
չընենալով՝ Պատրիարքը վերստին 'ի ժողով
հրաւիրեց ամիրանները և անհրաժեշտ ազդին
80000 զուրուշ պէտք ունենալն իմացուց.
ամիրանները պատասխանեցին թէ 40000 զու-
րուշ մենք կուտանք 40000 զուրուշն ալ
թող ժողովուրդը վճարէ. ժողովուրդը պատ-
րաստ էր տալու, բայց իրենք՝ ոչ երբէք. ուս-
տի Յակոբոս Պատրիարք յօւսահաստելով հրա-
ժարեցաւ. Զ տարի ազգը կառավարելէն ետքը:

Հ. Ո՞վ յաջորդեց Յակոբոս Պատրիարքին։
 Պ. Երբոր Յակոբոս հրաժարեցաւ Պատրիարքութենէ ժողովրդեան ատելութիւնն ու յուղմունքն աւելի շատցաւ ամիրայից դէմ, անանկ որ մինչեւ Եպարք սախն ականջը հասնելով՝ ամիրաներէն երեք հոգի կանչեց և հարցուց Յակոբոս Պատրիարքին առանց թ. Դիան իմաց տալու հրաժարելուն պատճառը. ամիրաները չգիտնալ ձեւացնելով, խնդրեցին որ ուրիշ Պատրիարքի մ'ընտրութիւնը չնորդէ. Եպարքոսն ընդունեցաւ և առաջարկեց որ եթէ արժանաւոր մէկը կայթող ընտրեն. ուստի անմիջապէս Ստեփանոս նախկին Պատրիարքը կ'առաջարկեն. Եպարքոսն ալ Սուլթանին իմացնելով՝ վերըստին Ստեփանոսը Պատրիարք կը կարգէ, որ խիստ երկշու ըլլալուն՝ ամիրայից շուտով կը խոնարհէր. և իրեն խորհրդական ընտրեցին Պօլոս Եպիսկոպոս. բայց ժողովուրդը չհանդարտեցաւ, վասն զի ձեմարանին ծախքը Սէրվերեան կընալով տանիլ, հրաժարեր էր. տնօրէն Յակոբ Մանուէլ եանն ալ Յ ապրիլ 1841 քննութեան հանդիսի պատճառաւ տղայոց ծնողքն և ուրիշ ուսումնասէր և ճեմարանին բարեկամ անձինք հրաժիրելով ՚ի ճեմարան, ազդու տեղ նարանութեամբ իմացուց ճեմարանին կոր-

ժանման վիճակի մէջ ըլլալը, ասոր վրայ այն տեղ ներկայ եղող ժողովուրդը «Միակամ» անուամբ ընկերութիւն մը կը հաստատեն ճեմարանին հաստատ յարատեւութեանը ամեն ջանք չխնայելու, ուստի կը խնդրեն Պատրիարքէն թէ ճեմարանին յատկացեալ եկամուտներէն բաժնուի, վասն զի ամիրաները Յակոբ Պատրիարքին սահմանած մնցագրատան Յ ական զուրուշ տուրքը Փրկչի վանուց յատկացուցէր էին, ճեմարանը շուտով գոցուելու համար Պատրիարքարանը ընկերութեան ձայնին ականջ չ'կախեց։

Հ. Ստեփանոս Պատրիարքի օրով լինչ երեւելի գործ պատահեցաւ։

Պ. Միակամ, անուամբ ընկերութիւնը երբ տեսաւ որ Պատրիարքարանը ամիրայից աղդեցութեամբը իրենց ականջկախեց, ճեմարանի աշակերտք Թօհափճի Եղիազար անուն չայու մը առաջնորդութեամբ Քաղաքանի աղերսագիր կուտան Սուլթանին, ճեմարանին յարատեւութեանը համար, ասոր վրայ Պատրիարքը զայրացած այս գործին գլուխ կեցողներէն մէկ քանիները կանչելով կը յանդիմանէ, բայց անոնք բանի տեղ չդնելով այն սաստը, երթալով գործը կը սաստկանայ, ամիրայք կը խնդան ժողովրդեան վրայ, ուս-

տի բոլոր ժողովուրդը ոտք ելած , դարձեալ
աղերսագիր կուտան Սուլթանին , աղաւելով
որ Ազգային ելեւմտական գործերը ժողո-
վրդեան կողմէն ընարեալ 24 անձանց ձե-
ռօք տեսնուի և այն 24ները Բ. Դուռը վա-
ւերացընէ . Սուլթանը կը հրամայէ որ ժողո-
վրդեան դատը տեսնուի , ուստի արհես-
տաւորաց զլխաւորներէն արդարութեան ա-
տենին մէջ դատ վարելով վերջապէս ստա-
ցան իրենց ուղածը , անանկ որ ամիրաներն
ամենեւին գործի չպիտի խառնուին , իւրա-
քանչիւր էաւածի իր մէջէն պիտի ընտրէ և էա-
ւածին վկայականով պիտի դայ Պատրիար-
քարան և ասոնցմով պիտի ընտրուին 24 ները
ու բոլոր Ազգային գործոց տեսչութիւնը վա-
րեն . և ահա այս անդամ ժողովրդեան կողմէն
վարչութիւն մը կը սահմանուի որ Հայոց Աղ-
պին ծնունդէն 'ի վեր տեսնուած ու լսուած
բան չէր , նախատինք մ'էր այդ ամիրայից ,
ուստի ամեն հնար ՚ի գործ դրին և Բ. Դուռէն
եկած Պայտաւուան անդործադրելի թողուցին
ժողովը անհամբեր կերպիւ ֆերմանէ կսպասէր ,
որ հաշիւ պահանջէր , 2 ամիսն անցաւ և
դեռ ֆերման չեկաւ , այս միջոցին ճեմարա-
նը գոյուեցաւ և ամիրայք իրենց վրէմն ա-
ռած սեպեցին ճարտարապետ ամիրաներէն ,
ուստի օդոսուս 24 ին ժողովուրդը վերստին

աղերսագիր կուտայ Սուլթանին Զէնին ուր-
աբէն դարձած ատեն , Սուլթանը կը հրա-
մայէ որ Հայոց ազգին դատը շուտով և
անմիջապէս տեսնուի , Բ. Դուռը օդոսուս
24 ին աղերսագիր առողջը կը փնտոէ որ գի-
նեպան խակէնաէրն և 24 անձինք էին . երբ
ժողովուրդը կիմանայ աղերսագիր առողջե-
րուն փնտուիլը 3000 էն աւելի անձինք
շուկան խանութին գոյելով գինեպան խա-
կէնտէրի առաջնորդութեամբ Բ. Դուռը կը
դիմեն . այն տեղ ներկայ եղող 24 անձերէն
16 ըրանտարկուեր էին և երբ խակէնտէրն ալ
կուղեն բանտարկել , ժողովուրդը ձայնը կը
քարձրացընէ և կրսկին աղազակել թէ մենք
եմք աղերսագիր առողջը , Ազգն է , ամենքնիս
եմք , ուստի Բ. Դուռը ժողովուրդը քաղցրու-
թեամբ կը համոզէ և բանտարկեալներն ալ
ազատ կ'թողու խոստանալով , նաև իրենց ու-
զածը կատարել , նոյն միջոցին ամիրայից կողմն
եղող Ալմունեան Պետրոս վաս վարդապետը
արտաքին գործոց պաշտօնէին դիմելով պա-
րագլխոց գլխատուիլը և ոմանց ալ աքսորուիլը
կը իմուգիէ , բայց կառավարութիւնը կը մեր-
ժէ անոր առաջարկութիւնը , միայն օդոս-
տոս 24 ի գէպքն անխոնէմաքար յանցանք
ՇԱՀԱԼ 24 ներուն խմացնելով՝ և իրենք եւս
խոստանալով՝ սեպտեմբեր 17 ին կաքսորուին

Հետեւեալ անձինքը . Յովիշաննէս վարդապետ Սեթեան , Գրիգոր Տիմիթեան , Յակոբ Մանուէլեան , Յարութիւն Յովիշաննէսեան , Անդրէաս ոսկերիչ , մահտեսի Պետրոս պատմաճի , նոյն օրը ժողովրդեան կողմանէ Բ. Գուռը կերթան Պօղոս վարդապետ , Միշանճի Մտեփան և ուրիշներ , աքսորին դէմ բողոքելու համար , անոնք ալ կաքսորուին , և Պատրիարքն ու ամիրաները Բ. Գուռը կանչուելով ժողովուրդը խաղաղեցնելու համար Մտեփանու երկրորդ անգամ և տարի Պատրիարքութիւն ընելն ետքը՝ հրաժարեցնելով՝ Աստուածատուր եպիսկոպոսը Պատրիարք կը կարդեն , բայց ոչ ժողովրդեան հաճութեամբը , 43 սեպտեմբեր 1841 ին . նոյն օրերը Սամաթիոյ Հայոց Պատրիարքարանը այլեցաւ :

Հ. Աստուածատուր Պատրիարքը ի՞նչպէս կառավարեց Ազգը :

Պ. Ամիրայք կարծելով որ ալ ժողովուրդը հանդարտած է , դարձեալ մկան առջի ընթացքը շարունակել . սակայն ժողովուրդը քահանաներով հանդերձ դարձեալ և չորրորդ անգամ , ճաշականները լցուած աղերսագիր կուտան Սուլթանին , ըսելով թէ մենք Տէրութեան հրամանաց անհնազանդ չեմք բայց ամիրայից ալ գերին չեմք , և թէպէտ նոյն

օրն ամենքնալ կը բանտարկուին , բայց գիշերը ազատութիւն կըստանան իրենց տունը երթալու , Բ. Գուռը 'ի չնորհս ամիրայից գարձեալ յերկարաձգել կըսկսի ժողովրդեան բողոքը , ուստի ժողովուրդն առաւել եւս վայրացած միանալով՝ երդում ըրին թէ ինչ որ պատահի բանտ , աքսոր , մահ՝ տանիլեւ ամիրայից կամացը չհնազանդիլ . այս երդումն ամիրաները զարհուրեցուց , ուստի Աստուածատուր Պատրիարք , Տատեան Յովիշաննէս , և Արզումանեան Արզուման ամիրաները , ժողովրդեան գլխաւորները Վէզիր խան 'ի ժողով հրաւիրելով , կը համոզեն կը խոստանան որ ժողովրդեան կամացը պիսի հնազանդին և այսպէս կը խաղաղեցնեն ժողովուրդը , և Բ. Գուռը Պատրիարքարաննէն տեղեկանալով ժողովրդեան իրաւացի և արդար խընդըոյն , հրովարտակալ կը հաստատէ 12 դեկտեմբեր 1841 արհեստաւորներէն 27 անձինք Ազգային գործերու մատակարարութեանը համար և Պատրիարքարաննէն ու ամիրաներէն ստորագրութիւն կառնէ Ազգային գործերու չխառնուելու համար , ուստի ժողովրդական վարչութիւնը աւելի ոյժ առնելով հաստատուեցաւ . բայց տարիէ մը վերջը ժողովրդական վարչութիւնը ձանձրանալով չորս կողմէն ելած խոչնդուներէն՝ հրա-

ժարական տուաւ Բ. Դրան, որով 13 նոյեմբեր 1842 վերստին ամիրայից յանձնուեցաւ Ազգային վարչութիւնը :

Հ. Ամիրայք ի՞նչպէս կառավարեցին Ազգը :

Պ. Ամիրայք ալ չկրնալով առաջուան պէս ժողովուրդը կառավարել, ուրիշ ճար մը մտածեցին. նախ ժողովրդեան հետ հաշտուիլ, այս ալ անկարելի էր, ուստի Երկանեան ամիրային նախադահութեամբը ամիրայից ժողով մը գումարուեցաւ և այն տեղ՝ Երկանեան՝ Ազգին թշուառութիւնը մի առ մի բացատրելով՝ յայտնեց որ Պատրիարքաց անհագութիւնն է պատճառը, ուստի ժողովքը միաբանութեամբ որոշեց որ ժողովքին կողմանէ Պատրիարքին հրաժարականն ուզուի, և երկու ամիրայք քաղաքավարութեամբ Պատրիարքին ներկայանալով հրաժարականը կը խնդրեն, և որովհետեւ ձանձրացած էր Պատրիարքքը Ազգային Երկարաւակութենէն, անձնական տկարութիւն պատճառելով, հրաժարականը գրեց Բ. Դուռը 4 տարի Պատրիարքութիւն ընելէն ետքը, և Պատրիարք եղաւ Մատթէոս եպիսկոպոս առաջնորդ Զմիւռնոց ժողովրդասէր և ուսումնասէր անձը 1 յունիս 1844 ին, որ ժողովրդեան սիրելին ըլլալով՝ իր ազդու ատենաբանութիւններովն ու համոզիչ խօսքերովը ժողովուրդն ամիրայից

հետ հաշտեցուց, և 30 հոգիէ բազկացեալ վարչութեան ժողով մը կազմեց, որուն 16 ը ամիրաներէն և 14 ը ժողովրդէն էին, այս միջոցին թէպէտ ամեն թաղ սկսեր էր իր գարոցներուն յառաջադիմութեանը համար աշխատիլ, բայց ասոնց մէջ ամենէն փայլունն ու յառաջադէմը Սամաթիոյ Ա. Սահակեան փարժարանն էր որ ընկերութեան մը արդեամբք կը կառավարուէր . Փափազեան Անդրանիկ և Ղաղարոսեան Քրիստոսուր հաստատամիտ և ամեն կողմէ եկած խոչնդուներու համբերելով յաղթող անձանց մատակարարութեամբը, նոյնպէս Ներսիսեան վարժարանը, բայց այս ձէզայիրլեան Մկրտիչ ամիրայի ինամօք . այս ատենները վերստին սկսու միայն Էջմիածնոյ կաթուղիկոսին յիշատակութիւնը Պօլսոյ եկեղեցիներուն մէջ, վասն զի 1828 թուաց պատերազմին համար գագրած էր Բ. Դրան հրամանաւ թէ կաթուղիկոսին յիշատակութիւնը և թէ նուիրակաց գտլուստը :

Հ. Ներսէս կաթուղիկոսի վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Երբ Ա. Էջմիածնայ կարբեցի Յովհաննէս ընդհանուր կաթուղիկոսը մեռաւ, իւրեն յաջորդեց Ներսէս Ե. Աշտարակեցի որ խոհեմ, հեռատես, Ազգասէր և ուսումնա-

սէր անձ մ'էր, գեռ եպիսկոպոս չեղած քաշնիցս անդամ բողոքած էր նախորդ վախճան եալ Յովհաննէս կաթուղիկոսին Պալամեն եան շինել և ինքն ստորագրելուն համար, նաեւ շատ անդամ աղաւելով ստիպած էր զինքը՝ որ ստորագրութիւնը յետս կոչէ, բայց Յովհաննէս կաթուղիկոսն անպատութիւն կը համարէր յետս կոչումը, և երբ Ներսէս՝ կաթուղիկոս ընտրեցաւ, Ո.ուսաց կայսրը չնորհաւորելով կաթուղիկոսը հրաւիրեց 'ի Բետրապուրի, այն տեղը նախ կայսրը այցելութեան կուգայ կաթողիկոսին. Ներսէս կաթողիկոս խօսակցութեան միջոցին կը յիշեցընէ կայսեր, Բասքելիչ զօրապետին աղաւշանքներէն յորդորելով Փալակաց արշաւանքի առեն Հայոց Ազգին կայսրութեան փառքին համար թափած արիւնը և իրեն՝ Հայոց Ազգին ու եկեղեցւոյն ազատութեանը համար տուած ստորագրութիւնը քովը իրը սրբադան մասունք պահած ըլլալը, կայսրը կը պատասխանէ, թէ ես հաստատ եմ իմ իսմ խոստմանս վրայ՝ որ յանուն Աստուծոյ ստորագրեցի և շեմ ուղեր ձեր Ազգին պարտական մնալ՝ որ այնշափ արիւն թափեց կայսրութեան փառքին համար, բայց այժմեան քալաքականութիւնը չներեր, ուստի պէտք է համբերել մինչեւ որ Աստուծ ինքը տնօրինէ. և հե-

տեւեալ օրը երբ փոխադարձ այցելութեան կերթայ Ս. կաթուղիկոսը առ կայսեր, խօսիցութեան միջոցին կայսրը Հայ և Ո.ուս եկեղեցեաց միութիւնը կառաջարկէ, կաթուղիկոսը պատասխանելով կըսէ, Տէր գուք միութիւն կուզէք, բայց ի՞նչ եղանակաւ, հի՞նը նորին հետ թէ նորը հինին, ո՞րն է արդարը, ձեր դատովութեանը կը յանձնեմ։ Ուրիշ օր մ'ալ երբ կը տեսնուին, կայսրը կառաջարկէ որ վեղարին ձեւը փոխէ, և Ո.ուսաց հոգեւորը Մինչեւմն ձեւովը գնէ, կաթուղիկոսը կը պատասխանէ, Տէր, երբ Զմիւռին Ս. Սաեփանոս եկեղեցւոյն մէջ վարդապետ կը ձեռնադրուէի, Քրիստոսի խաչելութեան առջին ուխտեցի որ այս ձեւ վեղարով գերեզման իջնամ, ուստի Աստուծոյ առ ջեւ որ ուխտած եմ, ի՞նչպէս կընամուխտադրել 'ի նորհս մարդկան. և երբոր կայսրը այս խօսքերը կը լսէ, հիանալով կը գովիզ զանի և կը հրամայէ աղամանդեայ խաչ կըել վեղարին վրայ։

Հ. Մատթէոս Պատրիարքի օրով ի՞նչ երեւելի գէպքեր պատահեցան.

Պ. 1845 ին ապրիլ 3 ին Հռովմէական Հայոց աշխարհական պատրիարքը մեռնելով տեղը յաջորդեց Անտօն վարդապետ Հասունեան, Մատթէոս Պատրիարք չնորհաւորութեան.

խաւրեց երկու հոգի իր կողմէն, և այս առաջինն եղաւ Հայոց և Հռովմէականաց մէկ զմէկու այցելութեւնը . Բ. Դրան հրամանաւ Հայ եկեղեցականաց գլխարկները փոխուեցն . և երբ Պատրիարքներուն Միւսթէշարութեան շքանշան տրուեցաւ Բ. Դունէն, Հասունեան Անտօն չնորհաւորելու եկաւ ըզ Մատթէոս Պատրիարքը . նոյն օրերը Ռուսաց կոստանդիանոս մեծ Դուքսը Պոլիս գալով այցելութեան եկաւ Մատթէոս Պատրիարքին, ընկերութեամբ արտաքին գործոց պաշտօնեայ Ծիփաթ բաշային, Ռուսաց գեսպանին և Այլազեան Յովհաննէս անուն Ռուսիացի երեւելի պատկերահանին, նոյնպէս Գաղղիոյ թագաւորի օրգին Մօնթբանսիէ Դուքսը այցելութեան եկաւ Մատթէոս Պատրիարքի . Մատթէոս Պատրիարքի օրով Բողոքականաց քարոզիչ Միւսիօնաբները որոնք նախ գպրոց ներ բանալով բաւական Հայ աշակերտաներ առած ձրի Գաղղիարէն Անգղիերէն կուտուցանէին, սկսան կրօնական գիտութեան դաս տալ, աղքատաց ողորմութիւն բաշխել, պարտականներու օգնել, այս կերպով բաւական մարդ որսարով սկսան Հայոց եկեղեցին յայտնի յանդիման նախատել, որով Մատթէոս Պատրիարք չկրնալով հանդուրժել կոնդակներ խաւրեց եկեղեցիները և նզովեց զա-

նոնք . Մատթէոսի օրով դարձեալ վէճ բացուեցաւ Հայոց և Յունաց մէջ Երուսաղէմի Ս. Ծննդեան աաճարին դբան բանալոյն համար . նոյն օրերը Սամաթիոյ Ս. Սահակեան դպրոցին տարեկան քննութեան հանդէսը կատարուեցաւ 'ի ներկայութեան Մատթէոս Պատրիարքի, Ամիրայից, Միթէրճիմ Մէհէմմէտ բաշայի, բժշկապետ Խմայիլ էֆէնտիի, Զէվէր էֆէնտիի, Թէրճիման Ֆոււատ պէյէ էֆէնտիի, և բազմաթիւ ժողովրդեան, ասոր օրով հաստատուեցաւ նաեւ Ազգային վաւերացեալ գործերն ու եղելութիւններն Ազգայնոց հաղորդելու համար Հայաստան անուն լրազիր մը . նոյն օրերը 1859 յունվար 1 Հայկազեան անուամբ ընկերութիւն մ'ալ հաստատուեցաւ, գպրոցներուն աժան գնով դասական գիրքեր մատակարելու նպատակաւ :

Հ. Ամիրայք ի՞նչու թշնամացան Մատթէոս Պատրիարքի հետ,

Պ. Տեսնելով անոր բացարձակ իշխանութիւն վարելը, և միշտ Ազգային յառաջադիմութեան և դպրոցներու զարգացման անդուլաշխատիլը, ամիրաները այս բանը աղէկ աշքով չէին տեսներ, և առաջին յեղափոխութենէն ալ խրատուած ըլլալնուն, ուրիշ միջոյներ կը մտածեն, այն է առաջնորդները

փոխեն . բայց Մատթէոս Պատրիարք համար ձակ խօսելով թէ առաջնորդները գաւառաց ցիք կընտրեն , և Հոդեւոր ժողովը ընտրեալին և ընտրողին արժանաւորութեամբը կը վաւերացնէ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կանոնին համեմատ . ամիրաներն այս լսելով շատեւը հետը կը թշնամանան , բայց նոյն միջոցին ձեզայիրեան Մկրտիչ ամիրան խիստ զօրեղ և պայծառ վիճակ մը ունենալուն կակնածէին , վասն զի զՊատրիարքը կը պաշտպանէր , քիչ ժամանակ ետքը ձեզայիրեան ալ թշնամացաւ . Պատրիարքի հետ , ըստ որում Մատթէոս Պատրիարք տկարութեանը պատճառաւ անոր հօրը մահուան յուղարկաւորութեան հանդէսին չէր դացեր , ուստի ամենը մեկ գալովիխորհուրդ կընեն Պատրիարքը հրաժարեցնելու , բայց ժողովութէն վախնալով կորոշեն որ Պատրիարքին իշխանութիւնը անհմանափակին , Ազգային վարչութեան գործերը երկու ժողովով կառավարուին , և Պատրիարքը առանց ժողովոյ դիտութեանը Բ. Դրան նորութէր չգրէ , ուստի կրծիկեան Յակոբի և ձեզայիրեան Մկրտիչի ձեռամբ թէ շիտ բաշան հաճեցնելով , հրովարտակ մը կը խաւը Սուլթանէն վաւերացած ՚ի Պատրիարքարան Յ մայիս 1847 . Մատթէոս Պատրիարք Եկեղեցականները , ամիրաները և ժո-

զովրդեան գլխաւորները հրաւիրելով՝ հրովարտակը կը կարգայ , որով երկու ժողովը ու ըստելու արտօնութիւնը կը արուեր մէկը 14 եկեղեցականներէ բազկացեալ կրօնական Հոգեւոր անուամբ և միւսը 20 աշխարհական ներէ գերագոյն անուամբ . ասոնց նախագահը Պատրիարքը պիտի ըլլայ և գործադիրն ալ Լէռֆէն անուամբ կրծիկեան Յակոբ . այն տեղ ներկայ եղող ժողովուրդը՝ ժողովոց անդամները կընտրէ և անունները Բ. Դուռը խաւերցին վաւերացունելու համար , միանգամայն պայման դրին՝ որ երկու տարին անգամ մը անդամոց փոփոխութիւնը ըլլայ և հրովարտակաւ վաւերացուի :

Հ. Ֆէրիէրի ովէ և Բնչ յարաբերութիւն ունեցաւ . Հայոց հետ :

Պ. 1847 մայիս 20 ին Բ. Դանէն ժողովին վաւերացման հրովարտակը գալով , Ազգային գործերը կարգադրել սկսան , բայց ասով ամիրայք ոչ Պատրիարքին և ոչ Ազգին վնասմը տուած եղան , վասն զի Պատրիարքը գետէր որ օր մը ներկայ ժողովին մէջ բազմող ամիրայից տեղ , ժողովուրդն իր ազատ կամքովը ուղած անձը պիտի ընտրէ : Նոյն օրերկ . Պօլիս եկաւ Հռովմայէն Ֆէրիէրի կարդինալը՝ մեծամեծ ընծաններով , և Բ. Դուռը հրաման խաւերց Հայոց և Յունաց Պատրի-

արքներուն՝ որ քաղաքականութեան համար այցելութեան երժան ջէրիէրի, ուստի Մատթէսո Պատրիարք ընկերութեամբ Զամուրծեան պատուելիի, և Աղաթօնեան Մկրտչի՝ այցելութեան կերթայ և փոխադարձ Ֆէրիէրի այցելութիւնը խիստ փառաւոր կիրապիւ կը նունէ. ամիսէ մը վերջը Պատրիարքարանն Հայերէն տպուած կոնդակ մը կուգայ, որուն մէջ Հայոց եկեղեցին հերձուած անուանելով կը հրաւիրէր Հոռվմայ եկեղեցւոյն դիրկը մտնել. Մատթէսո Պատրիարք՝ Տատեան և Պալեան ամիրաներուն դիմելով կը ինդրէ որ Բ. Դրան իմացունեն այս նախատինքը, բայց անոնք փոխանակ Բ. Դրան իմաց տալու՝ Փէշշէկթաշ իրենց տունը կը հրաւիրեն զֆէրիէրի և կը ինդրէն ցոյց տալ, Հայոց եկեղեցւոյն մոլորութիւնները, հոն կը դմոնուի նաեւ Մատթէսո Պատրիարք և Զամուրծեան պատուելին. Ֆէրիէրի կըսկսի ոչինչ փաստերով ապացուցանել, բայց Մատթէսո Պատրիարք ամէնը ջրելին ետքը՝ Հայոց եկեղեցւոյն հաստատութեան օրէն մինչեւ այսօր անարաս և անխախտ մնալն, և Հոռվմայ եկեղեցւոյն քանի քանի անդամ փոփոխութիւն կրելը կապացուցանէ. և նոյն օրը ժամանակը չներելուն, կորոշուի որ Բ. անդամ մ'ալ խօսակցին այս նիւթին վրայ, արդ 1848 յունվար 29

Ֆէրիէրի Պատրիարքան գալով կրծիկեան Յակոբ և Զամուրծեանի հետ երկար ատեն տեսնուելով, կըրթայ և երկու օրէն Լատին քահանայի մը ձեռուք Զամուրծեան պատուելին կը հրաւիրուի Ֆէրիէրի կարգինալէ. Զամուրծեան պատուելին երթալով, կըսկսին դարձեալ Հայոց եկեղեցւոյն ուղղափառութեանը վրայ խօսիլ և Զամուրծեան կը հաստատէ և կը համոզէ թէ Հայ եկեղեցին ուղղափառէ և ուղղափառ պիտի մնայ միշտ. Հ. Հասուն Անտոն՝ Ֆէրիէրի Հայոց Պատրիարքին հետ տեսնուելով երբ լսեց, ի՞նչ ընթացք բռնեց :

Պ. Անմիջապէս իր համախոհներովը Փէս Նազըրինին տունը ժողովեցան նոյն գիշերը, հրաւիրուեցաւ նաեւ Ֆէրիէրի կարգինալն ալ և ընթրիքէն վերջը Հայոց վրայ խօսք բացուելով, Ֆէրիէրի ըասւ թէ Հայոց վրայ հերետիկոսական ամեննեւին կասկած մը չտեսնելուս համար Ա. գահին առջեւ պիտի վկայեմ. այս խօսքէն, ներկայ եղող ժողովականք ամենը մէկէն կըսկսին մեզագրել զֆէրիէրի, ըսելով թէ արդարեւ, Գերապայշտառ տէր, դուք շատ միամիտ էք եղեր որ Հայոց շարամութիւնը չկրցիք հասկեալ, Հայերը ինչպէս կը դաւանին՝ այնպէս չեն հաւատար, և դուք ձեր միամութեամբը խարուած էք

անոնց խօսքերուն, անոնք անհաշտելի թշնամի են Հռովմայ գահուն, մենք որ 20 տարի է շարունակ կաշխատիմք Հռովմայ գահուն անխաղութեանը համար, և դուք որ հիմայ սխալական երեւցուցիք հերետիկոսաց, պիտի բողոքեմք ձեզի համար առ Ա. գահն Հռովմայ, եւայլն. և այնչափ կընեն՝ որ Ֆէրիէրի կը խօսուանայ իր խօսքը յետս կոչել, և երբ կրկին տեսութեան կուգայ ջատեաններուն առւնը յատեֆանայ, հոն կը գանուինաեւ Մաաթէոս Պատրիարք և ընթրիքի ամեն ջատեան Գարեգին՝ միութեան վրայ ատենաբանութիւն կընէ, որու վրայ շատուրախ կըլլայ Ֆէրիէրի, յետոյ երբ դարձեալ միութեան վրայ խօսք կը բացուի, Ֆէրիէրի կը պատասխանէ, ես շատերէն իմացայ որ Հայերը ինչպէս որ կը դաւանին՝ նոյնպէս չեն հաւատար, ուստի ես ալ կը կասկածիմ թէ ըլլայ որ անխոհեմութեամբ սխալ դատած ըլլամ, ես Ա. գահին Հայոց համար ոչ աղէկ և ոչ գէշ բան մը պիտի կրնամ վիայել. Մատթէոս Պատրիարք իմանալով որ Հասունեանք համօքեր են զիէրիէրի, առանց բան մը արտասանելու իր հրաժարական ողջոյնը տալով կը հեռանայ, նոյնպէս և Ֆէրիէրի. Նոյն օրեւը « Համազգեաց » անուամբ ընկերութիւն մը հաստատուեցաւ :

Հ. Համազգեաց ընկերութիւն կազմովներն որո՞նք էին :

Պ. Հռովմէական Հայոց ազգասէր և ուսումնակեր երիտասարդները լուսաւորչական Հայոց հետ խորհրդակցելով, ու զեցին ուսումնական վերակենագանութիւն մը տալ ազգին, ամեն գաւառ և գիւղերու մէջ գալրոցներ բանալ, երկրագործութիւնը ծաղկեցնել և Ազգային հընութիւններու թանգարանը հաստատել, այս ընկերութիւնը կազմեցին՝ որուն կանոնագրութիւնը Մխիթարեան միաբանութեանէն Հ. Պետրոս վարդապետը խմբադրեց, քիչ միջոցի մէջ ընկերութիւնը այնքան ընդուրածակեցաւ՝ որ անդամոց թիւը 600 ի կը հասնէր. երբ Հասուն՝ Համազգեաց ընկերութեան քիչ ատենի մէջ այսչափ յառաջանալին ու ընդարձակութիւլ տեսաւ, հեռատեսութեամբն իր միապետական ազագայ իշխանութեան նուանամանալը նշմարելով՝ անմիջապէս իր արքանեակներովն ու համախոհներովն ընկերութիւնը կործանելու միջոցները սկսաւ խորհիլ, նախ ժողովուրդը համոզեց՝ լսելով թէ Հռովմէական Ա. կրօնին գէմէ հերետիկան Հայոց հետ ընկերութիւն կազմել և հոգեւոր սիրով հազօրդակցիլը, և թէ չեմք կրնալ արձակում և հազորդութիւն

տալ ձեզ մինչեւ որ այդպիսի վկասակար ըն-
կերութենէ մը՝ զղալով ետ չկենաք, քանզի
այս ընկերութիւնը չէթէ միայն ձեզ հոգւոյն
և մարմնոյն վկասէ, այլ մեծ անարդութիւնէ
Ս. դահին, Հասուն միայն ասով ալ դո՞ւ շը-
լալով իր կամացը համեմատ Հռովմ գրեց և
կրնդակ բերել տուաւ, վերջապէս ամեն ճիգ
թափեց ընկերութիւնը կործանելու և յաջո-
ղեցաւ, թէպէտ ընկերութիւնը շատ ընդ-
դիմացաւ, բողոքեց 'ի Հռովմ, բողոքեց նաեւ
Բ. Դրան բայց անլսելի եղաւ. ուստի հիմ-
նադիրք ալ 'ի նախատինս Հասունի՛ քարու-
կիր տուն մը շինել տուին, « Համազգեաց ըն-
կերութեան կեդրոն » անուանելով, որ դեռ
կեցած է. այսօպի թշուաւութեան և Հա-
սունին ամեն մեքենաներուն անվեհեր դէմ
դողները՝ ըստ մեծի մասին Մուրատեան և
Ռաֆայէլեան դպրոցներուն աշակերտներն
էին :

Հ. Մուրատեան և Ռաֆայէլեան վարժա-
րաններն ով բացած է և ուր են.

Պ. Պարսկաստանի Հայերը վաճառականու-
թեան պատճառաւ Հնդկաստան՝ այն ամե-
նահարուսաւ երկիրը դիմելով գաղթականու-
թիւն մը կազմեցին հօն և իրենց ճարտա-
րութիւններնուն ու յաջողակութիւններնուն
համար, երկրին թագաւորներն ալ մեծ

Յարդասիրութիւն կը ցուցընեն, ամեն տե-
սակ ազատութիւններ կուտան, Հայք այն-
տեղ մեծամեծ պաշտօններու կը հասնին, մեծ-
ազդեցութիւն կունենան, և իրենց առեւ-
տրական յաջողակութեամբը գրեթէ բոլոր
երկրին տէր կըլլան: Երբ Անդղիացիք Հընդ-
կաստան արշաւեցին Հայք աւելի յաջողու-
թիւն գտնալու յուսով, Անդղիացւոց կօգ-
նեն. բայց յոյսերնին 'ի թերեւ ենելէ 'ի
զատ ուր որ Անդղիացւոց ձեռքն անցաւ,
այն տեղի վաճառականութիւնն ալ Հայոց
ձեռքէն ելաւ. ասոնց մէջէն երեւելի ե-
ղաւ Մատրացի Սամուէլ Մուրատ ազգասէր
և ուսումնասէր վաճառականը՝ որ մեծ գու-
մար մը կտակ ըրած է Հայոց Ազգին աղքատ
տղայոց համար վարժարան մը բանալ և ձրի
դաստիարակել, վարժարանին միայն ուսում-
նական մատակարարութիւնը Միսիթարեան
Հարց յանձնելով. այս վարժարանը՝ նախ 'ի Բա-
տուա բացուեցաւ և յետոյ 'ի Փարիզ, Մո-
քարտէան Հարժարան անուամբ. նոյնպէս Հնդկաս-
տանցի Ռաֆայէլ Փարազամեան Հայ վաճա-
ռականը մեծ գումար մը կտակած է որ վէ-
նէտիկի մէջ վարժարան մը բացուի, այս ալ
առաջինին պայմաններովը, Ռուֆայէլան Հարժարա-
նանուամբ, բայց ցաւ է մեղ որ՝ Միսիթար-
եանք յիշեալ բարերարներուն կամացը հա-

մեմատ՝ անխստիր Հայ աղքատ պատանեաց
շն վայլեցներ այն մեծ չնորհքը, բայց միայն
Հոռովմէական Հայոց, և այն ալ թոշակաւ:

Հ. Հնդկաստանի Հայոց վրայ ուրիշ ի՞նչ
գիտելիք կայ:

Պ. Թէեւ Հնդկաստանի Հայ գաղթակա-
նութիւնը շատ պլոտիկ, բայց իրենց վաճա-
ռականութեամբը բոլոր երեւելի քաղաքաց
մէջ տարածուած է ինչպէս Պօմզա, Կալկա-
թա, Մատրաս, Պամակիա, Սինկափոր,
Եւայլն, և ինչպէս Վաճառականութեամբ նոյն
քաղաքներուն մէջ երեւելի նոյնպէս ազգասի-
րութեամբ ամբողջ Հայոց մէջ երեւելի եղած
են, իրենց մէջ երեւելի ընկերութիւններ ու-
նին, որոց մէկն է Արտառուն ընկերութիւնը,
Կալկաթայի մէջ առարտն մ'ունի և բաւական
գրքեր տպած է, 1850 ին Մարտառիսկան ան-
ուամբ ճեմարան մ' ալ կառուցած է և Արէու-
ուր անուամբ հմտալիք օրագիր մը կը հրատա-
րակուէր, Մէսրովպ Թալեադեանցի խմբագ-
րութեամբ՝ այս ուսումնական անձը ուրիշ
շատ հեղինակութիւններ ալ ունի. Հնդկաս-
տանի մէջ երեւելի եղած է նաեւ Ցիկին Մա-
րիամ Յակոբէան որ իր ծախիւքը մօտ ատեն-
ներս աղջկանց պարմարան մը հիմնած է ՚ի
Հնդկաստան, բայց ցաւ է մեզ որ օրինաւոր
առաջնորդներ չունենալովսիս, թէ Հնդկաս-

տանի և թէ Լեհաստանի Հայութիւնը որ ա-
ւուր ոչնչանալու վրայ է. թէպէտեւ մերթ
ընդ մերթ Հնդկաստանէն նամակներ կը տես-
նեմք լրագրաց մէջ բայց Լեհաստանէն և
միւս Եւրոպական քաղաքներու մէջ գտնուող
Հայերէն ոչ ոք ծանօթութիւն ունին:

Հ. Մատթէոսի Պատրիարքութիւնը որչափ
տեւեց :

Պ. Ամիրայք, որ վարժուած էին ուզած ա-
տենին Պատրիարքներն ու առաջնորդները
փոխել, Մատթէոս Պատրիարքի ալ կու-
զէին նոյն ընթացքը բունել, բայց ժողո-
վըրդէն ակնածելովիսին բան մը չէին կրնար.
Նոյն օրերը ձանիկ ամիրայի Քոյրը կը մեռնի,
Պատրիարքը՝ յուղարկաւորութեան հան-
գիսին անձնական ակարութեանը պատճա-
ռաւ ներկայ զանուելուն՝ ձանիկ ամիրայ
կը թշնամնայ Պատրիարքին հետ. Նոյնպէս
կը թշնամնայ Միսակ ամիրայ որ Բերայի ե-
կեղեցւոյն կալուածներէն մին, ուր վերջերն
Արեւելեան թատրոնը կանդնեցին, կուզէր
Գայիհանեանց դպրոցի շնութեանը համար
տուած ստակին փոխարէն առնել, ուստի
Մատթէոսի 25000 զուրուշի արժողութեամբ
սամուռենի մուշտակ մը կը խաւրէ, Պատրի-
արքը չընդունիր. և անմիջապէս Բերայի ե-
կեղեցւոյն Տ. Զաքարիա քահանան կանչելով

կիմացընէ , այն ալ ժողովրդեան իմացնելով
եկեղեցւոյն հետեւ վելուն կառանուի և Սիսակէն կառա-
նուի և Տատեան Պօղոսի կը յանձնուի . ա-
սոր վրայ ամիրայից մէջ Պատրիարքին թշնա-
միները շատնալով՝ ժողովին կողմէն երկու
անգամ հրաժարականը կուզուի . Մատթէոս
ես ժողովրդեան ձայնովը Պատրիարք եղած
եմ և միայն ժողովրդեան ձայնովը կը հրա-
ժարիմ , կը պատախանէ . ամիրայք տեսնե-
լով որ չպիտի կարենան հրաժարեցնել , կը
համբերեն , և ուրիշ գէպքով մը առիթ կը
դանեն հրաժարեցնելու : Օտեան Պօղոս ա-
միրան Պատրիարքի ձեռամբ 50000 զուրուշ
կը նուիրէ Քարակէօմրիւկի եկեղեցւոյն և
դպրոցին , միանգամայն կաղաչէ որ մարդ
չիմանայ , ձէզայիրեան՝ Պատրիարքին երթա-
լով կուզէ իմանալ նուիրատուին ո՞վ ըլլալը .
Մատթէոս խոստովանութիւն մը ըլլալուն հա-
մար չուզեր յայտնել , ձէզայիրեան կը բար-
կանայ և թէշիտ բաշայի երթալով Պատրիարք
ին հրաժարիլը կը խնդրէ , թէշիտ բաշա
կը ճիշեանի ձեռամբ Պատրիարքին հրաժա-
րականը կը խնդրէ , Մատթէոս Պատրիարք
զզուելով ամիրայից վատ ընթացքէն և հոկ-
տեմբեր 1848 ընդհանուր ժողով կը գումարէ
Մայր եկեղեցին , հրաժարականը կուտայ
տարի Պատրիարքութիւն ընելէն վերջը :

Հ. Մատթէոսի ո՞վ յաջորդեց :
Պ. Մատթէոս Պատրիարքի հրաժարական
տուած օրը ժողովուրդը շատ կը դիմանայ ,
բայց վերջապէս գինեպան Խակէնտէրի առա-
ջարկութեամբը Յակոբոս Նախկին Պատրի-
արքը կը նարուի վերսատին , ժողովրդեան և ա-
միրայից հաճութեամբը . և նոյեմբեր 1848 եւ-
դոկիմայէն գալով կափա Ազգը կառավարել-
Ասոր օրով Ազգն աւելի շարժում ընել սկսաւ
մանաւանդ , գաւառներուն մէջ առ հա-
սարակ հայոց մէջ մտաւորական շորժում կե-
րեւնար : Յակոբ Պատրիարք իր խորհրդա-
կաններովը Ազգին գիշերօմիկ վարժարանի
մը պէտքն անհրաժեշտ զգալով Խոսկիւարի
ճեմարանը վերստին բանալ կուտայ . որով
թաղական դպրոցներուն յառաջադէմ աշա-
կերաները , փոխանակ թոշակաւ օտար աղ-
դաց դպրոցներն յաճախելու , այն տեղ կը
դիմէին . Նոյն տարին նաեւ հէտի գուլէի
Ս. Փրկչի վանուց մէջ նախակը թական դպրոց
մը բացուեցաւ , պանդուխտ , աղքատ , որբ
և անպաշտպան տպայոց համար . բայց քիչ մը
վերջը ճեմարանին ծախուց չկրնալով տոկալ ,
ճեմարանին կահ կարասիքը աշակերտներով
մէկտեղ Ս. Փրկչի վանքը կը փոխադրուի , և
կըսկսի Փրկչեան վարժարանը ծաղկիլ զանա-
զան ուսմանց և լեզուաց դասախոսութիւն-

ներով. ուստի կամուզիկոսը Յակոբ Պատրիարքին ազգասիրական դործերն և Աղքին ուսումնական վերակենդանութիւն տալու համար աշխատութիւններն իմանալով, մեծագին՝ Փրկչին և Աւետարանցաց պատկերով զարդարեալ մարդարտազարդ կոնքեռ մը, և Զմիւռնիոյ եկեղեցւոյն շինութեանը նպաստելու համար 1000 Քօլիմիքէրիալ կը խաւրէ: Նոյն օրերը Երուսաղէմի կիրակոս Պատրիարքը վախճանելով իրեն կը յաջորդէ Զմիւռնացի Յովիննանէս եպիսկոպոս: Նոյնպէս Յակոբ Պատրիարքի օրով 1 յունիս 1832 իրարու հակառակ երկու պարսաւադիրք կը տեսնուի Հայոց եկեղեցւոյն դէմ, որուն մին Հասունեանի կողմէն ԿՄխիթարեանս հերետիկոս, հերձուածող, Հայոց կողմնակից և առ երես Հռովմէական են ըսերով՝ կը բամբասէր. միւսը Միիթարեանց կողմէն, որ Հայոց եկեղեցին հերետիկոս, հերձուածող հրատարակելէն ի զատին քրինքն ալ կատարեալ Գաթոլիկ և ամենաջերմեռանգ ծառայ Հռովմնայ եկեղեցւոյ կը հրատարակէր, որ քիչ շփոթութիւն չպատճառեց Հռովմէական Հայոց մէջ, ասոր համար Հասուն քաղաքական պատրիարքութենէ հրաժարելով սկսաւ միայն հոգեւոր իշխանութիւնը վարել և իրեն յաջորդեց Սէլլեան: Բայց քիչ մը վերջը Սէլլեան

վեանը պատրիարքութիւնը ձգելով, կակոն եան Նիկողայոս վարդապետը աշխարհական Պատրիարք եղաւ 12 նոյեմբեր 1832. Հ. Յակոբ Պատրիարքի օրով ի՞նչ երեւելի գէպք պատահեցաւ: Պ. Կարապետ վարդապետ Շահնաղարեան որ բաւական ատեն Փարիզ հաստատած էր բնակութիւնը, իր երեւելի տաղանդովը և լեզուադիտութեամբը Փարիզի քանի մը երեւելի ընկերութեան անդամը ըլլարով Վապետութեան պատուանշանին կարժանանայ և Նարքուժօն կայսեր հրամանաւ Փարիզի մէջ մատուամը կը հաստատէ Հայաստաննեայց եկեղեցւոյ արարողութեանց ծիսից համեմատ և կոկի Պատարագել, հոն գտնուող Լուսաւորչական Հայերն իրենց պաշտամունքէն չը զրկուելու համար. այս միջոցին Հ. Գարբիէլ Այլվագեան, Հ. Սարգիս Թէոդորեան, Հ. Ամբրոսիոս և Հ. Խորէն Գալֆաեան վարդապետները, կը հրաժարին Վէնետիկոյ Միխիթարեան միաբանութենէն և Հայաստաննեայց սուրբ եկեղեցին կը յարին, ընդունելով անոր ուղղափառութիւնը, և կըսկսին Մամետց Ալլահի անուամբ լրագիր մը հրատարակել. նոյնպէս վարժարան մ' ալ կը բանան Արեւելքան բազար Հարժարան անուամբ և կըսկին դասախոսութեան սոյն վարժարանին մէջ ուրկէ բա-

ւական աշակերտներ կը հասցունեն , բայց
քիչ մը վերջը , իրենց մէջ անհամաձայնութիւնն
տիրելով դպրոցը կը գոցուի և աշակերտներն
ալ ցիրուցան կըլլան , որոնք պատճառ կըլ-
լան Ազգին վրայ մեծագումար պարտք մը
ձգել . թէպէտ՝ թէ այս դպրոցին կանգուն
մնալուն՝ և թէ փարիզի Մուրատեան վար-
ժարանը ամբողջ Հայ ազգին աղքատ տղայքը
սոյն յարկին մէջ դաստիարակուելուն համար
եղած կտակը ամբողջապէս զործադրել տա-
լու համար շատ աշխատեցաւ Ազգասէր Հայ
ամիրայ մը , սակայն հոն ալ ճիզուիթութիւնը
մասնաւորապէս մեր ազգին ժամատախոր վե-
րըստին յաղթանակեց . 'Նոյն օրերը 1857 փե-
տրվար 13 վախճանեցաւ Ներսէս ընդհանուր
Հայոց սուրբ Հայրապետը 94 տարեկան հա-
սակին մէջ 14 տարի Հայրապետութիւն ընե-
լէն ետքը , և Ազգը որ մեծ ակնկալութիւններ
ունէր այս սրբազն անձէն իւր յանկարծա-
կան մահուամբը 'ի սուդ ընկղմեցաւ :

Հ. Ներսէս կաթուղիկոսի ով յաջորդեց :
Պ. Այս անգամ ընտրութիւնը Տաճկաստա-
նի եպիսկոպոսաց վրայ ձգուելուն , 1858 ապ-
րիլ ամսոյն մէջ կրօնական և աշխարհական
անձերէ ընդհանուր ժողով գումարուելով
երեք արժանաւոր անձինք կընտրուին , որք
են Յովհաննէս Պատրիարք Երուսաղէմի ,

Մատթէոս նախկին Պատրիարք Կ. Պօլսոյ և
Գէորգ արքեպիսկոպոս առաջնորդ Պրու-
սայու և իրենց կողմէն երկու Տփիսիսեցի իշխաններ երեսփոխան ընտրելով կը խաւրեն Ս. Լշմիածին՝ Տաճկաստանի Հայոց կողմէն
կաթուղիկոսութեան քուէ տալու , և 1858
յունիս 18ին Մատթէոս արքեպիսկոպոսնախ-
կին Պատրիարք Կ. Պօլսոյ ընդհանուր Հայոց
կաթուղիկոս կընարուի . այս ընտրութիւնը
նախ Ռուսաց կայսրը կը վաւերացնէ և դեռ
պահատան միջոցաւ նոյն տարւոյն օգոստոս
11 ին Բ. Դրան կիմացունէ Մատթէոսի ընդ-
հանուր Հայոց կաթուղիկոսութիւնը , և Բ.
Դուռը ընորհաւորելով , կը հրամայէ նաեւ
թէ՝ երբ որ կուղէ կընայ երթալ 'ի Ս. Լշմի-
ածին . նոյն օրէն կըսկսի յիշուիլ նորըն-
տիր Հայրապետին անունը բոլոր եկեղեցեաց
մէջ : Դեկտեմբեր 16 ին Լշմիածնայ կողմէն
Մակար Եպիսկոպոս և երկու վարդապետ
հրաւիրակ կուգան , նոյնպէս 1859 ապրիլ 20
Ռուսաց կայսեր կողմէն հրաւիրակ կուգան
վասեմ . Միքայէլ Լորիս Մէլիքով Հայ զօրա-
պետը իր բանակին օգնական Հայազգի Միքայէլ Միանսարովի հետ , որոնք խիստ մեծ
պատուով ընդունուեցան թէ Ազգին երեւելի
իշխաններէն և թէ ուսումնականներէն : Քա-
նի քանի անգամ կոչունքներ տրուեցան թէ

Բերա թէ Օրթագիւղ և թէ Պէշիկթաշ , բայց
ասոնց ամենը գերազանցեց Բերայի ՕՌւ Տէ
Պէշան անուն օժեւանին կոչունքը . բոլոր Հայ
ուստումնականք ներկայ էին , և մեր Օդոստա-
փառ Սուլթանին և վեհ . կայսեր Ռուսաց
բարեմաղթութիւններ եղան , նոյնպէս Անդ-
լիացւոց գեսպանը իր գեսպանատան մէջ
փառաւառը հացկերոյթ մ" ըրաւ ՚ի պատիւ
վեհ . կաթուգիկոսին և վսեմ . Միքայէլ զօ-
րապետին որուն ներկայ էին Ռուսիոյ , Պէլ-
ճիքայի գեսպանք և Պօղոս պէյ Տատեան :

Հ. Յակոբ Պատրիարքի իշխանութիւնը ո՞ր-
չափ տեւեց :

Գ. Յակոբ Պատրիարք 9 տարի և 9 ամիս
Ազգը կառավարելէն ետքը իր ծերութեանը
պատճառաւ կը հրաժարի 1858 հոկտեմբեր 7
ին թէւ ժողովուրդը մեծ ցաւ կզբայ այնպիսի
ազգասէր և ուսումնասէր հովուէ մը զբկուե-
լուն վրայ , բայց ժողովականք կը վաստահացու-
նեն զժողովուրդը թէ իրեն յաջորդող նոր-
ընտիր Գէորգ Պատրիարքը՝ Յակոբ Պատրի-
արքի ընթացքէն չպիտի շեղի . ասոր օրով
կ. Պօլիս կուգայ Ռուսաց կայսեր եղբայրը
Կոստանդիանոս մեծ Դուքսը , որ ընտանեօք
Ս. Երուսաղէմ դացած և Հայոց Ս. Յակով
քայ վանքին այցելութիւն ընելով՝ Յովհաննէս
Պատրիարքէն շատ սիրով և մեծ սկասուով

կընդունուի . կ. Պօլիս՝ Վեհափառ Հայրապե-
տը ընկերակցութեամբ Գէորգ Պատրիարքի
և Պօղոս պէյ Տատեանի այցելութեան կեր-
թայ և մեծ սիրով կընդունուի . և կը խնդրէ
նաեւ մեծ Դուքսը , որ եթէ կաթուղիկոսը
համելու ըլլայ՝ միատեղ ճամբորդեն ՚ի Ս. Էջ
միածին , և կաթուղիկոսը մեծաւ չնորհա-
կալութեամբ կընդունի այս հրաւէը . Նոյն
պէս Օգոստափառ Սուլթանը վեհ . կաթու-
ղիկոսին երթան իմանալով կը հրաւէրէ իր
պալատը և կաթուղիկոսը մեծ ընդունելու-
թիւն գտնելով կը վերադառնայ յՈրթագիւղ
Ճանիկ ամիրսյի տունը . և հետեւեալ օրը
1859 յունիս 2 ճամբայ կելլան , ուղեկցու-
թեամբ Սարգիս եպիսկոպոս Անդրիանու պօլա-
սեցի և Սարգիս վարդապետ Թէոդորէանի ,
մասնաւոր շողենաւով , որ Նիքոլայէֆէն կոս-
տանգիանոս մեծ Դուքսը բերել տուած էր
վեհ . կաթուղիկոսին համար : Նոյն օրերը Հ.
Պարբիէլ Այվազեան , Պարիզէն Ռուսաստան
կերթայ և կայսեր հրամանաւ առաջնորդ կը
կարգուի Նախնշեւանայ , Պետարապիոյ , և
Ղրիմու , Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ գրու-
թեանը հակառակ : Հ. Պարբիէլ Թէոդորէանի
մէջ գիշերօթիկ վարժարան մը կը բանայ Խո-
վակն առաջարկան անուամբ , Խալիպեան Պ.
Պարութիւնի ծախիւք :

Հ. Գէորգ Պատրիարք ի՞նչպէս կառավաշըց Ազգը :

Պ. Երբոր կաթուղիկոսը ճամբայ ելաւ, Ազգային եկամտից կարգադրութեան և Պատրիարքարանի ու Հիւանդանոցի ծախուց մատակարարութեան դիւրութեանը համար, մանաժողովի մը ձեռամբ կրանոնագրութիւն մը կ'խմբագրուի. Գերագոյն ժողովը կուզէ որ երկու տարի առաջ խմբագրուած կանոնագրութեան յանձնաժողովն նոր խմբագրուած կանոնագրութեան յանձնաժողովին հետ միանալով, կատարեալ կանոնագրութիւն մը խմբագրեն. Օսմանեան Տէրութեան նորհածարտօնութեանց համաձայն, Ազգային իրաւանց և պարտուց բովանդակութիւնն ըլլայ. որուն հիմքը ընդհանուր Հայ Ազգին գաղտնիքուէարկութեամբ ընտրուած երեսփոխանական Ազգային ժողով մը կազմէ, որ կատարելապէս Ազգը ներկայացնէ. այս կանոնագրութիւնը ծնող և ուսումնականաց ուշադրութիւնը գրաւողն, անմահ յիշատակաց արժանի Արքունի ճարտարապետ Նիկողոս Պէյ Պալեան եղաւ, որուն խորհրդական գանուեցան Ռուսինեան, Աղաթօնեան, Օտեան և ուրիշ քանի մը երեւելի ուսումնականներ ։ Գէորգ Պատրիարք թէ սոյն կանոնագրութեան և թէ ուրիշ մէկ քանի Ազգային ինդրոց հա-

կառակ գալուն Գերագոյն ժողովը զանի գահէն վար առաւ 2 տարի և 4 ամիս Պատրիարքութիւն ընելէն ետքը. 1860 ապրիլ 21 ին:

Հ. Գէորգ Պատրիարքին ովլ յաջորդեց :

Պ. Սարգիս եպիսկոպոս Ծնդրիանուազումեցի, որ 1860 մայիս 14 ին ըստ սովորութեան Բ. Դուռը կերթայ և կայսերական հրովարտակաւ Պատրիարքութիւնը կը հաստատուի ։ Նոյն տարին նաեւ մայիս 24 ին ալ ընդհանուր ժողով կը գումարուի, յորում ներկայ կը գտնուին Սարգիս նորընտիր Պատրիարք, Յակոբ նախկին Պատրիարք և ուրիշ բարձրաստիճան եկեղեցականներ. աշխարհական ներէն ցատեան, Պալեան, Երամեան Պէյերը, և ուրիշ պատուաւոր ուսումնականք և բազմաթիւ ժողովուրդ : Այն տեղնոր խըմբագրուած կանոնագրութիւնը ծայրէ ՚ի ծայր կարգացուելով, կը հարցուի եկեղեցականաց թէ, կրօնքի, եկեղեցւոյ ու անոր սուրբ կանոնաց գէմ բան մը կայ, գիտողութիւն մ'ունին, ոչ կը պատասխանեն ամբողջ կրօնականք. թէպէտեւ քննութեան ալ կարօտ չէր, վասն զի Ազգին սիրելի և հաւատարիմ անձինքն էին սոյն կանոնագրութիւնը խմբագրովները. ուստի նոյն օրը ամենքն ալ ստորագրելով Ազգովին կընդունին նոյն կա-

նոնագրութիւնը ԱԶԳԱՅԻՆ ՍՈՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ
անուամբ , որուն հիմնական սկզբունքներն
են :

Ա.

« Ազգին ամեն մէկ անհատը առ Ազգն
» պարտաւորութիւններ ունի , Ազգն ալ իր
» կողմէն առ Ազգային ամեն մէկ անհատ
» պարտաւորութիւններ ունի , գարձեալ ա-
» մեն մէկ անհատ իրաւունքներ ունի Ազգէն
» և Ազգն անհատներէն :

« Այս պարտիքներն որոշող և այս իրաւ-
» ունքները հաստատող իշխանութիւնը Ազ-
» գային վարչութիւն կը կազուի , որում 0ս-
» մանեան Ցէրութեան յատուկ արտօնուց
» թեամբ յանձնեալ է Տաճկաստանի Հայոց
» սերքին գործոց տնօրէնութեան :

Բ.

« Ազգային վարչութիւնը հիմնեալ է իրա-
» ւանց ու պարտուց սկզբունքին վրայ , որ
» արդարութեան սկզբունք է , իր ուժը ձայ-
» նից բազմութեան մէջ կը կայանայ , որ օրի-
» նաւորութեան սկզբունք է . Ամենայն տնօ-
» րէնութիւն Ազգային՝ որ չէ համաձայն սոյն
» սկզբանց , ոչ արդար է և ոչ օրինաւոր :

Գ.

« Ազգն ու Ազգային վարչութիւնը փոխա-
» դարձ պարտիքներով կազուած են իրա-
» ւու հետ :

Դ.

« Ազգայնոց պարտաւորութիւններն է Ազ-
» գին պիտոյիցը պահանջած ծախքերուն
» մասնակից ըլլալ , իւրաքանչիւրն իր կարո-
» ղութեանը չափով , Ազգին խնդրած ծա-
» ռայութեանց յանձնառու ըլլալ , և Ազգա-
» յին վարչութեան ըրած տնօրէնութեանցն
» Ազգասիրաբար հնազանդ իլ :

Ե.

« Ազգային վարչութեան պարտականու-
» թիւնն է Ազգին բարոյական , մտաւորական
» և նիւթական պիտոյիցը հոգ տանիլ , չա-
» յաստանեայց Ա. Եկեղեցւոյ դաւանութիւնն
» ու աւանդութիւններն անխախտ պահել ,
» մարդկութեան հարկաւոր եղած անհրա-
» ժեշտ գիտելեաց ուսումն Ազգին ամեն աս-
» տիճանի թէ մանչ և թէ աղջիկ տղայոց հա-
» ւասարապէս ծաւալել , Ազգային հաստա-

“ տութիւններն պայծառ պահել, Ազգին հա-
“ սոյթներն օրինաւոր կերպով աւելցնել և
“ ծախքերն իմաստութեամբ տնտեսել, Աղ-
“ դին ծառայութեան մշտնշենապէս նուիր-
“ եալ անձանց կացութիւնը լաւցնել և ապա-
“ դան անդորրել, կարուելոց խնամ տանիլ
“ հայրաբար, Ազգայնոց մէջ ծագած փէճերն
“ արդարութեամբ խաղաղել, և վերջապէս
“ Ազգին բարեկարգութեանն և յառաջադի-
“ մութեանը աշխատութիւն չխնայել .

Զ.

« Ահա այս ամեն պարտիքները կատարե-
“ լու և իրաւունքներն ապահովելու դիտմամբ
“ է որ Ազգը հետեւեալ կերպով կը սահմա-
“ նադրէ զնակային գործոց վարչութիւնը ”
Հ. Սարգիս Պատրիարք Էնչակէս կառավա-
րեց Ազգը ”

Պ. թէ Առհմանագրութեան անթերի գոր-
ծադրութեանը համար տուած երդումէն և
թէ 1860 յուլիս 14ի բազոքական Հայու մը
մահուամբը, որ Հայոց գերեզմանատան մէջ
թաղել կուղեին, իր անձը վտանգի մէջ դնե-
լով թէ Եւրոպական տէրութեանց գեսպան-
ներուն և թէ Բ. Դրան առջեւ Ազգին իրա-
ւունքները պաշտպանելով և արիւնհեղու-

թեան առաջքն առնելուն, Ազգին ամենա-
սիրելի պատրիարքն եղաւ, և վեհ. կաթու-
ղիկոսը իմանալով պատրիարքին անձնուի-
րութիւնները Ռուսաց գեսպանին միջոցաւ
ժանկագին մաստանի մը կը խաւրէ , և օգոս-
տոս 23 իր նախագահութեամբը ըստ Սահ-
մանադրութեան ընդհանուր ժողով կը հրա-
ւիրէ . հնմ քուէից բացարձակ առաւելու-
թեամբ կընտրուին 120 երեսափամանք, որուն
Կտենապետ Սէրվիչէն և փոխ. ատենապետ
Մինասեան Մինաս է փէնտիները կընտրուին,
կընտրուին նաեւ ատենադպիր Աղաթոնեան
Մկրտիչ, փոխ. ատենադպիր Խթիւծեան
Կարապետ է փէնտիները, նոյնպէս կընտրուին
նոյն օրը կրօնական ժողովոյ 14 անդամները
և Քաղաքական ժողովոյն 20 անդամները, և
հոկտեմբեր 13ին Ծնտեսական և դատաս-
տանական խորհուրդները կընտրուին . նոյն
օրը Սարգիս պատրիարքին այցելութեան
կուգայ Գաղղիոյ գեսպան Մ. Լավալէթ
Մարքիզը, Սարգիս պատրիարք ալ փոխա-
դարձ այցելութեան երթալով, շատ սիրով
կընդունուի : Նոյեմբեր 18ին առաջին կարգի
Մէճիսիյէ պատուանշանը կընդունի Բ. Դունէն,
և նոյեմբեր 20ին կընտրուին Ռւսումնական
խորհուրդ և Հիւանդանոցին հոգաբարձու-
թիւնը :

Հ. Սարգիս պատրիարքի օրով ի՞նչ գլխաւոր գիտելիք կայ :

Պ. 1860 թուականը Հայոց համար նշանաւոր թուական մ'եղաւ , վասն զի այս օրէն սկսաւ ամեն թաղ ընկերութիւններ հաստատել . բայց գժբաղդաբար խիստ քիչը կանդուն մնաց , ինչպէս Հայկական ընկերութիւնը , վարդանանց ընկերութիւնը , բաժանորդական ընկերութիւնը , բարեգործական ընկերութիւնը , որ Աղգին մէջ երկրագործութեան արհեստը դիւրացնելու և ուսմունքը որբ՝ անտերունջ և աղքատ տղայոց մէջ ծաւալելու համար կազմուեցաւ , և 3000 ի չափ Օսմանեան ոսկի հաւաքելով անդործ կեցած է մինչեւ այսօր . նոյնպէս Անձնուէր ընկերութիւնը կը հաստատուի , հետեւեալ կանոնով որուն հիմնագիրն է գրավաճառ Պ. Յարութիւն Մարդարեան :

ԿԱՆՈՆ

Անձնուէր ընկերութեան անդամ եղող անձը պարտք կը համարի , իրեն բնակած տեղին մօտ բնակող նժդեհ աղդայնոց կարդալ չգիտացող եղբարց տոքը երթալով Աղդէն նուիրուած մէկ մէկ Քերական իր հետը տանելով , ու էն մինչեւ չ գրերը ձրիաբար սովոր

ըեցընել և այն անձին ձեռագրովը անունը գրել տալու շանքը 'ի գործ դնել , առանց փոխարինաբար նուէր մ'ընդունելու , բայց եթէ ուսանողը մեծ ստիպում ընէ ընծայ մը տալու ընկերութեան , անդամ եղողին չվերաբերիր , այլ անիկայ աղդային պաշտպանութեան տակ գտնուող որբ և անտերունջ զաւակաց . արդ այս ընկերութեան անդամ եղողը պիտի ըլլայ ամեն թաղէն չորսական հոգի որոնք կարգաւ մէկ մէկ շաբաթ կիրակի օրերը իրենց պաշտօնը պիտի կատարեն . ըսել է որ՝ չորս կիրակին անդամ մը ամեն մէկ անդամին պարտքն է անպատճառ սովորեցնել , իրենց սեփհականեալ տեղը երթալով որ ընկերութիւնը իրենց պիտի ցուցընէ :

1860 օգոստ . 6

ՄԱՐԴԱՐԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Եւ ահա այս կոկիկ և դիւրըմբռոնելի կանոնով հաստատեալ ընկերութիւնը այսօր Հայաստանի մէջ խիստ քիչ դաւառ պիտի գտնենք որ տարածուած չըլլայ իր անձնուէր պաշտպաններուն չանփւքը :

Նոյնպէս 1860 յուլիս 17 Հռովմէական Հայոց աշխարհական Նիկողայոս պատրիարք կակոնեան կը հրաժարի , ժողովուրդը կուզէ Սահմանադրութիւն մը հաստատել և ըստ

այնմ պատրիարք ընտրել, բայց Հասուն Անտառն երկառակութիւն ձգելով մէջերնին ինք կը յափշտակէ պատրիարքութիւնը.

Այս միջոցին 1860—61 թերայի մէջ Արեւելեան թատրոնը կը բացուի, և այնչափ մեծ համբաւ կ'ստանայ դերասանուհեաց և դերասանաց յաջողակութեամբը որ օտար ազգի դերասանաց նախանձը կը շարժէ, դրեթէ շատ ներկայացման ներկայ կը դանուին, նոյն պէս Եւրոպական տէրութեանց դեսպանները և բազմաթիւ Եւրոպացիք. բայց ափսոն, Հայութիւնը մէկ զգացմամբ ամփոփող սոյն սրբազն յարկը որ ազգասէր Հայուն բաւական մեծ միսիթարութիւն մ'էր ճիզուիթաց մատովն հիմն ՚ի վեր տապալեցաւ, թէ Եւհաստատամիտ և անձնուէր դերասանք մինչեւ ցայսօր կը շարունակեն նախկին դերասան Պ. Յակոբ Վարդովեանի վարչութեան տակ. բայց ցաւօք սրտի կը տեմնենք որ սկզբանական փառաւաւոր վիճակը չունի.

Հ. Սարդսի պատրիարքութիւնը ո՞րչափ տեւեց :

Պ. 1860 դեկտեմբեր 23ին Երուսաղէմայ Յովհաննէս պատրիարքը 75 տարեկան հասակին մէջ կաթուածահար ըլլալով կը վախճանի, միաբանք կուզեն ըստ վաղեմի սովորութեան վանքին միաբաններէն ընտրեն ի-

րենց պատրիարքը և վանքին ելեւմուտը իւրենք զիտնան և հաշիւ չպահանջուի վանքին. բայց Սահմանադրական ընդհանուր ժողովը կուզէ վանքին ելեւմուտը գիտնալ, հաշիւ պահանջել և ըստ Սահմանադրութեան եթէ վանքին միաբաններուն մէջ արժանաւոր մէկը չդանուի դուրսէն պատրիարք մ'ընտրել. այս ինդիրներուն վրայ ժողովուրդը կը յուզի և որովհետեւ Սահմանադրութիւնն ալ տակաւին բաւական թըշնամիներ ունէր, Երուսաղէմայ միաբանից հետմիանալով կըսկսին ազգը խռովիլ, և երկուքի բաժնել, Սահմանադրականք ըստ անուամբ և միւս մասը իւստրեալ անուամբ կորոշուին. այս միջոցին Սահմանադրութեան տարեգարձը կը տօնեն 1861 մայիս 28 Պէկքոյ ՚ի Հիւնքեար խակէլէսի, և լուսաւորեալք խաւարեալք երկար տաեն մէկզմէկ նախատելէ, թշնամանելէ և կուռելէ վերջը Սարդիս պատրիարք խաւարելոց կը յարի, և կջմիածնայ ընդհանրական Հայոց կամուլդիկոսէն եկած կոնդակը որ Երուսաղէմի պատրիարքութեան համար էր, եկեղեցիներուն մէջ ըռնի կաթուացներու համար Բ. Դունէն պատրիարք հանել կուտայ. բայց Մեռն շաբաթամերթ հանդիսին 1861 օգոստոս 21ի յաւելուածովը հոկտեմբեր 15ին ժողովուրդը

Եէնի գարուի եկեղեցին կը դիմէ կոնդակը չը կարդացուելու և պատրիարքին անունը Ս. Պատարագի ատեն չը յիշուելու համար, հոն խաւարելոց հետ սոսկալի կուիւ մ'է կելնէ, ուր անմիջապէս ոստիկանութեան զինուորներ հասնելով կը խաղաղեցունեն, նոյն օրը բազմաթիւ անձինք բանտարկուեցան և վերջապէս հոկտեմբեր 20ին Բ. Դրան հրամանաւ Սարգիս պատրիարք կը հրաժարի և տարի և 6 ամիս պատրիարքութիւն ընելէն վերջը։

Հ. Սարգիս Պատրիարքի ովլ յաջորդեց։

Պ. Տառեփանոս եպիսկոպոս Մալաքեան Նիկոմիդիոյ առաջնորդ տեղապահ կը կարգուի, ասոր օրով Ազգային Սահմանադրութիւնը դեռ Բ. Դուռն էր վաւերացուելու համար։ Սահմանադրականք տեսնելով որ Սահմանադրութիւնը Բ. Դուռը սպասելուն պատճառը յանձնաժողովն ու տեղապահն է 1863 օգոստոս 1ին 6-700ի չափ սահմանադրական երիտասարդք Պատրիարքարան իջնելով, տեղապահը, յանձնաժողովոյ անդամները, տեղապահին փոխանորդը, գրադիրներն և բոլոր գործակալները դուրս հանելով, Պատրիարքարանին դռները կը գոցեն և բանալիները Եէնի գարուի թաղական խորհրդին յանձնելով ամենքը իրենց գործին կերթան։ Բ. Դուռն իմանալով զայս

անմիջապէս ոստիկանութեան գլուխ Սէլիմ բաշան 300ի մօտ զինուորով Պատրիարքարան կուգայ դռները կը բանայ և 50ի մօտ զինուոր թողլով կերթայ ։ Նոյն օրը Ուլինեցւոց յանիրաւի կոտորածին լուրը Պոլիս հասնելով Ազգը կրկին կը յուղուի։ 1862 հոկտեմբեր 3ին Յակոր նախկին պատրիարք Ս. Երուսաղէմ կերթայ, հոկտեմբեր 30 գեշերը լուցկիէն անկողինը բունկելով ձեռքն ու մօրուսը կայրի և ցաւուն չկրնալով դիմանալ չորս օրէն կը վախճանի։ 1863 փետրվար 1 Բերայի Հռովմէական հայոց Ուկերերան եկեղեցւոյն օծման հանդէսը կը կատարէ Անտոն Հասունեան ՚ի ներկայութեան Համազդային իշխանաց։

Հ. Ո՞չափ ատեն առանց պատրիարքի մընացին Հայք։

Պ. Պատրիարքարանը գոյուելէն քանի մ' ամիս ետքը Բ. Դուռը Սահմանադրութիւնը կը նորհէ և Տ. Տառեփանոս տեղապահի նախադահութեամբ ժողովները կը կազմուին և 1863 հոկտեմբեր 15 Ընդհանուր ժողովը պատրիարք կընտրէ Տ. Պողոս արքեպիսկոպոս Թաքթաքեան առաջնորդ Զմիւռնոյ, նոյեմբեր 3ին Պոլիս կուգայ և ժողովուրդը խիստ փառաւոր կերպիւ կը դիմաւորէ Սահմանադրական առաջին պատրիարքը։ Կը

տանին Մայր եկեղեցին, հօն պատրիարքը
Սահմանադրութեան տետրակն ՚ի ձեռին
կուխսէ առաջի Աստուծոյ և բազմաթիւ Հայ
հասարակութեան ներկայութեանը՝ Սահման
ասդրութեան անթերի գործադրութեանը
վրայ, ժողովուրդը գոհ սրտով կը մեկնի,
և պատրիարքը նոյեմբեր 14ին Սուլթանին
և թ. Դրան կը ներկայանայ. ասկէ ետքը Հայոց
ազգը պատրիարք մը կունենայ, արդէն
եղած ժողովներուն մէջ անհամաձայնութիւնները կը տիրեն ու կըսկսին մին զմիւսին
գործերը քննադատել, և հետզհետէ կը
լուծուին. նոյն ատենները 1864 սեպտեմբեր 24 Աղթամարայ Պիւլախուլ կաթուղիկոսը
վանայ ծովուն եղերքը կապաննուի և ուրիշ
մը կրնտրուի. նոյնպէս Սոյ կաթուղիկոսը
կը վախճանի և Նիկողոս Եպիսկոպոս ինքնինք
կաթուղիկոս ձեռնադրել կուտայ. այս երկու կաթուղիկոսները թէ կրօնական և թէ
Քաղաքական ժողովները անվաւեր կը հրատարակեն. նոյն օրերը նաեւ Էջմիածնայ
ընդհանրական կաթուղիկոսն ալ կը վախճանի և ընտրութիւնը Տաճկաստանի Եպիսկոպոսաց ձգուելուն, Տ. Գէորգ արքեպիսկոպոս առաջնորդ Պրուսայու ընդհանուր կաթուղիկոս կրնտրուի 1866 սեպտ. 17ին.
Այս միջոցին Հոռվմէական հայոց Լիբանանու

կաթուղիկոսն ալ վախճանելով Անտոն Հասունեան առանց ազգին հաւանութեանը կաթուղիկոս կրնտրուի Հռովմէն՝ միանգամայն քաղաքական պատրիարք ըլլալով։ Նոյն օրերը բացուեցաւ Խասդիւղ Առաքել-Նուպար-Շահնազարեան վարժարանը։
Հ. Առաքել-Նուպար-Շահնազարեան վարժարանը ով բացաւ։
Պ. Շահնազարեան կարապետ վարդապետ օդափոխութեան համար Եգիպտոսութեան ատեն, կիլիկիոյ մէջ յառանգաւորաց դըպրոց մը բանալու խորհուրդն ունենալը Վրասեմափայլ Նուպար վաշայի կը յայտնէ, բայց հիւանդութիւնը օր աւուր սաստկանալով կստիպուի Կ. Պոլիս գալ և հիւանդութեանը դարձան մը գտնել. և Պոսոյ մէջ աւելի տըկարանալով՝ և իւր վերջին օրերը մօտենալը դուշակելով, իր կտակը կը չինէ ՚ի ներկայութեան Ներսէս Եպիսկոպոս Վարժապետ եանի և ուրիշ քանի մը երեւելի անձանց, որուն բովանդակութիւնն է, բոլոր իր գոյքերը ծախտելով 1000 ոսկոյ գումար մը պիտի գոյանայ. այդ գումարը իր տոկոսովը երբ 4000 ի լրանայ, նոյն ատեն այն 4000 ոսկույն տոկոսովը տասը ժառանգաւոր աշակերտաց համար գիշերօթիկ վարժարան մը բացուի կիլիկիոյ մէջ, այս կտակին կտա-

կակատար կը կարգէ վսեմ. Նուպար փաշան :
 Ազգին այս անզուգական բարերարին վախ-
 ճանելին վերջը Ներսէս եպիսկոպոս Եղիպ-
 տոս Երթալով վերոյիշեալ կտակը Նուպար
 փաշայի կը ներկայացնէ որ գովելով հանգու-
 ցելցն հայրենասիրութիւնը, առանց սպասե-
 լու 1000 ոսկեցին տոկոսով յաւելնալուն, իր
 կողմէն 3000 ոսկի կաւելցնէ, և որովհետեւ այն
 ատեները գրեթէ անկարելի էր կիլիկիոյ
 մէջ այնպիսի դպրոց մը բանալ, ուստի 1866
 դպրոցը կը հաստատուի կ. Պոլիս ՚ի խասդիւղ
 Աստել-Նոտար-Շահնշահը Հարժարան անուամբ
 տնօրէնութեամբ Գեր . Ներսէս եպիսկո-
 պոս վարժապետեամի, այն պայմանաւ որ
 միշտ 10 ժառանգաւոր աշակերտ ունենայ
 կիլիկիոյ կողմէն առանց թոշակի, և այսօր
 100 էն աւելի ալ թոշակաւոր աշակերտ ունի :
 Յունվար 27, 1869 Մանզումէի էֆքեար լը-
 րագրոյն խմբագիր Փանոսեան կարապետ է-
 ֆէնտին Սամամթիոյ դպրոցները այրելուն
 պատճառաւ ցերեկօթեայ վարժարան մը բա-
 ցաւ Աշտարակ Հարժարան անուամբ որուն մէջ 150
 էն աւելի աշակերտուհի կան ուսանող Նոյն-
 պէս 1870 սեպտեմբեր 1 Բերայի Ա. Երրոր-
 դութեան եկեղեցւոյ քարոզիչ Ա. Ծ. Ամբո-
 սիոս վարդապետ Խակենտէրեան Բերայի Բան-
 կալտի ըսուած թաղը Ուուքիւն անուամբ Երկ-

սեռ վարժարան մը բացած է որուն մէջ 50 ի-
 շափ աշակերտ կուսանին : Այս ազատ վար-
 ժարաններուն անդրանիկն է կ. Պոլիս Հիսար
 տիպի ըսուած թաղը Մէզպուրեան Մկրտիչ
 աղայի համանուն դպրոցը որ 1866 ին սկիզբ-
 ները բացուեցաւ :


Հ. Պոլոս պատրիարք ո՞րչափ ատեն պատ-
 րիարքութիւն ըրաւ,

Ա. Ասոր օրով Սահմանադրութիւնը գրեթէ
 բոլորովին դադրեցաւ, վասն զի ազգային
 ամեն խնդիրներն անլուծանելի եղան ժո-
 ղովներուն ցրուելովը, թաղական և ուրիշ
 խորհուրդները հին դրութեան վերածեցին,
 դաւառայնոց հարստահարութիւնները օր
 ըստ օրէ շատցան, ազգը տժգոհ Պատ-
 րիարքարանին թոյլ ընթացքէն, լրագիր-
 ները շարունակ կաղաղակեն ; ազգը կը բո-
 ղոքէ և վերջապէս Բ. Դուռը տեսնելով ազ-
 գին խոռովութիւնը, իր շնորհած Սահմանա-
 դրութիւնը ետ առաւ, առժամանակեայ
 ժողով մը ընտրեց ազգային գործերը կար-
 գադրելու համար, ազգը վերատին բողո-
 քեց Պատրիարքարանին անտարբերութեանը
 վրայ, բայց ոչ ոք լսեց . ուստի ժողո-
 վրդեան կողմէն 1868 դեկտեմբեր 18 ին
 յայտարարութիւն մը տեսնուեցաւ ամեն թաղ
 թէ՝ Ս. Պատարագի ատեն պատրիարքին յի-

յանուկութիւնը դադրի . Դայն սմբուն 29 ին
թիշտառկաւթիւնը կը դադրի , պատրիարքը
կու զե Հրամարիլ բայց քանի մը պաշտօնա-
կան անձինք չեն թուար զայն , ապահովցը-
ներով թէ՛ քանի մը անձանց թերագրու-
թեամբն է ազգին խոսվութիւնը , եթէ ա-
նոնք զազուին ազգը կը խազողի . ուստի
Բ. Դրան Հրամանաւ Մանզումի Եֆքեար
բազիրը կը խափանուի և մեկ քանի ան-
ձինք կը բանտարկուին . Ժողովուրդն առա-
ւել եւս զայրացնալով կակոի վերսախին բողո-
քիլ , և Պօլոյ եկեղեցիներն , այն սրբազն
Տաճարները՝ որ Ժողովուրդը ակնածութեամբ
և խիստ պատկառանոք կը մանելը կենելը ,
ալ ասկէ ետքը մեկ մեկ խոսվածեղի կը
դառնայ ՚ի շնորհս Պօլոս պատրիարքի , և
վերջապէս 1869 յունուար 23 ին կը հրաժարի
Ետարի պատրիարքութիւնն ընելով .

Հ. Պօլոս պատրիարքի ով յաջորդեց .

Պ. 1869 յունուար 23 ին տեղապահ կը կար-
գուի , Արիստակէս արքեպիսկոպոս առաջ-
նորդ Անդրիանուպօլսոյ , և Սուլթանին գա-
հակալութեան տարեղարձը շնորհաւորելու
համար պալատը կերթայ . Հոն Անտոն Հա-
ռունեան առաջնութիւնը յինքն ձգել ու-
ղելուն , գեր . Արիստակէս եպիսկոպոս որուն
ընկերացած էին խորեն եպիսկոպոս եւայլն ,



առանց Սուլթանին ներկայանալու ետ կը
դառնան . Հետեւեալ օրը բոլոր պատուա-
ւոր ազգայինք այսպիսի սրբազն իրաւունք
մը պաշտպանելուն համար շնորհակալու-
թեան կերթան ՚ի Պատրիարքարան , և 1869
յուլիս 31 ընդհանուր ժողով գումարելով ,
պատրիարք կը նույրուի Տ. Իգնատիոս արքե-
պիսկոպոս Կ. Պոլսեցի առաջնորդ Վանայ ,
և պատրիարքական հրովարտակն ելնելէն օր
մը վերջը կը վախճանի 1869 օգոստոս 12 ին
որուն յուղարկաւորութեան հանդէսը խիստ
փառաւոր կերպիւ կատարուելով , Բերայի
Ս. Երրորդութեան եկեղեցւոյն բակը կը թա-
ղեն . Քիչ մ'ատեն առանց պատրիարքի և
տեղապահի մնալով՝ պատրիարքական փո-
խանորդ կարապետ վարդապետի նախագա-
հութեամբ քանի մ'անգամ ընդհանուր ժո-
ղով գումարելով և բաւական երկար վիճա-
բանութիւններ ըլլալէն վերջը 1869 սեպ-
տեմբեր 4 պատրիարք ընտրեցինք եպիսկո-
պոս Մշոյ և առաջնորդ Ս. Կարապետի Գլա-
կայ վանուց Տէր Մկրտիք Խրիստեան Վանեցի :

ՎԵՐՋ

45

4782

01.

ԵՐԵՎԱՆԸ

2313

ՀՀ Ազգային գրադարան



NL0000893

